ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՏԱՐՈՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ IX-X ԴԱՐԵՐՈՒՄ

273

ՎԱՆ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ГНЕЛ ГРИГОРЯН

# ФЕОДАЛЬНОЕ КНЯЖЕСТВО ТАРОНСКИХ БАГРАТУНИ В IX—X ВЕКАХ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1983

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1752

# ՏԱՐՈՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ IX—X ԴԱՐԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1983

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

ԳՄԴ 63. 3(2Հ)
Գ 888

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԸ
և պատմական գիտությունների թեկնածու Ռ. Ի. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ

Գրիգորյան Գ. Ս.
Գ 888 *Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX—X դարերում /Պատ. խմբ.՝ Կ. Ն. Յուզբաշյան.— Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983.— 197 էջ։*

*Ուսումնասիրությունը նվիրված է միջնադարյան Հայաստանի քաղաքական կարևոր միավորներից մեկի՝ Տարոնի Բագրատունիների իշխանության պատմությանը։ Աշխատության մեջ լուսաբանվում է Տարոնի պատմամշակութային դերը, քննարկվում են հարևան իշխանությունների, Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության հետ Տարոնի ունեցած փոխհարաբերությունները, ուրվագծվում է իշխանության սոցիալ-տնտեսական կյանքի պատկերը։*

*Նախատեսված է միջնադարյան Հայաստանի պատմությամբ հետաքրքրվողների համար։*

0505040000 ԳՄԴ 63. 3(2Հ)
Գ ——————— 20—82 9 (С43) 1
703 (02)—83
© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983

# ԱՌԱՋԱԲԱՆ

*IX—XI դդ. հայ ժողովրդի պատմության նշանակալից մի ժամանակաշրջանն է, որն աչքի է ընկնում երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններով։*

*Պետականությունը կորցնելուց շուրջ չորսուկես հարյուրամյակ հետո հայ ժողովրդին, համառ ու երկարատև պայքարի գնով, հաջողվեց վերստին նվաճել իր քաղաքական անկախությունը։ Հայոց թագավորության վերականգնումը նպաստեց երկրի տնտեսական ու մշակութային կյանքի վերելքին։ Բուռն թափով զարգացան միջնադարյան քաղաքները, առևտուրն ու արհեստագործությունը։ Առաջընթաց ապրեց գյուղատնտեսությունը։ Ստեղծվեցին գրական մեծարժեք նոր հուշարձաններ, ծաղկեց գրչագրությունը, կառուցվեցին ճարտարապետական կոթողներ։ Հայկական թագավորություններն ու առանձին իշխանությունները համառ պայքար էին մղում Արաբական խալիֆայության, Հայաստանում հաստատված արաբական իշխանությունների, իսկ այնուհետև՝ Բյուզանդական կայսրության դեմ։ Երկրում գնալով սրվեցին դասակարգային հակամարտությունները։ Այս պայմաններում XI դ. կեսերին Բյուզանդիային հաջողվեց նվաճել Հայաստանի զգալի մասը։*

*Բագրատունիների դարաշրջանը մեզանում ուսումնասիրվել և շարունակվում է ուսումնասիրվել տարբեր տեսանկյուններից։ Առավել հանգամանալից հետազոտվել է երկրի քաղաքական պատմությունը[1], ոչ պակաս չափով՝ սոցիալ-*

---

[1] Տե՛ս *H. Thoptschian*, Die inneren Zustände von Armenien unter Aschot I, Berlin, 1904; *R. Grousset*, Histoire de l'Arménie des

տնտեսականը[2]։ Հետազոտողների ուշադրությունը վերջին տարիներին սևեռված է նաև մշակույթի պատմության հարցերին[3]։

Բուն պատմագիտական երկերում, ուր քննարկվում են Հայաստանի՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող պատմության հարցերը, ակամայից անտեսվում են երկրի մի շարք շրջանների տեղական առանձնահատկությունները։ Այս բացը լրացնում են առանձին թագավորություններին և իշխանություններին նվիրված ուսումնասիրությունները, որոնց երևան գալը պետք է համարել պատմագիտության մեջ կարևորներդրում[4]։ Այդ հետազոտությունները հնարավորություն

---

origines à 1071, Paris, 1947; *Н. Я. Марр*, Ани, Ереван, 1939; *К. Н. Юзбашян*, Повествование Аристакэса Ластивертци и закат „эпохи Багратидов“ (автореферат докт. диссерт.). Л., 1975; *Հայ ժողովրդի պատմություն*, հ. III, *Երևան*, *1976*; *А. Н. Тер-Гевондян*, Армения и Арабский халифат. Ереван, 1977; Թ. Խ. Հակոբյան, *Անիի պատմություն, Երևան, 1980 և այլն։ Սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների վերնագրերը միայն առաջին վկայակոչության դեպքում են լրիվ հիշատակվում։*

2 *Տե՛ս В. Бархударян*, Феодальное землевладение в Армении в IX—XI вв. (автореферат канд. дисс.), Ереван, 1954; Ս. Պ. Պողոսյան, *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1956*; Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հատ. I—II, Երևան 1958, 1964*; Ս. Ե. Հակոբյան, *Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, Երևան, 1964։*

3 *Տե՛ս А. Л. Якобсон*, Очерк истории зодчества Армении V—XVII вв. М.—Л., 1950; *Н. М. Токарский*, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961; *Л. А. Дурново*, Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979; *S. Der-Nersessian*, l'Art Arménien, Paris, 1977 *և այլն։*

4 *Տե՛ս* Հ. Մ. Ուրմազյան, *Սյունիքը IX—X դդ., Երևան, 1958*; Թ. Հակոբյան, *Սյունիքի թագավորությունը պատմաաշխարհագրական առումով, Երևան, 1966*; *Б. Арутюнян*, Вайоцдзор с древнейших времен до 1045 г. (автореферат канд. диссерт.), Ереван, 1968; Ռ. Ի. Մաթևոսյան, *Տաշիր-Ձորագետ, Երևան, 1982*; Վ. Վարդանյան, *Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908—1021 թթ., Երևան, 1969*; Գր. Մ. Գրիգորյան, *Սյունիքի վանական կալվածատիրությունը IX—XIII դդ., Երևան, 1973*; Բ. Ա. Ուլուբաբյան, *Խաչենի իշխանությունը X—XIV դդ., Երևան, 1975 և այլն։*



են ընձեռում ոչ միայն բացահայտելու երկրի պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այլ նաև՝ վեր հանելու տեղական առանձնահատկությունները։

Չնայած վերոհիշյալին, ցարդ Տարոնի Բագրատունիների իշխանության պատմությունը հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել։ Չի բացահայտվել երկրի կյանքում նրա խաղացած դերը։ Առկա մի քանի հոդվածները հեռու են գրեթե մեկուկես հարյուրամյակ (826—968) գոյատևած այդ իշխանության պատմության ամբողջական պատկերն ուրվագծելուց։ Մինչդեռ Տարոնի պատմության մանրակրկիտ ուսումնասիրությունն էական է հայ ժողովրդի պատմական բախտի համար նշանակալից այս ժամանակաշրջանի մի շարք հարցեր լուսաբանելու տեսանկյունից։

IX դ. առաջին քառորդում հիմնադրված Տարոնի իշխանությունը մինչև նույն դարի կեսը Հայաստանի քաղաքական կարևոր կազմավորումներից էր։ Նրա իշխան Բագարատ Բագրատունին (826—851), որը դարձել էր հայոց իշխան և կրում էր իշխանաց իշխան տիտղոսը, գահերեցության իրավունք ուներ երկրի բոլոր իշխանների նկատմամբ։ Նշանակալից է նաև այն, որ Բագարատի ղեկավարությամբ Տարոնում միջոցներ ձեռնարկվեցին Հայաստանի քաղաքական ինքնուրույնության պահպանման համար։

Տարոնը գտնվում էր արաբական իշխանությունների ու հայկական թագավորությունների բարդ փոխհարաբերությունների ոլորտում։ Տարոնի իշխանության օրինակով առավել ակնառու կերպով դրսևորվում են Հայաստանի նկատմամբ Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության վարած նվաճողական քաղաքականությունը և երկրի համար դրա ունեցած բացասական հետևանքները։ Վերոհիշյալից հետևում է, որ Տարոնի Բագրատունիների իշխանության պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության հրատապ խնդիրներից է։

Հարցի լուսաբանության հիմնական աղբյուրները հայ պատմագիրների երկերն են, որոնցից ուշագրավ է VIII դ. հե-

ղինակ Ղևոնդի գործը[5], ուր արտացոլվել են 620—780-ական թթ. դեպքերը: Պատմիչն անդրադարձել է բազմաթիվ հար-ցերի. արաբների՝ Հայաստան կատարած արշավանքներին, բնակչության կրած սոցիալական ու ազգային հալածանքնե-րին, բյուզանդա-արաբական հակասություններին և այլն: Մեզ համար հատկապես կարևոր են երկրում ազդեցիկ դիրքի ապահովման համար Մամիկոնյան և Բագրատունի իշխանա-կան տոհմերի միջև ծավալված պայքարի վերաբերյալ նրա հաղորդումները:

Խնդրո առարկա հարցի մասին համեմատաբար ընդար-ձակ տեղեկություններ են ամփոփվել IX—X դդ. մատենագիր Թովմա Արծրունու հեղինակությամբ մեզ հասած երկում[6]: Պատմիչը ծնվել է Տարոնին մերձակա Վասպուրական նահան-գում և գրել Արծրունյաց տոհմի պատմությունը: Թովմա Արծրունու «Պատմությունը» հնարավորություն է ընձեռում լուսաբանելու Բագարատ Բագրատունու քաղաքական գործու-նեությունը, արաբական տիրապետության դեմ Հայաստանի հարավում ծավալված պայքարը, Տարոնի և հարակից իշխա-նությունների ու Բագրատունյաց թագավորության փոխհա-րաբերությունները: Արժեքավոր են նաև Սասունի ու Խութի սոցիալ-տնտեսական կյանքին նվիրված տեղեկությունները:

Թովմա Արծրունին Արծրունյաց տոհմի գաղափարախոսն է, նրանց շահերի ու ձգտումների արտահայտիչը: Հենց դրա-նով նրա երկը զուրկ չէ անկողմնակալությունից: Այդ միտու-մը հատկապես ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ պատ-մագիրը խոսում է Վասպուրականի իշխանների մասին: Այս առումով էլ հաճախ ընդհանուր, համահայաստանյան նշանա-կություն ունեցող մի շարք հարցեր քննելիս, նա ցուցաբերում է նեղ, տեղական մոտեցում:

Ուշագրավ որոշ տեղեկություններ է հաղորդում Հովհան-

5 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:

6 Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ, Կ. Պոլիս, 1852:



նես Դրասխանակերտցին[7] (X դ.): Ի տարբերություն Թովմա Արծրունու, Դրասխանակերտցին Բագրատունի թագավորնե-րի քաղաքական գծի ջատագովն է, նրանց հավակնություննե-րի պաշտպանը: Նա եղել է հայոց կաթողիկոս և ակտիվորեն մասնակցել երկրի քաղաքական կյանքին: Հովհաննես Դրաս-խանակերտցու գործը Բագրատունյաց դարաշրջանի Հայաս-տանի պատմության ուսումնասիրության ամենակարևոր սկզ-բնաղբյուրն է, այն ստույգ է ու արժանահավատ: Պատմի-չի վկայությունները լույս են սփռում IX դ. առաջին կեսին Հայաստանում եղած քաղաքական երկու ուղղությունների վրա, որոնցից մեկը գլխավորում էր Տարոնի իշխանը: Ուշագրավ են Դրասխանակերտցու տեղեկությունները Տարոնի համար հայոց թագավոր Սմբատ Ա-ի (890—913) և Ահմադ իբն Իսա ալ-Շայբանիի (882/3—898) միջև ծավալված պայքարի, թագավորի կողմից Տարոնի իշխան Գրիգորին հանձնարար-ված դիվանագիտական առաքելության վերաբերյալ և այլն: Հատկանշական է կաթողիկոսի Տարոն գնալու ու տեղի իշխան-ների հետ հաղորդակցվելու փաստը: Նա փորձում էր այնտե-ղից կապ հաստատել Բյուզանդիայի հետ՝ վերջինիս օգնու-թյամբ երկիրը փրկել ծանր կացությունից: Այդ նպատակով նույնիսկ մեզ հայտնի է Կոստանդին Ծիրանածին կայսեր (913—959) և պատրիարք Նիկողայոս Միստիկոսի (901—907, 912—925) հետ Հովհաննես Դրասխանակերտցու ունեցած նամակագրությունը[8]:

X—XI դդ. հեղինակ Ստեփանոս Ասողիկը[9] Տարոնի պատ-մության որոշ հարցեր շոշափում է բյուզանդա-արաբական փոխհարաբերությունների առնչությամբ: Պատմիչը տեղեկու-թյուններ է հաղորդում Հայաստանի արևմտյան շրջանները,

7 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1853:

8 Տե՛ս Հ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1966, № 4, էջ 251—256:

9 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

այդ թվում Տարոնի իշխանության սահմանները Բյուզանդիա-
յի ներխուժման, նրա կողմից Տարոնի նվաճման վերաբեր-
յալ։ Հայ հեղինակներից միայն նա է վկայում Տարոնի առ-
ման թվականը։

XI—XII դդ. պատմիչ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանա-
կագրության»[10] մի քանի տվյալները հստակ պատկերացում
են տալիս Տարոնի նվաճումից հետո ստեղծված իրավիճակի
մասին։ Պարզվում է, որ գործադրած ջանքերին հակառակ,
Բյուզանդիային չէր հաջողվել ձեռք բերել ողջ Տարոնը, քանի
որ նրանից որոշ տարածք դեռևս գտնվել է հայերի ձեռքում։
974 թ. կայսր Հովհան Չմշկիկը (969—976) և հայոց թա-
գավոր Աշոտ Գ Ողորմածը (953—977) դեռևս քննարկում էին
վեճեր հարուցած այդ հարցը։

XIII դ. մատենագիր Վարդանի[11] տեղեկությունններն
ուշագրավ են VIII դ. վերջերին և IX դ. սկզբներին Հայաստա-
նում Բագրատունիների ու արաբական իշխանությունների
ներկայացուցիչների միջև գերակշիռ դիրքի ապահովման հա-
մար ծավալված պայքարը լուսաբանելու տեսանկյունից։
Վարդանը, թեև իր նկարագրած անցքերի ականատեսը չէ,
բայց ինչպես ենթադրվում է, օգտվել է Շապուհ Բագրատու-
նու՝ մեզ չհասած երկից և արժանահավատ տվյալներ է հա-
ղորդում, որոնք երբեմն հաստատվում են արաբ մատենագիր-
ների կողմից։

Տարոնի Բագրատունյաց ժամանակաշրջանի պատմու-
թյան զանազան հարցերին անդրադառնալիս, օգտագործել ենք
նաև Մովսես Կաղանկատվացու[12], Ստեփանոս Օրբելյանի[13],

10 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։

11 Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862։

12 Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860։

13 Ստեփաննոսի Օրինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861։



Սամուել Անեցու[14], Անանուն Զրուցագրի[15] և այլ մատենա-
գիրների երկերը։

Սույն աշխատության ներածականը նվիրված է Տարոնի
վաղ շրջանի պատմությանը։ Այս հատվածը շարադրել ենք
հենվելով V—VIII դդ. հայ մատենագիրներ՝ Ագաթանգեղո-
սի[16], Փավստոս Բուզանդի[17], Մովսես Խորենացու[18], Ղազար
Փարպեցու[19], Սեբեոսի[20], Հովհան Մամիկոնյանի[21] երկերի
տվյալներին։ Օգտվել ենք նաև XIX դ. ճանապարհորդների ու
հետազոտողների՝ Արևմտյան Հայաստան կատարած ճամ-
փորդությունների և ուղևորությունների նյութերից[22], որոնք
այսօր, փաստորեն, սկզբնաղբյուրի նշանակություն ունեն։

Օտար աղբյուրներից Տարոնի պատմության ուսումնա-
սիրության համար կարևոր են բյուզանդական կայսր Կոս-
տանդին Ծիրանածնի գործերը, որոնցից հիմնականը «Կայս-
րության կառավարման մասին» երկն է[23]։ Վերջինիս երևան

14 Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893։

15 Պատմութիւն Անանուն զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), Երևան, 1971։

16 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909։

17 Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889։

18 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913։

19 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904։

20 Պատմութիւն Սեբէոսի, Երևան, 1979։

21 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941։

22 Մ. Միրախորյան, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Ա, Կ. Պոլիս, 1884; Ն. Սարգիսյան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864; Գ. Սրվանձտյանց, Գրոց-բրոց, Երկեր, հ. I, Երևան, 1978; *Х. Ф. Б. Линч*, Армения, путевые очерки и этюды, т. II, Тифлис, 1910.

23 *Constantine Porphyrogenitus*, De Administrando Imperio, Greek text edited by Gy. Moravcsik, English translation by R. J. H. Jenkins, Budapest, 1949, (այսուհետև՝ DAI, I); Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 3—22 (այսուհետև՝ Կոստանդին

գալն ինքնանպատակ չէր և այն սոսկ ճանաչողական արժեք
չուներ։ Ձեռնարկելով իր աշխատանքին, նրա հեղինակը՝ պե-
տության ճակատագրով շահագրգռված կայսրը, ցանկացել է
իր որդու՝ Ռոմանոսի (959—963) համար ստեղծել մի ձեռ-
նարկ, ուր շարադրված են կայսրության ներքին և արտաքին
քաղաքականության սկզբունքներն ու մեթոդները։

«Կայսրության կառավարման մասին» երկը բաղկացած է
53 գլխից, որոնցից մեկը՝ 43-րդը, նվիրված է Տարոնի պատ-
մությանը և կրում է «Տարոն երկրի մասին»-վերնագիրը։ Հե-
ղինակն այստեղ հանգամանալից ներկայացնում է Բյուզան-
դական կայսրության և Տարոնի իշխանության փոխհարաբե-
րությունները՝ փորձելով օրինականացնել վերջինիս նկատ-
մամբ կայսրության ձեռնարկած նվաճողական քաղաքակա-
նությունը։ Մենք տեղեկանում ենք նաև իշխան Գրիգորի՝
մե՛րթ կայսրությանը, մե՛րթ խալիֆայությանն ապավինելու,
նրանց միջև խուսանավելու փորձերին։ Բյուզանդիան կաշառ-
քով, սպառնալիքով, ամուսնություններով և այլ միջոցներով
Տարոնի իշխաններին կապել էր իր հետ, երկպառակություն ու
թշնամանք սերմանել նրանց միջև։ Այս ճանապարհով Տարո-
նի իշխանության տարածքն աստիճանաբար ձուլվում էր կայս-
րությանը՝ զոհ դառնալով նրա նենգությանն ու խարդավանք-
ներին։

Կոստանդին Ծիրանածնի մյուս գործերը լրացնում են
բյուզանդական արքունիքում ծրագրված և կյանքում իրա-
գործված անօրինականությունների վերաբերյալ եղած մեր
պատկերացումները։

Հիշարժան են նաև Հովհաննես Սկիլիցեսի «Համառոտու-
թյուն պատմության» և բյուզանդական այլ աղբյուրների
տեղեկությունները[24]։

---

Ծիրանածին)։ Օգտվելով առիթից, շնորհակալություն ենք հայտնում պատ-
մական գիտությունների դոկտոր Հ. Մ. Բարթիկյանին, որի օգնությամբ ծա-
նոթացանք բյուզանդական մի քանի սկզբնաղբյուրների բնագրերին։

24 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդա-
կան աղբյուրներ, Գ, Հովհաննես Սկիլիցես. Թարգմանություն բնագրից,
առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1979;



Թեմայի մշակման համար կարևոր են եղել նաև արաբա-
կան աղբյուրները։ Արաբ հեղինակներից մի քանիսը եղել են
Հայաստանում կամ նրա պատմությանն իրազեկ դարձել հա-
վաստի աղբյուրներից։ Նրանք ոչ միայն լրացնում են հայ
մատենագիրների տվյալները, այլև հաճախ հաղորդում են
արժանահավատ և ուշագրավ նոր փաստեր։ Տարոնի պատ-
մությանն անմիջականորեն առնչվում են արաբ մատենագիր-
ների թռուցիկ հաղորդումները Բագարատ Բագրատունու տի-
րույթների, Բյուզանդիայի հետ նրա հաստատած կապերի, Տա-
րոնից գանձված հարկերի չափի վերաբերյալ։ Նրանք չեն կա-
րողացել անտեսել IX դ. առաջին կեսին Հայաստանում արա-
բական գերիշխանության դեմ ծավալված պայքարը։ Համդան-
յանների և Տարոնի տերերի փոխհարաբերությունների, վեր-
ջիններիս կրած տիտղոսների և քաղաքական ու տնտեսական
կյանքի այլ հարցերի վերաբերյալ տվյալները ես արտացոլվել
են նրանցում։ Հատկապես արժեքավոր են Աբու Յուսուֆ Յա-
կուբի (731—798) «Գիրք խարաջի մասին», Ահմեդ իբն Յահ-
յա ալ-Բալաձուրու (մեռ. 890 թ.) «Երկրների նվաճում» գործը,
Ահմեդ իբն Վադիհ ալ- Յակուբիի (մեռ. 829 թ.), Աբու Ջա-
ֆար Մուհամմադ իբն Ջարիրա ալ-Թաբարու (838—923),
Աբուլ Կասիմ Ուբեյդուլլահ իբն Աբդուլլահ իբն Խորդադբեյհի
(մեռ. 912—913 թթ.), Իզզ ալ-Դին Ալի իբն Մուհամմադ իբն
ալ-Ասիրի (1160—1234) և այլ հեղինակների պատմական եր-
կերը[25]։

Տարոնի պատմության մի քանի հարցերին վերահասու
լինելուն օգնում են ասորական աղբյուրները նույնպես։ Կեղծ
Դիոնիսիոս Տելլ Մահրացու (VIII դ.), Միխայել Ասորու
(XII դ.) և Գրիգոր Աբուլ-Ֆարաջ Բար Հեբրեոսի (XIII դ.)

---

*J. Darrouzès*, Deux lettres inédites de Photius aux Arméniens, Revue des Études Byzantines, (այսուհետև՝ REB), t. XXIX, Paris, 1971:

25 Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հավաքեց և թարգմա-
նեց Բ. Խալաթեանց, Վիեննա, 1919; *Baladhuri*, The origins of the Islamic State (Kitab futûh al Buldan), I, New-York, 1916.

գործերում[26] մենք գտնում ենք համառոտ, բայց արժեքավոր հիշատակություններ։

Սույն աշխատությունը գրելիս, հիշատակված աղբյուրներից բացի, օգտագործել ենք նաև դրամագիտական, վիմագրական և այլ նյութեր։

Ինչպես նշվեց, Տարոնի Բագրատունիների իշխանության պատմությունը, ամբողջությամբ վերցրած, հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել։ Առանձին հետազոտողներ, հիմնականում հայ-բյուզանդական հարաբերություններով, ինչպես նաև խալիֆայության պատմությամբ զբաղվողները, մասնակիորեն անդրադարձել են նրա պատմության այն հարցերին, որոնք կապված են եղել Բյուզանդական կայսրության հետ։ Առաջինը հիշատակելի է Ն. Ադոնցի անունը[27]։ Անվանի պատմաբանը հետազոտել է Տարոնի և Բյուզանդիայի փոխհարաբերությունները՝ պատշաճ տեղ տվել դրանցում երկու կողմերի ներկայացուցիչների կատարած դերին։ Նա կազմել է Տարոնի իշխանների ճյուղագրությունը, փորձել է պարզել Կոստանդին Ծիրանածնի «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» գրքում հիշատակվող Տարոնի իշխանի՝ Կոստանդնուպոլսում արժանացած ընդունելության ժամանակաշրջանն ու հարակից այլ հարցեր։ Առանձնակի ուշադրություն դարձնելով կայսրության մեջ հայկական ծագում ունեցող իշխանական տոհմերին ու անհատներին, Ն. Ադոնցն անդրադարձել է նաև տարոնցիներին։ Հանգամանալից ու պատշաճ խորությամբ վերլուծելով այս և մի շարք այլ հարցեր, նա ցույց է տվել այն կործանարար դերը, որ խաղաց Բյուզանդիան հայկական այդ իշխանության կյանքում[28]։ Օգ-

---

26 Chronique de Denys de Tell Mahré, publ. et trad. par Chabot, Paris, 1895; Chronique de Michél le Syrien, Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905, (Bruxelles, 1963).

27 *N. Adontz*, Les Taronites en Arménie et a Byzance, Études Arméno-Byzantines (*այսուհետև՝* EAB), Lisbonne, 1965.

28 *Տե՛ս նրա հոդվածները նշված ժողովածուի մեջ, ինչպես նաև նույն հեղինակի «Պատմական ուսումնասիրութիւններ» գիրքը, Պարիս, 1948։*



տագործել ենք նաև Ն. Ադոնցի մյուս գործերը, որոնք թեպետև անմիջականորեն չեն առնչվում մեր նյութին, բայց նպաստել են որոշ հարցերի լուսաբանմանը։

Հարավային Հայաստանին նվիրված արժեքավոր գործերից է Յ. Մարկվարտի մենագրությունը[29]։ Նրա կարևորությունը պայմանավորված է շրջանառության մեջ դրված փաստական հարուստ նյութով, մասնագիտական գրականության ըստ ամենայնի ընդգրկումով և, անկասկած, մի շարք հարցերի նորովի մեկնաբանությամբ։ Գիտնականի հետաքրքրությունների ոլորտում հարավային Հայաստանի՝ հնագույն ժամանակներից մինչև XII դ. պատմության ընդհանուր հարցերն են, ուր համառոտ արտացոլվել են նաև Բագրատունյաց դաշրջանի Տարոնի և հարևան իշխանությունների փոխհարաբերությունների մի քանի կողմերը։ Նույն հեղինակի մեկ այլ աշխատությունը նվիրված է Բագրատունիների ճյուղագրությանը[30]։ Հարկ է նշել, որ սկզբնաղբյուրների սուղ տեղեկությունների հետևանքով Տարոնի ոչ բոլոր իշխանների ճյուղագրությունն է հնարավոր ճշգրիտ վերականգնել։ Այդ ուղղությամբ արտահայտված կարծիքները փաստորեն հիպոթեզի բնույթ են կրում։ Այսպես, Ն. Ակինյանը Տարոնի տերերի մի մասին ծագումով համարում է Բագրատունի, իսկ մյուս մասին՝ Մամիկոնյան-Թոռնիկյան[31]։ Գրեթե նույն այս տեսանկյունով է. Դանիելյանը քննարկում է Տարոնի և Բյուզանդիայի կապերը[32]։

Մինչ կայսրության կողմից գրավվելու և դրանից հետո ընկած ժամանակաշրջանի Տարոնի քաղաքական կարգավի-

---

29 *J. Markwart*, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930.

30 Յ. Մարկվարտ, *Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, Վիեննա, 1913։*

31 Ն. Ակինեան, *Թոռնիկեանց ճիւղագրութիւնը, Մատենագրական հետազօտութիւններ, Դ, Վիեննա, 1938։*

32 Է. Լ. Դանիելյան, *Տարոնը հայ-բյուզանդական հարաբերություններում (IX դ. երկրորդ կես—X դ.), ՊԲՀ, 1978, № 1։*

ճակին է նվիրված Կ. Ն. Յուզբաշյանի ուսումնասիրությունը[33]։ Նա ցույց է տվել Տարոնի իշխանների՝ Բյուզանդիայի ազդեցության ոլորտում գտնվելու աստիճանը, հետազոտել է նրա գրավման տարեթիվը, այնտեղ կայսրության հաստատած վարչակարգը և այլ հարցեր։ Նույն հեղինակի մյուս ուսումնասիրության մեջ առաջին անգամ քննարկվել է Բագրատունյաց դարաշրջանի Հայաստանի միջազգային իրավական դրությունը[34]։

Ներկա թեմային առնչվող մի շարք հարցեր շոշափվել են նաև Կոստանդին Ծիրանածնի երկի անգլերեն թարգմանության ծանոթագրություններում[35]։

Հարկ է առանձնահատուկ կերպով ընդգծել բյուզանդական աղբյուրների՝ Հայաստանի ու հայերի մասին հաղորդած տեղեկությունների հայերեն թարգմանությունների, նրանց կցված առաջաբանների ու ծանոթագրությունների արժեքը։ Մեր թեմային առնչվում են Կոստանդին Ծիրանածնի և Հովհաննես Սկիլիցեսի գործերի հիշատակված թարգմանությունները։

Խնդրո առարկա թեմայի մշակմանը մեծապես նպաստել են արաբական տիրապետության և հետագա դարաշրջանի Հայաստանի պատմությանը վերաբերող ուսումնասիրությունները։ Ժ. Լորանը[36] ծանրացել է արաբական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի ինքնավարության հարցերի վրա, թեպետև դրա ձևերն ու սահմանները նա չի քննարկել։

---

33 *K. N. Yuzbashian*, L'Administration Byzantine en Arménie aux Xe—XIe siècles, Revue des Études Arméniennes (*այսուհետև*՝ REA), t. X, Paris, 1973—1974.

34 Կ. Ն. Յուզբաշյան, *«Բագրատունյաց շրջանի» Հայաստանը միջազգային իրավունքի տեսանկյունից, ՊԲՀ, 1975, № 1։*

35 *Constantine Porphyrogenitus*, De Administrando Imperio, vol. II, Commentary by F. Dvornik, R. J. H. Jenkins, B. Lewis, Gy. Moravcsik, D. Obolensky, S. Runciman (*այսուհետև*՝ DAI, II), London, 1962: *Տարոնի վերաբերյալ նյութերը ծանոթագրել է Ս. Ռենսիմենը։*

36 *J. Laurent*, L'Arménie entre Byzance et l'Islam, depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919: *Սույն աշխատությունը*



Հիշարժան է նաև Ռ. Գրուսեի ուսումնասիրությունը[37]։ Ա. Տեր-Ղևոնդյանը[38] հետազոտել է արաբական տարրի՝ Հայաստանում հիմնավորվելու, տեղի ավագանու հետ հաստատած կապերի և Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում նրա կատարած դերի մի շարք հարցեր։ Նա հանգամանալից քննարկել է հայոց թագավորության և Արաբական խալիֆայության փոխհարաբերությունները, ուրվագծել հայ-արաբական մշակութային կապերը։

Ստ. Մելիք-Բախշյանի աշխատությունը[39] ևս նվիրված է հիշյալ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին և ընդհանրացնող բնույթ ունի։ Մ. Կանարին հետաքրքրել են Համդանյանները և Հայաստանում ստեղծված արաբական իշխանությունները[40]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Հայաստանի պատմության բազմաթիվ հարցեր քննարկվել են նաև Բ. Առաքելյանի, Ս. Երեմյանի, Կ. Թումանովի, Վ. Բարխուդարյանի, Հ. Ութմազյանի, Վ. Վարդանյանի, Ս. Շլեպչյանի, Ռ. Մաթևոսյանի և այլոց ուսումնասիրություններում, որոնք ևս օգտագործվել են մեր կողմից։

---

*1980 թ. վերահրատարակվեց Լիսաբոնում՝ Մ. Կանարի արժեքավոր ծանոթագրություններով, ուր հաշվի են առնված գիտության վերջին նվաճումները։ Հրատարակիչը միաժամանակ ինքնակամ փոխել կամ վերաշարադրել է հեղինակի ծանոթագրությունները։ Թյուրիմացություններից զերծ մնալու նպատակով, մենք մատնանշել ենք սույն երկի առաջին հրատարակությունը։*

37 *R. Grousset*, Histoire de l'Arménie.

38 Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965։ Սույն ուսումնասիրությունը 1976 թ. հրատարակվեց անգլերեն, բայց քանի որ այն հայերենի սոսկ թարգմանությունն է, ուստի մենք վկայակոչել ենք առաջին հրատարակությունը։*

*А. Н. Тер-Гевондян*, Армения *և այլն։*

39 Ստ. Մելիք-Բախշյան, *Հայաստանը VII—IX դդ., Երևան, 1968։*

40 *M. Canard*, Les Hamdanides et L'Arménie, Annales de l'Institut d'Études Orientales, Alger, 1948, t. VII, 91; *նույնի*, Histoire de la dynastie des Hamdanides de Jazira et de Syrie, Alger, 1951; *նույնի*, Les Principautés Arabes d'Arménie, REA, t. XI, 1975—1976.



2—1281

1752
ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР

Թեման մշակելիս անդրադարձել ենք նաև ռուս, սովետական ու արևմտյան արևելագետների, բյուզանդագետների՝ մեզ հետաքրքրող ուսումնասիրություններին։

Վերջապես, հարկ է նշել, որ Տարոնի Բագրատունիների իշխանության վերաբերյալ սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները չափազանց սուղ են, կցկտուր, հաճախ նաև՝ հակասական։ Այս հանգամանքը, անկասկած, իր կնիքն է թողել սույն ուսումնասիրության կառուցվածքի և նրանում քննարկված մի շարք հարցերի վրա։



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՏԱՐՈՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ IX ԴԱՐԸ

## Ա. ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայկական Տավրոս լեռնաշղթան, որը բաժանում է Տիգրիս և Եփրատ գետերի ավազանները, Եփրատի ձախ ափից սկսվում, մոտավորապես 600 կմ աղեղաձև ձգվում է արևելք ու հատվում Զագրոս լեռնաշղթային։ Հայկական Տավրոսի կենտրոնական մասը հյուսիսում զառիթափ է և ընդհատվում է Վանա լճի, Մուշի և Ճապաղջրի իջվածքներով, իսկ հարավից արձակում է բազմաթիվ լեռնաբազուկներ, որոնք միմյանցից կտրտված են Արևելյան Տիգրիսի խույլ, Սասուն, Քաղիրթ վտակների անանցանելի կիրճերով[1]։ Այս լեռնաբազուկները կազմում են ֆիզիկաաշխարհագրական առանձին միավորներ՝ գավառներ և աչքի են ընկնում բնակլիմայական պայմանների բազմազանությամբ։ Հայկական Տավրոսի կենտրոնական մասի հարավային ճյուղերը հայտնի են Սանասուն կամ Սասուն ու Սալնա, իսկ արևելյանը՝ Խութ անուններով։ Դրանց համապատասխանում են համանուն գավառները։ Հիշյալ լեռնազանգվածի գագաթներն են Անդոքասարը (2830 մ), Ծովասարը, Մարութա սարը (2150 մ) և Սիմսարը (2689 մ)[2]։

---

[1] *С. П. Бальян,* Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, Ереван, 1969, էջ 15։

[2] *Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 23։*

Հայկական Տավրոսի այս մասը հսկա լեռների ու խորունկ ձորերի մի վիթխարի զանգված է։ Այն անանցանելի և դժվարամատույց պատվար էր օտար նվաճողների արշավանքների դեմ։ Եթե հայ ժողովուրդը երբեմն չկարողանալով դիմակայել օտար նվաճողներին ենթարկվում էր նրանց, ապա այս շրջաններում գրեթե միշտ նա պահպանում էր իր անկախությունը։

Հնուց ի վեր մեծ էր լեռնաշղթայի արևմտյան (Օլոր գյուղի մոտ)[3] և արևելյան, Զորապահակ կամ Տաւրոյ բերան (Բաղեշի կամ այժմ՝ Բիթլիսի) լեռնանցքների ռազմաստրատեգիական նշանակությունը, որոնք հարավի և հյուսիսի հաղորդակցության լեռնային միակ կամուրջներն էին[4]։

Տարոնը գտնվում է Վանա լճի արևմուտքում, Սասունի և Խութի հյուսիսում։ Նրա սահմանները հյուսիսում հասնում են Բյուրակնյան լեռների հարավային շարքին՝ Քոսուրի լեռնաշղթային։ Վերջինս և Հայկական Տավրոսն իրենց մեջ ընդգրկելով Տարոնը, միմյանց զուգահեռ ձգվում են դեպի Վանա լիճը։ Վանա լճի ավազանը Տարոնից բաժանվում է Նեբրովթ (Նեմրութ) (3050 մ) և Գոռոզ (Գրգուռ) լեռներով։ Նեբրովթն իր խառնարանի մեծությամբ աշխարհի նշանավոր լեռնագագաթներից է[5]։ Նեբրովթից հարավ, հարթության վրա շեշտակի բարձրանում է Գոռոզ լեռը՝ հիմքին զուգահեռ հատած կոնի տեսքով[6]։

Տարոնը, Սասունը և Խութը թեպետև իրենց ֆիզիկաաշխարհագրական դիրքով առանձին շրջաններ էին, բայց կազմում էին տնտեսական ընդհանրություն, մեկ միավոր։ Սասունում և Խութում վաղ ժամանակներից ի վեր զարգացել է անասնապահությունը, իսկ Տարոնում Մուշի արգավանդ դաշտավայրի շնորհիվ՝ գյուղատնտեսական կուլտուրաների մշա-

3 Ղ. Ինճիճյան, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822, էջ 44։*

4 Ս. Տ. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 44։*

5 *Х. Ф. Б. Линч,* Армения, *էջ 392։*

6 *Նույն տեղում, էջ 206։*



կությունը։ Այս հանգամանքը, բնականաբար, սատարել է նշված շրջանների բնակչության ապրանքափոխանակությանը, նպաստել նրանց տնտեսական կապերի ամրապնդմանը։ Սակայն միջնադարյան Հայաստանում որքան էլ զարգացած լինեին արտադրողական ուժերը, այդուհանդերձ լեռնային բազմաթիվ շրջանները տակավին մնում էին տնտեսական ներփակ ու ամփոփ պայմաններում։ Այս իրողությունն ի մասնավորի վերաբերում է հիշյալ շրջաններին։

Հայաստանի տնտեսական կյանքում խիստ կարևոր էր լեռնային հարթավայրերի ու գետահովիտների նշանակությունը, քանի որ նրանցով էին բավարարվում երկրի բնակչության տնտեսական կարիքները։ Հիշյալ հովիտներից հատկապես նշանակալից էր Արածանիի գետահովտի, մասնավորապես՝ Մշո կամ Տարոնի դաշտի դերը։

Մշո դաշտը սկսվում է Նեբրովթ ու Գոռոզ լեռնագագաթների ստորոտից՝ ձգվելով նախ հյուսիս-արևմուտք, ապա՝ արևմուտք։ Այն ընկած է Հայկական Տավրոսի և Քոսուրի լեռնաշղթաների միջև[7]։ Մշո դաշտը եղել է հայ ժողովրդի տնտեսական և հոգևոր կյանքի կենտրոններից մեկը։ Հնագիտական հետազոտությունները ցույց են տվել, որ դեռևս մ. թ. ա. III հազարամյակում այստեղ բարձր զարգացման է հասել երկրագործական մշակույթը։ Այդ տեսակետից այն Առաջավոր Ասիայի հնագույն կենտրոններից է[8]։ Ժողովրդի մեջ պահպանվել են գրավոր և բանավոր բազմաթիվ ու բազմազան ավանդություններ, զրույցներ, որոնցում գովերգվել են Մշո դաշտը և առհասարակ ողջ Տարոնի բնական հարստություններն ու հոգևոր մշակույթի արժեքները։ Այն, ինչ գտնվում է Տարոնում, թանկ ու նվիրական է միջնադարյան յուրաքանչյուր հեղինակի համար. «...երկիրս բարի, վայրք անուշաւդ, ջուր բազում, և երկիր դաշտ և շուրջանակի լերամբ պարսպեալ

7 Մ. Միրախորյան, *Նկարագրական ուղեւորութիւն, էջ 33;* Ն. Սարգիսյան, *Տեղագրութիւնք, էջ 225։*

8 Է. Խանզադյան, *Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 26—27։*

և բազում ամրոցս. և երկիր խոտաբուխ և մայրաբուխ. և որպէս մանանայն, որ յերկնիցն իջանէր, և աստ իջանէ ի վերայ անտառացս, զոր գազպէն կոչեմք»[9]։

Մշո դաշտի հետ կապված է հեթանոսական ժամանակներում ծագած և հայ ժողովրդի մեջ մինչև վերջերս հարատևած մի ավանդություն ևս. Վահագն աստծո սիրուհին՝ գեղեցկության, սիրո ու լույսի աստվածուհի Աստղիկը Արածանի գետում գիշերները լոգանք էր ընդունում։ Նրա զգլխիչ գեղեցկությամբ տարվելով հայ քաջերն անհագ ցանկությամբ փորձել են տեսնել աստվածուհու մերկությունը և խարույկներ վառել շրջակա լեռների լանջերին։ Սակայն անողոք աստվածուհին լոգանքի պահին դաշտը պատել է մշուշով, որից, ինչպես ասում են, առաջացել է Մուշ անունը[10]։ Անկասկած, այստեղ մենք գործ ունենք միայն ժողովրդական ստուգաբանության հետ[11]։

Մշո դաշտը հարթ չէ։ Այն բաղկացած է բազմաթիվ բլուրներից և իջվածքներից։ Դաշտի երկայնքով արևելքից արևմուտք է հոսում Մեղ գետը կամ Մեղրագետը (Տարոնոյ գետ), որը նույնացվել է Քսենոփոնի հիշատակած Տելեբոաս գետի հետ[12]։ Մեղրագետը սկիզբ է առնում Նեբրովթ լեռան արևմտյան լանջերից՝ Նորշեն գյուղի դաշտից։ Իր մեջ առնելով Ծովասարի, Կուրտիկ լեռան ու Քոսուրի լեռնալանջերից հոսող գետակները՝ այն ոլորապտույտ հոսում է արևմուտք։ Մշո

9 Հովհան Մամիկոնյան, էջ 143—144։

10 Գ. Սրվանձտյանց, Գրոց-բրոց, էջ 71—72։

11 Ենթադրվում է, որ Մուշ անունը կապվում է մուշկերի ցեղանվան հետ, որոնք հաստատվել են Հայկական լեռնաշխարհում (տե՛ս *И. М. Дьяконов*, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 223, ծան. 87)։ Ըստ մեկ այլ վարկածի, Մուշ անունը կապվում է խուրիտական muš-գեղեցիկ անվան հետ (տե՛ս *Г. Капанцян*, Хайаса-калыбель армян, этногенез армян и их начальная история Историко-лингвистические работы, Ереван, 1956, էջ 146)։

12 *J. Markwart*, Untersuchungen zur Geschichte von Eran. Philologus, X, Heft 1, Göttingen, 1896, էջ 236։ Տելեբոասը նույնացվել է նաև Եփրատի հարավային ճյուղի հետ (տե՛ս *Ксенофонт*, Анабасис, перевод и примечания М. И. Максимовой, М.—Л., 1951, էջ, 281, ծան. 15)։



դաշտավայրի արևմտյան մասում Մեղրագետը խառնվում է Արևելյան Եփրատին (Արածանիին)։ Դրանից 10 կմ արևմուտք, Մշո դաշտն անցնելիս, Արածանին սրընթաց գահավիժում է Դարկոշի անդունդը՝ առաջացնելով այնպիսի ջրային մի կամուրջ, որի տակով հնարավոր է երթևեկը[13]։ Գետի անկման շառաչի պատճառով այս վայրը կոչվում է Գուռգուռա։

Տարոն գավառը գտնվում էր պատմական Հայաստանի գրեթե կենտրոնում։ Ըստ VII դ. հեղինակ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցի», այն մտնում էր Տուրուբերան նահանգի մեջ և այնքան նշանավոր էր, որ ողջ նահանգը հաճախ կոչվում էր «Տարոնոյ աշխարհ» կամ «կողմն Տարոնոյ»։ Տարոնը Տուրուբերանի երրորդ գավառն էր[14]։ Այն հյուսիսից սահմանակից էր Արշամունիք և Հարք, արևմուտքից՝ Հաշտյանք, հարավից Սանասունք, Ասպակունյաց ձոր, Խութ և Սալնո ձոր գավառներին։ Արևելքից Տարոնի սահմանն անցնում էր Բզնունիք գավառով։ Տարոնի արևմտյան մասը կազմում էր Պալունիք փոքր գավառը։ «Աշխարհացոյցը» թեպետև չի հիշատակում, բայց, ըստ Ջենոբ Գլակի, այն մտնում էր Տարոնի մեջ[15]։ Փավստոս Բուզանդը Պալունիքից արևմուտք գտնվող Արշամունիքը ևս մտցնում է Տարոնի կազմում[16], որը, սակայն, Ղազար Փարպեցին համարում է առանձին գավառ[17]։ Ասպակունիք գավառը, նույնպես, կազմել է Տարոնի մասը։ Հիշյալ շրջանները, ինչպես տեսնում ենք, աշխարհագրական առանձին միավորներ էին։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ստեղծված Տարոնի իշխանության սահմանները մի քանի անգամ գերազանցում էին բուն Տարոն գավառի սահմաններին։ Նրան էին միացվել նշված գավառներից շատերը։ Այս մասին կխոսվի հետագայում։

13 Գ. Սրվանձտյանց, Գրոց-բրոց, էջ 71; *Линч*, Армения, էջ 227—223։

14 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը, էջ 107։

15 Հովհան Մամիկոնյան, էջ 79, հմմտ. *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 18։

16 Փավստոս Բուզանդ, էջ 127։

17 Ղազար Փարպեցի, էջ 149, հմմտ. նաև *Н. Адонц*, Армения, էջ 311։

Մովսես Խորենացու երկում պահպանված ավանդության համաձայն, Տարոն անվանումը ծագել է այնտեղ բնակություն հաստատած Նոյի որդի Տարբանի անունից[18]։ Հիշյալ ավանդությունը Սիմսարի (որը կազմում է Հայկական Տավրոս լեռնաշղթայի կենտրոնական մասը) անունը բխեցնում է Սեմից, իսկ Տարոնի Ցրոնք տեղանունը ստուգաբանում է իբրև Տարբանի որդիների միմյանցից բաժանվելու (ցրվելու) վայր[19]։ Իրականում Տարոն անունը կապված է Տավրոս (հուն. Ταῦρος) լեռնաշղթայի անվան հետ[20], որը նշանակում է ցուլ[21]։ Տավրոս անվանումից ծագել է հայկական Տուրուբերան կամ Տաւրոյ բերան նահանգի անունը[22]։ Պատմահոր հաղորդած ավանդությունը, որոշ առումով արժեքավոր է, քանի որ աշխարհագրական հիշյալ միջավայրում ընթացել է հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը, ուր դեռևս մ. թ. ա. XII—XI դդ. ստեղծվել էր հայկական հնագույն ցեղային միությունը՝ Արմե-Շուպրիան[23]։ Մովսես Խորենացուն ծանոթ ավանդությունը կարելի է դիտել իբրև այդ պատմական պրոցեսի յուրահատուկ արտացոլում։ Այս տեսակետից, սակայն, շատ ավելի կարևոր է մեկ ուրիշ ավանդություն, որը դարձյալ պահպանվել է պատմահոր երկում։ Ըստ այդմ, Ասորեստանի թագավոր Սենեքերիմի որդիները՝ Ադրամելեքն ու Սանասարը, սպանում են իրենց հորը, փախչում գալիս են Հայաստան։ Հայերի նախնի Սկայորդին Սանասարին բնակեցնում է երկ-

18 Մովսես Խորենացի, էջ 26։

19 Նույն տեղում։

20 Ըստ Ղ. Ինճիճյանի (տե՛ս Ստորագրութիւն, էջ 90), Տարոնը հայերեն բառ է, որի անունով պետք է կոչված լիներ Տավրոս լեռը։ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ հույներն այն հարմարեցրել են իրենց Տավրոսին կամ Տորոսին։ Գ. Ղափանցյանը (տե՛ս Хайаса, էջ 184), Տարոնը բխեցնում է ուրարտական Tarauni-ից, որը, սակայն, նույնանում է ոչ թե Տարոնի, այլ Դարոյնքի հետ։

21 Н. Адонц Армения, էջ 308—309, 311, ծան. 1։

22 Նույն տեղում, էջ 303—309։

23 Տե՛ս Ս. Երեմյան. Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, ՊԲՀ, 1958, № 3, էջ 59—72։



րի հարավ-արևմտյան կողմում՝ Ասորեստանի սահմաններին մոտ, որի սերունդն աճելով ու բազմանալով լցնում է Սիմ կոչված լեռը[24]։

Խորենացուց բացի, ասորի անապատական Մար Ավգինի վարքում (IV դ.) ևս հանդիպում ենք այս պատմությանը. «Սենեքերիմի որդի Շարասարը (Սանասարը) Նինվեում իր հորն սպանելուց հետո փախել ու եկել հաստատվել էր այս վայրում ու հիմնել Սարգուգա քաղաքը»[25]։

Գրավոր սկզբնաղբյուրների հիշատակությունների համաձայն, վաղ ժամանակներից Տարոնի մի մասին Ողական ամրոցով տիրում էր Սլկունյաց նախարարական տոհմը[26]։ Սլկունիների մասին քիչ գիտենք։ Ըստ ավանդության, նրանց նախահայրը Սլաք անունով մեկն էր, որին հայոց թագավոր Վաղարշակը (որը նույնանում է Տրդատ Ա-ի (63—88) հետ) նշանակել էր լեռը պահպանելու[27]։

Տարոնի արևմտյան մասն Աշտիշատ կենտրոնով Վահևունիների քրմական տոհմի տիրույթն էր[28]։ Մինչև IV դ. սկիզբը՝ մինչ քրիստոնեության պետական կրոն ճանաչվելը, Աշտիշատը հեթանոսական Հայաստանի պաշտամունքային

24 Մովսես Խորենացի, էջ 70։

25 Հ. Մելքոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1970, էջ 80։

26 Մովսես Խորենացի, էջ 228; հմմտ. Н. Адонц, Армения, էջ 310։ Սլկունիները նույնացվել են խեթական աղբյուրներում հիշատակված Šala (Saik) ռազմիկ ցեղի հետ (տե՛ս Г. Капанцян, Хайаса, էջ 135—136;, թեև այս նույնացումը կասկածելի է համարվել (տե՛ս И. М. Дьяконов, Предыстория, էջ 52)։

27 Մովսես Խորենացի, էջ 116։ Խոսքն, անկասկած, Հայկական Տավրոսի կենտրոնական մասին է վերաբերում, որը կոչվում էր Սիմսար։ Պատմիչի մեկ ուրիշ վկայություն, այն, որ Սլկունիների նահապետն ամրացել էր Ողական ամրոցում՝ ապավինելով Սիմ լեռան բնակիչներին, այդ է հաստատում։ Հետագայի պատմիչները (Թովմա Արծրունի և Հովհաննես Դրասխանակերտցի) ևս նույն ձևով են կոչել Սիմսար լեռնաշղթան։ Լեռան պահպանություն ասելով Խորենացին նկատի ունի նրա վրա գտնվող կղեսուրների՝ լեռնանցքների հսկողությունը։

28 Նույն տեղում, էջ 122, հմմտ. Н. Адонц, Армения, էջ 310։

կարևորագույն կենտրոնն էր։ Այնտեղ Հայաստանի պանթեոնի գլխավոր աստվածներ Վահագնի, Անահիտի և Աստղիկի պատվին կառուցվել էին տաճարներ[29]։ Աշտիշատից բացի, մյուս վայրերում նույնպես տաճարներ էին հիմնվել[30]։

Կրոնական կենտրոններից բացի, տաճարները երկրի տնտեսական և քաղաքական կյանքի կարևորագույն օղակներն էին, որը պայմանավորված էր նրանց ընդարձակ հողատարածություններով, դրանց վրա աշխատող ձեռքերով, շարժական ունեցվածքով և ռազմական ուժով[31]։

Այս ամենի սեփականատերը Վահևունիների քրմական տունն էր՝ քրմապետի գլխավորությամբ։ Վերջինս նաև երկրի կրոնական առաջնորդն էր ու, ինչպես ենթադրվում է, վարում էր արքունիքի կարևորագույն գործակալություններից՝ մեծի դատավարությունը, այսինքն՝ դատական գործը[32]։ Ինչ խոսք, քրմական դասի և թագավորական իշխանության շահերը ընդհանուր էին և նրանք գործում էին փոխհամաձայնությամբ։

Տարոնում Սլկունիների փոխարեն հաստատվեցին Մամիկոնյանները։ Այնտեղ նրանց հիմնվելու ստույգ ժամանակաշրջանն անհայտ է։ Ըստ Մովսես Խորենացու, հայոց Տրդատ թագավորն իր դեմ ընդվզած Սլկունիներին Մամիկոնյանների ջանքերով հնազանդեցրեց և իբրև փոխհատուցում՝ նրանց տիրույթները շնորհեց վերջիններիս[33]։ Պատմահոր հիշատակած Տրդատը նույնական է Տրդատ Բ-ի հետ (216—252(3)[34]։ Այս վկայության ստուգության դեպքում կարելի է կարծել, որ Տարոնը Մամիկոնյաններին է անցել III դարի առաջին կեսին։ Տարոնը Մամիկոնյաններին է տրվել արքու-

29 Ագաթանգեղոս, էջ 421—422։

30 Հովհան Մամիկոնյան, էջ 79։

31 Տե՛ս *А. Г. Периханян,* Храмовые объединения Малой Азии и Армении (IV в. до н. э.—III в. н. э.), М., 1958.

32 *Н. Адонц,* Армения, էջ 447։

33 Մովսես Խորենացի, էջ 228—229։

34 Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 94։*



նիքում երկրի ռազմական ուժերի հրամանատարի՝ սպարապետության գործակալությունը նրանց կողմից գլխավորելու դիմաց, քանի որ, ինչպես հայտնի է, նրանց տոհմային՝ «սեպհական» տիրույթը Տայք նահանգն էր։ Տարոնն այսպիսով, Մամիկոնյանների պայմանական կամ «ձեռական» տիրույթն էր, որը հետագայում թագավորական իշխանության թուլության շնորհիվ վերածվեց ժառանգականի[35]։

Տարոնում տիրույթներ ունեին նաև Արշակունիների թագավորության արքունիքում մեկ այլ կարևոր պաշտոն ստանձնած հայր մարդպետները[36], որոնց վստահվել էր արքունիքի և կանանոցի, ինչպես նաև՝ ամրությունների, բերդերի, գանձերի ու կալվածքների վերահսկողությունը[37]։

Տրդատ Գ թագավորի օրոք (298—330) IV դ. սկզբին քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվեց պետական կրոն։ Նրա տարածման համար տակավին նախորդ դարում որոշակի հող էր նախապատրաստվել։ III դ. սկզբներից Տարոնում և հարավային Հայաստանում զգալի էր քրիստոնյա քարոզիչների գործունեությունը։

Նոր կրոնը ծագելով իբրև ճնշվող դասակարգի գաղափարախոսություն, աստիճանաբար կերպարանափոխվելով՝ դարձավ ֆեոդալական շահագործմանը սատարող ուսմունք։ Հայաստանում քրիստոնեության ընդունումը նշանավորվեց հեթանոսության դեմ անզիջում պայքարով։ Վերջինիս պաշտամունքի կենտրոնները կա՛մ փոխարկվեցին քրիստոնեական սրբավայրերի, կա՛մ նրանց փլատակների վրա կառուցվեցին եկեղեցիներ։ Այս սկզբունքով Աշտիշատի և Քարքե լեռան

35 Ս. Երեմյան, *Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում, «Ձեռական իշխանութիւնը» հին Հայաստանում, ՊԲՀ, 1971, № 1, էջ 7—8։*

36 Փավստոս Բուզանդ, էջ 117։

37 Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Երկեր հ. Բ, էջ 335։*

վրա գտնվող հեթանոսական տաճարների տեղերում հիմնվեցին քրիստոնեական նշանավոր եկեղեցիներ[38]։

Նախկին կրոնի ջատագովներ Վահևունիները դուրս մղվեցին երկրի քաղաքական կյանքից՝ իրենց տեղը զիջելով Գրիգոր Լուսավորչին և նրա տոհմի ներկայացուցիչներին։ Լուսավորչի տոհմը տիրացավ Վահևունիների սեփականությանը[39]։ Հին ուժերը, սակայն, իրենց դիրքերը դյուրությամբ չէին զիջում։ Այդ առումով Տարոնը փաստորեն դարձավ նրանց ու նոր կրոնի կողմնակիցների սուր պայքարի ասպարեզ։ Փավստոս Բուզանդի վկայությամբ այնտեղ քրմերը փորձեցին վերականգնել իրենց իրավունքները՝ դավադրություն կազմակերպելով Վրթանես կաթողիկոսի դեմ[40]։

V դարի 30-ական թվականներին հայոց Սահակ Պարթև կաթողիկոսի (388—439) փեսան՝ Համազասպ Մամիկոնյանը ժառանգեց նրա՝ Տարոնում եղած տիրույթը[41]։ Մամիկոնյանները, այսպիսով տիրացան ողջ Տարոնին։ Կաթողիկոսը հարկադրված էր իր տիրույթները դստերը կտակել, որովհետև կուսակրոնության զարգացման հետևանքով վերանում էր եկեղեցու պետի գահին ժառանգաբար տիրելու նախկին կարգը։ Այս հանգամանքը, բնականաբար, սպառնում էր կաթողիկոսի հողային սեփականությանը ևս[42]։ Սահակ Պարթևի կտակով Մամիկոնյանները Բագրևանդում ևս ստացան նրա տիրույթները[43]։

Հովհան Մամիկոնյանը VI դարի վերջերին Մուշեղ Մամիկոնյանին որակում է իբրև «զտէրն Մշոյ և Խութայ, Տարօնոյ

38 Փավստոս Բուզանդ, էջ 7, 37, 48, 114—115։ Հովհան Մամիկոնյան, էջ 99—100, 110—111։

39 Փավստոս Բուզանդ, էջ 117, հմմտ. *Н. Адонц*, Армения, էջ 310։

40 Փավստոս Բուզանդ, էջ 7—8։

41 Ղազար Փարպեցի, էջ 37—38։

42 Ս. Երեմյան, *Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը*, էջ 7։

43 Ղազար Փարպեցի, էջ 37, հմմտ. *C. Toumanoff*, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, էջ 209։



իշխանն և Սասնոյ»[44]։ Այս հաղորդումը, հավանաբար, չափազանցություն չէ։ Այլ տվյալներից հայտնի է, որ Մամիկոնյանների տիրույթների սահմանները ընդարձակվել էին Տարոնից ու ընդգրկել հարևան շրջանները։ Այսպես, 654 թ. հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու (639—654) մահից հետո, նրա փեսան՝ Համազասպ Մամիկոնյանն (654—661) իր աներոջ պաշտոնը ստանձնելուց բացի, ըստ երևույթին, տիրեց Բզնունիք գավառին[45]։ Իսկ Գրիգոր Մամիկոնյանի իշխանության տարիներին (661—685) Մամիկոնյանները տիրույթներ ձեռք բերեցին Արագածոտն գավառում՝ ուր կառուցեցին Արուճի եկեղեցին[46]։

Այսպիսով, Մամիկոնյանները երկրի քաղաքական կյանքում խաղում էին առաջնակարգ դերերից մեկը։ Դրան նպաստում էր նրանց տնտեսական հզորությունը, ռազմաքաղաքական գործունեության բազմադարյան ավանդույթները, չխամրող փառքը (Մամիկոնյաններն ունեին Հայաստանում երևան գալու իրենց առասպելը) և հավանաբար նաև կուլտուրական ընտրախավին պատկանելը։

### Բ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՀԱԿԱՄԱՐՏԸ ԵՎ ՏԱՐՈՆԸ

640 թ. աշնանը արաբական ուժերը Բաղեշի լեռնանցքով ներխուժեցին Տարոն[47]։ Այդպես սկսվեց Հայաստանի նվաճումը, որը տևեց կես դարից ավելի։ Համառ ու անզիջում դի-

44 Տե՛ս Հովհան Մամիկոնյան, էջ 158-ի ծանոթագրությունը։

45 Հմմտ. *C. Toumanoff*, Studies, էջ 213։

46 Ղևոնդ, էջ 15։ Գ. Հովսեփյան, *Քարտեզ հայ վիմագրության*, Վաղարշապատ, 1913, տախտակ Զ։ Հմմտ. նաև *И. А. Орбели*, Багаванская надпись 639 года и другие армянские ктиторские надписи VII века. Избр. труды, Ереван, 1963, էջ 401—404։

47 Հովհան Մամիկոնյան, էջ 285—286, հմմտ. նաև՝ *M. Ghazarian*, Armenien unter der Arabischen Herrschaft, Marburg, 1903, էջ 16—17; Հ. Մանանդյան, *Արաբական արշավանքները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ)*, Երկեր, հ. Բ, էջ 509—513։

մադրությունն անկարող էր թշնամուն կասեցնել։ Արաբներն իրենց գերակշիռ ռազմաուժով հաղթանակի հասան։ VIII դարի սկզբին (701 թ.) Մուհամմադ իբն Մարուանի (693—709) արշավանքներից հետո, Հայաստանը նվաճվեց[48]։ Երկրի պատմության մեջ սկսված այս շրջանը հայտնի է արաբական տիրապետության ժամանակաշրջան անունով։

Արաբական տիրապետությունը խիստ բացասաբար ազդեց Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի վրա։ Մահմեդական կրոնական մոլուցքով տոգորված՝ արաբները խողխողում, գերեվարում և ունեզրկում էին բնակչությանը, ոչնչացնում ժողովրդի ստեղծած արժեքները։ Կասեցվում էր երկրի տնտեսական զարգացումը։ Այս ամենով հանդերձ, արաբները նվաճված երկրների սոցիալ-տնտեսական հարաբերություններին ու սեփականության ձևերին միանգամից հասու չլինելով՝ անգիտանում էին վերջիններիս փոփոխության համար ու գոհանում միայն հարկային քաղաքականությամբ[49]։ Սրանով է բացատրվում հայ ֆեոդալների հողային ժառանգական իրավունքը խալիֆայության կողմից ճանաչելու փաստը, որը բխում էր մահմեդական իրավունքի սկզբունքներից։ Դրանց համաձայն, նվաճումներն առհասարակ կարող էին կատարվել բռնությամբ կամ խաղաղ ճանապարհով։ Եթե զենքով նվաճվող ժողովուրդներին որևէ առանձնաշնորհում կարող էր չտրվել, ընդհակառակը, խաղաղությամբ հնազանդվածները երբեմն ստանում էին անձի, ունեցվածքի, հավատի ապահովության իրավունք։ Վերջինս ուժի մեջ էր մտնում արաբների կողմից տրված յուրատեսակ պայմանագրերի ու արտոնագրերի շնորհիվ, որոնք արաբական աղբյուրներում հայտնի են **աման, ահդ, շարթ**[50], իսկ

48 Ղևոնդ, *էջ 19—20*։

49 *Е. А. Беляев*, Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье, М., 1966, *էջ 141*։

50 *J. Schacht*, Amān, Encyclopédie de l'Islam (*այսուհետև՝* EI) t. I, Leide—Paris, 1960, *էջ 441—442, նույնի* ʻAhd, *նույն տեղում, էջ 263*։ *Արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովրդի իրավական դրության մի շարք հարցեր քննարկվել են Ա. Տեր-Ղևոնդյանի հոդ-*



հայկականում՝ գիր, երդման գիր և այլ անուններով։ Այդ իրա-
վունքը կարող էր ձեռք բերվել նաև բանավոր համաձայնու-
թյամբ։

Սկզբնաղբյուրներում պահպանված պայմանագրերի ու
ուսումնասիրությունը ցույց է տալիս երկու կող-
շնորհագրերի
մերի որոշակի պարտավորությունները։ Հայ իշխանները հիմ-
նականում պարտավորվել են արաբներին հարկ վճարել, մահ-
մեդականներին հյուրընկալել, օգնել նրանց, խորհուրդներ
տալ և այլն։ Սրանց դիմաց հաճախ երաշխավորվել է նրանց
հողային սեփականության իրավունքն ու անձի, գույքի, կրո-
նի ապահովությունը։ Ըստ Բալաձուրու, 640 թ. արաբ զորա-
վար Իյադ իբն Ղանմը և 654 թ. Հաբիբ իբն Մասլաման հաշ-
տության պայմանագրեր էին տվել Կարինի, Անձևացիքի,
Խլաթի, Մոկքի, Արճեշի, Ապահունիքի, Բագրևանդի, Վասպու-
րականի իշխաններին[51]։ Նշված վայրերից շատերը սահմանա-
մերձ էին Տարոնին։ Վերջինս բացառություն չի կազմել ու,
թեպետև այդ մասին վկայություն չկա, բայց անտարակուսելի
է, որ նրա իշխանները նույնպես պայմանագրեր են ստացել՝
ապահովելով իրենց հողատիրական իրավունքը։ Հիշյալ պայ-
մանագրերն իրենց ուժը պահպանել կամ վերականգնվել են
հետագայում ևս։

Խալիֆայության գերիշխանության ժամանակաշրջանում Հայաստանը պահպանեց իր ռազմական ուժերը։ Հայ իշխաններն ունեին իրենց սեփական զորամիավորումները, որոնք հայոց իշխանի կամ հայոց սպարապետի հրամանատարությամբ պարտավոր էին կռվել արաբների թշնամիների՝ հիմնականում բյուզանդացիների ու խազարների դեմ։ Հայոց

*վածներում՝ Հայ նախարարների հողատիրական իրավունքները VII—IX դդ. ըստ խալիֆայության պայմանագրերի, ՊԲՀ, 1974, № 4, էջ 20—31, VIII—IX դդ. մահմեդական իրավունքը՝ վաղ միջնադարյան Հայաստանի ուսումնասիրության աղբյուր, ՊԲՀ, 1976, № 2, էջ 75—88, Հայ ժողովրդի իրավական վիճակը խալիֆայության տիրապետության ներքո, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «Լրաբեր»), 1975, № 4, էջ 74—83*։

51 *Baladhuri, էջ 310, 313—314*։

հեծելազորի թիվը հասնում էր շուրջ 15 հազարի։ Նրա պահպանության ծախսերը հաճախ խալիֆայությունն էր հոգում[52]։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանը մտնում էր Արմինիա վարչական միավորի մեջ, որտեղ ընդգրկված էին նաև Արևելյան Վրաստանը և Աղվանքը։ Արմինիայի կառավարչի կենտրոնը սկզբում Դվինն էր, հետագայում դարձավ Պարտավը (Աղվանք)։ Որպես կանոն, Արմինիայի կառավարչությունը տրվում էր միայն մահմեդականին, որի տեղակալը, ըստ էության, հայոց իշխանն էր։ Հայոց իշխանի հաստատությունը բացառիկ երևույթ էր ողջ խալիֆայության մեջ և Հայաստանի ինքնուրույնության ապացույց։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայոց եկեղեցին նույնպես պահպանեց իր քաղաքական և տնտեսական ուժը։ Խալիֆայությունը դարձյալ պայմանագրերի կամ ապահովության գրերի միջոցով ճանաչում էր եկեղեցու թե՛ տնտեսական և թե՛ կրոնական իրավունքը։ Եկեղեցին առաջվա նման մնում էր որպես ֆեոդալական խոշոր սեփականատեր, իսկ կաթողիկոսը երկրի քաղաքական կյանքում պահպանում էր իր ազդեցիկ դիրքը։ Պետականության չգոյության պայմաններում հայոց եկեղեցին փաստորեն պետական մի շարք կարևոր ֆունկցիաներ ուներ, որոնք էին՝ դատական, հարկային, կրթական, մշակութային և այլն։

Ասվածը, սակայն, պետք է վերապահությամբ ընդունել, որովհետև մահմեդականությունն իբրև գաղափարական կարևորագույն ներազդող միջոց, և արաբական գերիշխանության տարածմանը խթանող ուժ, անհանդուրժողականություն էր ցուցաբերում հպատակ այլակրոն ժողովուրդների ու նրանց հոգևոր հաստատությունների նկատմամբ։ Այս առումով կրոնական հալածանքները, եկեղեցու ունեցվածքի նկատմամբ ոտնձգությունները սովորական ու տարածված երևույթներ էին, որոնք ստիպում էին հայոց հոգևոր պետերին ընդդիմանալու դրանց։ Օրինակ, 703 թ. Մուհամմադ իբն Մարուան

52 Սեբեոս, էջ 164; Ղևոնդ, էջ 113, 128։



փոխարքայի հետ Խառանում հայոց եկեղեցական պատվիրակությունը բանակցելիս, շոշափում էր հավատի ազատության հարցը[53], իսկ մոտավորապես 719 թ. Օմար II (717—720) խալիֆայի հետ կաթողիկոս Հովհան Օձնեցին (717—728) քննարկում էր հավատի ազատության, եկեղեցու և հոգևորականների ապահարկության հարցերը[54]։

Թեպետև առանձին դեպքում, օրինակ 813—847 թթ., Հայաստանում նրանց հարկային քաղաքականությունը համեմատաբար տանելի էր, բայց ըստ էության, Աբասյաններին բնորոշ էր հարկային ծանր լուծը։ Արաբներն ընդհանրապես հարկերը գանձում էին ըստ ծխերի, բայց 725 թ. Հայաստանում անցկացված մարդահամարից հետո այդ կարգը փոխվեց և դրանց չափը սահմանվեց բնակչության թվաքանակին ու ունեցվածքին համապատասխան[55]։ Սրանից զատ, բնատնտեսության տիրապետության պայմաններում հետզհետե նախապատվությունը տրվում էր դրամական հարկային սիստեմին, որը նպաստում էր բնակչության ծայրահեղ աղքատացմանն ու տնտեսական քայքայմանը։

Ղևոնդի վկայությամբ, VIII դարի կեսերին, սահմանելով հարկահանության նոր կարգ՝ ըստ բնակչության շնչի և ունեցվածքի, արաբները հետևողականորեն պահանջում էին վճարել նույնիսկ մեռածների փոխարեն[56]։ Յուրաքանչյուրի պարանոցին կապարե կնքված նշաններ կախելով, նրանք կարողանում էին որոշել հարկ վճարելուց խուսափողներին։ Հարկերը գանձվում էին հարկատուներին ամենախիստ տանջանքների ու խոշտանգումների ենթարկելով։ Մանսուր խալիֆայի օրոք (754—775) դրամի պակասը, ժողովրդի անվճարունակ լինելը, հարկահանների դաժանությունները ստիպում

53 Ղևոնդ, էջ 28—31։

54 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 68։

55 Ղևոնդ, էջ 100—101։ Մովսես Կաղանկատվացի, էջ 258։

56 Ղևոնդ, էջ 127։

3—1281

էին շատ շատերին թողնել հայրենի տները և պատսպարվել դժվարամատույց վայրերում[57]։

VIII դարի կեսին (750 թ.) խալիֆայության մեջ ծայր առած գահակալական պայքարն ավարտվեց Աբասյանների հաղթանակով։ Ի տարբերություն նախորդ՝ Օմայան հարստության, որը զուտ արաբական էր, և նրանց օրոք երկրի քաղաքական կյանքին կարող էր մասնակցել միայն արաբը, Աբասյան հարստությունը դարձավ համամահմեդական ու այդ իրավունքն արտոնվեց մահմեդականին՝ առանց նրա ազգային պատկանելությունը հաշվի առնելու[58]։ Աբասյանների պետական-քաղաքական ծրագիրը տարբեր դավանանք ու շահեր ունեցող ժողովուրդներին մեկ միության մեջ համախմբելն էր։

Պետությունը տնտեսական լուրջ դժվարությունների հանդիպեց, երբ նրանից որոշ երկրներ անկախացան[59]։ Դրա հետևանքով նվազեցին պետական եկամուտները։ Խալիֆայությունը մշտապես դրամական կարիքի մեջ էր նոր մայրաքաղաք Բաղդադի հիմնադրումից ի վեր (762 թ.), ինչպես նաև խալիֆաների շռայլ ու ցոփ կենցաղի հետևանքով։ Աբասյանները երկրի տնտեսական այս դժվարությունները փորձեցին հաղթահարել հպատակ ժողովուրդների հարկային կեղեքումներով։ Բնակչության մի մասը հարկային վճարումները կատարելու համար ստիպված էր իրեն վաճառել։ Այս երևույթը հավանաբար տարածում էր գտել, քանի որ 768 թ. Պարտավի եկեղեցական ժողովը դրան հատուկ ուշադրություն էր դարձնում, իսկ նման քայլ կատարողներին՝ նզովում[60]։

Արաբների հարկային կեղեքումը հիմնականում տարածվում էր արտադրող դասակարգի՝ գյուղացիության վրա։ Այդուհանդերձ հայ ազնվականությունը՝ աշխարհիկ թե հոգևոր,

---

57 Նույն տեղում, էջ 135—137։

58 *P. Hitti*, History of the Arabs, London, 1946, էջ 289: *B. Lewis*, Abbasids, EI, t. I, էջ 17։

59 *B. Lewis*, Abbasids, էջ 18։

60 Կանոնագիրք Հայոց, հ. Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 11։



պարբերաբար զանազան թանկարժեք ընծաներ էր նվիրաբերում նրանց։ Թեպետև մահմեդական իրավունքը ճանաչում էր եկեղեցու և հոգևորականության ապահարկությունը, բայց դա չէր խանգարում, որ նշված ժամանակաշրջանում հարկերի վճարման նպատակով վաճառքի հանվեր եկեղեցու ունեցվածքը։ Վերոհիշյալ եկեղեցական ժողովը ևս ծանրանում էր այս հարցին և եկեղեցու ունեցվածքը հռչակում անձեռնամխելի ու խստորեն դատապարտում նրա նկատմամբ ոտնձգություն կատարողներին[61]։

Հայ ազնվականների՝ արաբներին տրված ընծաներն ավելի էին խորացնում գյուղացիության ֆեոդալական շահագործումը, որովհետև այդ արվում էր փաստորեն նրանց հաշվին։ Գյուղացիները, բացի դրանից, հարկեր էին վճարում սեփական ֆեոդալներին և եկեղեցուն։

VIII դ. վերջերին և IX դ. սկզբներին Արմինիան խալիֆայության գանձարանն էր մուծում 13 միլիոն դիրհեմ հարկ, որի մոտավորապես կեսը վճարում էր Հայաստանը։ Սրանից բացի Հայաստանը տալիս էր նաև 20 գորգ, 580 կտոր գործվածքեղեն, 10 հազար լիտր աղած ձուկ, նույնքան տառեխ, 200 ջորի և 30 բազե[62]։ Հարկային այս ցուցակի հեղինակը արաբ պատմիչ Իբն Խալդունն է (1332—1406), որն օգտվել է X դարի հեղինակ Ջահշիարիի գրքից, ուր օգտագործված են VIII—IX դդ. նյութերը, հետևաբար, վերոհիշյալ տեղեկությունը դիտվում է հավաստի։ Հարկային քաղաքականությունից բացի, երկրի տնտեսական կյանքին զգալապես ազդեց հայկական զորաբանակի պահպանության ծախսերի վճարումներից Աբասյանների հրաժարումը։

Հայաստանի քաղաքական տրոհման հետևանքով երկրում ձևավորվել էին տարբեր հոսանքներ։ Իրենց ինքնուրույ-

---

61 Նույն տեղում։

62 Հ. Նալբանդյան, Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում։ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիր» (այսուհետև «Տեղեկագիր»), Երևան, 1954, № 12, էջ 83; Հմմտ. նաև Ա. Տեր-Ղևոնդյան, Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում, «Լրաբեր», 1969, № 2, էջ 53։

նությունն ու անկախությունը սեփական ուժերով ապահովելու անկարողությունը հայ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալներին երկփեղկել, դարձրել էր հակադիր բևեռներ։ Նրանք սուր մրցակցության ու պայքարի պայմաններում ձգտում էին ապահովել երկրի քաղաքական անկախությունը՝ այստեղ իրենց գերիշխանությունը հաստատած մե՛րթ այս, մե՛րթ այն պետության օգնությամբ։

Հայաստանում արաբական գերիշխանությունը նշանավորվեց հայ ֆեոդալների՝ երկրի ինքնուրույնության պատվարի, դեմ մղված պայքարի ուժեղացմամբ։ Այդ քաղաքականությունն իր սուր ծայրով ուղղվեց հատկապես Մամիկոնյանների դեմ, որովհետև նրանք հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի ղեկավարներն ու կազմակերպիչներն էին և հաջողության հասնելու համար հաճախ ապավինում էին Բյուզանդիային՝ արժանանալով խալիֆայության անվստահությանը։ Հայաստանի պատմության նախընթացի մեջ խորամուխ լինելով, բացահայտելի են Մամիկոնյանների բյուզանդամետ կողմնորոշումն ու դրա ակունքները։ Հայաստանին տիրելու բյուզանդա-իրանական հակամարտությունները ավարտվեցին 387 թ. նրա քաղաքական առաջին բաժանմամբ։ Բաժանման գիծը հյուսիսից հարավ ձգվում էր Կարին-Մծբին ուղղությամբ[63]։ Երկու պետությունների սահմանն անցնում էր Տարոնից արևմուտք։ Թե՛ Իրանը և թե՛ Բյուզանդիան սահմանային այս գոտու տարբեր հատվածներում կառուցել էին ռազմաստրատեգիական հեցակետեր, ուր տեղավորել էին իրենց կայազորները։ Այս հեցակետերի զգալի մասը հարավից և արևմուտքից մերձակա էին Տարոնին։

Հարավում՝ Աղձնիքում ընկած էին իրանական Արզն, Քղիմար, Աքբա, Ափում ամրակետերը, սրանց դիմաց՝ բյուզանդական Մարտիրոպոլիսը, Աթթախը և Փիսը[64]։ Տարոնին մոտակա Հաշտյանք և Խորձյան գավառների պահպանությունը ապահովում էին բյուզանդական Կիթառիճը և Արտալեսը[65]։

63 Н. Адонц, Армения էջ 4։

64 Նույն տեղում, էջ 5—11։

65 Նույն տեղում, էջ 14։



591 թ. Հայաստանի քաղաքական երկրորդ բաժանմամբ Տարոնը Իրանից անցավ Բյուզանդիայի գերիշխանության ներքո, ուժեղացավ վերջինիս քաղաքական, մշակութային և դավանաբանական ազդեցությունը։

Հակառակ Մամիկոնյանների, Բագրատունիները հակվեցին դեպի խալիֆայությունը, որը նպաստեց նրանց նկատմամբ արաբների ցուցաբերած վստահության մեծացմանը։ Սակայն խալիֆայությունն ի հակակշիռ Մամիկոնյանների, առաջին պլան մղելով Բագրատունիներին, անշուշտ, նպատակ չուներ վարձահատույց լինել նրանց։ Կարևորն այն էր, որ Բագրատունիների միջոցով պայքարելով Մամիկոնյանների ազդեցության դեմ, նա կսրեր երկրի ներսում եղած պայքարը՝ թուլացնելով թե՛ մեկ և թե՛ մյուս նախարարությանը։ Այս քաղաքականությունն այնքան հատկանշական էր նրանց, որ անգամ 750 թ., երբ խալիֆայության մեջ բռնկված գահակալական կռիվներում Բագրատունիները հակվեցին դեպի Օմայանները, թվում էր, թե հաղթանակած Աբասյանները հաշվեհարդար կտեսնեն նրանց հետ ու կգերադասեն Մամիկոնյաններին, սակայն Հայաստանում արաբների կողմից առաջնությունը դարձյալ տրվեց Բագրատունիներին։ Ինչպես հստակ երևում է Հայաստանում իշխած հայոց իշխանների ցուցակից, 753 թ. Մուշեղ Մամիկոնյանի իշխանությունից հետո, հայոց իշխանի պաշտոնը երբեք չտրվեց նրանց։ Այն փաստորեն դարձավ Բագրատունիների ժառանգական իրավունքը[66]։

Մամիկոնյան ֆեոդալական տունը քաղաքականապես տկարացնելուց բացի, խալիֆայության որոշ ձեռնարկումներ անուղղակիորեն սպառնում էին նրանց տնտեսական դիրքերին։ Խալիֆայության համար առանձնահատուկ նշանակություն ուներ Բյուզանդիային և խազարներին սահմանակից երկրներում ամրություններ ստեղծելն ու այդ կարևոր կետերն արաբական բնակչությամբ բնակեցնելը։ Դա արվում էր իր հիմ-

66 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյանի կազմած հայոց իշխանների ցուցակը, ՊԲՀ, 1964, № 2, էջ 130։

նական թշնամիների դեմ պայքարելու, ինչպես նաև՝ համապատասխան շրջանների բնակչությանը հնազանդ պահելու նպատակով։ Արաբա-բյուզանդական տևական ռազմական մրցակցության ողջ ժամանակաշրջանում առաջնակարգ նշանակություն ուներ սահմանային ամրությունների այն շղթան, որը սկսվում էր Եփրատի ակունքներից և ձգվում մինչև Միջերկրականի ծովափը։ Պաշտպանական այս գոտին արաբները կոչում էին Սուղուր։ Այն իր հերթին բաժանվում էր երկու՝ Միջագետքը (Սուղուր ալ-Ջազիրա) և Ասորիքը (Սուղուր ալ-Շամ) պաշտպանող մասերի։ Առաջինի ապահովության համար կարևոր էին Մելիտենեն (արաբ. Մալաթիա), Սոզոպետրա (Զիբաթրա), Հիսն Մանսուր, Բեհեսնա, Ալ-Հադաս, Մարաշ, Ալ-Հարունիա, Քանիա և Անազարբա (Այն Զարբա) բերդաքաղաքները։ Ասորիքի սահմանային գոտու հենակետերն էին Մսիսը, Ադանան և Տարսոնը[67]։

Պաշտպանական տեսակետից արաբների համար ոչ պակաս կարևոր նշանակություն ունեին սահմանային այս շղթայի մերձակա կետերը[68], որոնց մի մասը ոչ միայն արևմուտքից էր մոտեցել Մամիկոնյանների տիրույթներին, այլև հարավից։ Հարավում ևս, դարձյալ վերոգրյալ նպատակներով, Մամիկոնյանների կալվածքներին էր սահմանակցվել արաբներով բնակեցված Ջազիրա նահանգը, որի առանձին շրջանները կոչվում էին այնտեղ հաստատված ցեղերի անուններով՝ Դիար Ռաբիա, Դիար Մուդար և Դիար Բաքր[69]։ Այդ ցեղերն արաբական նվաճումների հենց սկզբից հաստատվելով այստեղ, ընդհուպ մոտեցել էին Տարոնին և Մամիկոնյանների

67 *А. А. Васильев,* Византия и арабы. Политические отношения Византии и арабов за время Аморийской династии, СПб., 1900, էջ 78—79։ *G. Le Strange,* The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1966, էջ 128; *E. Honigmann,* Al-Thughur EI, Leyden—London, 1929, fasciculus K, էջ 738—739։

68 *M. Canard,* al-Awaşim, EI. t. I, էջ 783—784։

69 Ջազիրայի մասին տե՛ս *M. Canard,* Histoire de la dynastie des Hamdanides, էջ 75—143; նույնի al-Djazira, EI, t. II, Leyde—Paris, 1965, էջ 536—537; *G. Le Strange* The Lands, էջ 86—114։



հարավային մյուս տիրույթներին ու սպառնում էին նրանց գոյությանը։

Խալիֆայության նշված քաղաքականությունը, բնականաբար, առանց դիմադրական արձագանքի չէր անցնելու տոհմային ֆեոդալական իրավունքի շահերով տոգորված Մամիկոնյանների կողմից։ Վերջիններս գիտակցելով երկրի քաղաքական կյանքից իրենց մեկուսանալու վտանգը, ինչպես նաև սեփական հողային տիրույթների նկատմամբ եղած սպառնալիքը, փորձում էին դրանք վերացնել արաբական տիրապետության դեմ ծառանալու ուղիով՝ իրենց պայքարը լծորդելով սոցիալական կեղեքումներից դժգոհ ժողովրդական զանգվածների տրամադրություններին։

732 թ. Մարուան իբն Մուհամմադը նշանակվեց խալիֆայության հյուսիսային մարզերի կառավարիչ։ Դվինում իրեն դիմավորելու եկած հայ իշխաններից Վասակ Բագրատունու որդի Աշոտին (732—749) նա ճանաչեց հայոց իշխան[70]։ Վերջինիս ընդդիմացան Գրիգոր և Դավիթ Մամիկոնյան եղբայրները, որոնք, հավանաբար, նույնպես ձգտում էին այդ պաշտոնին։ Աշոտի և Մամիկոնյանների ներհակություններն աստիճանաբար խորանալով՝ վերաճեցին թշնամանքի։ Հայոց իշխանը հարկադրված իր հակառակորդներին մեկուսացրեց երկրի քաղաքական կյանքից և աքսորեց Եմեն[71], որտեղ, սակայն, նրանք երկար չմնացին։ Ազատվելով աքսորից, Մամիկոնյանները վերադարձան Հայաստան, ուր հակառակորդի հետ որևէ փոխըմբռնման չէին կարող հանգել։ Նրանց հակամարտության երկրորդ դրվագն անողոք էր ու անզիջում։ Դավիթը, հայտնի չէ թե ինչու, խալիֆայի գիտությամբ մահվան դատապարտվեց։ Հայոց իշխանը մեղսակիր էր դրանում։ Վերջինս դժվար կացության առջև կանգնեց և անկարող էր այդ պայմաններում իշխել։ Նա հարկադրված մեկնեց Ասորիք՝ Մարուանին տեղեկացնելու իրերի վիճակը։ Աշոտ Բագրատունու բացակայությունից օգտվելով, Գրիգոր Մամիկոնյանը

70 Ղևոնդ, էջ 112։

71 Նույն տեղում, էջ 113։

Արմինիայի կառավարիչ Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլիի ջանքերով դարձավ երկրի ռազմական ուժերի հրամանատար և, ըստ էության, վարում էր հայոց իշխանի պաշտոնը։ Աշոտ Բագրատունին Մարուանից (որն արդեն դարձել էր խալիֆա (744—750) ստանալով իր պաշտոնում վերահաստատվելու իրավունքը՝ վերադարձավ Հայաստան[72]։ Դրանից հետո Գրիգոր Մամիկոնյանի և հայոց իշխանի փոխհարաբերությունները կարգավորվել էին, որը, սակայն, կարծեցյալ էր։ 747 թ. Մամիկոնյան իշխանն իր կողմը ներգրավելով հայ իշխաններից շատերին՝ ապստամբվեց արաբական իշխանության դեմ[73]։ Ապստամբության հեռանկարի տեսանկյունից կարևոր էր Աշոտի դիրքորոշումը, ուստի Գրիգոր Մամիկոնյանն իր ձեռնարկումը փորձում էր իրականացնել նրա մասնակցությամբ։ Աշոտ Բագրատունին կանգնած էր երկընտրանքի առաջ՝ կամ պիտի մերժեր կամ ընդուներ այդ առաջարկը։ Անձամբ նա հակված էր առաջինին, որովհետև ճիշտ գնահատելով ուժերի հարաբերակցությունը՝ բացառում էր հաջողության հնարավորությունը։ Բայց Գրիգոր Մամիկոնյանը կորզեց նրա համաձայնությունը և հարկադրեց Աշոտին՝ իրեն միանալ[74]։

Ապստամբության ղեկավարները հաստատվեցին Տայքում, բյուզանդացիներին մոտիկ, նրանցից օգնություն ստանալու ակնկալիքով։ Բյուզանդական կայսրությունը խալիֆայությանը հարվածելու պատեհությունը չկորցնելով երբեք, անշուշտ, օգտագործելու էր հայերի ընդվզումը։ Այդ պատճառով նրանց միջև նախապես համաձայնություն էր կայացվել[75]։ Սակայն վճռորոշ պահին Աշոտը լքեց ապստամբներին, թողեց նրանց ճամբարը և հաստատվեց Բագրևանդ գավառի Հացր գյուղում։ Գրիգոր Մամիկոնյանը հետապնդելով նրան՝ ձերբակալեց ու կուրացրեց[76], որով լուծեց իր եղբոր սպանու-

72 Նույն տեղում, էջ 121։

73 Նույն տեղում, էջ 122։

74 Նույն տեղում։

75 Նույն տեղում, էջ 123։

76 Նույն տեղում, էջ 123—124։ Աշոտի դեմ ըմբոստացած իշխանների մասին Ղևոնդի հաղորդումն անորոշ է ու երկդիմի։ Չնայած դրան, հետազո-



թյան վրեժը։ Ապստամբները չընկրկեցին։ Նրանք Գրիգոր Մամիկոնյանի գլխավորությամբ որոշ հաջողությունների հասան։ Մասնավորապես նշանակալից էր նրանց կողմից Կարին քաղաքի գրավումն ու այն իրենց կենտրոն դարձնելը, ուր Գրիգոր Մամիկոնյանը, պատմիչի ասելով, տոնում էր իր հաղթանակը[77]։ Սակայն 749 թ. նա հանկարծակի մեռավ։

տողները հարկադրված կառչում են դրանից՝ այլուստ տվյալների բացակայության պատճառով։ Ղևոնդը Աշոտից դժգոհ իշխաններից հականե հանվանե հիշատակում է Գրիգոր ու Դավիթ Մամիկոնյաններին, բայց նրանցից զատ հանդիպում ենք նաև «Սմբատի որդիներ» արտահայտությանը։ Այս հանգամանքը ծնել է երկու տարբեր մոտեցումներ։ Ոմանք «Սմբատի որդիներին» նույնացրել են Գրիգորի և Դավթի հետ (տե՛ս Ղևոնդի երկին կցված 42-րդ ծանոթագրությունը, որի հեղինակը Ք. Պատկանյանն է; Ն. Ակինյան, Ղևոնդ երէց և Մովսէս Խորենացի, Մատենագրական հետազօտութիւններ, հ. Գ, Վիեննա, 1930, էջ 239—240; Ստ. Մելիք-Բախշյան, Հայաստանը, էջ 305)։ Իսկ մի քանիսը Սմբատ անունը դիտելով միայն Բագրատունիներին առանձնահատուկ, եզրակացրել են, որ Աշոտին դեմ են եղել թե՛ Մամիկոնյանները և թե՛ Բագրատունիները (տե՛ս Յ. Մարկվարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 25—26)։ Վերջիններս նույնացվել են Սմբատ կուրապաղատի՝ անունները մեզ անհայտ որդիների հետ, որոնք ըստ այս տեսակետի պաշտպանների, միացել են Մամիկոնյաններին ու նրանց նման աքսորվել երկրից (տե՛ս Ն. Ադոնց, Բագրատունեաց փառքը, էջ 125—127)։ Հիշյալ ուսումնասիրողները չեն կառչել լոկ Սմբատի անունը կռվան ծառայեցնելուց։ Նրանց ուշադրությունը բևեռվել է նաև Ղևոնդի տեքստի այն հատվածին, ուր մեկ հիշատակվում է Դավիթ և Գրիգոր Մամիկոնյանների՝ Եմեն աքսորվելը, մեկ էլ՝ Սմբատի որդիների Ասորիքից ազատվելն ու հայրենիք վերադառնալը։ Եթե հետևենք Սմբատի որդիներին Մամիկոնյաններից չտարբերողներին, ապա պիտի հաղթահարենք մեծ դժվարություն, պնդենք, թե Ղևոնդը չի զատորոշում Եմենը Ասորիքից։ Այնուհետև պատմիչի՝ «Մրուան տեղեկացեալ զամբաստանութիւնն զորդւոցն Սմբատայ և զոր ինչ արար ընդ նա Դաւիթ եղբայր Գրիգորի» արտահայտությունը նույնպես հիմք է ծառայում «Սմբատի որդիներին» տարբերելու Գրիգոր և Դավիթ Մամիկոնյաններից (տե՛ս C. Toumanoff, Studies, էջ 349, ծան. 39)։ Վերջապես, Սմբատի որդիները, ինչպես ենթադրվում է, Գրիգոր Մամիկոնյանի հետ հայոց իշխանի դեմ համատեղ պայքարելուց բացի, մասնակցել են նաև նրա կուրացմանը (տե՛ս Ն. Ադոնց, Բագրատունեաց փառքը, էջ 126)։

77 Ղևոնդ, էջ 124։

Այսպիսով, պատմական այս դրվագը ցայտունորեն հայտանշում է ոչ միայն արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը, այլ նաև երկրի իշխանական երկու տոհմերի՝ ինչպես նաև միևնույն տոհմի միջև եղած ներհակությունները։ Բագրատունիների և Մամիկոնյանների հիշյալ հակամարտությունները ավելի էին խորանում։

Մինչև ե՞րբ էին Մամիկոնյանները տիրում Տարոնին։

Ժ. Լորանը, մատնանշելով Ղևոնդի երկը, կարծիք է հայտնել, թե 747—750 թթ. հիշյալ ապստամբությունից հետո Բագրատունիները Մամիկոնյաններից նվաճեցին Տարոնը, որի առաջին իշխանը դարձավ հայոց իշխան Սահակ Բագրատունին[78]։ Հետագայում, ըստ այս վարկածի, հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին Տարոնից հեռացնելով իր զարմիկներին՝ Սահակի ժառանգներին, այնտեղ հաստատեց Վասակին՝ իր եղբորը[79]։ Այս տեսակետը մասամբ որդեգրվել է որոշ հետազոտողների կողմից[80], թեպետ նաև հերքվել է արդարացի այն պատճառաբանությամբ, որ Ղևոնդի երկում նման եզրակացության համար կռվաններ չկան[81]։ Այսուհանդերձ, առաջադրված հարցը կարոտ է հանգամանալից քննության։

Բերենք Ղևոնդի՝ Սահակին, Սմբատին և Վասակին վերաբերող բոլոր տեղեկությունները։ Ըստ պատմիչի, Սահակը 753 թ. (753—770) Արմինիայի կառավարիչ Յազիդ իբն Ուսայդ ալ Սուլամիի (752—754, 759—769, 775—780) կողմից նշանակվեց հայոց իշխան։ Նրա հայրը՝ Բագրատը և Աշոտի (Կույրի) հայրը՝ Վասակը եղբայրներ էին[82]։ Հայոց իշխանը, այնուհետև Տրդատ կաթողիկոսի (741—764) հետ բողոքել էր Յազիդի հարկային խիստ քաղաքականության դեմ և ար-

78 J. Laurent, L'Arménie, էջ 93։

79 Նույն տեղում, էջ 94։

80 R. Grousset, Histoire, էջ 321; Ս. Կոգյան, Կամսարականները «Տեարք Շիրակայ և Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 166—167։

81 C. Toumanoff, Studies, էջ 324։

82 Ղևոնդ, էջ 128։



դյունքի հասել։ Վերջինս հեռացվել էր իր պաշտոնից[83] (769 թ.)։ Սահակի մասին Ղևոնդն այլևս ոչինչ չի հաղորդում։

Աշոտ Բագրատունու որդի Սմբատ սպարապետին պատմիչը հիշատակում է 774 թ. արաբների դեմ ապստամբած Արտավազդ Մամիկոնյանին հետապնդողների թվում[84]։ Այնուհետև նա անցնում է ապստամբների կողմը և զոհվում կռվի դաշտում։ Հայտնի է նաև Սամվել Մամիկոնյանի դստեր հետ նրա ամուսնացած լինելը[85]։ Սմբատի մասին մենք այսքանը գիտենք։

Վասակն, իրոք, Սմբատ սպարապետի եղբայրն էր[86]։ Անդրադառնալով 774 թ. արդեն սկսված ապստամբությանը և հայ իշխանների տարաձայնություններին, պատմիչը գրում է. «Զի նախարարք տանն Արծրունեաց Համազասպ և եղբարք իւր և զօրք նորին մնացին անդէն ի կողմանս Վասպուրական աշխարհին. և Վասակ որդի Աշոտոյ և որք ի տոհմէ Ամատունեացն և Տրունեաց՝ մնացին անդէն, ոմանք յամուրն բերդի ի Դարիւնս գեօղ և ի ծագն Մակուայ, և ոմանք ի ձորն Արագեղտայ ամրացեալք՝ սփռէին շուրջ զգաւառօքն ի պէտս կերակրոց և անդրէն դառնային յամուրս իւրեանց»[87]։ Այնուհետև, Վասակը միանում է Արծրունիներին և Ամատունիներին, նրանց հետ մեկտեղ արշավում Արճեշ՝ թշնամու դեմ կռվելու[88]։ Տարոնը Վասակին պատկանած լինելու վարկածին նպաստել է արաբների դեմ Արճեշում (Տարոնին մոտիկ) նրա կռվելու պարագան[89], որը սակայն, այդ առումով էական չէ։

83 Նույն տեղում, էջ 136։

84 Նույն տեղում, էջ 138—139։

85 Նույն տեղում, էջ 150—151։

86 Նույն տեղում, էջ 146։

87 Նույն տեղում, էջ 144։ Արդյո՞ք այս վկայությունից կարելի է հետևցնել, թե Դարոյնքը պատկանում էր Համազասպ Արծրունուն, ինչպես այդ անում է Ժ. Լորանը (տե՛ս J. Laurent, L'Arménie, էջ 99)։ Դարոյնքը Բագրատունիների տիրույթն էր մինչև այն ժամանակաշրջանը, երբ Աշոտ Մսակերը Կամսարականներից գնեց Արշարունիքը (տե՛ս Ասողիկ, էջ 106)։

88 Ղևոնդ, էջ 146—147։

89 J. Laurent, L'Arménie, էջ 99։

Այնինչ Ղևոնդից վերը բերված վկայությունը համոզում է, որ Վասակ Բագրատունին ոչ թե իշխում էր Տարոնում, այլ Բագրատունիների տոհմական գավառում՝ Կոգովիտի Դարոյնքում։ Ավելին, Ղևոնդի մեկ այլ, նույնիսկ անուղղակի տեղեկությունից, երևում է, որ մինչև VIII դարի 70-ական թթ. Տարոնը պատկանում էր Մամիկոնյաններին։ Այսպես, պատմիչը տեղեկացնում է, որ 774—775 թթ. ապստամբությունն սկսվեց Արտավազդ Մամիկոնյանի ելույթով, երբ վերջինըս Կումայրիում ջարդեց արաբ հարկահաններին և հեռացավ ու հաստատվեց Վրաստանում։ Դրանից հետո արաբների դեմ պայքարը շարունակեց նույն տոհմից Մուշեղ Մամիկոնյանը, որը պատմիչի ասելով, «...միաբանեալ ընդ իւր զոմանս ի նախարարացն Հայոց՝ ի բաց եկաց ի հնազանդութենէ Իսմայելի. և գտեալ զոմանս յորդւոցն Իսմայելի ի գաւառի իւրում և ի տան իւրում, որք եկեալ պահանջէին ի նմանէ զարիւնս ոմանց սպանելոց ի տոհմէ իւրեանց՝ խողխողէր զնոսա ի սուր սուսերի իւրոյ։ Եւ ինքն գաղթէր յամրոցն Արտագերոյ հանդերձ տամբ իւրով»[90]։

Որքան էլ որ Մուշեղ Մամիկոնյանի Արտագերս գալը խիզախ քայլ համարենք և այն դիտենք որպես մարտահրավեր Դվինում ու Կարինում եղած արաբական կայազորներին, այնուամենայնիվ, այնտեղ հաստատվելով, նա նախ ձգտում էր իր ընտանիքի անդամներին ապահովել թշնամու հարձակման վտանգից։ Որտեղի՞ց կարող էր Մուշեղ Մամիկոնյանը գաղթել Արտագերս. կամ Տայքից, կամ էլ Տարոնից։ Նրա սեփական գավառները կարող էին լինել Տայքն ու Տարոնը[91], քանի որ պատմիչը պարզորոշ նշում է՝ արաբները եկել էին նրա գավառը և ձգտում էին իրենց արյունակիցների սպանության համար վրեժխնդիր լինել։ Տայքում, բնականաբար, նա չէր կա-

90 Ղևոնդ, էջ 139։

91 Բագրևանդում ևս Մամիկոնյաններ կային, սակայն պատմիչի այն հաղորդումից, թե Մուշեղը սկզբում ոչնչացրեց իր գավառի արաբներին, ապա Բագրևանդում եղած հարկահաններին, պարզ է դառնում, որ նրա գավառը և Բագրևանդը չեն նույնանում (տե՛ս Ղևոնդ, նույն տեղում)։



րող լինել. արաբների դեմ ապստամբություն նախապատրաստող Մուշեղը չէր կարող ապրել Հայաստանի ծայրագույն նահանգում՝ կտրվելով երկրի քաղաքական կյանքից։ Եթե անգամ ընդունենք թե Մուշեղը Տայքում էր, ապա այն ապահովության հուսալի վայր էր, քանի որ մինչ այդ հայ նախարարներից շատերը խուսափելով արաբների հետապնդումներից, բազմիցս ապաստանել էին այնտեղ։ Հետևաբար, հազիվ թե Մուշեղ Մամիկոնյանը ձգտեր ավելի մոտ լինել նրանց, այսինքն Տայքից գալով հաստատվեր Արտագերսում։ Այսքանից հետո առավել հավանական է թվում, որ Մուշեղ Մամիկոնյանն Արտագերս է գաղթել Տարոնից[92]։ Եվ եթե 774—775 թթ. ապստամբության ժամանակ Տարոնը դեռևս պատկանում էր Մուշեղ Մամիկոնյանին, հետևաբար, այն VIII դ. կեսին Բագրատունիներին չէր կարող անցած լինել։

Երրորդ փաստը, որը խոսում է 750 թ. Տարոնը Մամիկոնյաններից Բագրատունիներին անցած լինելու կարծիքի դեմ, հիշատակված 774—775 թթ. ապստամբությունը նրանց իսկ՝ Մամիկոնյանների կողմից ղեկավարելու իրողությունն է։ Այս ելույթն իրավամբ դիտվում է Հայաստանում օտար լծի դեմ ուղղված երկրորդ հուժկու ընդվզումը 450—451 թվականներից հետո[93]։ Եթե Մամիկոնյաններն այնքան ուժեղ չէին, որ կարողացան կազմակերպել ու ղեկավարել նման ելույթ, հետևաբար նրանց դիրքերը Հայաստանում դեռևս չէին սասանվել ու հազիվ թե կորցրած լինեին իրենց տիրույթները։

Այսպիսով, VIII դարի կեսին Մամիկոնյանները դեռևս շարունակում էին տիրել Տարոնին։ Հիշյալ ժամանակաշրջանում նրա՝ Բագրատունիներին անցնելու վարկածը չի հաստատվում սկզբնաղբյուրների տեղեկություններով[94]։

92 Հմմտ. նաև Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 524։

93 Նույն տեղում, էջ 525, հմմտ. Ստ. Մելիք-Բախշյան, Հայաստանը, էջ 339։

94 Հարցին առնչվում են նաև վրաց մատենագրության նյութերը, որոնք փաստական ու ժամանակագրական խճողումներով հանդերձ, պատմական ուշագրավ հենք ունեն։ Դրանցից մեկը հիշատակում է Արչիլի օրոք Տարո-

747—750 թթ. Հայաստանում ծավալված ընդվզումը եզակի ու մեկուսի չէր։ VIII դ. ասորի պատմիչ Դիոնիսիոս Տել-Մահրացու տեղեկությամբ, 749—752 թթ. արաբների դեմ ծառացավ Մամիկոնյանների ոլորտում գտնվող Սասունի ազգաբնակչությունը[95]։ Շարժումն արծարծվեց Նփրկերտի արաբների շահատակությունների հետևանքով։ Արաբ կառավարիչ Կոբե իբն Թաբիտը ձերբակալել էր Կուլաբ գավառի բնակիչներին, նրանցից յոթին մահվան դատապարտել։ Հարևան Փիս գավառի բնակչությունը Դադայի որդի Հովհանի ղեկավարությամբ ընդդիմացավ թշնամուն և նրան պարտություն մատնեց։ 752/753 թթ. Վերին Միջագետքի կառավարիչ Աբդալլահ

նից Բագրատունի երեք եղբայրների Շաքի անցնելու և այնտեղ հաստատվելու մասին. «Ադարնասե կույրի եղբորորդիները (nephews—Գ. Գ.), որոնք հանել էին իրենց հորեղբոր (paternal uncle—Գ. Գ.) աչքերը, երեք եղբայրներով Տարոնից եկան Շաքի և հաստատվեցին այնտեղ՝ Արշիլի թույլտվությամբ»։ Մյուսը վերաբերում է դարձյալ Արշիլի մոտ նույն տոհմից միայն Ատրներսեհի հիմնավորվելու մասին. «Ապա Ադարնասա անունով մի նշանավոր իշխան..., որը Ադարնասա կույրի թոռն էր եկավ նրա (Արշիլի) մոտ։ Նրա հայրը Բագրատունի էր, որին բյուզանդացիները նշանակել էին հայոց իշխան։ Կրուի հարստահարությունների ժամանակ նա երեխա էր, երբ եկավ Կղարջք՝ Գուարամ կուրապաղատի մոտ և մնաց այնտեղ։ Նա Արշիլին դիմեց խնդրելով՝ եթե դու կամենում ես ինձ դարձնել քո վասալը, տուր ինձ կալվածք։ Եվ նա նրան տվեց Շուլավերը և Արտահանը» (տե՛ս C. Toumanoff, Studies, էջ 345—349։ Հմմտ. նաև Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 195—196)։

Վերոհիշյալ երկու տեղեկությունները կարող են վերաբերել Բագրատունիների՝ Վրաստան կատարած տարբեր գաղթերին, որոնք տեղի են ունեցել 749 թ.՝ Աշոտ Բագրատունու կուրացումից մինչև 786 թ.՝ Արշիլի իշխանության վերջն ընկած ժամանակաշրջանը։

Եթե Բագրատունիները գաղթած լինեն 775—786 թթ., ապա տվյալ ժամանակաշրջանում Մամիկոնյաններից Բագրատունիներին Տարոնի անցնելու փաստը մեկ անգամ ևս հաստատվում է։ Հակառակ դեպքում, մինչ այդ ժամանակաշրջանը Բագրատունիների՝ Տարոնում գտնվելը պետք է դիտել դրեթե պատահական, ինչպես որ VII դ. էր, երբ Վարազտիրոց Բագրատունին անցավ այնտեղ (տե՛ս Սեբեոս, էջ 132)։

95 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Սասունի 749—752 թթ. անհայտ ապստամբությունը խալիֆայության դեմ, ՊԲՀ, 1971, № 3, էջ 196—202։



իբն Մուհամմադը. հարկադրված Հովհանին ճանաչեց իր գավառի կառավարիչ[96]։ Բնորոշ է, որ ապստամբ հայերին միացել էին տեղացի ասորիները։ Այս հանգամանքը ծնել է այն թյուր ըմբռնումը, որը հիշյալ շարժումը դիտում է իբրև ասորական[97]։ Պատմիչի երկում հիշատակված տեղանունների (Կուլաբ, Փիս) քննությունը հաստատում է, որ ապստամբվել է Սասունի բնակչությունը[98], և հիշյալ շարժումը պետք է դիտել հայ-ասորական միացյալ ելույթ։

Մամիկոնյանների պատմական ճակատագրում վճռորոշ էր 774—775 թթ. արաբների դեմ նրանց գլխավորած ապստամբությունը[99]։ Հիշյալ իրադարձությանը հանգամանալից անդրադառնալու անհրաժեշտությունը չի զգացվում, քանի որ այն քննարկվել է բազմիցս[100]։

Շարժումն սկսվեց 774 թ., երբ Արտավազդ Մամիկոնյանը սրախողխող արեց արաբ հարկահաններին։ Նրան հետևեց Մուշեղ Մամիկոնյանի ելույթը։ Հաստատվելով Արտագերս ամրոցում, վերջինս երկու անգամ վանեց Կարինից և Դվինից իր դեմ եկած թշնամու ուժերին։ Ապստամբների թիվը աճեց և կազմեց շուրջ 5000։ Մուշեղ Մամիկոնյանի հետ ելույթը գլխավորում էր հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին։ Ապստամբները պաշարեցին Կարինը, ուր զետեղված էր արաբական կայազորը։ Շարժումն այնպիսի ծավալ էր ընդունել, որ հակառակորդն ի վիճակի չէր Հայաստանում եղած ուժերով այն ճնշել։

775 թ. 30000-ոց բանակով Ամր իբն Իսմայիլը մտավ Հայաստան և հաստատվեց Խլաթ քաղաքում։ Ապրիլի 15-ին

96 Chronique de Denys de Tell-Mahré, էջ 46—49։

97 Վ. Տոմաշեկ, Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, Վիեննա, 1896, էջ 22։

98 Ա. Տեր-Ղևոնդյան, Սասունի անհայտ ապստամբությունը, էջ 198—199։

99 Ոմանք հիշյալ ելույթը դնում են 771—772 թթ. (տե՛ս C. Toumanoff, Studies), էջ 345։

100 Տե՛ս Ս. Մելիք-Բախշյան, Հայաստանը, էջ 321—339; А. Тер-Гевондян, Армения, էջ 105—110 և այլն։

Արճեշի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայերը պարտվեցին՝ կորցնելով շուրջ 1500 հոգու։ Այս հանգամանքը հուսալքեց Կարինը պաշարածներին։ Վերջիններս փորձեցին վճռական ճակատամարտ տալ, որի ելքը հայերի համար դարձյալ անհաջողությամբ վերջացավ։ Դա տեղի ունեցավ նույն տարվա ապրիլի 25-ին՝ Բագրևանդ գավառում։ Մարտում զոհվեցին Մուշեղ և Սահակ Մամիկոնյանները, հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին, Վահան Գնունին և այլք։

* * *

Պատմագրության մեջ փորձ է արվել ցույց տալու, թե իբր արաբական տիրապետության ժամանակաշրջանում Անդրկովկասի ֆեոդալների ժառանգական սեփականատիրական իրավունքները գրեթե չեն ոտնահարվել, էական տարբերություն է դրվել տեղական արաբ և ոչ արաբ ֆեոդալների հակախալիֆայական ելույթների միջև։ Ընդամին, նշվել է, որ եթե առաջինները վճռական պայքար են մղել խալիֆայության դեմ՝ անկախության հասնելու նպատակով, ապա վերջինները չեն փորձել թոթափել արաբական տիրապետության լուծը, այլ սահմանափակվել են սոսկ արաբ կառավարիչների հարստահարությունների և ապօրինությունների դեմ ուղղված ելույթներով, կամ իրենց ենթակա շրջանների կառավարումով։ Վերջապես, նման տեսակետ առաջադրող հեղինակը դիտել է տվել, թե գտնվելով խալիֆայության տիրապետության օղակում, Անդրկովկասը զերծ է մնացել «հյուսիսի բարբարոս ցեղերի» ու բյուզանդացիների ասպատակություններից[101]։

Հայտնի է, որ սկզբնական ժամանակաշրջանում արաբական տիրապետությունը Հայաստանում բավական տանելի էր։ Հայոց եկեղեցին, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներն օգտվում էին մի շարք արտոնություններից, որոնք վավերացվում

101 Տե՛ս *П. К. Жузе,* Мутагаллибы в Закавказье в IX—X вв. («Материалы по истории Грузии и Кавказа» вып. III, Тбилиси, 1937, էջ *184—195*)։



էին խալիֆայության և նրանց միջև կնքված տարբեր պայմանագրերով։ Հետագայում, սակայն, խալիֆայության կողմից Հայաստանում հարկային լծի ծանրացումը, արաբական ցեղերի զանգվածային ներգաղթը, երկրի լավագույն հողերի բռնագրավումը, բնակչության հարկադիր արտագաղթը, նախարարների նկատմամբ դրսևորած հալածանքներն ու նրանց ֆիզիկական բնաջնջումը ակնբախ են դարձնում բնակչության բոլոր խավերի նկատմամբ արաբների կիրառած քաղաքականության խստությունը։ Դրա հետևանքով էր, որ VIII դարում և հետագայում Հայաստանում բռնկվեցին մի քանի ապստամբություններ, որոնք, հակառակ արդեն հիշատակված կարծիքի, նպատակ ունեին տապալել արաբական լուծը։ Անդրադառնալով VIII դարի երկու ապստամբություններին, Ղևոնդը, օրինակ, պարզ ու որոշակի գրում է. «...յայնժամ խորհեցան ամենայն նախարարք աշխարհիս ընկենուլ զլուծ հնազանդութեանն և ապստամբել և ի բաց կալ ի հնազանդութենէն Իսմայելի»[102], կամ «...լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիւր ապստամբութեան, և ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի»[103]։ Անգամ ապստամբությանը դեմ եղած հայ նախարարների խմբավորումը ոչ թե բացառում էր արաբական տիրապետության տապալման անհրաժեշտությունն ընդհանրապես, այլ ելնում էր ուժերի հարաբերակցությունից, քանի որ, ըստ նրանց, «...նուազունք են զօրքս մեր ի մէջ բռնութեանն Իսմայելի, և ոչ կարեմք զդէմ ունել զօրաց նոցա, և ոչ զերկիր մեր հանել ի բերանոյ վիշապացն»[104]։

Ինչ վերաբերում է արաբների կողմից «հյուսիսի բարբարոսների» հարձակումներից Անդրկովկասի «պաշտպանությանը», նշենք, որ Անդրկովկասը դարձել էր արաբա-խազարական հակամարտությունների թատերաբեմ[105]։

102 Ղևոնդ, էջ *121*։

103 *Նույն տեղում,* էջ *138*։

104 *Նույն տեղում,* էջ *122*։

105 *М. И. Артамонов,* История хазар, Л., 1962, էջ *202—261*։

Վերջապես, նշված ժամանակաշրջանում Հայաստանը, և ընդհանրապես Անդրկովկասը, թեև որոշ չափով զերծ մնացին բյուզանդական հարձակումներից, սակայն նրանք ենթարկվեցին արաբների ավերիչ ասպատակություններին։

774—775 թթ. ապստամբության ճնշման և հետագա հալածանքների հետևանքով, հայկական նախարարական տները խիստ թուլացան, իսկ Մամիկոնյան տոհմի անդամները հարկադրված գաղթեցին Բյուզանդիա կամ Վրաստան[106]։ Նրանց տիրույթները զրկվելով իրենց պաշտպաններից, կանգնեցին արաբներով բնակվելու վտանգի առաջ, որովհետև հենց այս ապստամբությունից հետո, և Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի (786—809) օրոք էր, որ արաբական տարրը՝ Հայաստանում, և առհասարակ Անդրկովկասում, հաստատվելը զանգվածային բնույթ կրեց։ Օրինակ, Յակուբին հաղորդում է, թե ինչպես Արմինիայի ոստիկան Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամին (786—787) Հայաստան գաղթեցրեց Նիզարիների ցեղը, իսկ Յազիդ իբն Մազիադ իբն Զայիդա ալ-Շայբանին (787—788) այստեղ բերեց Ռաբի ցեղը[107]։ Արաբների բնակեցումը շարունակվեց նաև հետագայում։ Հարուն ալ-Ռաշիդի տիրապետությունը թեև դիտվում է Աբասյան պետության հզորության բարձրակետ[108], սակայն հենց այս ժամանակ արդեն երևան եկան նրա թուլության նշանները[109]։

Հիշյալ ժամանակաշրջանում Հայաստանում խալիֆայության տիրապետությունն արդեն անկայուն էր։ Դա արտահայտվում էր հայ նախարարների հաճախակի դարձած ելույթներով ու խազարների ասպատակություններով։ Բացի այդ, Հայաստանում վերաբնակված արաբական ցեղերի առաջնորդները նվաճում էին հայ ավատատերերի տիրույթները և

[106] Ղևոնդ, էջ 138—139; *C. Toumanoff*, The Mamikonids and the Liparitids, Armeniaca, Mélanges d'Études Arméniennes, Ile de Saint Lazare—Venise, 1969, էջ 125—137։

[107] Արաբացի մատենագրեր, էջ 110—111; հմմտ. Յ. Մարկվարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 36—37։

[108] *P. Hitti*, History, էջ 300։

[109] *B. Lewis*, Abbasids, էջ 18։



կենտրոնախույս ձգտումներով փորձում էին երկրում ամրապնդել իրենց դիրքերը։ Ահա թե ինչու նրանց հնազանդեցումը խիստ կարևոր էր խալիֆայության համար[110]։

Խալիֆայությանն ընդդիմադիր այս շարժումներից հատկապես հիշարժան է 794 թ. Աբու Մուսլիմ ալ-Շարիի խռովությունը։ Նա անգամ կարողացավ մի քանի ամիս շարունակ պաշարել Դվինը[111]։

Խալիֆայության դեմ ըմբոստացող ուժերից էին նաև VIII դ. վերջերից Հայաստանում հաստատված Ջահհաֆյանները։ Օգտվելով արաբական տերության, ինչպես նաև Մամիկոնյանների և մյուս հայ նախարարների թուլությունից, նրանք բոլոր միջոցներով փորձեցին երկրում տիրապետող դիրք գրավել։ Նրանց առաջնորդ Ջահհաֆն ամուսնացել էր Բագրևանդի ճակատամարտում զոհված Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, տիրել էր Արշարունիք գավառի մի մասին և հավակնում էր ժառանգել Մամիկոնյանների տիրույթի մյուս մասը նույնպես, այսինքն, ինչպես Վարդանն է նշում. «...խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին...»[112]։ Վարդանի այս վկայությունից մակաբերվել է, թե իբր Ջահհաֆն ամուսնանալով Մամիկոնյանի դստեր հետ, տիրեց նրանց տոհմի գրեթե բոլոր կալվածքներին[113], մինչդեռ պատ-

[110] *П. К. Жузе*, Мутагаллибы, էջ 172—173։

[111] Արաբացի մատենագրեր, էջ 111—112։

[112] Վարդան, էջ 76։

[113] *J. Laurent*, L'Arménie, էջ 96։ Լորանն իր տեսակետը հիմնավորելու համար չնայած վկայակոչում է Մ. Բրոսեի „Collection d'Historiens Arméniens, t. I, S.-Pétersbourg, 1874, գրքի XIII էջը, սակայն այնտեղ կարդում ենք. „...le même Vardan mentionne p. 105, un Ismaélite nommé Dchahap, qui avait épousé une fille du prince Mouchegh Mamiconian, lui ayant apporté en dot une grande partie du canton d'Archarounik, situé au centre de la province d'Ararat; Նույն Վարդանը (էջ 105) հիշատակում է իսմայելցի Ջահհաֆ անունով մեկին, որն ամուսնացել էր Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, և որը նրան որպես օժիտ ավել էր Արշարունիք գավառի մեծ մասը՝ Այրարատ նահանգի կենտրոնում։

Մ. Օրմանյանը կարծում է, թե Ջահհաֆի կինը ավելի շուտ պիտի Բագ-

միչը խոսում է Ջահհաֆի կողմից Արշարունիքի մի մասին տիրած լինելու, իսկ մյուսին տիրելու մտադրության մասին, որը սակայն չիրականացավ, որովհետև նա հանդիպեց Բագրատունիների դիմադրությանը։

Ջահհաֆի այս նկրտումը, հարկավ, իրավական որոշ հիմք ուներ։ Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիներն արաբական հալածանքներից խույս տալով և ապահովություն փնտրելու նպատակով, հաստատվել էին Վասպուրականում՝ Մերուժան Արծրունու մոտ։ Վերջինս, սակայն, սպանել էր նրանց՝ պատճառաբանելով «...որպէս թէ ի պատճառս հօրն նոցա եղև աղէտն մեծ...»[114] (նկատի ունի արաբների կողմից 774—775 թթ. ապստամբության ճնշումը)։ Հետաքրքիր է նաև Ջահհաֆի հետ ամուսնանալու խնդրում Մամիկոնյան իշխանադստեր շահագրգռվածությունը, քանի որ դրանով կապավինեն նրա ուժին[115]։ Այս փաստն արդեն ակնբախ հաստատում է Մամիկոնյան տոհմի թուլությունն ու քայքայվածությունը[116]։

774—775 թթ. ապստամբության պարտության հետևանքով Հայաստանի քաղաքական կյանքից Մամիկոնյանների հեռանալը հնարավորություն ստեղծեց նրանց մրցակից Բագրատունիների վերելքի համար։ Թեպետ վերջիններս ևս մասնակցեցին հակախալիֆայական այդ ընդվզումներին, բայց շուտով, Բագրևանդի ճակատամարտից շատ չանցած, այնտեղ զոհված Սմբատ Բագրատունու որդիներ Աշոտը (Մսակեր, 790 մոտավ.—826) և Շապուհը, որոնց մայրը ապստամբության ղեկավար Սամվել Մամիկոնյանի դուստրն էր, ձեռնամուխ եղան իրենց տիրույթների ընդարձակմանը։

Աշոտ Բագրատունու և Շապուհի վաղ շրջանի գործունեությունը չնայած թաղված է անորոշության մեջ, սակայն պարզ է, որ հենց սկզբից նրանք մեծ ջանք գործադրեցին հայկական հողերի միավորման համար։ Բագրատունիների այս ձեռնարկումը հաճախ հանդիպում էր Հայաստանում հաստատված արաբ ավատատերերի դիմադրությանը։

785 թ. Ներսեհ Կամսարականի մահվանից հետո Կամսարականները նույնպես վերացան Հայաստանի քաղաքական կյանքից։ Աշոտ Բագրատունին «...գանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն Կամսարականաց, և զարքունիսն ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց»[117]։ Տիրելով Արշարունիքի մի մասին, նա կանգնեց Ջահհաֆի դեմ պայքարելու ուղու վրա, որովհետև, ինչպես արդեն տեսանք, վերջինս տիրում էր այդ գավառի մյուս մասին։ Աշոտի և Շապուհի համատեղ գործունեությամբ Ջահհաֆը դուրս քշվեց Արշարունիքից։ Նրանք գրավեցին Տայքը, Շիրակը և Աշոցքը[118]։

Աշոտ Մսակերի ջանքերով Գնունիները զերծ մնացին արաբների հետագա հալածանքներից՝ Աղիովիտից գաղթելով Տայք[119]։ Աշոտը չէր կարող ուշադրություն չդարձնել Տարոնին, քանի որ նրա ձեռքբերումով հնարավորություն կստանար կասեցնել իր տիրած շրջաններում արաբական ցեղերի հաստատվելը։ Այդպիսով, Բագրատունիների օրավուր աճող ազդեցությունը կտարածվեր նրա հարևան շրջանների վրա, իսկ քաղաքական նպաստավոր իրադրության դեպքում՝ կերաշխավորեր նրանց ակտիվ պայքարն արաբական զանգվածի դեմ։ Վերջապես Աշոտ Բագրատունին Տարոնը կարող էր դիտել իբրև ժառանգական կալվածք, քանի որ նրա մայրը, ինչպես ասվեց, Մամիկոնյան էր։

---

րատունի լիներ, քանի որ Աշոտ Մսակերն էր, որ Կամսարականներից գնել էր Արշարունիքը, հետևաբար Աշոտի քույրը պիտի ամուսնացած լիներ նրա հետ (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Պեյրութ, 1959, էջ 909—910)։ Այս մոտեցումը չի հաստատվում որևէ սկզբնաղբյուրով։

114 Վարդան, էջ 76։

115 Ուշագրավ է, որ Ն. Ակինյանը Մուշեղի դստեր այս քայլը նաև դիտում է իր հայրական կալվածքները Բագրատունիների ոտնձգություններից զերծ պահելու փորձ (տե՛ս Ն. Ակինեան, Ղեւոնդ երէց եւ Մովսէս Խորենացի, էջ 247)։

116 Ն. Ադոնց, Բագրատունեաց փառքը, էջ 51։



117 Ասողիկ, էջ 106։

118 Վարդան, էջ 76։

119 Նույն տեղում, էջ 77։

Ե՞րբ կարող էր Աշոտ Բագրատունին գրաված լինել Տարոնը։ Այս անցքերի միակ աղբյուրը՝ Վարդան պատմիչը, չի հայտնում այդ թվականը։ Յ. Մարկվարտը ենթադրում է, որ Տարոնը պետք է Ջահհաֆյանների դեմ մղված պայքարի շնորհիվ Աշոտ Բագրատունուն անցած լիներ՝ 820-ական թվականներին[120]։ Ուրեմն, Յ. Մարկվարտի, ինչպես նաև Ժ. Լորանի կարծիքով, Տարոնը պատկանել է նախ՝ Մամիկոնյաններին, այնուհետև՝ Ջահհաֆյաններին և 820-ական թվականներին անցել Աշոտ Մսակերին[121]։ Աղբյուրները, սակայն, չեն հաստատում Տարոնի՝ Ջահհաֆյաններին անցած լինելը։

Ջահհաֆի որդին՝ Աբդ ալ-Մալիքը, 813 թ. կարճ ժամանակով Արմինիայի ոստիկան դարձավ[122]։ Շուտով, սակայն, նա պաշտոնազրկվեց և ապստամբեց խալիֆայության դեմ ու ներման արժանանալով՝ հաստատվեց Դվինում։ Այստեղ նա իր ուժերը համախմբեց և մոտավորապես հինգ հազարանոց բանակով փորձեց գրավել Տարոնը։ Աշոտ Մսակերը վաղօրոք տեղեկանալով Աբդ ալ-Մալիքի նպատակին, նախահարձակ եղավ ու նրան ետ մղեց։ Դրանից հետո Դվինի վրա շարժվեց Շապուհ Բագրատունին։ Աբդ ալ-Մալիքի վիճակը բավական ծանրացավ։ Քաղաքի բնակչությունը դժգոհ նրա շահատակություններից, ապստամբեց ու սպանեց նրան[123]։ Այս դեպքերը տեղի են ունեցել մինչև 820 թ., բայց ոչ 820-ական թվականներին, քանի որ այդ ժամանակ Հայաստանում հանդես էր եկել մեկ ուրիշ Ջահհաֆյան՝ Սավադան[124]։ Վարդանը Աբդ ալ-Մալիքի կողմից Տարոնի գրավման փորձի մա-

---

120 *J. Markwart*, Südarmenien, էջ 294։

121 *J. Laurent*, L'Arménie, էջ 102, ծան. 2։ Ըստ նրա Վասակ Բագրատունուց հետո Տարոնում հաստատվել էր Ջահհաֆը։

122 Արաբացի մատենագրեր, էջ 115, Հմմտ. նաև Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում, «Տեղեկագիր», 1956, № 8, էջ 118; *Тизенгаузен*, Монеты Восточного халифата, СПб., 1873, էջ 180։

123 Վարդան, էջ 78։

124 Հ. Նալբանդյան. Արաբացի ոստիկանները, էջ 118; Մովսես Կաղանկատվացի, էջ 263։



սին նշում է. «Բայց տունն Ջահապայ զօրացեալ ի Դուին, իբրև հինգ հազարաւ կամեցան գնալ ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ որդւոյ Սմբատայ...»[125]։

Ուրեմն, 820 թ. առաջ արդեն, Աշոտ Բագրատունին Տարոնը գրաված պիտի լիներ։ Տարոնը Բագրատունիներին է անցել VIII դարի վերջերին կամ IX դարի սկզբներին, մինչև 804 թ., մինչ խալիֆայության կողմից Աշոտ Մսակերին հայոց իշխան ճանաչելը։

Այսպիսով, Բագրատունիների կողմից ընդարձակ հողատարածություններ գրավելու փաստը ճանաչելի է դարձնում VIII դ. վերջերից Հայաստանի տնտեսական կյանքում կատարված որակական նոր փոփոխությունը՝ ֆեոդալական խոշոր հողատիրության ձևավորումը, որն աստիճանաբար տարածվեց և զարգացավ։ Սակայն այս երևույթը լոկ Բագրատունիների օրինակով չդրսևորվեց։ Ընդարձակ հողատարածություններ ձեռք բերեցին Արծրունիները և Սյունեցիները։ Ֆեոդալական խոշոր հողատիրությունը տնտեսական նախադրյալներ ստեղծեց համանուն իշխանությունների ձևավորման համար։ Վերջիններիս երևան գալու քաղաքական հիմքը պայմանավորված էր Աբասյան խալիֆայության նկատելի դարձող թուլությամբ։ Ուշագրավ է, որ Հայաստանում ֆեոդալական իշխանությունները երևան եկան ավելի վաղ, քան խալիֆայության կենտրոնական նահանգներում[126]։

---

125 Վարդան, էջ 78։ Մ. Չամչյանը Տարոնի փոխարեն նշում է Տայքը (տե՛ս Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 416), սակայն Վարդանի երկի բոլոր հրատարակություններում, ինչպես նաև Մաշտոցի անվան մատենադարանում պահպանվող ձեռագրերում (№№ 6593, 6714, 8890) հիշատակված է Տարոն և ոչ թե Տայք։

126 *П. К. Жузе*. Мутагаллибы, էջ 171։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՏԱՐՈՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

### Ա. ՏԱՐՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ

*826 թ. մեռավ հայոց իշխան Աշոտ Մսակերը։ Նա ուներ հինգ ուստր՝ Բագարատ, Դավիթ, Սմբատ, Մուշեղ և Սահակ[1]։ Հայոց իշխանի մահվանից հետո նրա տիրույթները մասնատվեցին իր ժառանգների միջև։*

*Սմբատը, որը պատանդ էր տարվել Հարուն ալ Ռաշիդ խալիֆայի արքունիք, հոր մահվան տարում ազատվեց ու վերադարձավ Հայաստան[2]։ Ասողիկը, նրան հետևելով նաև Վարդանը, Աշոտ Մսակերի անմիջական հաջորդ են համարում Սմբատին[3]։ Այս հաղորդումից այն թյուր կարծիքը կարող է ստեղծվել, թե Աշոտին հաջորդած Սմբատը դարձել է հայոց իշխան։ Մինչդեռ, Հովհաննես Դրասխանակերտցին և Թովմա Արծրունին, որոնք ժամանակաշրջանով ավելի մոտ են նրան, քան Ասողիկը, տեղեկացնում են այդ պաշտոնը նրա ավագ որդուն՝ Բագարատ Բագրատունուն անցած լինելու մասին, իսկ Սմբատին վերագրում երկրի ռազմական ուժերի ղեկավարումը[4]։*

1 Վարդան, *էջ 78*։

2 Ասողիկ, *էջ 106*։ *Նրան վերագրվել է նաև Ապլաբաս՝ Աբասի հայր հորջորջումը (տե՛ս նույն տեղում)*։

3 *Նույն տեղում*։ Վարդան, *էջ 79*։

4 Հովհաննես Դրասխանակերտցի, *էջ 64—65*; Թովմա Արծրունի, *էջ 119*։



*Վարդան պատմիչը բավական տարտամ մի վկայություն ունի. «...և Դաւիթ եղբայրն Սմբատայ շինէ զՕձ բերդ»[5]։ Հիշյալ Դավիթն իրավացիորեն նույնացվել է Աշոտի որդու, իսկ նրա կառուցած բերդը՝ Տարոնի համանուն քաղաքի հետ[6]։ Անտարակույս, միջնադարում բերդ և քաղաք հասկացություններն իրենց իմաստային առումներով հաճախ նույնական էին։ Ն. Ակինյանը վիճարկում է այս տեսակետը և գտնում, որ Տարոնի Օձ քաղաքը Հովհան Մամիկոնյանի վկայությամբ ավելի վաղ ժամանակներից գոյություն ուներ։ Նա փորձում է հիշյալ Օձ բերդի, Վասպուրականում գտնվող Օձ ձորի, ուր X դ. Գագիկ Արծրունին կառուցեց իր անվամբ ամրությունը, և վերջապես ավելի ուշ՝ 1581 թ. այնտեղ՝ Վասպուրականում հիշված Օձաբերդի միջև կապ տեսնել[7]։ Ավելին, արաբների կողմից Համազասպ և Սահակ Արծրունիների ու նրանց ժառանգների խնամակալությունն ստանձնած Դավթին, որն այս մասին տեղեկացնող աղբյուրի՝ Անանուն վկայագրի համաձայն, Մամիկոնյան էր, նա համարում է Բագրատունի և նույնացնելով Վարդանի հիշատակած Դավթի հետ, նրան վերագրում Օձ բերդի կառուցումը Վասպուրականում[8]։*

*Ն. Ակինյանի մեկնակետը, այս պարագայում, ընդունելի չէ, քանի որ նա փորձում է տարբեր սկզբնաղբյուրների տեղեկությունները համաձայնեցնել այն դեպքում, երբ նրանք խոսում են միմյանց հետ չառնչվող իրադարձությունների ու գործիչների մասին։*

*Տեսանք, որ Վարդան պատմիչն անուն առ անուն հիշատակում է Աշոտ Մսակերի որդիներին։ Դավիթը նրանցից մեկն էր։ Վերջինս խնդրո առարկա բերդը կարող էր կառուցել միայն իր հորը պատկանած և իրեն ժառանգություն հասած*

5 Վարդան, *էջ 79*։

6 Ղ. Ինճիճյան, *Ստորագրութիւն, էջ 108*; Ղ. Ինճիճյանին *հետևում է նաև Ղ. Ալիշանը, գրելով. «Օձ բերդ թուի Օձ քաղաք Տարօնոյ» (տե՛ս* Վարդան, *էջ 79, ծան. 1)*։

7 Ն. Ակինյան, *Ղեւոնդ երէց և Մովսէս Խորենացի, էջ 269*։

8 *Նույն տեղում, էջ 260—269*։

տիրույթներից որևէ մեկում։ Հայտնի են Աշոտի նվաճած շըրջանները՝ Տայք, Շիրակ, Աշոցք, Տարոն[9]։ Ուրեմն, հենց այս վայրերում պիտի որոնել Օձ բերդը և ոչ թե Վասպուրականում։ Փնտրտուքը մեզ դարձյալ տանում է Տարոն և հանգեցնում այն մտքին, որ Վարդանի հիշատակությունը վերաբերում է այնտեղի Օձ բերդին[10]։ «Դաւիթ... շինէ զՕձ բերդ» դարձվածքը կարելի է ընկալել ոչ միայն բերդի հիմնադրման, ինչպես որ Ն. Ակինյանն է կարծում, այլ թերևս վերակառուցման կամ ընդարձակման, կամ հարդարման և շինեմ բայի՝ գրաբարում առանձնահատուկ մյուս իմաստներով[11]։

Աշոտի երրորդ որդու՝ Սահակի տիրույթները նույնպես ենթադրաբար մատնանշել են Տարոնում[12]։ Այս ենթադրությունն ընդունվել է մի շարք ուսումնասիրողների կողմից[13]։ Այդ վարկածի հիմքը ասորի պատմիչ Դիոնիսիոս Տել-Մահրացու տեղեկությունն է, որը պահպանվել է Միխայել Ասորու «Ժամանակագրության» մեջ։ Ըստ այդմ, կրոնով հեթանոս և ավազակաբարո Քուրդանների ավանդության համաձայն, ծնվելու էր Մահդի անունով նրանց թագավորը և առաջնորդելու էր իր ժողովրդին։ Ըստ պատմիչի, նա ի հայտ եկավ 1140 թ. (Սելևկյան թ., որ է՝ 829 թ.) ու բնակվեց Քարդավայի լեռներում։ Համախմբելով կողոպուտի ու գերեվարության հույ-

9 Վարդան, էջ 76, 78։

10 Հովհան Մամիկոնյան, էջ 181, 286։ Բյուզանդական ֆեոդալ Եվստաթիոս Բոյիլասի՝ 1059 թ. գրած կտակում հիշատակվում է Օփիդոբունի գյուղը, որը թարգմանաբար նշանակում է օձերի լեռ։ Վերջինս ըստ Հ. Բարթիկյանի, համապատասխանում է Կովկասի հինգ վերստանոց քարտեզում հիշատակված Օպիզա կամ Օպիսչալա վայրերին՝ Արտանուջի հյուսիսում (տե՛ս Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի» № 5, Երևան, 1960, էջ 398, 401, 413)։ Օձերի լեռ բնակավայրը հազիվ թե նույնանա Օձ բերդին։

11 Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆԲՀԼ), հ. II, Վենետիկ, 1837, էջ 478։

12 Յ. Մարկվարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 62։

13 Լեո, Հայոց պատմություն, հ. II, Երկեր, հ. II, Երևան, 1967, էջ 412։ А. Тер-Гевондян, Армения, էջ 133 և այլն։



սով տարված մարդկանց, Մահդին սարսափի մեջ էր պահում Ջազիրայի և Հայաստանի բնակչությանը։ Քուրդաններն ավերեցին Բեյթ-Զաբդեն, Տուր-Աբդինը և, երբ եկան Քարդամի վանքն ու շրջակա գյուղերը կողոպտելու՝ Ջազիրայի կառավարիչ Հասանը նրանց պարտության մատնեց։ Մահդին փախավ Հայաստան ու ապաստանեց Աշոտի որդի Իսահակի երկրում։ Վերջինս նրան գլխատեց և գնաց արաբների դեմ կռվելու[14]։

Այս տեղեկությունը խուռամյան շարժման վերաբերյալ եղած ամենահին վկայությունն է։ Քուրդանները նույնանում են նրանց հետ։ Բնագրում հիշատակված Իսահակը, որի մոտ փորձեց ապաստանել Մահդին, նույնացվել է Աշոտ Մսակերի որդի Սահակի հետ և ենթադրվել, որ նա իշխել է Տարոնում, քանի որ նշված իրադարձությունները տեղի են ունեցել Բեյթ-Քարբելուի (Բոհտան գետի) շրջակայքում, որը մոտ էր Տարոնին[15]։ Յ. Մարկվարտը ենթադրել է նաև, թե Աշոտ Մսակերը, դեռևս իր կենդանության օրոք, իշխանությունը բաժանել էր որդիների միջև. Տարոնը բաժին էր ընկել Սահակին։

Ինչպես տեսանք, Տել-Մահրացու հիշատակած դեպքերը տեղի են ունեցել Բեյթ-Զաբդե, Տուր-Աբդին վայրերում, իսկ Քուրդանների բնակավայրերը եղել են Քարդավայի լեռները։

Բեյթ-Զաբդեն գտնվում է Արևելյան Տիգրիսի աջ ափին՝ Ջազիրե իբն Օմարի շրջակայքում[16]։ «Աշխարհացոյցը» այն հիշատակում է Բզաբդէ ձևով[17]։ Տուր-Աբդինը գտնվում էր Բեյթ-Զաբդեից արևմուտք՝ Մծբինից դեպի հյուսիս։ Այն համապատասխանում էր հայկական աղբյուրների հիշատակած Ծաւդեքին[18]։ «Աշխարհացոյցի» հեղինակը Բեյթ-Զաբդեի և Տուր-Աբդինի մասին գրում է. «Զայս երկու գետս գիտեմ Միջագետաց Ասորոց, (Բալիխե և Խաբոր—Գ. Գ.) եւ լերինս եր-

14 Chronique de Michel le Syrien, t. III, էջ 50—51։

15 Յ. Մարկվարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 62։

16 Synodicon Orientale ou Recucil de Synodes Nestoriens publié traduit et annoté par J. B. Chabot, Paris, 1902, էջ 670։

17 Ս. Երեմյան, Հայաստանը, էջ 113։

18 Նույն տեղում, էջ 86։

կու՝ զԿոհ ի-Շնգար, եւ զմիւս լեառն երկայն՝ [Մասիոն] յորում Մարդէ բերդ, եւ Տուռ-Աբդին գաւառ եւ Բզաբդէ [քաղաք]...»[19]։

Քարդավան ընկած էր Ջազիրայի շրջակայքում, Արևելյան Տիգրիսի ձախ ափին՝ Բեյթ-Զաբդեի դիմաց[20]։ Այն մասամբ համապատասխանում էր հայկական Կորդուք նահանգին, որը ուսումնասիրվող ժամանակաշրջանում կազմում էր Ջազիրայի մի մասը և սահմանակից էր Մոկք գավառին։ Ուստի այստեղ պիտի փախած լիներ Սահակը, այլ ոչ թե Տարոն, քանի որ վերջինս Քուրդանների կողմից ապստամբության ենթարկված և նրանց ապրած շրջաններից մեկուսացած էր Արզնի (Նփրկերտ) արաբական ամիրայության գրաված տարածքով, մինչդեռ Մոկքը նրանց անմիջապես սահմանակից էր։ Այսպիսով, Տեր-Մահրացու հիշատակած Աշոտի որդի Սահակը պիտի իշխելիս լիներ Մոկքում[21]։

Ինչպես տեսանք, Աշոտ Մսակերի ավագ որդին՝ Բագարատ Բագրատունին դարձավ հայոց իշխան։ Նա ժառանգեց իր հոր հարավային տիրույթները, որոնց կենտրոնը Տարոն գավառն էր, ուր հիմնադրեց Բագրատունիների առանձին, անկախ ֆեոդալական իշխանությունը։ Խիստ դժվար է ըստ ամենայնի ու համակողմանի վերլուծել Տարոնի իշխանի գործունեությունը՝ նրա քաղաքական բեմելից մինչև արաբների ձեռքով գերեվարվելը։ Այդ դժվարությունները պայմանավորված են սկզբնաղբյուրների սուղ տվյալներով։ Բացի դրանից, ուշի ուշով քննելով նրանց վկայությունները, տեսնում ենք, որ Տարոնի իշխանի անձն ու գործը երբեմն արժանացել է միջնադարի հեղինակների աչառու գնահատականներին։ Հայ հեղինակների այս մոտեցումը հեշտությամբ կարելի է բացատրել։

---

19 Նույն տեղում, էջ 113։

20 Synodicon Orientale, էջ 670։

21 Հմմտ. նաև Ն. Ադոնց, Բագրատունեաց փառքը, էջ 65։ Ն. Ակինյանը ևս Սահակի իշխանությունը դնում է այս շրջանում, բայց ավելի մեծ տարածքով (տես Ն. Ակինյան, Ղեւոնդ երէց և Մովսէս Խորենացի, էջ 277)։



Տարոնի իշխանությունը մինչև IX դ. առաջին կեսը երկրի քաղաքական կյանքում առաջնակարգ դեր ուներ։ Դրանից հետո, այդ դերն անցավ Բագրատունիների հյուսիս-արևելյան ճյուղին։ Տարոնի իշխանության դերի նվազումը այնտեղ արաբների դեմ IX դ. կեսին կազմակերպված ապստամբության պարտությամբ էր պայմանավորված։ Տարոնի Բագարատ Բագրատունու դրսևորած քաղաքական ձգտումներն իրականացան նրա մրցակից ճյուղի ներկայացուցիչ Աշոտ Ա-ի օրոք, երբ խալիֆայությունը IX դ. 80-ական թթ. պաշտոնապես ճանաչեց հայոց պետականությունը։ Միջնադարի հեղինակներն արտահայտելով հայոց թագավորության քաղաքական շահերն ու նկրտումները, մոռացության տվեցին կամ պակաս ուշադրության արժանացրին Տարոնի իշխանությանն ու նրա իշխանին։ Բացի այդ, Բագարատ Բագրատունու անվան շուրջը հանգուցավորված անհամակրությունները պետք է բացատրել նաև նրա կողմից հայոց կաթողիկոս Հովհաննես Օվայեցուն (833—855) պաշտոնազրկելու, ինչպես նաև գերության մեջ՝ Սամառայում, առերես մահմեդականություն ընդունելու հանգամանքներով։

Արդյոք ե՞րբ և ինչպե՞ս Բագարատ Բագրատունին ստացավ հայոց իշխանի պաշտոնն ու տիրեց Տարոնին։ Ոմանք՝ 835 թ.[22], իսկ ոմանք 830 թ. են համարել նրա պաշտոնավարության սկիզբը[23]։ Վերոհիշյալ երկու թվականները պայմանական են։ Առավել ևս, անհավանական է հայոց իշխանի պաշտոնում Բագարատի բարձրացումը նրա եղբոր՝ Սմբատ

---

22 Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, էջ 441։ Իրավացի չէ Մ. Օրմանյանը, երբ Չամչյանին քննադատում է այն բանի համար, թե իբր նա հայոց իշխան Բագարատ Բագրատունուն վերագրում է ոստիկանի պաշտոն՝ Հոլից հետո (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 930)։ Իրականում Չամչյանը խոսում է Հոլի՝ ոստիկանի պաշտոնից հեռանալու և Բագարատի՝ հայոց իշխանի (բնագրում՝ պատրիկի) պաշտոնում նշանակվելու մասին (տե՛ս Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, էջ 441), M. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. I, Paris, 1818, էջ 344։

23 Կ. Յուզբաշյան, Բագրատունյաց շրջանի Հայաստանը, էջ 35։

սպարապետի հետ կապելն ու դա նրա ջանքերի արդյունք համարելը[24]: Իր եղբոր նշանակմանը նպաստելու համար նա արաբական արքունիքում պիտի վստահություն ներշնչեր, որին կարող էր հասած լինել պատանդության տարիներին: Այդ դեպքում, սակայն, Սմբատն անձամբ կպայքարեր հայոց իշխանի պաշտոնի համար և այն չէր զիջի եղբորը, և ինքը չէր բավարարվի սպարապետի պաշտոնով:

Ավելի հավանական է կարծել, որ Բագարատը 826 թ. Աշոտ Մսակերի մահվանից հետո դարձավ հայոց իշխան[25], իսկ Սմբատը պատանդությունից վերադարձավ և ստանձնեց երկրի ռազմական ուժերի ղեկավարությունը:

Հիշյալ տեսակետի հավանականությունը շոշափելիորեն մեծանում է այն առումով, որ դեռևս իր հոր իշխանության տարիներին ականատես ենք լինում Բագարատ Բագրատունու ձեռք բերած ազդեցիկ դիրքին ու հեղինակությանը, մի բան, որ չի կարելի ասել նրա մյուս եղբայրների վերաբերյալ:

IX դ. առաջին քառորդում (811—813) Երուսաղեմի պատրիարք Թովմայի հանձնարարությամբ Խառանի եպիսկոպոս Թեոդորոս Աբիկուռան դիմեց հայերին՝ քաղկեդոնական դավանանքն ընդունելու առաջարկով[26]: Նույն ժամանակամիջոցում նրան տեսնում ենք Աշոտ Մսակերի մոտ հանգրվանած, որը թերևս բացատրվի առավել արդյունավետ ու նպատակասլաց գործելու նրա ձգտումով: Աբիկուռայի դեմ պայքարելու նպատակով Միջագետքից Հայաստան եկավ հակոբիկյան Նանա Ասորի սարկավագը: Վերջինս հաջողության հասավ, Աբիկուռան հարկադրված հեռացավ Հայաստանից: Այս տեղեկություններին մեզ ծանոթացնում են Վարդան պատմիչը,

24 Մ. Չամչյանց, *Պատմութիւն Հայոց*, էջ 441:

25 Ն. Ակինյան, *Ղեւոնդ երէց և Մովսէս Խորենացի*, էջ 270; հմմտ. Ա. Տեր-Ղևոնդյան, *Հայոց իշխանը*, էջ 129:

26 Ն. Ակինյան, *Թէոդորոս Աբիկուռա և Նանա Ասորի Հայաստանի մէջ եւ Նանայի Յովհաննու Մեկնութեան հայերէն թարգմանութիւնը*, *Մատենագրական հետազօտութիւններ*, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 116—119:



Մխիթար Այրիվանեցին (XIII դ.) և Դիոնիսիոս Տել-Մահրացին: Վերջինս հաղորդում է Միխայել Ասորու միջոցով[27]:

Հայաստանում ծավալված դավանաբանական այս պայքարն, անշուշտ, ամենից առաջ քաղաքական շարժառիթներ ուներ: Թե՛ քաղկեդոնականները և թե՛ նրանց հակառակորդները դրսից բացի, երկրի ներսում ևս ունեին իրենց գաղափարակիցները, որոնց միջև համառ պայքար էր մղվում: Ինչպես տեղեկանում ենք, Աշոտ Մսակերի հետ քաղկեդոնականներին ընդդիմացել է նրա որդին՝ Բագարատը: Ընդ որում, նա այդ պայքարի լոկ մասնակիցը չէր, այլ՝ դրա ղեկավարներից: Հայաստանում եղած ժամանակամիջոցում Նանան հանձնարարություն է ստացել Բագարատից՝ մեկնելու Հովհաննու ավետարանը[28]: Վերջինս 817 թ. ավարտել է այդ աշխատանքը[29]: Այսպիսով, կարելի է անվարան եզրակացնել, որ Բագարատը դեռևս իր հոր կենդանության օրոք նշանակալից չափով ազդեցիկ դիրք ուներ և նրան հաջորդած պիտի լիներ նրանից անմիջապես հետո:

Բագարատի իշխանությունը գրավում էր բավական ընդարձակ մի տարածք: Նրա սահմաններն արևելքում հասնում էին Վանա լճի ափերին, իսկ արևմուտքում՝ Բյուզանդական կայսրությանը: Բագրատունիների այս իշխանությունը, բուն Տարոնից բացի, ընդգրկում էր նրա հարավի Սասուն և Խութ

27 Վարդան, էջ 78; *Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց*, Մոսկվա, 1860, էջ 53; Chronique de Michel le Syrien, t. III, էջ 33:

28 *Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց*, է, *Նանայի Ասորւոց վարդապետի մեկնութիւն Յովհաննու աւետարանին*, Վենետիկ, 1920, էջ 5—6:

29 Ն. Ակինյան, *Թէոդորոս Աբիկուռա*, էջ 131, 133, 139: Ոմանք ընդունում են մոտավորապես 840 թ. (տե՛ս Մ. Չամչյանց, *Պատմութիւն Հայոց*, էջ 441) նույն կարծիքին է նաև Ք. Չրաքյանը (տե՛ս *Նանայի Ասորւոց վարդապետի մեկնութիւն*, ներածություն, էջ Ը), ոմանք՝ 820—826 թթ. (տե՛ս *L. Mariès*, Un Commentaire sur l'Évangile de Saint Jean, rédigé en arabe (circa 840) par Nonnos (Nana) de Nisibe, conservé dans une traduction Arménienne (circa 856) REA, t. premier, fascicule 3, Paris, 1921, էջ 287):

գավառները[30]։ Արևմուտքում Տարոնի իշխանության մեջ էր մտնում Հաշտյանք գավառը, որից արևմուտք գտնվող Աշմուշատ գավառը Տարոնի արևմտյան սահմանային շրջանն էր[31]։ Աշմուշատից հյուսիս Տարոնի իշխանության մաս էին կազմում Խորձյան և Մանանաղի գավառները։ Վերջինովս Տարոնի իշխանությունը սահմանակցվում էր Կարին գավառին։ Այս շրջանն ընդհանրապես ռազմաստրատեգիական խիստ կարևոր նշանակություն ուներ արաբա-բյուզանդական մրցակցության ընթացքում։ Տարոնի հյուսիսում Արշամունիք գավառի հարավային մասերը նույնպես ամփոփվում էին Բագրատունիների իշխանության մեջ։ Վերջապես, Բագարատ Բագրատունին իշխում էր Վանա լճի արևմտյան ափերին՝ Բզնունիքում, ուր հատկապես խիստ կարևոր էր Խլաթ քաղաքը[32]։ Խլաթը Տուրուբերան նահանգի կենտրոններից էր և ուներ ռազմաստրատեգիական մեծ նշանակություն։ Դա հաստատում է Կոստանդին Ծիրանածինը։ Նա գրում է. «Խլիատը... (նաև Արճեշը և Բերկրին—Գ. Գ.) եթե գտնվեն կայսեր ձեռքում, ապա պարսկական զորքը (իմա՝ արաբական) Ռոմանիայի դեմ դուրս գալ չի կարող, որովհետև ամրոցները գտնվելով Ռոմանիայի և Հայաստանի միջև՝ պատնեշի և զորակայանի դեր են խաղում[33]։ Բագարատ Բագրատունու համար Խլաթի կարևորությունը չէր սահմանափակվում միայն նրա ռազմաստրատեգիական դիրքով։ Բանն այն էր, որ 774—775 թթ. Հայաստանում ապստամբությունը ճնշելուց հետո, խալիֆայությունը մեծ թվով արաբների գաղթեցրեց և բնակեցրեց այնտեղ։ Նրանք լրջորեն վտանգում էին Տարոնի ինքնուրույնությանը։ Խլաթն իր ձեռքում պահելով, Բագարատն իրա-

30 Թովմա Արծրունի, էջ 132—133, 134—135; Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 66։

31 Համաձայն Բալաձուրու Բագարատ Բագրատունին Աշմուշատ գավառում ևս ուներ տիրույթներ (տե՛ս Baladhuri, էջ 289)։

32 Բալաձուրին Բագարատին համարում է Խլաթի պատրիկ (տե՛ս Baladhuri, էջ 289)։

33 Կոստանդին Ծիրանածին, էջ 13։ Հմմտ. նաև DAI, I, էջ 205։



վունք էր ստանում այնտեղ հաստատված արաբների նկատմամբ և կարող էր կանխել նրանց կողմից իր իշխանությանը սպառնացող վտանգը։

Այսպիսով, Տարոնի Բագրատունիների իշխանությունը բավական ընդարձակ տարածք էր ընդգրկում։ Այն Բագարատ Բագրատունու գերիշխանության ներքո համախմբված մի շարք իշխանական տոհմերի ֆեոդալական տիրույթների քաղաքական միավորում էր։

IX դ. սկզբին Տարոնի իշխանությունը քաղաքական և տարածքային զարգացման հնարավորության տեսակետից բավական անբարենպաստ պայմաններում էր։ Տարոնի իշխանության անկախությանն արևմուտքից սպառնում էր Բյուզանդական կայսրությունը։ Հարավից նրա սահմաններին մերձակա էր Արզնի (Նփրկերտ) արաբական իշխանությունը։ Վերջինս առիթը բաց չէր թողնում Տարոնին հարվածելու։ Հայկական այս իշխանությանը վտանգում էին նաև Վանա լճի առափնյա շրջաններում հաստատված արաբական ցեղերը։ Բայց IX դ. առաջին կեսին, այսինքն՝ Բագարատ Բագրատունու օրոք վերոհիշյալ վտանգներն այնքան էլ զգալի չէին։ Դրանք նկատելի դարձան միայն դարի երկրորդ կեսին, երբ խալիֆայությունը ճնշեց 850—855 թթ. ապստամբությունը և արաբական ցեղերին զանգվածաբար բնակեցրեց Հայաստանում։

Թովմա Արծրունին Բագարատ Բագրատունուն կոչում է Տարոնի իշխան, անմիջապես հարելով՝ «...վասն զի ուներ յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց հայոց...»[34]։ Նույն հեղինակը նրան տվել է նաև իշխան, Տարոնի իշխան և հայոց իշխան անվանումները[35]։ Վերջին պաշտոնը կրել էր նաև նրա հայրը՝ Աշոտ Մսակերը։

Հայոց իշխանի հաստատությունը թեև հետազոտողների ուշադրությունը գրավել է տակավին XIX դարից, բայց և այնպես միայն վերջին շրջանի ուսումնասիրողները՝ Ժ. Լո-

34 Թովմա Արծրունի, էջ 119։

35 Նույն տեղում, էջ 120, 130, 131, 177։

րանը, Ս. Շլեպչյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը բացահայտեցին նրա հիմնական էությունը։

Հայոց իշխանի հաստատությունը զարգացման տարբեր փուլեր է անցել։ Մինչև արաբական արշավանքները Բյուզանդիայի և Իրանի միջև բաժանված Հայաստանի երկու մասերի կառավարիչները կոչվում էին հայոց իշխաններ, կամ բյուզանդական տերմինով՝ հայոց պատրիկներ (հուն. πατρίκιος 'Αρμενιας)։ Բյուզանդացիները նրանց երբեմն շնորհում էին կուրապաղատի տիտղոս[36]։ Արաբների գերիշխանության հաստատումից հետո Հայաստանը, Արևելյան Վրաստանը և Աղվանքը միավորվեցին վարչական մեկ միավորի մեջ, որը պաշտոնապես կոչվեց Արմինիա փոխարքայություն[37]։ Որպես կանոն, նահանգների կառավարչությունը կարող էին միայն մահմեդականները ստանձնել։ Այդ պատճառով Արմինիայի բոլոր կառավարիչները (արաբերեն՝ ամիլ կամ ամիր, հայերեն՝ ոստիկան) մահմեդականներ էին։ Բայց խալիֆայությունը նահանգային կառավարման համակարգում երբեմն չէր կարող հաշվի չառնել նվաճված երկրների տեղական առանձնահատկությունները[38]։ Հայաստանում ոստիկանից հետո հայ իշխաններից մեկի իրավունքների ճանաչումը դրա վկայությունն է։ Այդ իշխանը կոչվում էր հայոց իշխան։ Նա պատասխանատու էր հարկերը կանոնավոր հավաքելու և վճարելու, երկիրը հնազանդ վիճակում պահելու, արաբներին ռազմական օգնություն ցույց տալու և այլ գործերում։ Հայոց իշխանը պարտավոր էր նաև հարթել ֆեոդալների միջև եղած գժտություններն ու վեճերը։ Հայոց իշխանի իրավունքը տա-

[36] Հայոց իշխանի մասին տե՛ս M. Saint-Martin, Mémoires, էջ 416—418; Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 562; *J. Laurent*, L'Arménie, էջ 79—81; *С. Шлепчян,* Административная политика Арабского халифата в Армении в VII—IX вв. Автореферат канд. дисс. Ереван, 1955, էջ 15։

[37] *С. Шлепчян,* Административная политика, էջ 6—11։

[38] *R. Levy*, The Social Structure of Islam, Cambridge, 1971 էջ 362։



րածվում էր հայոց սպարապետի, կաթողիկոսի վրա և այլն։ Ինչպես տեսնում ենք, հայոց իշխանը մի կողմից արտահայտում էր Հայաստանում արաբական պետության շահերը, իսկ մյուս կողմից՝ ներկայացնում էր հայ իշխանների իրավունքները։ Հայոց իշխանը բանակցում էր խալիֆայի կամ նրա ներկայացուցիչների հետ հարկերի, ռազմական ուժերի և այլ հարցերի վերաբերյալ։ Նա միջնորդ օղակ էր խալիֆայության և հայ ազնվականության միջև։ Հայոց իշխանի գոյությունը պայմանավորված էր արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովրդի պահպանած ինքնավարության մի շարք գծերով։ Հայոց իշխանի գոյությունը դիտվել է իբրև բացառիկ երևույթ ողջ խալիֆայության վարչական սիստեմում[39]։ Նրա իրավունքներն ընդլայնվում էին հատկապես այն ժամանակ, երբ փոխարքան թույլ էր կամ խալիֆայությունն անկայուն վիճակում էր։ Հայոց իշխանի պաշտոնը շնորհվում էր հանդիսավոր պայմաններում՝ իշխանական բազմաթիվ պատիվներով։ Խալիֆայությունը հաճախ հաշվի էր նստում հայոց իշխանների և ավագանու մյուս ներկայացուցիչների հետ։ Նրանց պահանջով փոխում էր Արմինիայի ոստիկաններին։ Այսպիսով, Բագարատ Բագրատունին, խալիֆայի կողմից նշանակվելով հայոց իշխանի պաշտոնում, փաստորեն օգտվում էր վերոհիշյալ իրավունքներից։

Բագարատ Բագրատունու իշխանության տարիներին Հայաստանի քաղաքական կյանքը բնութագրվում էր լարվածությամբ։ Դա պայմանավորված էր երկրում առկա քաղաքական երկու խմբավորումների[40] միմյանց դեմ մղած պայքարով, պայքար, որը հետզհետե խորանում էր։

Բագարատի եղբայրը՝ Սմբատը, Բագրատունիների հյուսիս-արևելյան իշխանական ճյուղի ներկայացուցիչն էր։ Նա միաժամանակ հայոց զորքի հրամանատարն էր, որին համակիր էին Սյունյաց իշխանները, ինչպես նաև՝ հայոց հոգե-

[39] *A. Fattal*, Le statut legal des non-musulmans en pays d'Islam, Beyrouth, 1958, էջ 297—298; Ա. Տեր-Ղևոնդյան, *Հայ ժողովրդի իրավական վիճակը*, էջ 76։

[40] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 14։

վոր առաջնորդը։ Բագարատ Բագրատունու շուրջը համախմբվել էին Վասպուրականի իշխանները, և Տուրուբերանի առանձին շրջանների ֆեոդալները։ Նրա ազդեցությունը տարածվում էր արաբական Ջազիրա նահանգի վրա ևս։ Այսպես, Աբուլ-Ֆարաջ բար Հեբրեոսի վկայությունից տեղեկանում ենք, որ Ամիդի եկեղեցու հրդեհվելուց հետո տեղի բնակչությունը դիմել էր Բագարատին և խնդրել նրա օգնությունը՝ այն վերակառուցելու։ Այդ նպատակով Բագարատը նրանց հատկացրել էր երեք հազար զուզ (արծաթե-դրամ)[41]։

Երբ խալիֆայության կողմից Արմինիայում ոստիկան նշանակված Խալիդ իբն Եզիդ իբն Մազյադ ալ-Շայբանին (829—832), որին Հովհաննես Դրասխանակերտցին անվանում է Հոլ[42], դեռ նոր էր հաստատվել Դվինում, նրա դեմ ապստամբվեց արդեն վերը նշված Սավադա Ջահհաֆյանը։ Նա ամուսնացել էր Բագրատունյաց տոհմից Արուսյակ անունով մեկի հետ և տիրում էր զգալի տարածքի։ Սավադայի հետ դաշնակցել էին Սմբատ սպարապետն ու սյունյաց Սահակ իշխանը։ Բայց վերջիններիս պայքարն ապարդյուն եղավ, քանի որ Կավակերտի ճակատամարտում Սահակ Սյունեցին սպանվեց, իսկ Սավադան և Սմբատը փախան[43]։ Անհայտ է նրանց նկատմամբ Բագարատ Բագրատունու գրաված դիրքը։ Թվում է, թե նա համակիր չէր իր եղբորը, որը գործակցում էր արաբ ֆեոդալներից նրա հետ, ով պայքարել էր հայ իշխանների դեմ։

Բագարատի և եղբոր հարաբերությունները բավականին սրվել էին։ 833 թ. հայոց կաթողիկոս դարձավ Հովհաննես Օվայեցին։ 841 թ. իշխանաց իշխան Բագարատը Հայաստանի եպիսկոպոսներից պահանջեց չճանաչել նրա իշխանությունը։ Ընդսմին, Բագարատը մտադիր էր կաթողիկոսական աթոռին հաստատել իր թեկնածուին[44]։ Աղբյուրներում չեն պահպանվել

41 Վ. Տոմաշեկ, *Սասուն*, էջ 26։

42 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 64։ Հ. Նալբանդյան, *Արաբացի ոստիկանները*, էջ 119։

43 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 64—65։

44 *Նույն տեղում*, էջ 65—66։



Բագարատի այս քայլի բուն դրդապատճառները։ Հովհաննես Դրասխանակերտցին հայոց կաթողիկոսի պաշտոնազրկումը կապում է կաթողիկոսարանում եղած չարաբան մարդկանց զրպարտությունների հետ[45]։ Մ. Օրմանյանը կարծում է, որ կաթողիկոսի պաշտոնազրկումը «բարոյական խնդրի հիմամբ» պիտի եղած լիներ[46]։ Այս տեսակետը քիչ հավանական է։ Հովհաննես Օվայեցուն Բագարատի կողմից իշխանությունից զրկելը քաղաքական շարժառիթներով պիտի պայմանավորված լիներ։ Կաթողիկոսը հարկադրված անսաց իշխանաց իշխանի կամքին ու թողեց իր աթոռը[47]։

Սմբատ Բագրատունին, որ ղեկավարում էր Բագարատին հակառակ խմբավորումը, իշխանների ու եպիսկոպոսների ժողով գումարեց և Հովհաննեսին վերստին հաստատեց իր պաշտոնում։ Պատմիչի ասելով, Բագարատը չարացած էր իր կամքին հակառակ կաթողիկոս նշանակելու համար և հարմար առիթ էր փնտրում նրան պաշտոնազրկելու[48]։

837 թ. բյուզանդացիները Թեոփիլոս (829—842) կայսեր նախաձեռնությամբ արշավեցին Արևմտյան Հայաստան, գրավեցին Զապետրան, Սամոսատը, Մելիտենեն ու հասան մինչև Տարոնի իշխանության արևմտյան սահմանները՝ Հանձիթ, նվաճեցին Աշմուշատը[49]։ Բյուզանդացիները նույն տարում վերադարձան իրենց նախկին դիրքերը։ Հիշյալ արշավանքի մասին հաղորդում է նաև Ասողիկը։ Նա գրում է. «...ի սորա աւուրս (իմա՝ Թեոփիլոսի—Գ. Գ.) եղև գալուստ հոռոմդիերոյն ի գաւառն Բասեան, և զբազումս խողխողեցին սրով՝ ի վերայ յարուցեալ գեղաքաղաքին Գոմաձորոյ։ Իսկ Թէովփիլոս գնաց ի Խաղտիս և ել ի ցամաք կամուրջ և գերեաց զբազումս

45 *Նույն տեղում*, էջ 65։

46 Մ. Օրմանյան, *Ազգապատում*, էջ 931։

47 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 65։

48 *Նույն տեղում*, էջ 66։

49 Chronique de Michel le Syrien, t. III, էջ 88—89։ Հմմտ. նաև *А. А. Васильев*, Византия и арабы, էջ 113—116; *J. Markwart*, Südarmenien, էջ 46—57; *J. Laurent*, L'Arménie, էջ 211; *R. Grousset*, Histoire, էջ 353—354։

ի Հայոց հանդերձ ընտանեօք իւրեանց, և տուեալ զհիւպատաւորութեան պատիւն, 'այսինքն' ապուհիւպատ պատրկութիւն՝ Աշոտոյ որդւոյ Շապհոյ և թողու ի Սպեր գաւառի. և ինքն առեալ հարկս ի Թէոդուպօլսեցեաց՝ դարձաւ անդրէն։ Եւ ապա եկեալ Հոռոմըի արանցն ի Վանանդ ի գիւղն Կաճկաքար՝ կոտորեցան ի ձեռն Սահակայ որդւոյ Իսմայիլի։ Եւ ի նոյն ամի եմուտ Թէոփիլոս յԱսորիս և էառ զքաղաքն Ուրբելի և պատերազմեցաւ ընդ Տաճկաց, յԱլմուլատ և յաղթեաց։ Սա ի խաղալն իւրում յարևելս կոյս ի սահմանս Հայոց՝ առնու զՇմուշերդն Հայոց, զԱսաղին և զՄեծկերտ և զԱլբերդ ի գաւառին Գեղամայ, և զԽոզան և զՉորրորդ Հայս անապատ առնէ ի մարդոյ և յանասնոյ»[50]։

Ինչո՞վ է նշանակալից Ասողիկի հաղորդումը։ Ամենից առաջ նրանով, որ նա ևս հաստատում է Տեղ-Մահրացու վկայությունը՝ Տարոնի իշխանության արևմտյան սահմաններում (Աշմուշատ, Մեծկերտ, Խոզան, Չորրորդ Հայք) բյուզանդացիների գործողությունների մասին։ Այնուհետև, նրանից լրացուցիչ տեղեկանում ենք բյուզանդացիների՝ մեկ այլ՝ Կարին-Կարս ուղղությամբ կատարած արշավանքի վերաբերյալ[51]։

838 թ. արաբներն ի պատասխան բյուզանդացիների, արշավեցին փոքրասիական Ամորիում քաղաքը և այն կողոպտեցին։ Բյուզանդական հեղինակները հիշատակելով արաբների կողմից այս արշավանքի մասնակիցներին, շեշտում են հայկական ուժերի՝ վասպուրականցու, և արքոնների արքոնի մասնակցությունը ևս (μετὰ πάσης τῆς ἐξ 'Αρμενίων στρατιᾶς, τοῦ τε Βεσπαρακανίτου, καὶ αὐτοῦ τοῦ ἄρχοντος τῶν ἀρχόντων)[52]։

50 Ասողիկ, էջ 144։

51 Յ. Մարկվարտն իրավացիորեն Ասողիկի տեքստում նկատում է որոշ անունների աղավաղում։ Օրինակ, Ուրբելին նա նույնացնում է Զապետրայի հետ (տե՛ս J. Markwart, Südarmenien, էջ 48)։

52 Genesius, Regum, Bonnae, 1834, էջ 67; Theophanes Continuatus, Bonnae 1838, էջ 126—127; Georgius Cedrenus, Historiarum Compendium, Bonnae, 1839, էջ 133։ Վերջին երկուսը հիշատակում են միայն իշխանաց իշխանին՝ անտեսելով վասպուրականցուն։



Անտարակուսելի է, որ Վասպուրականի իշխանը Աշոտ Արծրունին էր, իսկ արքոնների արքոնը՝ Բագարատ Բագրատունին։ Վերջինս արաբների կողմից բյուզանդացիների դեմ կռվում էր ոչ միայն այն պատճառով, որ նրանք ներխուժել էին իր իշխանության սահմանները, այլ նաև, որ նա հայոց իշխանաց իշխան էր և պարտավոր էր իր զորքով օգնել արաբներին[53]։

53 Գրեթե բոլոր ուսումնասիրողներն իրավացիորեն բյուզանդական աղբյուրներում հիշատակված արքոնների արքոնին նույնացնում են Բագարատ Բագրատունու հետ։ Միայն նա է հայկական և արաբական աղբյուրներում այդ տիտղոսով անվանված։ Այս նույնացմանը վերջերս հակադրվեց Կ. Յուզբաշյանը։ Նա Մովսես Կաղանկատվացու ուշագրավ մեկ հաղորդումից ենթադրում է, թե հիշյալ արքոնների արքոնը Աղվանից իշխան Սահլի որդի Հովհաննեսը կարող էր լինել, որը հայտնի է նաև Մուավիա անունով (տե՛ս Կ. Յուզբաշյան, Բագրատունյաց շրջանի Հայաստանը, էջ 34)։ Մովսես Կաղանկատվացին 838 թ. նրան հիշատակում է «...տէրանց տէրն Յովաննէս, որ Հայոց, Վրաց և Աղուանից եղև տէր...»։ Մովսես Կաղանկատվացու երկից դուրս մնացած այս հատվածն առաջինը հրատարակել է Խաչիկ Դադյանը (տե՛ս «Արարատ», 1897 թ., ապրիլ, էջ 162)։ «Տէրանց տէր» և «իշխանաց իշխան» հասկացությունները Կ. Յուզբաշյանի կարծիքով նույնն են։ Այս պնդումը, չնայած որոշ դեպքերում հաստատվում է, բայց հնարավոր է, որ նրանց միջև տարբերություններ նույնպես եղած լինեն, թեև աղբյուրները հնարավորություն չեն ընձեռում դրանք պարզել։ Եթե անգամ ընդունենք «տէրանց տէր» և «իշխանաց իշխան» հասկացությունների լրիվ նույնականությունը, ապա դարձյալ Մովսես Կաղանկատվացու հաղորդումը Հովհաննեսի՝ հայոց, վրաց և աղվանից վրա իշխանություն ունենալու մասին խիստ կասկածելի է թվում, որովհետև հակասում է նույն հեղինակի մեկ ուրիշ հաղորդմանը։ Ըստ վերջինիս, 837 թ. աղվանից իշխան Սահլ իբն Սմբատյանը ձերբակալեց ապստամբ Բաբեկին և հանձնեց խալիֆայությանը։ Վերջինս գնահատեց Սահլ իբն Սմբատյանի ծառայությունը։ Նա «...ըստ վաստակոցն առնու յարքունեացն վարձս բարիս։ Զի առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից, տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար» (տե՛ս «Արարատ», 1897 թ. ապրիլ, էջ 162)։ Ընդգծված տողերը ցույց են տալիս, որ Սմբատը նույնպես ստացել էր հայոց, վրաց և աղվանից իշխանությունը։ Ի՞նչ է ստացվում։ 837 թ. այդ պաշտոնը կրում էր Սահլ իբն Սմբատյանը, իսկ 838 թ. նրա որդին՝ Հովհաննեսը։ Մովսես Կաղանկատվացու վերոհիշյալ երկու հաղորդումներն էլ անհավանական են և չափազանցված։ Պատմիչը տեղյակ է բյուզանդացիների դեմ կազմակերպված

Արաբների կողմից բյուզանդացիների դեմ ձեռնարկած արշավանքին Բագարատ Բագրատունու գլխավորությամբ հայկական զորքերի մասնակցությունը և նրանց դեմ տարած հաղթանակն ավելի պիտի ամրապնդեր նրա հեղինակությունը Հայաստանում և խալիֆայության մեջ։

---

վերոհիշյալ արշավանքին. «Այլ յՃՁԷ թուականին Հայոց Աբրահամ Ամիրմոմնի, գնա զօրու մեծաւ յաշխարհն հոռոմոց և էառ զմեծ քաղաքն զԾմորիայ, սրով և գերութեամբ։ Եւ անտի դարձաւ ի բնակութիւն իւր, սա է Աբուսահակն» (տե՛ս նույն տեղում)։ Եթե դրան մասնակցած լիներ Հովհաննեսը, ինչպես որ կարծվում է, անկասկած, տեղական հայրենասիրությունից դրդված, պատմիչը կհիշատակեր նրան, մանավանդ որ Հովհաննեսին նա հիշատակում է 837 թ. արշավանքի մասին պատմելուց անմիջապես հետո։ Մեզ է հասել 853 թ. մի արձանագրություն, ուր հիշատակվում է Աղվանից իշխան Հովհաննեսը։ Նրան Խ. Դադյանն իրավացիորեն նույնացրել է վերոհիշյալ Հովհաննեսի հետ (տե՛ս նույն տեղում, էջ 163)։ Արձանագրության պահպանված տեքստում կարդում ենք.

«ՅԲ (853) ԹՈՒԱԿԱՆՈՒԹ...
ԵՆ ՀԱՅՈ Ի ԺԱՄԱՆԱԿՍ...
ՅՈՎԱՆԻՍԻ ԱՂՎԱՆ...
ԻՇԽԱՆԻ ԵՍ ՍՈՂՈՄ....
(Մ)ԵԾ ԱՐԱՆՑ ԵՊԻՍԿ.....
ԿԱՆԳՆԵՅԻ ԶՍ..........»

Այս փաստը ևս վկայում է, որ Հովհաննեսի իշխանությունը տարածվել է միայն Աղվանքում, այլ ոչ թե Հայաստանում ու Վրաստանում։ Այդ նույնը վերաբերում է Սահլ իբն Սմբատյանին։ Արաբ պատմիչ Թաբարին գրում է, որ Բաբեկին ձերբակալելու համար Սահլ իբն Սմբատյանը ստացավ մեկ միլիոն դիրհեմ և պատրիկի թագ։ Ինչ վերաբերում է բյուզանդական աղբյուրներում հիշատակված արքոնների արքոնին, ապա դա միայն Տարոնի իշխան և հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին կարող էր լինել։ Այս կարծիքն ապացուցվում է նաև այն փաստով, որ բյուզանդացիները, ինչպես տեսանք, մտել էին նրա իշխանության սահմանները և բնականաբար նա նրանց դեմ կռվողներից մեկը պիտի լիներ։ Պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս. հայոց իշխանի պաշտոնը նշված ժամանակաշրջանում փաստորեն Բագրատունիների ժառանգական մենաշնորհն էր և խալիֆայությունը ձեռնպահ մնալով նրանց դիմազրկելու փորձերից, այդ պաշտոնը մյուս տոհմերի ներկայացուցիչներին չէր շնորհում։



Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ Բագարատ Բագրատունին հայոց իշխանաց իշխան էր[54]։ Թաբարին հաստատում է այդ[55]։ 837 թ. իրադարձությունների կապակցությամբ բյուզանդական աղբյուրներում հիշատակված արքոնների արքոնը (իշխանաց իշխան), անշուշտ, Բագարատ Բագրատունին է։ Այսպիսով, նա ի տարբերություն իր նախորդ հայոց իշխանների, կոչվել է նաև հայոց իշխանաց իշխան։ Այս նոր կոչումը հուշում է Բագարատի իրավունքների փոփոխություն, ավելի ստույգ՝ ընդլայնում[56]։ Կարելի է այս մտքին նաև առարկել՝ պնդելով, թե դա միայն պատվավոր տիտղոս լինելուց բացի այլ բովանդակություն չի ունեցել։ Բոլոր դեպքերում հարցի լուծումը առաջին հերթին կախված է նրան անմիջականորեն առնչվող նյութի հետազոտությունից, որը տվյալ դեպքում լիարժեք չէ։ Այս հանգամանքը հարկադրում է Բագարատի գործունեությունը քննարկել նույն տիտղոսին արժանացած միակ իշխանի՝ Աշոտ Բագրատունու գործունեության համադրումով։ Նման մոտեցման նպատակահարմարությունը պայմանավորված է երկուսի գործունեության ժամանակաշրջանների և սոցիալ-քաղաքական պայմանների մոտիկությամբ։ Աշոտը նրան հաջորդել է ընդամենը չորս տարվա ընդմիջումից հետո՝ 855 թ.։

Ասողիկը մինչև Աշոտ Բագրատունու թագավոր հռչակվելուն անդրադառնալը, նրա մասին գրում է, որ շուրջ երեսուն տարի եղել է վրաց և հայոց իշխան և իշխանաց իշխան[57]։ Մեր ուշադրությունը սրելով սույն կետի վրա, տեսնում ենք պատմիչի՝ հայոց իշխան և իշխանաց իշխան հասկացությունները տարանջատելու միտումը։ Հետևաբար, Աշոտը, ինչպես նաև Բագարատը, նախ եղել է հայոց իշխան, ապա՝ իշխանաց իշխան։ Որ այս միտքը ճշմարիտ է, երևում է իր իսկ՝ Ասողիկի մեկ ուրիշ տեղեկությունից՝ «Ահմատ, որ

---

54 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 65։
55 Արաբացի մատենագրեր, էջ 97։
56 Հմմտ. Ա. Տեր-Ղևոնդյան, Հայոց իշխանը, էջ 129—130։
57 Ասողիկ, էջ 158։

զԱլի որդի Յահէի Հայոց ամիրայ առաքեաց և զԱշոտ իշխանաց իշխան արար ի ՅԺԱ (իմա 862—Գ. Գ.) Թուականին»[58], ինչպես նաև՝ Հովհաննես Դրասխանակերտցուց։ Ըստ վերջինի, մինչև իշխանաց իշխան հռչակվելը (862 թ.) Աշոտը վարել է հայոց սպարապետի պաշտոնը[59]։ Վերջին պարագան՝ Աշոտի սպարապետությունը, երկմտանք չի կարող հարուցել, քանի որ հայոց իշխանի բացակայության դեպքում նրան փոխարինում էր սպարապետը։ Որ Աշոտը, սպարապետ կոչվելով հանդերձ, փաստորեն օգտվել է հայոց իշխանի իրավունքներից, պարզ ու որոշակի երևում է Հովհաննես Դրասխանակերտցուց. «Իսկ յորժամ փոխանակ Սմբատայ հօր իւրոյ պայազատէ զսպարապետութիւն Հայոց, գրեթէ ամենեցուն քան զնա նախագունիցն վեհագոյն ճանաչիւր. վասն զի ընկալեալ զմեծարանս... ընդ ամենեսեան կալեալ սերտ սէր...»[60]։ Այսքանը Աշոտ Բագրատունու այն ժամանակաշրջանի վերաբերյալ, երբ նա սպարապետ լինելով հանդերձ, փաստորեն տնօրինում էր հայոց իշխանի պաշտոնին։ 862 թ. Ալի իբն Յահիա ալ-Արմանի (862—863) ոստիկանը խալիֆայի անունից նրան դարձրեց հայոց իշխանաց իշխան[61]։ Պատմիչն անմիջապես հարում է. «...բազում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»[62]։ Ընդգծված միտքն, ըստ էության, բացահայտում է իշխանաց իշխանի ո՛չ ձևական և ո՛չ էլ տիտղոսային բնույթը։ Այն փաստորեն հայտանշում է նոր երևույթ. հարկային քաղաքականությունը, որին չափազանց կարևորություն էր տալիս խալիֆայությունը, վստահվել էր տեղական իշխաններից մեկին։ Թվում է, թե սա այն հիմնական հանգամանքներից մեկն է, որով պիտի պայմանավորել հայոց իշխանին իշխանաց իշխան պատվատիտղոսի շնորհումը։ Սակայն կրկին դառնանք Հովհաննես Դրասխանակերտ-

58 Ասողիկ, էջ 136։

59 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 74։

60 Նույն տեղում։

61 Նույն տեղում; Ասողիկ, էջ 136։

62 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 74։



ցուն, որն Աշոտ Բագրատունու մասին շարունակում է. «Եւ այսպէս պատուականագոյն և առաջին նա գտեալ եղև քան զամենայն նախարարութիւնս Հայոց. և ամենեքեան դաշինս ընդ նմա դնէին՝ որպէս արդարև ընդ Թագաւորական զարմի»[63]։

Այս ամենից հետո չի կարելի արդյո՞ք պնդել, թե Աշոտ Բագրատունուց առաջ իշխանաց իշխան եղած Բագարատ Բագրատունուն ևս խալիֆայությունը վստահել էր հարկերի հավաքումը[64]։ Թվում է, թե հարցին պետք է դրական պատասխանել, մանավանդ, որ, ինչպես կտեսնենք, Թովմա Արծրունու որոշ տեղեկություններն այդ են հաստատում։

Հայոց իշխանին իշխանաց իշխանի տիտղոսի շնորհումը Հայաստանի ինքնուրույնության ընդլայնման և հայոց իշխանի իրավունքների մեծացման ապացույց է։ Իշխանաց իշխանը փաստորեն Արմինիայի ոստիկանի տեղակալն էր, մանավանդ, որ վերջինս Բագարատի օրոք մեծավ մասամբ զբաղված էր տարբեր խռովությունների և ապստամբությունների ճնշումով։ Խալիֆայությունը հարկադրված էր նրան զիջումներ կատարել, որովհետև արաբական տերության մեջ ծայրահեղ սրվել էին սոցիալական ու դասակարգային հակասությունները, և լրջորեն սպառնում էին պետության գոյությանը։

Իրոք, IX դ. սկզբներին Մամուն խալիֆայի օրոք 813—833) խալիֆայության վիճակը բարդացել էր թե՛ գահակալական կռիվների և թե՛ տարբեր շրջաններում բռնկված ապստամբությունների հետևանքով։ Հատկապես հիշարժան են հարավային Իրաքում 820—821 թթ. սկսված և շուրջ 18 տարի տևած Զութ ցեղի ապստամբությունը և նույն դարի 30—40-ական թվականներին Սիրիայում ու Եգիպտոսում տեղի ունեցած ելույթները[65]։ Սակայն խալիֆայության պատմության մեջ աննախադեպը Ադրբեջանում Բաբեկի գլխավորությամբ ծա-

63 Նույն տեղում, էջ 74։

64 Համտ. История СССР, т. I, М., 1966, էջ 389։

65 История стран Зарубежной Азии в средние века, М., 1970, էջ 144։

վալված խուռամյանների շարժումն էր (817—837)։ Արաբական տերությունը մեծ ճիգ ու ջանք գործադրելով թեպետև կարողացավ ծնկի բերել Բաբեկին ու ճնշել այդ ելույթը, սակայն այն թանկ արժեցավ նրան։ Պետության հիմքերը փաստորեն ցնցվել էին։

Ստեղծված իրադրությունը պարարտ հող է ստեղծում խալիֆայության լծի տակ կեղեքվող ժողովուրդների ազգային ինքնուրույնության համար։ Անկարող լինելով կասեցնել տարբեր շրջանների կենտրոնախույս ձգտումները, խալիֆայությունը պատրաստ էր նույնիսկ ճանաչելու նրանց կիսանկախությունը կամ անկախությունը, եթե վերջինները թեկուզ ձևականորեն, ընդունեին իր գերիշխանությունը։ Այսպես, 821 թ. Խորասանը դարձավ կիսանկախ, նույն տարում Սամանյանների Դիխկանյան տոհմի ներկայացուցիչները տիրեցին Մավերաննահրում, ուր ավելի ուշ ձևավորվեց նրանց ամիրայությունը։ 800 թ. Թունիսի և Ալժիրի տարածքում ևս ստեղծվեց Աղլաբյանների կիսանկախ ամիրայությունը[66]։

Հայաստանի քաղաքական ինքնուրույնության առանձնապես նպաստեց Բաբեկի ելույթը[67]։ Դաղբաշյանն իրավացիորեն ընդգծում է այդ շարժման կարևորությունը, որովհետև այն շուրջ քսան տարի իր վրա բևեռելով խալիֆայության ուշադրությունն ու թուլացնելով Հայաստանում նրա դիրքերը, միաժամանակ սատարեց հայ ֆեոդալների տնտեսական և ռազմական հզորությանը[68]։

Ահա այս պայմաններում խալիֆայությունը հայոց իշխանին շնորհեց իշխանաց իշխանի տիտղոս, որը արաբների

66 Նույն տեղում, էջ 146։

67 Ըստ Մ. Չամչյանի, Բաբեկը որոշ ժամանակ հաստատվել էր Տարոնում (տե՛ս Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, էջ 442), իսկ Ա. Ալպոյաճյանի կարծիքով Բագարատ Բագրատունին նույնիսկ գործակցել էր նրան (տե՛ս Ա. Ալպօյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան, Կահիրե, 1941, էջ 217։ Հիշյալ կարծիքները չեն հիմնավորվում սկզբնաղբյուրների տեղեկություններով)։

68 *H. Daghbaschean*, Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1898, էջ 7։



կողմից հայերին կատարված հերթական զիջում էր։ Բագարատ Բագրատունու իշխանության տարիներին հայ ֆեոդալները որոշ արտոնության էին հասել։ Դա ամենից առաջ արտահայտվում էր նրանց կողմից խալիֆայության գանձարան մուծվող հարկի ծավալի կրճատմամբ։ Եթե VIII դարում Արմինիայից գանձվող հարկի չափը կազմում էր 13 միլիոն դիրհեմ, ապա IX դարում, իբն Խորդադբեյհի ասելով, այն կազմեց 4 միլիոն[69]։ Կրճատվեց ոչ միայն հարկի ծավալը, այլև նրա վճարումը դարձավ ոչ պարբերական, դեպքից դեպք։

Այս մասին շատ որոշակի ու հստակ գրում է Բալազուրին։ Ըստ նրա, հայ իշխաններից յուրաքանչյուրն իշխում էր իր գավառում։ Միայն ոստիկանների խստություններն էին նրանց ստիպում հարկ վճարել, հակառակ դեպքում արհամարհում էին նրանց և հրաժարվում նրանց հրամանները կատարելուց[70]։ Հայերի կողմից արաբներին հարկ վճարելը պետք է համարել արաբական տիրապետության ճանաչման հիմնական պայմաններից մեկը։ Եվ եթե հարկի վճարումը դարձել էր անկանոն, բնականաբար, թուլացել էր և այդ տիրապետությունը։

Մյուս կողմից՝ Բագարատի իշխանությունը զրկել էր արաբ հարկահաններին հարկ հավաքելու պատրվակով գավառից գավառ շրջելուց, երկիրը ասպատակելուց և կողոպտի մատնելուց։ Բագարատն ինքն էր հավաքում Հայաստանից պահանջվող հարկը, այն էլ ոչ պարբերաբար ու արաբ ոստիկանի կամ հարկային միջնորդի միջոցով վճարում խալիֆայությանը։ Այս կարևոր հանգամանքը, որ հաստատվում է Թովմա Արծրունու ակնարկներով, ուշագրավ է և հայոց իշխանի իրավունքների մեծացման ապացույց է։

Ավելին, իր ձեռքում կենտրոնացնելով Հայաստանի վարչական և տնտեսական կյանքի կարևոր օղակները, Բագարատ Բագրատունին Արաբական խալիֆայության թուլության պայմաններում փորձում էր ձեռք բերել երկրի քաղաքական ան-

69 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 18։

70 *Baladhuri*, էջ 330։

կախությունը։ Այս կարևոր հանգամանքը հետազոտողների ուշադրությանը չի արժանացել։ Բագրատունյաց գահին առաջինը բարձրացած Աշոտ Ա-ի գործունեությունը ստվերի տակ է թողել նրա նախորդին։

Արդյո՞ք պատահականություն պիտի համարել արաբ պատմիչի այն վկայությունը, ըստ որի Բագարատը խալիֆայությունից պահանջում էր իրեն ճանաչել Արմինիայի կառավարիչ[71]։ Այլ կերպ ասած, դրանով նա ձգտում էր ձեռք բերել Անդրկովկասի միանձնյա իշխանությունը։ Բագարատի նմանօրինակ նկրտումը ինքնանպատակ ու մտացածին մղում չէր և ոչ էլ խալիֆայության պաշտոնական սանդուղքով բարձրանալ ցանկացող պաշտոնյայի սովորական պահանջ։ Դա նշանակում էր, որ Բագարատ Բագրատունին, որը լավ էր ըմբռնում խալիֆայության քաղաքական դրությունը, փորձում էր նոր քայլ կատարել երկրի անկախության համար մղվող պայքարի ճանապարհին։ Այդ պայքարում հաջողության հասնելու համար առաջին հերթին նա հենվում էր երկրի սեփական ուժերի վրա։ Թովմա Արծրունին հաղորդում է, թե ինչպես Բագարատի ղեկավարությամբ զինական դաշնակցություն էր ստեղծվել Վասպուրականի Աշոտ Արծրունու և Հայաստանի հարավային ֆեոդալական մի շարք տների ներկայացուցիչների հետ[72]։ Այդ դաշինքն առաջին հերթին ուղղված էր օտար տիրապետության դեմ։ Մեզ տվյալներ են հասել Բագարատի՝ Բյուզանդական կայսրության հետ համագործակցելու և արաբական լուծը տապալելու մտադրությունների մասին[73]։ Այս վկայությունը խիստ ուշագրավ է և արժեքավոր։ Նրա պատմական նշանակությունն առավել կմեծանար, եթե համանըման, թեկուզ կողմնակի, որևէ տվյալի հանդիպեինք նաև ոչ արաբ հեղինակների մոտ։ Քանի որ արաբ մատենագիրը, շեշտելով խալիֆայության դեմ Բագարատի ըմբոստությունը, հնարավոր է, կողմնակալությունից զերծ չմնալով, նրան վերագրել է բյուզանդամետ տրամադրություններ։ Այս հանգա-

71 Տե՛ս А. Тер-Гевондян, Армения, էջ 134։

72 Թովմա Արծրունի, էջ 120։

73 Baladhuri, էջ 289։



մանքը բնավ անտես չառնելով, նաև չպետք է պնդել, թե Բագարատ Բագրատունին իր քաղաքական ձգտումները փորձում էր իրագործել միայն սեփական ուժերի վրա հենվելով՝ զանց առնելով դրսի, տվյալ դեպքում՝ ասենք բյուզանդական օգնությունը։ Բագարատի ծրագրերում վերջինիս դերը նույնպես էական պիտի լիներ, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների իշխանները հակոտնյա էին նրան։

Մի առիթով, IX դարավերջի դեպքերին անդրադառնալիս, Թովմա Արծրունին Տարոնի մասին գրում է. «Զի եւ տուն հայոց անուանեալ առաջին ասէին զՏարօն»[74]։ Այս վկայությունն եզակի է։ Աղբյուրներում մենք համանման որևէ տեղեկություն չենք հանդիպում։

Գրականության մեջ Տարոնի՝ հայոց առաջին տուն հորջորջումը բացատրվել է նրա «ամենանվիրական ավանդույթների երկիր» լինելու հանգամանքով[75] կամ էլ գավառի մշակութային-պատմական կարևոր դերի արդյունք համարվել[76]։ Նման բացատրությունները թերի են։ Հայերենում տուն բառը բազմիմաստ է։ Այն ունի շինություն, տաղավար, պալատ, ապարանք, եկեղեցի, սենյակ, վրան, տան բնակիչներ, ազգատոհմ իմաստները[77]։ Բառս նշանակել է նաև ցեղ, ժողովուրդ, երկիր։ Հայտնի են Կադմոսի տուն, Աբգարի տուն[78] և այլ ձևերը։

Նախարարական տարբեր տոհմերի մասին խոսելիս պատմիչները հիշատակելով տոհմի անունը, ավելացնում են նաև տուն բառը։ Մովսես Խորենացին գրում է Արծրունիների,

74 Թովմա Արծրունի, էջ 265։

75 Լեո, Հայոց պատմություն, էջ 520։

76 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 1978, էջ 17; հմմտ. նույնի Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 31։

77 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 427; հմմտ. նաև՝ ՆԲՀԼ, հ. II, էջ 891։

78 Մովսես Խորենացի, էջ 112—113, 159։

Գնունիների, Անգեղ տան, Պահլավունյաց[79], Ղազար Փարպեցին՝ Ամատունյաց, Վանանդի, Արշարունյաց և Անձևացյաց տների[80] մասին։ Հանդիպում ենք նաև Թորգոմա տուն, Ասքանազյան տուն, հայոց տուն[81] ձևերին, որոնք հոմանիշ են Հայաստան և հայ ժողովուրդ հասկացություններին։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հայաստանում ստեղծվել էին ֆեոդալական առանձին իշխանություններ, որոնք հաճախ կոչվում էին տվյալ վայրի կամ իշխանական տոհմի տուն անուններով։ Վասպուրականի Արծրունյաց ֆեոդալական իշխանությունը կոչվում էր Արծրունյաց տուն[82], Սյունիքինը՝ Սիսական[83], Բագրատունիների հյուսիս-արևելյանը՝ Շիրակ[84], Սասունինը՝ Սասունի տուն[85] և այլն։

IX դարի առաջին կեսին հայկական այս իշխանությունների կամ տների մեջ առանձնանում էր Տարոնի Բագրատունիների իշխանությունը։ Տարոնի իշխան Բագարատ Բագրատունին գրավելով հայոց իշխանի պաշտոնը՝ իշխանաց իշխան տիտղոսով, փաստորեն, ղեկավարում էր հայ իշխաններին և իր գահով նա առաջինն էր նրանց մեջ (primus inter pares)։ Սրանից կարող ենք եզրակացնել. եթե Բագարատ Բագրատունին հայ իշխանների մեջ առաջինն էր, նրա տունը, որը, ինչպես տեսանք, աղբյուրներում նշանակել է նաև իշխանություն, հավանաբար ևս պիտի առաջինը լիներ։ Այս իրողությունը, որ առկա էր մինչև Բագրատունիների թագավորության հռչակումը, որպես վերապրուկ հարատևել է նաև դարի վերջերին։ Ուշագրավ է, որ Թովմա Արծրունին գրում է. «տուն... առաջին ասէին» և ոչ թե՝ «տուն... առաջին ասէն»։

---

79 Նույն տեղում, էջ 3, 70, 207։

80 Ղազար Փարպեցի, էջ 75։

81 Ագաթանգեղոս, էջ 415; Մովսես Խորենացի, էջ 33; Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 120; Մատթեոս Ուռհայեցի, էջ 17, 18; Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, Երևան, 1963, էջ 49, 68, 80։

82 Թովմա Արծրունի, էջ 118։

83 Ստեփանոս Օրբելյան, էջ 1, 3։

84 Արիստակես Լաստիվերտցի, էջ 57։

85 Մատթեոս Ուռհայեցի, էջ 17։



## Բ. ՊԱՅՔԱՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

847 թ. Արաբական խալիֆայության գահին բարձրացավ Աբասյան ալ-Մուտավաքիլ աբուլ Ֆադլ Ջաֆար Մուհամմադը (847—861), հայկական աղբյուրներում հայտնի Թոքլ Ջափար, Ջափրմոթոքլ, Ջափր անուններով[86]։ Փորձելով ետ պահել արաբական պետության քայքայման ընթացքը, Մուտավաքիլը դիմեց մի շարք կտրուկ միջոցների։ Նա ավելի ծանրացրեց խալիֆայության տիրապետության տակ եղած ժողովուրդների սոցիալական , կրոնական և ազգային կեղեքումը։ Խալիֆայության տարբեր նահանգներում հաճախակի դարձած ապստամբությունները ճնշվում էին խստագույն ձևերով, իսկ նրանց ղեկավարներն իրենց պատիժը կրում էին մայրաքաղաք Սամառայում։ Ի հակակշիռ արաբների, պետության մեջ աստիճանաբար ընդգծվեց թյուրքական վարձկանների դերը, որոնց ձեռքին խալիֆաները փաստորեն դարձել էին խաղալիք։ Խիստ հալածանքներ սկսվեցին քրիստոնյաների և հրեաների նկատմամբ, արգելվեց նրանց պետական պաշտոններում ներգրավել, Բաղդադում կառուցված եկեղեցիներն ու հրեից աղոթատները քանդվեցին և այլն[87]։

Հայաստանը զերծ չմնաց Մուտավաքիլի տեսադաշտից։ Նա փորձեց վճռական ձեռնարկումներով վերջնականապես հպատակեցնել երկիրը։

850 թ. խալիֆան Արմինիայի ոստիկան նշանակեց Աբու Սաիդ Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Մարուազիին։ Նրան տրված էր նաև հարկերի հավաքման իրավունքը[88]։ Բայց, ստվարաթիվ զորաբանակով Հայաստան գալով, վերջինս նպատակ ուներ կանխել Բագարատ Բագրատունու ղեկավարությամբ արաբների համար ստեղծված վտանգավոր իրավիճակը։

---

86 Թովմա Արծրունի, էջ 118, 231։

87 *K. Zetterstéen*, al-Mutawakkil, EI, vol. III, Leiden-London, 1934, էջ 786; И. П. Петрушевский. Ислам в Иране в VII—XV вв., Л., 1966, էջ 96։

88 Թովմա Արծրունի, էջ 118—119։ Վերջինս նրան կոչում է Ապուսէթ։



6—1281

Ընդամին նա որդեգրել էր զգույշ ու շրջահայաց տակտիկա։ Խուսափելով Բագարատի իշխանության սահմանները մտնելուց, Աբու Սաիդը կանգ էր առել Տարոնի հարավում՝ Աղձնիքում, որը մտնում էր Զուրարիկների արաբական տոհմի տիրույթների մեջ, ուր հաստատվել էր Մուսա իբն Զուրարան։ Երբ ոստիկանը Բագարատին տեղեկացրեց իր գալստյան մասին, վերջինս գերադասեց չներկայանալ ոստիկանին այն դեպքում, երբ հայոց իշխանը պարտավոր էր ի պաշտոնե ոչ միայն դիմավորել Աբու Սաիդին, այլև նրան իրազեկ պիտի դարձներ երկրի կացությանը։ Իր պատվիրակների միջոցով նրան թանկարժեք նվերներ ընծայեց և խորհուրդ տվեց չասպատակել երկիրը։ Արաբ պաշտոնյան հարկադրված բավարարվեց հարկերի այն չափով, որքա՛ն վճարեց Բագարատը և հեռացավ՝ արքունիքին տեղեկացնելու տիրող դրությանը[89]։

Աբու Սաիդը, հակառակ իր մտադրության, երկրի սահմաններից ներս չթափանցեց։ Այս հանգամանքը բացատրվում է արաբական գերիշխանության դեմ Հայաստանում տիրող խռովահույզ վիճակով, հատկապես Բագարատի գլխավորությամբ ստեղծված հայ իշխանների ռազմական դաշինքով։ Խալիֆայի պատվիրակին անձամբ չներկայանալն ու անհրաժեշտ ուշադրության չարժանացնելը գահերեց իշխանի հեղինակության և ազդեցիկ դիրքի արգասիք էր։

Իշխանաց իշխանի տիտղոսին անդրադառնալիս տեսանք, որ խալիֆայությունը Բագարատին տված պիտի լիներ Հայաստանի հարկերի հավաքման իրավունքը։ Վերջինս արաբ պաշտոնյաների միջոցով այն հանձնելու էր պետությանը։ Այս վարկածին որոշ չափով նպաստում է Թովմա Արծրունու տեղեկությունը, ըստ որի Աբու Սաիդը Տարոնի իշխանի մոտ իր գալը պատճառաբանում էր հարկի հավաքումը[90]։ Բագարատը նրան վճարեց անհրաժեշտ չափի հարկ, բայց որը, ինչպես տեղեկանում ենք Արծրունյաց պատմիչի հետագա հա-

89 Թովմա Արծրունի, էջ 119։

90 Նույն տեղում։



ղորդումներից, այնքան չնչին էր, որ չէր բավականացրել նրանց[91]։

Հեռանալով Հայաստանից, Աբու Սաիդն իր հետ տանում էր հայ իշխանների վերաբերյալ տեղի մահմեդական բնակչության բողոքագրերը։ Հայաստանում նա իր լիազորությունները հանձնել էր Մուսա իբն Զուրարային, որն ամուսնացել էր Բագարատ Բագրատունու քրոջ հետ[92]։

Մուսա իբն Զուրարայից բացի հարկային գործակալությունը հանձնարարված էր Ալա իբն Ահմադ ալ-Սավաֆուն (ըստ Թովմա Արծրունու՝ Ալա Ծովափի)։ Վերջինիս հանձնարարված էր Վասպուրականում իր զորքով մնալ այնքան, մինչև Հայաստանի տարբեր կողմերից կբերեին սահմանված հարկերը[93]։ Օգտվելով դրանից, նա սկսեց ասպատակել Վասպուրականի տարբեր շրջանները, ուր մեծ ավերածություններ ու սպանություններ կատարեց։ Բայց Վասպուրականի Աշոտ Արծրունու ջանքերով Ալան դուրս քշվեց երկրից և հազիվ ճողոպրեց Բերկրիի կողմերը[94]։ Այն պահին, երբ Աշոտ Արծրունին կռվում էր Ալայի դեմ, Մուսա իբն Զուրարան շարժվեց դեպի Տարոն։ Նրա հարձակման շարժառիթը, ըստ Թովմա Արծրունու, արաբների կողմից պահանջվող հարկերն էին[95], թեպետ, ինչպես ենթադրվում է, Բագարատի և Մուսայի միջև իբրև սահմանակից ավատատերեր, կարող էին վեճեր ևս լինել[96]։ Մուսան շրջապատեց նրա ձմեռոց Մուշ քաղաքը[97]։

91 Նույն տեղում, էջ 120, 123։

92 Նույն տեղում, էջ 122։ Վ. Վարդանյանը գրում է. «Մուսային Հայաստանի կառավարիչ նշանակելը նպատակ ուներ մեղմել հայերի դժգոհությունը» (տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի իշխանության քաղաքական կողմնորոշումը IX դարի կեսին, ՊԲՀ, 1975, № 2, էջ 147)։ Սա պակաս հավանական է, մանավանդ հակասում է հեղինակի այն մտքին, ըստ որի, Մուսան հավակնություն ուներ հայ իշխանների տիրույթների նկատմամբ և Բագարատի դեմ դուրս եկավ բացահայտ կերպով (տե՛ս նույն տեղում)։

93 Թովմա Արծրունի, էջ 123։

94 Նույն տեղում, էջ 125։

95 Նույն տեղում, էջ 120։

96 **Ա. Տեր-Ղևոնդյան**, *Արաբական ամիրայությունները*, էջ 81—82։

97 Թովմա Արծրունի, էջ 120։

Բագարատի և նրա հակառակորդի ուժերի բախումը նկարագրում է միայն Թովմա Արծրունին։ Վերջինս իր սովորության համաձայն, տարվելով Աշոտ իշխանի և Վասպուրականի ազատանու փառաբանությամբ, աչքաթող է անում Բագարատին։ Ակամայից այն տպավորությունն է ստեղծվում, թե իբր մարտի ելքը վճռել են Վասպուրականի ուժերը՝ Աշոտի գլխավորությամբ։ Հենց այդպես էլ վերնագրված է Թովմայի երկի առաջին գրքի VI գլուխը՝ «Վասն պատերազմին Բագարատայ իշխանին հայոց՝ եւ Մուսէի. եւ յաղթութեանն ի ձեռն Աշոտոյ Վասպուրական իշխանին զի եկն զօրավիգն Բագարատայ»[98]։

Երբ Մուսան մտավ Տարոն, Բագարատը դիմեց Աշոտ Արծրունու օգնությանը։ Վերջինիս ջանքերով իշխաններն իրենց զորամասերով ներկայացան նրան՝ թշնամու դեմ կռվելու պատրաստակամությամբ։ Ըստ Թովմա Արծրունու, Բագարատ Բագրատունու բանակում, որին նա կոչում է հայոց զորք, Արծրունյաց տոհմից իրենց զորագնդերով թշնամու դեմ կռվում էին Աշոտ, Գուրգեն և Գրիգոր եղբայրները։ Նույն տոհմից պատերազմին մասնակցում էին նաև Վահանը, Վասակը, Մուշեղը, Ապուպելճը, Գուրգենը, Վասակը, Ապուջափրը, Մուշեղը, Ապումայան, Վասակը, Վահանը, Համազասպը, Գրիգորի որդի Վասակը, Ապումկդեմը, Մեհրուժանը (բնագրում՝ Մեհուժան), Գրիգորը՝ թվով 19 հոգի։ Այսպիսով, թշնամու դեմ կռվող իշխաններից 19 հոգի Արծրունյաց տոհմից էին[99]։

Իրենց զորագնդերով Բագարատի բանակում էին նաև՝ ա) Բագրատունյաց տոհմից Թոռնիկի որդին[100], բ) Ամատունիներից՝ Շապուհն իր ութ ազգականներով, գ) Գնունիներից՝ Հազրի որդի Գրիգորն իր վեց ազգականներով դ) Ընտրունիներից՝ Արտավազդը յոթ ազգականներով, ե) Սմբատ Ապահունին, զ) Գրիգոր Քաջբերունին, է) Վահան Հավնունին, ը) Դավիթ Սեպուհը, թ) Գագրիկ Ապուհարազը, ժ) Թոդորոս Վարազխը, ժա) Խոսրով Վահևունին, ժբ) Խոսրով Ակեացին, ժգ) Վարդան Գաբայեղենը, ժդ) Սմբատ Մարացյանը, ժե) Սահակ Սեպուհը, ժզ) Պատրիկ Անձևացին, ժէ) Գորգ Հարմացին, ժը) Դավիթ Գունդսաղարը[101]։

Այսպիսով, սրանք ներկայացնում էին իշխանական 36 զորագունդ։

Այս իշխանների օգնությամբ Բագարատը թշնամու դեմ ճակատամարտեց Մուշի դաշտում և հաղթանակեց։ Հայերը ոչնչացրին հակառակորդի ուժերը, իսկ ողջ մնացածները պատսպարվեցին Բաղեշի բերդում։ Այստեղ նրանք պիտի ոչնչացվեին, բայց Բագարատի քրոջ՝ Մուսայի կնոջ աղերսանքով ներման արժանացան[102]։

Դառնանք Բագարատի բանակում եղած իշխաններին։ Ինչպես տեսանք, Արծրունիներից թշնամու դեմ կռվում էին 19 իշխան՝ իրենց համապատասխան ուժերով։ Նրանց տիրույթները գտնվում էին Վասպուրականում։ Կռվին մասնակցած մյուս 36 իշխաններից մեզ հայտնի են միայն 18-ի անունները։ Իշխանական ո՞ր տոհմերի ներկայացուցիչներն էին սրանք և որտե՞ղ էին բնակվում.

ա) Թոռնիկ Բագրատունու որդին. ինչպես ցույց է տալիս տոհմանունը, նա Բագրատունի էր, բայց անհայտ է նրա տիրույթը։

---

98 Նույն տեղում, էջ 120։

99 Նույն տեղում, էջ 121։

100 Նույն տեղում։ Բնագրի՝ «Եւ ի տանէն Բագրատունեաց Թոռնկայ որդի զօրօք իւրովք» հատվածն ըստ Ն. Ակինյանի, խաթարվել է։ Նա առաջարկում է այն վերականգնել հետևյալ կերպ. «ի տանէն Բագրատունեաց Իշխանիկ որդի... զօրօք իւրովք», իսկ երկրորդ պարբերությունը՝ «ի տանէն Մամիկոնէից Յովնան (կամ Քուրդիկ) Թոռնկայ որդի» (տե՛ս Ն. Ակինեան. Թոռնիկեանց ճիւղագրութիւնը, էջ 50—51)։ Այս տեսակետը կասկածելի է



թվում, որովհետև նրա հեղինակը որևէ ձևով այն հիմնավորելուց ձեռնպահ է մնում, առավել ևս պատմիչի տեքստում աղավաղում նշմարելի չէ։ Ն. Ակինյանն իրավացի է մի դեպքում միայն, երբ նկատում է, որ պատմագիրը չի հիշատակում Թոռնիկի որդու անունը։

101 Թովմա Արծրունի, էջ 121։

102 Նույն տեղում, էջ 122։

բ) Շապուհ Ամատունի. Ամատունիների տոհմական տիրույթը գտնվում էր Վասպուրականի Արտազ գավառում, որի կենտրոնը Մակու քաղաքն էր[103]։

գ) Հազրի որդի Գրիգոր Գնունի. Գնունիները տիրում էին Տուրուբերան նահանգի Աղիովիտ գավառին՝ Արճեշ քաղաքով, Վանա լճի ափին[104]։

դ) Արտավազդ Ընտրունի. Ընտրունի ձևը սխալ է, պետք է լինի Տրունի[105]։ 774—775 թթ. ապստամբության ժամանակ Արճեշի ճակատամարտում նրանցից զոհվեցին երեքը։ Թեպետև նրանց բնակավայրը որոշակի չի հիշվում, բայց այն գտնվում էր Վասպուրականում։

ե) Սմբատ Ապահունի. Ապահունիքը, ըստ «Աշխարհացույցի», Տուրուբերան նահանգի գավառներից էր[106], որի կենտրոնը Մանազկերտն էր։

զ) Գրիգոր Քաջբերունի. տոհմանունը ցույց է տալիս, որ նա Քաջբերունիքից էր։ Վերջինս Վասպուրականի գավառներից էր և իր մեջ ընդգրկում էր Գառնի ու Առբերանի գավառները[107], Վանա լճի հյուսիսային ափերին։

է) Վահան Հավնունի. տոհմանունը կապվում է Այրարատ նահանգի Հավնունիք գավառի հետ։ Հավնունիքը գտնվում էր Երասխ գետի հարավային կողմում[108]։

ը) Դավիթ Սեպուհ. տիտղոսը դարձել է անուն և հնարավոր չէ որոշել նրա գավառը։

---

103 *Н. Адонц,* Армения, *էջ 304; հմմտ.* Ս. Երեմյան, *Հայաստանը, էջ 40։*

104 Թովմա Արծրունի, *էջ 347; հմմտ. Н. Адонц,* Армения, *էջ 304։ Բացի Թովմայից Վարդան պատմիչը հաղորդում է, թե ինչպես Գնունիները նեղվելով արաբներից դիմեցին Աշոտ Մսակերին։ Վերջինս նրանց գաղթեցրեց և հաստատեց Տայքում (տե՛ս* Վարդան, *էջ 77)։*

105 *Н. Адонц,* Армения, *էջ 321, ծան. 3։*

106 Ս. Երեմյան, *Հայաստանը, էջ 36։*

107 *Նույն տեղում, էջ 46։*

108 *Նույն տեղում, էջ 110։*



թ) Գազրիկ Ապուհարազ. Գազրիկյան գավառը գտնվում էր Վասպուրական նահանգում[109]։

ժ) Թոդորոս Վարազխ[110]. ենթադրվում է, որ նա պատկանել է Վարազք կամ Վարազատակք տոհմին[111]։ Հայտնի չէ, թե որտեղ էին նրանք հաստատվել։ Արծրունյաց տան պատմիչը միայն այս դեպքում է հիշատակում նշված տոհմին։

ժա) Խոսրով Վահևունի. Վահևունիների սկզբնական տիրույթները Տարոնում էին, IV դարից նրանք երևում են Այրարատում, իսկ հետո գաղթում Վասպուրական։

ժբ) Խոսրով Ակեացի. Ակեացիների իշխանական տունը տիրում էր Վասպուրականի Ակե գավառին։

ժգ) Վարդան Գաբայեղեն. սրա տոհմանունը համընկնում է Գաբեղյանք գավառի հետ։ Վերջինս գտնվում էր Այրարատ նահանգում, Արաքս գետի աջ ափին[112], Հավնունիքին կից։

ժդ) Սմբատ Մարացյան. պետք է լինի Մուրացյան։ Անծանոթ է Վասպուրականի նախարարական տների մեջ։

ժե) Սահակ Սեպուհ. տիտղոսը դարձել է հատուկ անուն և անհնար է որոշել նրա տոհմական գավառը։

ժզ) Պատրիկ Անձևացի. տոհմանունը հիշեցնում է Վասպուրականի համանուն գավառը[113]։

ժէ) Գորգ Հարմացի. ուղղելի է՝ Հարքացի[114]։ Հարքը Տուրուբերանի գավառներից էր[115]։ Գտնվում էր Տարոնի հյուսիս-

---

109 *Նույն տեղում, էջ 109։ Ս. Երեմյանը ենթադրաբար այն տեղադրում է Տարոնոյ գետի (Ջոլա-չայ) ակունքների շրջանում։ Ենթադրվում է, որ այս գավառի կենտրոնը՝ Գազրիկ ամրոցը, ժամանակակից Կասրիկ գյուղի տեղում է (տես նույն տեղում, էջ 46)։*

110 Թովմա Արծրունի, *էջ 121։*

111 Վ. Վարդանյան, *Վասպուրականի իշխանության քաղաքական կողմնորոշումը, էջ 149։*

112 Ս. Երեմյան, *Հայաստանը, էջ 110։*

113 *Նույն տեղում, էջ 109։*

114 Վ. Վարդանյան, *Վասպուրականի իշխանության քաղաքական կողմնորոշումը, էջ 148։*

115 Ս. Երեմյան, *Հայաստանը, էջ 107։*

արևելքում։ Նրա տարածքի մի մասը մտնում էր Տարոնի իշխանության մեջ։

ժը) Դավիթ Գունդսաղար. այստեղ ևս տիտղոսը դարձել է հատուկ անուն և դժվար է որոշել Դավթի տիրույթը։ Գունդսաղարն իրանական ծագում ունի և նշանակում է բանակի որևէ միավորի հրամանատար[116]։

Այսպիսով, Վասպուրականի 19 իշխաններից բացի, որոնք միայն Արծրունյաց տոհմից էին, թշնամու դեմ կռվում էին նույն նահանգի իշխանական մյուս տոհմերի ներկայացուցիչները ևս։ Դրանք էին՝ Շապուհ Ամատունին, Գրիգոր Քաջբերունին[117], Գագրիկ Ապուհարազը, Խոսրով Ակեացին, Պատրիկ Անձևացին։

Որոշ իշխանների կրած տիտղոսները դարձել են հատուկ անուններ, որի պատճառով հնարավոր չէ պարզել նրանց տիրույթները։ Դրանք են՝ Դավիթ Սեպուհը, Սահակ Սեպուհը և Դավիթ Գունդսաղարը։

Մի քանիսի տոհմանունները թեև հայտնի են, բայց անհայտ են նրանց իշխելու վայրերը։ Այդ իշխաններն են՝ Թոռնիկ Բագրատունու որդին, Արտավազդ Ընտրունին (Տրունի), Թոդորոս Վարազխը, Խոսրով Վահևունին, Սմբատ Մարացյանը (Մուրացյան)։

Թովմա Արծրունին Վասպուրականի իշխանների մեջ է հիշում նաև Հազրի որդի Գրիգոր Գնունուն, Սմբատ Ապահունուն, Վահան Հավնունուն, Վարդան Գաբայեղենին, Գորգ Հարմացուն (Հարքացուն)։

Ինչպես ցույց են տալիս վերջիններիս տոհմանունները, նրանց տիրույթները գտնվել են Վասպուրականից դուրս կամ նրան մերձակա շրջաններում։ Այլ կապակցությամբ Գաբայե-

116 Տե՛ս C. Toumanoff, Studies, էջ 225, ծան. 270։ Այն հոմանիշ է սաղարին և նշանակում է զորագլուխ (տե՛ս ՆԲՀԼ, հ. II, էջ 580)։

117 Ըստ Ն. Ադոնցի Քաջբերունիները ապրում էին Արճեշում, այսինքն Վասպուրականից դուրս (Н. Адонц, Армения, էջ 321, ծան. 5)։



ղեն տերերին մենք տեսնում ենք Վասպուրականի իշխանների հետ[118]։

Այժմ անդրադառնանք ելակետային նշանակություն ունեցող հետևյալ հարցին։ Ի՞նչ սկզբունքի վրա էր խարսխված Բագարատին հիշյալ իշխանական տոհմերի ներկայացուցիչների ցույց տված զինական օգնությունը։ Արդյո՞ք այն պետք է դիտել իշխանների միջև հավասար հիմունքներով կայացված զինական դաշնակցության սովորական դրսևորում, թե իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու նկատմամբ նրանց վասալական պարտականության արդյունք համարել։ Վ. Վարդանյանը հակված է առաջին տեսակետին[119], սակայն այդ մոտեցումը իմաստազրկում է Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունները Բագարատի՝ հայոց իշխանների բարձակցությունը ղեկավարելու վերաբերյալ։

Խալիֆայությունը չէր կարող հաշտվել Հայաստանում ստեղծված նման իրադրության հետ։ Հայոց 3 (851) թվականին, ըստ Թովմա Արծրունու, Հայաստան ուղարկվեց Աբու-Սաիդի որդին՝ Յուսուֆ ալ-Մարուազին (851—852)։ Նա եկավ հոր փոխարեն, որը ճանապարհին մեռել էր[120]։ Յուսուֆը արքունիքից հրահանգ ուներ հաշվեհարդար տեսնել Հայաստանի ապստամբած շրջանների՝ Տարոնի և Վասպուրականի իշխանների հետ։ Նա միաժամանակ հայ նախարարներին զրկելու էր իրենց ժառանգական սեփականատիրական իրավունքներից։ Հակաարաբական ընդվզման այս պայմաններում խնդիր էր դրվում Տարոնի և Վասպուրականի տերերին մեկուսացնել և նրանց պատասխանատվության ենթարկել[121]։

Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, այժմ արդեն չի նկատվում Բագարատ Բագրատունու և Աշոտ Արծրունու սերտ համագործակցությունը։

118 Բնագրում՝ Խոսրով Գաբաելեան (տե՛ս Թովմա Արծրունի, էջ 157)։

119 Վ. Վարդանյան, Վասպուրականի իշխանության քաղաքական կողմնորոշումը, էջ 149։

120 Թովմա Արծրունի, էջ 129։

121 Նույն տեղում։

Յուսուֆը մտավ Վասպուրականի Աղբակ գավառը, գրավեց Աշոտի իշխանանիստ Հադամակերտը և սկսեց ամենուրեք ասպատակել։ Աշոտ Արծրունին հարկադրված թողեց իր ամրոցն ու հաստատվեց Մարդաստանի և Հասկո ձորի կողմերում[122]։ Երկյուղելով Յուսուֆից, Վասպուրականի իշխանը պատրաստակամություն ցուցաբերեց կատարել նրա կամքը։ Նա իր մոր միջոցով կարողացավ խուսափել Յուսուֆի հետապնդումից՝ նրան տալով պատանդներ և մեծաթիվ ընծաներ[123]։ Բնորոշ է, որ Արծրունյաց տիկինը Յուսուֆի հետ բանակցելիս հանդես էր գալիս լոկ Վասպուրականի անունից[124]։

Այսպիսով, արաբների առջև առանց դիմադրության Վասպուրականի զինաթափվելը խիստ բացասական հետևանք ունեցավ թշնամու դեմ մղվող պայքարի համար։ Վասպուրականի իշխանի այս քայլը շլացեց հայ իշխաններին և Տարոնը փաստորեն մեկուսացավ։ Յուսուֆի հաջորդ նշանակետը Տարոնն էր։ Աղձնիքի արաբ կառավարիչ Մուսա իբն Զուրարան այս անգամ արդեն քաղաքական այլ կողմնորոշում ընդունեց։ Նա ձերբազատվելով Արաբական խալիֆայությունից, սկսեց գործակցել հայ ապստամբների հետ[125]։ Մուսա իբն Զուրարայի այս քաղաքականությունը Մուտավաքիլի ձեռնարկած միջոցառումների արդյունք էր, որը կոչված էր սահմանափակելու ու վերացնելու ոչ միայն հայ, այլև տեղական արաբ ազնվականների իրավունքները։

Վասպուրականից հետո Յուսուֆը մտավ Խլաթ։ Վերջինըս պատկանում էր հայոց իշխանին։ Բայց Բագարատը թողել էլ Խլաթը և հաստատվել Մուշում։ Յուսուֆը պատգամավորների միջոցով Բագարատ Բագրատունուն տեղեկացրեց իր գալուստը։ Նա պահանջեց ներկայանալ իրեն, որպեսզի նրան իր փոխարեն նշանակեր Արմինիայի կառավարիչ

122 Նույն տեղում։

123 Նույն տեղում, էջ 130։

124 Նույն տեղում։

125 Baladhuri, էջ 331,



պաշտոնում, քանի որ ձմռան ցրտերի պատճառով ինքը պատրաստվում էր մեկնել արքունիք[126]։

Իր պաշտոնը Բագարատին տալու մասին Յուսուֆի առաջարկն անակնկալ չէր։ Բագարատն ինքն այդ պահանջով դիմել էր խալիֆայությանը։ Եվ նրա մեջ, ըստ երևույթին, այն հույսերն էին արթնացել, որ խալիֆայությունը վախենալով սկսված ապստամբությունից, հայերին մի նոր զիջում է կատարում․ ոստիկանի պաշտոնը վստահում է իրեն։ Միայն այս հանգամանքով պիտի բացատրել Տարոնի փորձված իշխանի՝ Բագարատի, Յուսուֆին ներկայանալու փաստը։

Տարոնի իշխանն ամենևին չկասկածելով Յուսուֆի խաբեության վրա, հատուկ պատվիրակությամբ մեկնեց նրա մոտ։ Վերջինս ձերբակալեց թե՛ Բագարատին և թե՛ պատմիչի բառերով «զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց» և շղթայակապ ուղարկեց Սամառա[127]։

Յուսուֆը ձմեռեց Մուշում՝ իր հետ բերելով Վասպուրականի ազատանու պատանդներին։ Մեծ ավերածություններ կատարելով Տարոնում, նա բնակչության մի մասին գերության քշեց արաբական պետության տարբեր մասերում, իսկ մյուսներին իր հետ պահելով, ենթարկում էր սաստիկ տանջանքների ու չարչարանքների։ Արաբ ոստիկանը սպասում էր գարնանը։ Նա նպատակ ուներ երկիրը լիակատար հնազանդեցնել։ Ընդսմին, նախատեսում էր ազնվականության զանգվածային գերեվարություն, ֆեոդալների սեփականության բռնագրավում, արաբական բնակչության վերաբնակեցում[128]։

126 Թովմա Արծրունի, էջ 131։ Անորոշ է Թաբարու հայերեն թարգմանության այս հատվածը։ Ըստ վերջինի, Բագարատը խնդրել էր Յուսուֆից իրեն հաստատել իշխանության մեջ (տես Արաբացի մատենագրեր, էջ 97)։ Մինչդեռ արաբ պատմիչի երկի բնագրում խոսվում է կառավարիչ նշանակելու մասին (տե՛ս А. Тер-Гевондян, Армения, էջ 134)։ Ըստ Յակուբիի, Բագարատը Յուսուֆի մոտ էր մեկնել նրանից ապահովություն ստանալու խնդրանքով (տես Արաբացի մատենագրեր, էջ 122)։ Նույն միտքը կարդում ենք իբն Միսքավայի մոտ (տես նույն տեղում էջ 77)։

127 Թովմա Արծրունի, էջ 131; Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 66։

128 Թովմա Արծրունի, էջ 131—132։

Սակայն Յուսուֆին չհաջողվեց Տարոնում վերջնական հաջողության հասնել։ Նրա դեմ սկսվեց ժողովրդական այնպիսի մի շարժում, որի նմանը չէր տեսել Հայաստանն ամբողջ արաբական տիրապետության ժամանակաշրջանում։ Ապստամբության հիմնական տոն տվողը լեռնային Խութի և Սասունի բնակիչներն էին։ Նրանք, պատմիչի ասելով, ականատես եղան Տարոնի բնակչության ծանր դրությանը և հասկացան, որ շուտով նույնը սպասվում է իրենց։ Խութեցիների և սասունցիների ելույթը ղեկավարում էր Հովնանը[129]։ Այս շարժումն այնքան նշանակալից էր, որ արաբ պատմիչները չեն կարողացել շրջանցել և հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում՝ լրացնելով հայ մատենագիրներին։ Ըստ Բալազուրու, հայ իշխաններն սկսեցին գրավոր հաղորդակցվել միմյանց հետ, մեկը մյուսին գրգռելով անհնազանդության և ապստամբության։ Երկրի իշխաններից և մեծամեծներից յուրաքանչյուրն ուղարկեց հեծելազոր և հետևոտն զորագունդ՝ նրանց օգնության[130]։ Հակաարաբական շարժումը Հայաստանում այնքան մեծ ծավալ էր ընդունել, որ այստեղ հաստատված արաբ ամիրաներից Սավադա Ջահհաֆյանը խորհուրդ էր տալիս Յուսուֆին հեռանալ երկրից[131], բայց նա չլսեց։ Նախահարձակ լինելով Տարոնի իշխանությունով մեկ սփռված արաբական զորքի վրա, հայերը կարողացան մեկ օրվա ընթացքում նրանց ոչնչացնել[132]։ Դրանից հետո նրանք պաշարեցին Մուշի բերդը, որտեղ պատսպարվել էր Յուսուֆը։ Մի քանի օրվա պաշարումից հետո նրանց հաջողվեց կոտրել արաբների դիմադրությունը և գրավել այն։ Հայերը սրի քաշեցին այնտեղ գտնվող արաբական զորքին, իսկ Յուսուֆի կողմից Վասպուրականից վերցրած պատանդներին ազատե-

129 Նույն տեղում, էջ 211—212։

130 Baladhuri, էջ 331, հմմտ. նաև իբն Միսքավա, Թաբարի, Յակուբի, (տե՛ս Արաբացի մատենագրեր, էջ 77, 97—98, 122)։

131 Նույն տեղում, էջ 97։

132 Նույն տեղում, էջ 98։



ցին, ազատեցին նաև գերիներին և միմյանց միջև բաժանեցին թշնամու ավարը։

Հայ լեռնականների հարձակումն ու հաջողություններն այնքան անակնկալ էին, որ Յուսուֆը չկարողացավ իր անձի ապահովությունը հոգալ։ Նա ստիպված պատսպարվեց Մուշի սուրբ Փրկիչ եկեղեցու գմբեթում։ Խութի մեկնակաղենները շրջապատեցին եկեղեցին։ Նրանցից մեկը բարձրացավ գմբեթը և Յուսուֆին սպանեց։ Պատմիչն այս դեպքերը նկարագրում է հանգամանալից և ավելացնում դրանց ականատես լինելու հանգամանքը[133]։

Մուտավաքիլը դիմեց հայերի ազատագրական շարժումն արյան մեջ խեղդելու ամենավերջին միջոցին։ Աբասյան խալիֆայության համար հուզումնալից այս ժամանակաշրջանում մեծ էր ազգությամբ թուրք Բուղա ալ-Կաբիրի կատարած դերը։ Վերջինս աչքի էր ընկնում իր արտակարգ դաժանությամբ, և մի քանի նշանակալից արշավանք էր ձեռնարկել Մեդինայում ապստամբած ցեղերի դեմ[134]։ Գրականության մեջ հաճախ նա շփոթվում է Բուղա ալ Շարաբիի հետ[135]։ Բուղային հանձնարարելով Հայաստանի հնազանդեցումը, Մուտավաքիլը հրահանգել էր երկրի վրա ելնել «սովով եւ սրով եւ գերութեամբ»։ Կարգադրել էր Հայաստանի բոլոր իշխաններին և ազատներին ձերբակալել ու շղթայակապ արքունիք ուղարկել, սեփականացնել հայ ազատանու ունեցվածքը։ Խալիֆան ընդունելով զորքի հրամանատարին, պարգևներ ու ընծաներ էր մատուցել, նրանց թագավորական կնիքով գյուղեր և ավաններ էր նվիրաբերել[136]։ Այս ամենը, անշուշտ արվում էր ավե-

133 Թովմա Արծրունի, էջ 133։ Յակուբին հիշատակում է Յուսուֆին սպանողի անունը՝ Հովնան։ Տեքստի հաջորդ բառերից պարզորոշ ընթեռնելի է միայն իբն բառը (տե՛ս Արաբացի մատենագրեր, էջ 122)։ Յ. Մարկվարտն աղավաղված բառը կարդում է Թոռնիկ ու պարզում Հովնանի հայրանունը (տե՛ս J. Markwart, Südarmenien, էջ 298)։

134 D. Sourdel, Bugha al-Kabir, EI. t. I, էջ 1327։

135 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 434։

136 Թովմա Արծրունի, էջ 140։

լի շահագրգռելու զորքին՝ մեծ բարբարոսություններ ու անգթություններ կատարելու համար։

Ինչպես նախորդների, այնպես էլ Բուղայի արշավանքի ժամանակաշրջանում, խալիֆայության ձեռնարկումները ցույց են տալիս, որ Հայաստանը նրա աչքում դիտվել է իբրև ապստամբած մի երկիր, որի նկատմամբ նրանք վարում էին ջիհադի՝ սրբազան պատերազմի քաղաքականություն՝ դրան հատուկ խիստ մեթոդներով։ Զինվորների մեջ մոլեռանդություն սերմանելու նպատակով պատերազմից առաջ ընդունված էր նրանց համար կարդալ Ղուրանի VIII սուրան, ուր խոսվում էր ռազմական ավարը տնօրինելու մասին[137]։

Բուղան Հայաստան մտավ 852 թ.։ Թովմա Արծրունին նրա բանակի թիվը հասցնում է 200 հազարի, որը ակներևաբար չափազանցություն է[138]։ Սրանից, սակայն, պիտի եզրակացնել, որ նրա զորքի թիվը իրոք մեծ էր։ Ըստ արաբական աղբյուրների, Բուղան նախ մտավ Բաղեշ, որտեղ ձերբակալեց Մուսա իբն Զուրարային, քանի որ վերջինս օգնել էր հայ ապստամբներին և մասնակցել Յուսուֆի սպանությանը[139]։ Աղձնիքից հետո նա գնաց Խլաթ։ Ապահունիքում իր բանակը երկու մասի բաժանելով, մի մասը Ժիրաքի հրամանատարությամբ ուղարկեց Ռշտունիք, իսկ մյուս մասն իր ձեռքը վերցնելով, շարժվեց դեպի Տարոն՝ հաշվեհարդար տեսնելու ապստամբների հետ։ Հարավային Հայաստանում արաբների դեմ պայքարը ղեկավարում էին Բագրատի որդիները՝ Աշոտն ու Դավիթը և Խութեցի Հովնանը, որոնց նա ձերբակալեց ու աքսորեց[140]։ Պայքարը կարող էր շարունակել Վասպուրականի Աշոտ Արծրունին։ Վերջինս, չկարողացավ որևէ դիմադրություն ցույց տալ նրան։ Բուղան ասպատակեց ողջ Տարոնը, Սասունն ու Խութը, բնակչության մի մասին սրի քաշեց, իսկ մյուս մասին շղթայակապ խալիֆայության տարբեր շրջանները քշեց։ Աղբյուրները հաղորդում են, որ Խութում Բուղան ոչնչացրեց շուրջ 30 հազար հոգու, իսկ մնացածներին գերեվարեց[141]։ Այսպես, Թիֆլիսի բերդապահ զորքի մեջ մենք հանդիպում ենք խութեցիների[142]։

---

137 Ջիհադի մասին տե՛ս *M. Khadduri*, War and Peace in the Islam Law, Baltimore, 1953, էջ 51—140; *E. Tyan*, Dji'hād, EI t. II, էջ 551—553։

138 Հմմտ. Լեո, Հայոց պատմություն, էջ 434։

139 Արաբացի մատենագրեր, էջ 98։

140 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 67; Թովմա Արծրունի, էջ 211—212։



Հայաստանի հարավային շրջաններից բացի, Բուղան ասպատակեց երկրի մյուս մասերը, գերեվարեց ու Սամառա քշեց հայ ազնվականության նշանավոր դեմքերին։ Նա ամենուրեք ոչնչացրեց գյուղեր, ավաններ, քաղաքներ. «և յաւեր դարձան գեօղք և ագարակք և աւանք»[143]։

Այս ամենի հետևանքով Հայաստանում հաստատված արաբական ցեղերը կրկին ակտիվացան։ Նրանք այնքան էին իրենց ազատ ու համարձակ զգում, որ ամենուրեք Հայաստանում առաջնորդում էին Բուղային՝ ի մուտ և ելս աշխարհիս[144]։ Բուղայի արշավանքից հետո մենք տեսնում ենք արաբական նոր ցեղերի հոծ զանգվածի գաղթը Հայաստան։ Թեպետև արաբներին հաջողվեց ճնշել հայ ժողովրդի ազատագրական շարժումը, այդուհանդերձ այդ ելույթը փաստորեն ուրվագծեց Հայաստանում արաբական տիրապետության վախճանը։

Արաբական խալիֆայության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի մեջ այս ելույթն ամենանշանակալից ու ամենահուժկու ընդվզումն էր։ Այն մեծ էր թե իր ընդգրկման մասշտաբով և թե խորությամբ։ Թեպետև շարժումը բռնկել էր երկրի հարավում, սակայն նրան մասնակցել են նաև Հայաստանի մյուս շրջանների ուժերը։ Ապստամբությունն ավելի բորբոքեց Հայաստանում հակաարաբական պայքարը և նպաստեց հայկական պետականության վերականգնմանը։ Վերջապես, հիշյալ շարժումն այնքան նշանակալից էր, որ այն դարձավ ժողովրդական էպոսի հիմքը։

---

141 Արաբացի մատենագրեր, էջ 98։

142 Նույն տեղում, էջ 100։

143 Թովմա Արծրունի, էջ 170։

144 Նույն տեղում, էջ 146։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՏԱՐՈՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԱ-ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

### Ա. ՏԱՐՈՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՀԵՏ

*Բագարատ Բագրատունու որդիներ Աշոտի և Դավթի գերությունից մինչև նրանց վերադարձը Հայաստանի հարավային շրջաններում քաղաքական միակ ազդեցիկ դեմքը Գուրգեն Ապուպելճ Արծրունին էր։ Նրա ջանքերով Վասպուրականում հաստատված արաբները դուրս քշվեցին։ Բուղան ճանաչեց Գուրգենի իշխանությունը Վասպուրականում[1]։ Դատելով Թովմա Արծրունու տեղեկություններից, այս ժամանակաշրջանում Գուրգենի ազդեցությունը, Վասպուրականից զատ, տարածվում էր նաև Տարոնի վրա[2]։*

*Բուղայի արշավանքը և Հայաստանի հարավում ապըստամբության ճնշումը ճակատագրական եղան Տարոնի իշխանության համար։ Արաբական ցեղերը, հաստատվելով Տարոնի սահմանամերձ շրջաններում, արգելակում էին նրա կապերը քաղաքական մյուս միավորումների հետ, հաճախ սպառնում նրա գոյությանը։*

*Տարոնի իշխանությունը Հայաստանի կենտրոնական շըրջանների հետ հաղորդակցվում էր Ապահունիք և Հարք գավառներով, որոնք IX դարի երկրորդ կեսից անցան Կայսիկներին։ Նրանց հիմնած ամիրայությունը (Մանազկերտ կենտրոնով) Հայաստանում արաբական ամենաուժեղ իշխանություններից էր[3]։ Կայսիկները Տարոնի իշխանությունից նվաճեցին Խլաթը։ Աբու-լ-Վարդը՝ Կայսիկների ամիրան, թեև ճանաչում էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու գերիշխանությունը, բայց քաջալերվելով Հայաստանում արաբների առկայությունից, ակտիվ միջամտում էր երկրի գործերին։*

*Տարոնի իշխանության համար անբարենպաստ վիճակ էր ստեղծում նրա հարավային սահմաններում գտնվող Շայբանիների ամիրայությունը, որը IX դարի երկրորդ կեսից գրավելով Արզնի Զուրարիկների տիրույթները, ընդհուպ մոտեցել էր նրանց հարավային սահմաններին[4]։*

*Եվ, վերջապես, քննարկվող ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրությունը ձեռնարկելով ակտիվ գործողություններ, սպառնում էր Տարոնի իշխանությանը արևմուտքից։*

*Տարոնի իշխանությունը թշնամական նման շրջափակման օղակում, քաղաքական և տերիտորիալ զարգացման հնարավորությունների տեսակետից խիստ անբարենպաստ պայմաններում էր։ Նա ի վիճակի չէր սեփական ուժերով ապահովել իր անկախությունն ու տարածքային ամբողջականությունը։*

*Եթե 826—851 թթ. հայոց իշխանի պաշտոնում իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին էր, իսկ սպարապետությունը վարում էր նրա եղբայրը՝ Հայաստանի հյուսիսային շըրջանների իշխան Սմբատ Բագրատունին, ապա դարի երկրորդ կեսին այս երկու պաշտոններն իրենց ձեռքը վերցրին Սմբատի հաջորդները[5]։ Այսպիսով, Տարոնի Բագրատունիները Հայաստանի քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելուց զրկվեցին։*

*Բագարատ Բագրատունու որդիները՝ Աշոտն ու Դավիթը, մի խումբ իշխանների հետ գերությունից ազատվեցին ու ներ-*

---

1 Թովմա Արծրունի, *էջ 223։*

2 *Նույն տեղում, էջ 235։*

3 *Կայսիկների մասին տե՛ս J. Laurent*, L'Arménie, *էջ* **322—325**; Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները, էջ* **96—111, 120—124, 143—148**; *M. Canard*, Les Principautés arabes d'Arménie, *էջ* **189—196**։

4 Թովմա Արծրունի, *էջ 246։ Հմմտ.* Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները, էջ 104։*

5 *Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 18։*

ման արժանացան։ Նրանք 858 թ. վերադարձան հայրենիք[6]։ Աշոտ Բագրատունին դարձավ Տարոնի գահերեց իշխանը (858—878)։ Նա պատմական աղբյուրներում հայտնի է հայոց իշխան, կուրապաղատ, Տարոնի իշխան հորջորջումներով[7]։

Գուրգեն Ապուպելճը Վասպուրականի և Տարոնի տերերի վերադարձից հետո ստիպված նրանց տիրույթները զիջեց և բավարարվեց միայն Վասպուրականի Մարդաստան գավառով[8]։ Բայց երկյուղելով հայոց իշխան Աշոտ Բագրատունուց, որը կարող էր նրան իբրև ապստամբի հանձնել արաբներին, Գուրգենը հեռացավ Մարդաստանից և հետապնդումներից խուսափելով՝ թափառական կյանք էր վարում[9]։ Մոտավորապես 862 թ. Գուրգեն Ապուպելճը գտնվում էր Տարոնում, երբ լսեց Աշոտ Բագրատունու կողմից Վասպուրականի իշխան Գրիգոր-Դերենիկի ձերբակալման լուրը։ Խուսափելով իշխանաց իշխանից, նա այնուամենայնիվ, պաշտպանեց Գրիգոր-Դերենիկին։ Գուրգենի միջնորդությամբ Գրիգոր-Դերենիկն ազատվեց և անգամ ամուսնացավ Աշոտ Բագրատունու դըստեր հետ[10]։ Հենվելով Գուրգեն Ապուպելճի՝ այդ ժամանակամիջոցում Տարոնում գտնվելու փաստի վրա, Յ. Մարկվարտը դիտել է, որ նա իշխել է Տարոնում մինչև 868 թիվը, որից հետո Տարոնի իշխանությունը ստանձնել են Բագարատ Բագրատունու որդիներ Աշոտն ու Դավիթը, որոնք գերությունից ազատվել ու հայրենիք են վերադարձել այդ թվականից հետո[11]։ Այս տեսակետն իրավացիորեն մերժել է

6 Թովմա Արծրունի, էջ 227—234։

7 Նույն տեղում, էջ 246, 247։ Ղ. Ինճիճյանն առանց հիմքի, կասկածում է պատմիչի՝ Տարոնի Աշոտ իշխանի կուրապաղատ կոչվելու վկայության վրա, և ավելի հավանական է համարում, որ այդ պատվանունը կրել է իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին (տե՛ս Ղ. Ինճիճյան, Հնախոսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. II, Վենետիկ, 1835, էջ 227)։

8 Թովմա Արծրունի, էջ 232։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում, էջ 233։

11 *J. Markwart*, Südarmenien, էջ 305։



Ն. Ադոնցը։ Նա ցույց է տվել, որ նշված անցքերի վերաբերյալ տեղեկություններ հաղորդող Թովմա Արծրունին իշխանների գերությունից ուշ վերադառնալու մասին չի ակնարկում։ Ըստ պատմիչի, նրանք հայրենիք են վերադարձել միաժամանակ, 858 թ., բացի Աշոտ Արծրունուց, որը Հայաստան է եկել 868 թ.[12]։

Գուրգենի՝ Մարդաստանում չմնալու, թափառական կյանք վարելու և Տարոն անցնելու վերաբերյալ Թովմա Արծրունու վկայություններն արժանահավատ են և կասկած չեն հարուցում։ Հետևաբար, իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու հետապնդումներից խուսափելով, Գուրգենը Տարոնն ընտրել էր իբրև հուսալի ու ապահով վայր և պատսպարվել էր նրա տերերի մոտ[13]։ Բացառված չէ, որ վերջիններիս և իշխանաց իշխանի միջև շարունակվում էին նրանց նախորդների՝ Բագարատ և Սմբատ Բագրատունիների օրոք եղած տարաձայնությունները, որոնք երկրի քաղաքական ուժերը տրոհել էին երկու խմբավորման։

Այն, որ 863 թ. բյուզանդացիները հաղթել էին արաբներին ու պավլիկյաններին, և Թովմա Արծրունին մի անգամ Տարոնի, Արզնի և Անձևացիքի տեր է համարում Գուրգեն Ապուպելճին, իսկ մյուս անգամ շեշտում մոտավորապես 862 թ. նրա Տարոնում գտնվելու մասին, հիմք է ծառայել Ժ. Լորանին կարծելու, թե Գուրգենը 862 թ. Բյուզանդիայի օգնությամբ նվաճել է Տարոնի իշխանության մի մասը և այն իր ձեռքում պահել մինչև 878—879 թթ.[14]։

Բյուզանդա-արաբական ընդհարումների վերաբերյալ տեղեկություններ հաղորդող աղբյուրներն առհասարակ ոչինչ չեն պարունակում Գուրգենի, առավել ևս նրա կողմից Բյուզանդիայի օգնությամբ Տարոնի մի մասին տիրելու վերաբերյալ։

12 *N. Adontz*, Les Taronites, էջ 204, ծան. 2։

13 Նույն տեղում։

14 *J. Laurent*, Un féodal Arménien au IXe siécle: Gourguen Ardzrouni, fils d'Abou Beldj, REA, t. II, fas. 2, Paris, 1922, էջ 183, 186։

Դա սոսկ Ժ. Լորանի ենթադրությունն է։ Ինչ վերաբերում է Թովմա Արծրունուն, իրոք, նա գրում է. «Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս, և զոր յԱրզն եւ զոր առ ամենայն ուրեք...»[15]։ Այս տեղեկության հիմքում, պատմիչի խոստովանությամբ, ընկած են իրենից առաջ գրված պատմական աղբյուրների հաղորդումները[16]։ Դրանց՝ Տարոնը և Արզնը Գուրգենին պատկանած լինելու վերաբերյալ ակնարկի մեջ արտացոլվել են այն ժամանակաշրջանի փաստերը, որոնք առնչվում են Գուրգենի՝ Վասպուրականում և Հարավային Հայաստանում ունեցած, Բուղայի կողմից ճանաչված ու մինչև գերությունից հայ իշխանների վերադարձը հարատևած իշխանության հետ։

Տարոնի իշխանների վերադարձը համընկավ այնպիսի մի ժամանակաշրջանի հետ, երբ Բյուզանդական կայսրությունը ռազմական գործողություններ սկսեց արևելքում, որոնք կոչված էին ամրապնդելու նրա սահմանները և հող նախապատրաստելու հետագա հարձակումների համար[17]։

863 թ. բյուզանդական զորավար Պետրոնասը հաղթեց Մելիտենեի արաբ կառավարիչ Օմարին[18]։ Բյուզանդացիները ներխուժեցին Տարոնի իշխանության սահմանները և առաջացան Աշմուշատի վրայով։ Նրանց դիմակայելու համար Արմինիայի կառավարիչ Ալի իբն Յահիա ալ-Արմանին շարժվեց Նփրկերտի և Սալսալայի ուժերով։ Բայց նա պարտվեց[19]։ Ուշադրության արժանի է բյուզանդացիների դեմ կռվի ելած Նփրկերտի ուժերի հետ միասին Սալսալայի զորքերի մասնակցության վերաբերյալ եղած հիշատակությունը։ Սալսալան, որն արաբերեն է և նշանակում է շղթա, նույնանում է

---

15 Թովմա Արծրունի, էջ 235։

16 Նույն տեղում։

17 История Византии, т. 2, М., 1967, էջ 188։

18 *А. Васильев*, Византия и арабы, էջ 200—203։

19 *E. Honigmann*, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, էջ 58։



Հայկական Տավրոսի՝ Տարոնի Բագրատունիների իշխանության կազմի մեջ մտած հատվածի հետ[20]։ Այստեղից դժվար չէ ասել, որ Ալի իբն Յահիա ալ-Արմանիին բյուզանդացիների դեմ օգնում էին Տարոնի Բագրատունիների ուժերը։

IX դարի երկրորդ կեսին Հայաստանը Բագրատունիների հյուսիս-արևելյան ճյուղի քաղաքական գերիշխանության ներքո համախմբված դաշնակից իշխանությունների ամբողջություն էր[21]։ Նշված ժամանակաշրջանում Տարոնի Բագրատունիները Հայաստանի մյուս շրջանների իշխանների հետ ընդունում էին իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու գերիշխանությունը։ Աշոտի համար, խալիֆայության վստահության արժանանալուն զուգընթաց, կարևոր էր նաև հայկական ավատական, հատկապես խոշոր իշխանությունների հետ հարթ հարաբերությունների հաստատումը։ Այս տեսակետից կարևոր էր Տարոնի հարևան Վասպուրականի իշխանությունը։

Վասպուրականի ավագանու կենտրոնախույս տրամադրությունները կանխելու համար[22], իշխանաց իշխան Աշոտ Բագ-

---

20 Իբն-Խորդադբեհ, էջ 114, 135 (տե՛ս *А. Васильев*, Византия и арабы, էջ 203, ծան. 1; *F. Honigmann*, Die Ostgrenze աշխատության կից «Բյուզանդական Հայաստանը 1050 թ.» քարտեզում Շիմշատից արևելք մինչև Սիմ սար լեռնաշղթան ձգվող լեռնազանգվածը կոչվում է ǧabal as salsala, այսինքն՝ լեռնաշղթա։

21 *C. Toumanoff*, The Background to Mantzikert. Proceedings of the XIII$^{th}$ International Congress of Byzantine Studies, London-New-York-Toronto, 1967, էջ 423։ Ռ. Մաթևոսյան, Վասալասյուզերենական հարաբերությունները Բագրատունյաց Հայաստանում X—XI դդ., «Լրաբեր», 1977, № 10, էջ 52—53։

22 Վ. Վարդանյան, Վասպուրականի թագավորությունը, էջ 23։ Վ. Վարդանյանն անդրադառնալով Գրիգոր-Դերենիկի՝ Հայաստանում ունեցած հեղինակությանը, գրում է. «Դերենիկ Արծրունին մեծ անուն ուներ նաև արաբների մոտ, նրանց կարծիքով նա արժանի թեկնածու էր ողջ Արմինիայի կառավարչի պաշտոնի համար»։ Հեղինակը հղում է՝ *J. Markwart*, Südarmenien, էջ 327։ (Տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի թագավորությունը, էջ 27)։ Այս տեսակետը նույնությամբ շարադրված է Վ.

րատունին ստիպված էր մերձենալ նրան, և թեկուզ զիջումների գնով, Վասպուրականը կապել իր իշխանությանը։ Այս նկատառումով նա իր դստերը կնության տվեց Գրիգոր-Դերենիկ Արծրունուն[23]։ Ավելին, Աշոտը ոչ միայն չարգելեց նրան՝ իր տիրույթները հարևան իշխանության հաշվին ընդարձակել, այլև զինական օգնություն էր ցույց տալիս[24]։ Աշոտ Արծրունու մահվանից հետո (875) Վասպուրականի գահերեցությունն անցավ Գրիգոր-Դերենիկին։ Այս ժամանակաշրջանում Վասպուրականի և Տարոնի գահերեցների հարաբերությունները խիստ սրվել էին։

878 թ. հայ իշխանների պահանջով Արմինիայի ոստիկան նշանակված Մուհամմադ իբն Խալիդին Տարոնին մերձակա Դատվանում դիմավորելու էին եկել Տարոնի իշխան Աշոտ կուրապաղատը, Վասպուրականից՝ Գրիգոր-Դերենիկը, Գագիկը, Գրիգոր անունով երկու իշխաններ, հայոց իշխանաց իշխանի եղբայր Շապուհը, Մոկաց իշխանը, կայսիկ Աբուլ

Վարդանյանի աշխարհաբար թարգմանությամբ հրատարակված Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան գրքի ներածության 6-րդ էջում (Երևան, 1978)։ Նշենք, որ Մարկվարտի գրքի 326—327-րդ էջերում այլ կարծիք է արտահայտված։ Այնտեղ կարդում ենք. «Հավանաբար Աշոտը (խոսքը իշխանաց իշխանի մասին է—Գ. Գ.) խալիֆային իր կառավարիչ Ահմադ իբն Խալիդի ամոթալի պարտությունից և մահմեդականներից զգուշացող Դերենիկի անկումից հետո, կարողացավ համոզել, որ ինքն է այն միակ մարդը, որ Հայաստանում կարգ ու կանոն կարող է հաստատել՝ խալիֆայի գերիշխանության պահպանման համար։ Այնպես որ սա վճռեց նրան որպես Հայաստանի թագավոր և խալիֆայության անմիջական վասալ ճանաչել)։ Es ist an sich wohl möglich, dass Ašot den Chalifa nach dem schmählichen Flasko seines Statthalters Ahmad b. Chālid und dem Falle des von den Muslimen gefürchteten Derenik zu überzeugen verstand, dass er allein der Mann sei, in Armenien die Ordnung und damit die Oberhoheit des Chalifa aufrecht zu erhalten, so dass dieser sich entschloss, ihn als König von Armenien und als reichsunmittelbaren Vassalen anzuerkennen.

23 Թովմա Արծրունի, էջ 233։

24 Իշխանաց իշխանի որդին՝ Սահակ Բագրատունին օգնում էր Գրիգոր-Դերենիկին ընդդեմ Գուրգեն Ապուպելճի (տե՛ս Թովմա Արծրունի, էջ 240)։



Վարդը և ուրիշներ[25]։ Դիմավորողները թանկարժեք նվերներ պիտի մատուցեին արաբ կառավարչին և շքախմբով նրան ուղեկցեին մինչև Դվին[26]։ Արաբ նորընծա կառավարիչը ծրագրել էր Պարտավում նստող Մուհամմադ ալ-Յամանիի հետ Դվինում հաշվեհարդար տեսնել հայ նախարարների հետ։ Դեռ Դվին չհասած, հենց Դատվանում, նրանց դեմ որոգայթներ լարվեցին. այդ գործին մասնակցում էր նաև կայսիկ Աբուլ Վարդը[27]։ Գրիգոր-Դերենիկը և Տարոնի Աշոտ իշխանը կռահելով արաբների մտադրությունը, նրանցից խույս տվեցին։ Սակայն Վասպուրականի իշխանի կարգադրությամբ վերջինիս ազգական Գրիգորը ձերբակալեց Աշոտ կուրապաղատին և հանձնեց Գրիգոր-Դերենիկի քեռորդի Հասանին։ Նրան արգելափակեցին Վասպուրականի Սևան ամրոցում[28]։ Ըստ պատմիչի, Գրիգոր-Դերենիկին Աշոտ կուրապաղատի դեմ դրդել էր կայսիկ Աբուլ Վարդը։ Վերջինս հավատացրել էր Վասպուրականի իշխանին, թե Տարոնի կուրապաղատը մերձենալով նոր նշանակված ոստիկանի հետ, ջանում է իրեն զրկել տալ իշխանությունից[29]։ Բայց պատմիչն անմիջապես շեշտում է իր անիրազեկությունն այս փաստի ստույգ կամ կեղծ լինելու վերաբերյալ։ Կուրապաղատի ձերբակալության ավելի հիմնավոր շարժառիթն այն էր, որ Գրիգոր-Դերենիկը պարզապես ցանկացել էր Տարոնի իշխանությունը հանձնել իր քույր Մարիամի ամուսնուն՝ Աշոտի եղբայր Դավթին[30]։ Դժվար չէ նկատել, որ նա Տարոնի իշխան էր ուզում դարձնել իր կամարարին, որպեսզի նրա միջոցով այն ենթարկեր իրեն։

Աշոտ կուրապաղատին մեկուսացնելուց հետո, Գրիգոր-Դերենիկի զինված ուժերը մտան Տարոն, գրավեցին այնտեղի ամրոցներն ու բերդերը։ Տարոնի իշխան դարձավ Աշոտ կու-

25 Նույն տեղում, էջ 246։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում, էջ 247։

28 Նույն տեղում, էջ 247—248։

29 Նույն տեղում, էջ 247։

30 Նույն տեղում, էջ 248։

րապաղատի եղբայր Դավիթը, որը հայտնի է նաև Արքա անունով[31]։ Դավթին Գրիգոր-Դերենիկի միջնորդությամբ Տարոնի իշխան հաստատեց նոր նշանակված արաբ ոստիկանը[32], հանգամանք, որը հստակ ցույց է տալիս Վասպուրականի իշխանի գործակցությունն արաբների հետ։ Տարոնի իշխանապետի ձերբակալումն ու իշխանազրկումը այնպիսի նշանակալից երևույթներ էին, որոնց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին չմիջամտել չէր կարող։ Նույնիսկ կարծիք է հայտնըվել, թե դրանք կատարվել են նրա գիտությամբ ու թելադրանքով[33]։ Թովմա Արծրունին, ցավոք, այս կապակցությամբ ոչինչ չի հիշատակում։ Պետք է նկատել, սակայն, որ Աշոտի ազատության համար միջնորդեց հայոց կաթողիկոս Գևորգ Գառնեցին (877—897)[34]։ Պատմիչի վկայությամբ Աշոտ կուրապաղատը մեծ հարգանք ուներ հայոց կաթողիկոսի հանդեպ, վերջինս էլ հոգում էր նրա ազատության համար։ Գևորգ Գառնեցին նախ՝ նամակներով դիմեց Գրիգոր-Դերենիկին, ապա՝ մեկնեց Վասպուրական՝ Աշոտին ազատելու։ Հավանաբար կաթողիկոսին ուղարկել էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին։ Համենայն դեպս, նա առանց իշխանաց իշխանի գիտության չէր միջնորդի Աշոտ կուրապաղատին ազատելու, մանավանդ, եթե դրան դեմ լիներ իշխանաց իշխանը։ Բայց Գրիգոր-Դերենիկն անդրդվելի էր. նա հաշվի չառավ կաթողիկոսի խնդրանքը։ Նշված ժամանակաշրջանում Վասպուրականի իշխանի և իշխանաց իշխանի հարաբերությունները նախկինի նման սերտ չէին։ Գրիգոր-Դերենիկը քաղաքական գերիշխանության համար փաստորեն իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մրցակիցը դարձավ[35]։

31 Նույն տեղում, էջ 247—248։

32 Նույն տեղում, էջ 248։

33 Ս. Ռենսիմենը 878 թ., Աշոտ կուրապաղատի իշխանազրկումը և նրա փոխարեն եղբոր Տարոնի իշխան դարձնելը համարում է Աշոտ կուրապաղատի Բագրատունի զարմիկների (այսինքն՝ իշխանաց իշխան Աշոտի և մյուսների) Արծրունիների և արաբների ջանքերի արդյունք (տե՛ս DAI, II էջ 160)։

34 Թովմա Արծրունի, էջ 250։



Աշոտ կուրապաղատը Սևան ամրոցից դուրս պրծավ միայն իր խորամանկության շնորհիվ։ Նա Հասանին հավատացրեց, թե այն ինչ Գրիգոր-Դերենիկը գործեց իր՝ Աշոտի նկատմամբ, նույնը ծրագրում է անել նրա՝ Հասանի դեմ։ Հասանն անցավ Աշոտի կողմը և նրան ազատ արձակեց[36]։

Աշոտ կուրապաղատի հետագա գործունեության վերաբերյալ մենք որևէ տվյալ չունենք։ Ենթադրվում է, որ նա 885 թ. մասնակցել է Գրիգոր-Դերենիկի սպանությանը։ 885 թվականին Վասպուրականի իշխանի դեմ կազմակերպված դավադրության մասին հաղորդում են Թովմա Արծրունին և նրա գործի Անանուն շարունակողը։ Համաձայն Թովմա Արծրունու, Դերենիկը Վասպուրականի իշխանների ձմեռանոց՝ Մարական գավառի Ճվաշ ավանը գնալիս, Հեր քաղաքի մոտակայքում շրջապատվում և սպանվում է քաղաքապետ Ապլբերսի ձեռքով։ Դերենիկի սպանությանը մեղսակից էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին[37]։ Ըստ Անանունի, Դերենիկի դավադիրներից «...Ատրպատականու, նմանապէս և որք ի Հայաստանն էին տանէ, որոց մասնակից էր և Գագիկս այս ապստամբ» (խոսքը Գագիկ Ապու Մրվանի մասին է— Գ. Գ.)[38]։ Հայտնի է Աշոտ կուրապաղատի հետ Գրիգոր-

35 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 76։

36 Թովմա Արծրունի, էջ 251—252։

37 Նույն տեղում, էջ 255։ Հովհաննես Դրասխանակերտցին Վասպուրականի իշխանի սպանության մեջ մեղադրում է միայն Հերի քաղաքապետին՝ չհիշատակելով այդ գործում իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մասնակցությունը (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 79)։

38 Թովմա Արծրունի, էջ 295։ Ուսումնասիրողների մի մասն ընդունում է իշխանաց իշխանի մասնակցությունը Դերենիկի սպանությանը (տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի Թագավորությունը, էջ 34—38)։

Հակառակ տեսակետի է Ա. Տեր-Ղևոնդյանը։ Ըստ նրա, Թովմա Արծրունու «Շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի» արտահայտության մեջ ամենայն հավանականությամբ ըմբոստ իշխանին սանձելու նպատակով ձերբակալելու մասին է խոսքը։ Հակառակ

Դերենիկի դեմ հիշյալ Գագիկի գործակցությունը, չնայած որ, ըստ պատմիչի, այս փաստի հավաստի լինելը կասկածելի է։ Ինչպես իրավացի նկատում է Յ. Մարկվարտը[39], պատմիչից մեջ բերված հատվածում «Հայաստան տուն» հասկացությունը կարելի է նույնացնել Տարոնի հետ, քանի որ այլ առիթով Թովմա Արծրունին Տարոնը համարում է «Հայոց տուն»[40], թեև չի կարելի հաստատ պնդել, թե Անանունի «Հայաստան տուն» և Թովմա Արծրունու «Հայոց տուն» արտահայտությունները նույնանում են։ Հնարավոր է, որ Վասպուրականի իշխանի սպանությանը մասնակցել են թե՛ իշխանաց իշխանը և թե՛ Տարոնի իշխանը։ Համենայն դեպս, աղբյուրների անորոշ վկայությունները հնարավորություն չեն ընձեռում հարցին սպառիչ պատասխանել։

Թովմա Արծրունին Տարոնի իշխան, կուրապաղատ Աշոտ Բագրատունուն անվանում է հայոց իշխան[41]։ Հայտնի է, որ հայոց իշխանին արաբական տիրապետության ժամանակ հանձնարարվել էր Հայաստանի կառավարչի պաշտոնը։ Նա երկրի մյուս իշխանների նկատմամբ գահերեց էր։ Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի կառավարումը վստահված էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն, որը հռչակվեց հայոց թագավոր։ Հետևաբար, երկու Աշոտ Բագրատունիները չէին կարող միաժամանակ նույն պաշտոնը գրավել։ Այս ակներև հակասությունից խուսափելու համար, հետազոտողներից ոմանք գտնում են, որ Տարոնի Աշոտ Բագրատունուն հայոց իշխան հռչակեց Բյուզանդական կայսրությունը, քանի որ նա կայսրությունից կուրապաղատություն էր ստացել[42], չնա-

դեպքում իշխանաց իշխանն անձամբ չէր գնա Վասպուրական՝ իր դստեր մոտ մխիթարելու նպատակով (տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 754, ծան. 132)։

39 *J. Markwart*, Südarmenien, էջ 313, ծան. 3։

40 Թովմա Արծրունի, էջ 265։

41 Նույն տեղում, էջ 246։

42 *J. Laurent*, L'Arménie, էջ 272։ *C. Toumanoff*, The Background to Mantzikert, էջ 424։ Գրեթե նույն կարծիքին է Ս. Ռենսիմենը, ըստ որի «872 թ. հետո, երբ Վասիլ I-ը նվաճեց Տեփրիկեն, Աշոտը վա-



յած Բյուզանդիայի կողմից Աշոտին հայոց իշխան ճանաչելու մասին աղբյուրներում որևէ վկայություն չկա։

Թովմա Արծրունու մեկ վկայությունն անհավանական է դարձնում Տարոնի իշխանի՝ Բյուզանդական կայսրության կողմից հայոց իշխան ճանաչելու վարկածը։ Նա անդրադառնալով Գրիգոր-Դերենիկի՝ Տարոնի գործերին միջամտելու մտադրությանը, գրում է, որ վերջինս ցանկանում էր իր փեսա Դավիթ-Արքայիկին դարձնել Տարոնի իշխան, որով նա կոչվելու էր նաև հայոց իշխան[43]։ Պատմիչը եզրափակում է, որ այդպես էլ եղավ։ Այսինքն, Դավիթը դարձավ Տարոնի և հայոց իշխան։ Կասկածից վեր է, որ տվյալ դեպքում Դավթի՝ հայոց իշխան կոչվելը կապված է նրա՝ Տարոնի իշխան լինելու հետ։ Այսպիսով, քննարկվող հայոց իշխան հասկացությունը կապված է ոչ թե կոնկրետ որևէ անձի, այլ՝ Տարոնի իշխան դարձող յուրաքանչյուրի հետ։ Դավիթը Տարոնի իշխան, հետևաբար հայոց իշխան դարձավ Գրիգոր-Դերենիկի միջնորդությամբ և խալիֆայության ներկայացուցչի հաստատումով[44]։ Ուստի այն պատկանում էր արաբական վարչության իրավասությանը։ Ըստ երևույթին Աշոտ կուրապաղատը համանման ձևով Տարոնի իշխան է դարձել, որի հետ և կոչվել է հայոց իշխան, խալիֆայության գիտությամբ, առանց Բյուզանդիայի միջամտության։

Տարոնի իշխանը, տվյալ դեպքում Աշոտ կուրապաղատը, հորջորջվում էր հայոց իշխան, սակայն Հայաստանի մյուս իշխանների նկատմամբ գերադաս չէր, նրա իրավասությունը տարածվում էր միայն Տարոնի իշխանության սահմաններում։ Աշոտի հայոց իշխան հորջորջումը, ամենայն հավանականու-

րեց բյուզանդամետ քաղաքականություն, կայսրության կողմից ճանաչվեց իշխանաց իշխան և կուրապաղատ» (տե՛ս DAI II, էջ 160)։ Սակայն Տարոնի Աշոտ կուրապաղատն իշխանաց իշխան տիտղոս չի ունեցել, ինչպես կարծում է նա։ Ս. Ռենսիմենը նույնացնում է հայոց իշխան ու իշխանաց իշխան հասկացությունները (տե՛ս Նույն տեղում, նաև Դավիթ-Արքայիկի կապակցությամբ)։

43 Թովմա Արծրունի, էջ 248։

44 Նույն տեղում։

թյամբ, տիտղոսային էր՝ զուրկ համահայաստանյան մասշտաբի որևէ պաշտոն արտահայտելուց։ Կրելով այդ տիտղոսը, նա գուցե կամենում էր ընդգծել հայոց իշխանի պաշտոնի նկատմամբ իր ժառանգական իրավունքները։

Տարոնի Աշոտ Բագրատունու և նրա իշխանության վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունները խիստ սակավ են։ Միայն հայտնի է, որ նա բյուզանդական արքունիքից ստացել է կուրապաղատի տիտղոս։ Սկզբնաղբյուրների այս բացը, գուցե, կարելի է լրացնել նախորդ հարյուրամյակներում կուրապաղատությանն արժանացած հայ իշխաններին անդրադառնալով։ Դրանով, թերևս, հնարավոր լինի, թեկուզ ընդհանուր գծերով, ներկայացնել Տարոնի և կայսրության փոխհարաբերությունները մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում։

Կուրապաղատը (լատիներեն cura palatii) թարգմանաբար նշանակում է պալատի խնամակալ կամ հոգաբարձու[45]։ IV դարում կուրապաղատը բարձրաստիճան պաշտոնյա էր՝ կայսերական թիկնապահ զորքի հրամանատարը։ Հետագա հարյուրամյակներում ևս նա մնաց իբրև դիրք ունեցող՝ կեսարից և նոբելիսիմուսից հետո[46]։ Աստիճանաբար կորցնելով պաշտոն արտահայտելու իմաստը, կուրապաղատը մնաց սոսկ տիտղոս, որն օտարներին ավելի հեշտ էր շնորհվում, քան բյուզանդացիներին[47]։

VI դարից կուրապաղատի տիտղոսը շնորհվեց Իբերիայի, իսկ VII դարից՝ հայոց իշխաններին։ Կ. Թումանովը ցույց է տվել, որ ճիշտ չեն այն ուսումնասիրողները, ովքեր պնդում են, թե կուրապաղատի տիտղոսը դադարեց կայսերա-

45 *R. Guilland*, Études sur l'histoire administrative de l'Empire Byzantin, Le Curopalate, Βυζαντινά, II, Θεσσαλονίκη, 1970, *էջ 187*; *L. Bréhier*, Vie et mort de Byzance, Paris, 1947, *էջ 594*; *Bury*, The Imperial Administrative System in the ninth century *(այսուհետև՝* IAS) London, 1911, *էջ 33--35։*

46 *R. Guilland*, Le Curopalate, *էջ 188։*

47 *Նույն տեղում, էջ 190։*



կան տան անդամների մենաշնորհը լինելուց և օտարներին տրվեց միայն IX—X դարերում[48]։

Հայոց իշխաններից առաջինը կուրապաղատության արժանացավ Դավիթ Սահառունին (635—638)։ Մինչ այդ նա եղել էր Արևելյան Հայաստանի մարզպան։ Հայ նախարարների միջնորդությամբ Հերակլ կայսրը (610—641) նրան նշանակեց հայոց իշխանի պաշտոնում՝ տալով կուրապաղատի տիտղոս[49]։ Մրենի տաճարի արձանագրությունը հաստատում է նրա ստացած թե՛ պաշտոնը և թե՛ տիտղոսը[50]։

645 թ. Բյուզանդական կայսրությունը կուրապաղատի տիտղոսով հայոց իշխան հաստատեց Վարազտիրոց Բագրատունուն, որը, սակայն, շուտով մեռավ[51]։

48 *C. Toumanoff*, Studies, *էջ 388—389, ծան. 22։*

49 Սեբեոս, *էջ 133։*

50 *Ամւոյն քսան և իններորդի կամ՝* ԵՐԵՍՆԵՐՈՐԴԻ *(ընդգծումը հրատարակչինն է—Գ. Գ.) Հերակղի բարեյաղթող թագաւորի յիշխանութեան Դաւթի ամենազով պատրկի կուրապաղատի և սպարապետի հայոց և ասորւոց... շինեցաւ սուրբ եկեղեցիս ի բարեխաւսութիւն Կամսարականաց և Մրենոյ և ամենայն երկրի» (տե՛ս И. А. Орбели*, Багаванская надпись 639 года и другие армянские ктиторские надписи VII века, Избранные труды, *էջ 401*). La Narratio de rebus Armeniae *հայերեն գրված և հունարեն թարգմանված երկին կցված է Հայաստանի իշխանների (բնագրում՝ թագավորների,* Βασιλεῖς Ἀρμενίων) *ցուցակ, որտեղ հիշատակված է կուրապաղատ Դավիթ Սահառունին* Ὁ Δαυὶδ ὁ Σαρωνής *(տե՛ս Gérard Garitte*, La Narratio de rebus Armeniae, ed. critique et commentaire, Louvain, 1952, *էջ 405)։*

51 Սեբեոս, *էջ 144։ Մի շարք ուսումնասիրողների կարծիքով Վարազտիրոցի որդին՝ Սմբատ Բագրատունին ևս կուրապաղատ էր, բայց ապացուցվել է, որ նա այդ տիտղոսին չի արժանացել (տե՛ս* Հ. Մանանդյան, *Արաբական արշավանքները Հայաստանում, էջ 539—541։ Նույն տեղում տե՛ս նաև գրականությունը)։ Սմբատ Բագրատունուց բացի կուրապաղատների թվին է դասվել նաև Ներսեհ Կամսարականը (տե՛ս M. Saint-Martin* Mémoires, *էջ 339;* Ղ. Ալիշան, *Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 5; Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն և պատմութիւն վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ, աշխատասիրութեամբ Մեսրոպ Տէր-Մովսէսեան, Վաղարշապատ, 1897, էջ ՂԴ;* Ս. Կոգյան, *Կամսարականները, էջ 152,* Բ. Առաքելյան, *Ժամանակագրական դիտողություններ, «Տեղե-*

654—661 թթ. հայոց իշխան Համազասպ Մամիկոնյանը, որի իշխանությունը ճանաչվեց Կոստանդին II կայսեր (641—668) կողմից, աղբյուրներում հիշատակվում է իբրև կուրապաղատ[52]։

Մեր ցուցակում հաջորդը Սմբատ Բագրատունին է, որի իշխանությունը տևել է 693—726 թթ.[53]։ Բյուզանդական կայսրության կողմից Հայաստանի հայ կառավարիչների նշանակումը և նրանց կայսերական տիտղոսների շնորհումը պայմանավորված էր երկրում կայսրության տիրապետությամբ։ Հայոց իշխաններն իրականացնում էին վարչական ֆունկցիաներ և տարբեր թելերով կապվում կայսրության հետ։ Նրանց փոխհարաբերությունները կարգավորվում էին երկու կողմերից յուրաքանչյուրի պարտավորվածությամբ։ Կայսրությունը ճանաչում էր հայոց իշխաններին, նրանց տալիս տիտղոսներ և ընծաներ։ Համազասպ Մամիկոնյանը ստացել էր արծաթե գահ[54]։ Սմբատ Բագրատունուն տրվել էր Փոթի քաղաքը[55]։ Նա իր հերթին բյուզանդական կայսրին ուղարկել էր արաբներից բռնագրաված ձիեր[56]։ Փոխադարձ այցելություններն ու նվիրատվություններն ավելի են մոտեցրել կողմերին[57]։ Կայսրությունը պարտավորվել է հայ նախարարներին զինական օգնություն ցույց տալ, երբեմն հոգալ հայոց զորքի ծախսերը։ Սմբատ Բագրատունի կուրապաղատի տրամադրության տակ

կագիր» ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի, 1941, № 1/6, էջ 68; C. Toumanoff, Studies, էջ 206, 404), սակայն աղբյուրները նրա այդ տիտղոսին արժանացած լինելու մասին ոչինչ չեն հաղորդում (տե՛ս И. А. Орбели, Две строительные надписи князей Камсараканов. Избранные труды, էջ 433—439)։

52 Սեբեոս, էջ 175։ Narratio-ում նա հիշատակվում է կուրապաղատ տիտղոսով ('Ο 'Αμαζάσπης ὁ κουροπάλατος, (տե՛ս Narratio, էջ 405)։

53 Ա. Տեր-Ղևոնդյան, Հայոց իշխանը, էջ 130։

54 Սեբեոս, էջ 175։

55 Ղևոնդ, էջ 35։

56 Նույն տեղում, էջ 26։

57 Կուրապաղատ դարձող յուրաքանչյուր ոք կայսրությանը վճարում էր որոշակի գումար, որը կազմում էր մագիստրոսի վճարածի կրկնապատիկը (տե՛ս Bury IAS, էջ 135)։



արաբների դեմ կռվելու համար կար բյուզանդական օգնական զորք[58], իսկ Համազասպ Մամիկոնյանը կայսրից զորքի համար ստացել էր դրամական միջոցներ[59]։

Այս ամենի դիմաց հայ իշխանները պարտավորվում էին հավատարիմ լինել կայսրությանը, ակտիվորեն մասնակցել Բյուզանդիայի թշնամիների դեմ մղվող պայքարին։

Հայոց իշխանների մի խմբի բյուզանդական արքունիքը շնորհել է կուրապաղատի, մեկ այլ խմբի՝ պատրիկի տիտղոս։ Կուրապաղատության արժանացել են միայն հայ և վրաց իշխանները, մինչդեռ Լազիկայի և Աղվանքի իշխաններին այն երբեք չի տրվել։ Վերջիններիս բարձրագույն պարգևը եղել է միայն պատրիկի տիտղոսը։ Վրաստանի 14 իշխաններից կուրապաղատ են հորջորջվել 7-ը, իսկ Հայաստանի 21 իշխաններից՝ 5-ը։ Կ. Թումանովը սա բացատրում է Վրաստանի՝ կայսրության հետ ունեցած ավելի սերտ կապերով, վրացիների՝ քաղկեդոնիկ լինելու հանգամանքով[60]։

Կուրապաղատություն շնորհվել է այն իշխաններին, որոնք նշանակալից դեր են խաղացել Հայաստանում կայսրության ազդեցության տարածման և ամրապնդման գործում։ Միաժամանակ դա հայ իշխանների համակրանքը շահելու միջոց էր։ Սակայն չի կարելի ասել, թե նման ձևով կայսրությունը միշտ իր նպատակին հասել է։ Սմբատ Բագրատունին խզելով իր կապերը Բյուզանդիայի հետ, 709 թ. ընդունեց արաբական կողմնորոշում[61]։ Այդ ժամանակաշրջանից ի վեր, մինչև 850-ական թթ., այսինքն՝ մինչև Տարոնի Աշոտ Բագրատունին, Հայաստանի իշխաններից ոչ մեկը չարժանացավ կուրապաղատի տիտղոսին։ Նշված ժամանակաշրջանում Հա-

58 Ղևոնդ, էջ 32։

59 Սեբեոս, էջ 175։

60 C. Toumanoff, Studies, էջ 388, 389, ծան. 23, հմմտ. Նույնի The Background to Mantzikert, էջ 415։ Ըստ. Կ. Թումանովի, հայոց իշխաններից վեցը կուրապաղատներ են եղել։ Նա նկատի է ունեցել նաև Ներսեհ Կամսարականին (տե՛ս C. Toumanoff, Studies, էջ 206)։ Սակայն, ինչպես նշվեց, այդ տիտղոսին Ներսեհի արժանանալու մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում։

61 Ղևոնդ, էջ 36։

յաստանը և Վրաստանը գտնվում էին խալիֆայության գերիշխանության ներքո, երբ վրաց Աշոտ I Բագրատունուն (813) շնորհվեց այդ պատվատիտղոսը[62]։

IX դարի երկրորդ կեսին, երբ Բյուզանդիան փորձեց Հայաստանում ակտիվ քաղաքականություն վարել, սովորույթը վերականգնվեց և Հայաստանի իշխաններից առաջինը կուրապաղատ դարձավ Տարոնի իշխան Աշոտ Բագրատունին։ Ենթադրվում է, թե նա դրան արժանացել է 863 թ. կամ 870-ական թվականներին՝ պավլիկյանների դեմ բյուզանդացիների ձեռնարկած արշավանքների ժամանակ[63]։

Տարոնի իշխանին բյուզանդական տիտղոսի շնորհումը, նրա և կայսրության սերտ շփման պայմաններում անգամ, չի նշանակում, թե այս իշխանությունը Բյուզանդիայից վասալական կախվածության մեջ էր, ինչպես որ ցույց են տվել որոշ հետազոտողներ[64]։ Հարաբերությունների այս կարգը, ավելի շուտ ապացույց է կայսրության և Տարոնի իշխանության միջև եղած դիվանագիտական կապերի։

Միջնադարում պետություններն ընդհանրապես, իսկ Բյուզանդիան հատկապես, կարևոր նշանակություն են տվել այլ երկրների նկատմամբ իրենց կատարած կամ կատարելիք նվաճումների գաղափարական հիմնավորմանն ու օրինականացմանը։ Բյուզանդիան, Հռոմեական կայսրությունից ժառանգելով տիեզերապետության (կոսմոկրատիզմ) գաղափարը, ձգտում էր իր գերիշխանությունը տարածել այլ երկրների վրա։ Նրա գաղափարախոսներն ընդգծում էին Բյուզանդական կայսրության գլխավորությամբ պետությունների և իշխանությունների հիերարխիկ համակարգի՝ οἰκουμένη-ի գոյությունը[65]։ Դա «հոգևոր-ազգակցական» կապերով պայմանավորված մի յուրահատուկ «գերդաստան» էր, որի գլուխ կանգնած էր բյուզանդական կայսրը՝ «գերդաստանի» «հոգևոր հայրը»։ Ըստ կարևորության, հիերարխիայի հաջորդ աստիճաններում էին կայսեր «հոգևոր եղբայրները», «հոգևոր զավակներն» ու «բարեկամները»[66]։ Այս, ինչպես նաև կայսերական արքունիքի կողմից մշակված այլ տիտղոսների ու գրությունների հատուկ ձևերը, որոնք տրվում կամ ուղղվում էին օտար իշխաններին և թագավորներին, բյուզանդական տեսանկյունով նշանակում էր կայսրությունից ինչ որ չափով նրանց կախումը։

Բյուզանդիայի պետական ուսմունքը ցայտուն դրսևորվում է նրա ճակատագրով նախանձախնդիր Կոստանդին Ծիրանածին կայսեր այն ձևակերպումով, որ կայսրության կողմից նշանակված կամ նրանից տիտղոս ստացած օտար կառավարիչները հռոմեական կայսեր ծառաներն են համարվում, հետևաբար նրանց տիրապետության տակ գտնվող ամրոցները, քաղաքներն ու գյուղերը հռոմայեցիների կայսեր սեփականությունն են[67]։ Ուստի Տարոնի իշխանին կուրապաղատության շնորհումով կայսրությունը ձգտում էր նրան կտրել Բագրատունիների հյուսիս-արևելյան ճյուղի՝ հայկական իշխանությունները միավորելու քաղաքականությունից, օրինականացնում էր իր նվաճողական նկրտումները Տարոնի իշխանության նկատմամբ[68]։ Սրանից անկախ, բյուզանդացիները չէին հաշտվել իրենց տիրապետության տակ եղած տերիտորիաները (որոնց թվում էր Տարոնը և ընդհանրապես Հայաստանը) արաբների կողմից նվաճելու հետ։ Բյուզանդական ըմ-

---

62 *C. Toumanoff*, Studies, էջ 203, 486։

63 *N. Adontz*, Les Taronites, էջ 205։

64 *J. Laurent*, L'Arménie, էջ 272, ծան. 10; *C. Toumanoff*, The Background to Mantzikert, էջ 424։

65 *D. Obolensky*, The Principles and Methods of Byzantine Diplomacy „Actes du XIIe Congres International d'Études Byzantines" t. 1, Beograd, 1963, էջ 45—61։

66 *И. П. Медведев*. Империя и суверенитет в средние века (На примере истории Византии и некоторых сопредельных государств), «Проблемы истории международных отношений», Сборник статей памяти акад. Е. В. Тарле. Л., 1972, էջ 416—417; Կ. Ն. Յուզբաշյան, Բագրատունյաց շրջանի Հայաստանը, էջ 42։ Ըստ մեկ այլ տարբերակման, կայսեր «զավակները», նրա եղբայրներից հետո էին (տե՛ս *И. П. Медведев*. Империя и суверенитет, էջ 416—417)։

67 Կոստանդին Ծիրանածին, էջ 11։

68 *C. Toumanoff*, The Background to Mantzikert, էջ 424։



8—1281

բռնումով դրանց օրինական տերերը միայն իրենք կարող էին լինել։

Աշոտ Բագրատունի կուրապաղատի օրոք Տարոնի և Բյուզանդիայի փոխհարաբերությունները, ինչպես տեսնում ենք, գծագրվում են ընդհանուր ձևերով։ Կոնկրետ փաստերի բացակայությամբ է պայմանավորվում այդ կապերի մեջ խորանալու դժվարությունը։ Այս տեսակետից արժեքավոր է Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտի (858—867, 877—886) հայերին ուղղված նամակները, որոնք հրատարակել է ֆրանսիացի բյուզանդագետ Ժ. Դարուզեսը[69]։

Փոտը արտահայտելով բյուզանդական պետության նվաճողական տրամադրությունները, ոչ միայն կառչում էր Հռոմեական կայսրության նախկին սահմանները վերականգնելու մտքին, այլև փորձում էր իր գործունեությունը նպատակամղել դրա իրագործմանը։ Հայտնի են պատրիարքի տարբեր երկրներ հղած բազմաթիվ ուղերձները, ինչպես նաև նրա պատվիրակների առաքելությունները՝ բյուզանդական եկեղեցու ազդեցությունն այդ երկրներում տարածելու դիտավորությամբ։

Թե՛ նորագյուտ վերոհիշյալ երկու և թե՛ վաղուց հայտնի մյուս երկու նամակներում[70], բյուզանդական եկեղեցու ղեկավարը արծարծում էր Քրիստոսի բնության վերաբերյալ դարեր շարունակ ծեծված և սխոլաստիկ վեճերի առիթ դարձած հարցերը։ Դատապարտելով միաբնակությունը և նրան հակադրելով երկբնակությունը, նա վերջինս հռչակում էր իբրև միակ ճշմարիտ ուսմունքը և հայերին կոչ անում հետևել դրան։

---

69 J. Darrouzès, Deux lettres, էջ 140—153։

70 Դրանք հրատարակվել են «Православный Палестинский сборник». Т. XI. Вып. I, СПб., 1892, էջ 179—226, 226—279; Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 279—282; Ն. Ակինյան, Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց, «Հանդէս ամսօրեայ», 1968, հունվար-մարտ, էջ 65—99, ապրիլ-հունիս, էջ 129—156; նույնի, Պատճէն թղթոյ մեծի Հայրապետին Կոստանդնուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխան, նույն տեղում, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 439—450։



Սակայն Ժ. Դարուզեսի հրատարակած նամակները[71], հատկապես նրանցից առաջինը, վերնագրված՝ «Ընդդեմ թեոպասխիտների աղանդի» (աստվածաչարչարների—Գ. Գ.) նշանակալից է նրանով, որ ամփոփում է ուշագրավ նոր փաստեր։ Պարզվում է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքը փորձել է վերացնել Բյուզանդիայի և Հայաստանի միջև եղած դավանաբանական անջրպետը։ Այդ կապակցությամբ նա որոշ հաջողությունների հասել է, որովհետև իր իսկ խոստովանությամբ, նրա և նրա գործակալի՝ Հովհան արքեպիսկոպոսի ջանքերով հայերի մի մասն ընդունել է քաղկեդոնականությունը[72]։ Մեկ այլ տեղում Փոտը հայտնում է իր նամակի անհայտ հասցեատերին՝ մեկ ուրիշ նամակով հայոց կաթողիկոս Զաքարիա Ձագեցուն, ինչպես նաև ուղղափառություն ընդունած հայերին դիմած լինելու մասին։ Պարզվում է, որ Փոտի ակնարկած ուղղափառ հայերը դրանք Չորրորդ Հայքում ապրող տարոնացիներն են[73]։ Իրավացի է Ժ. Դարուզեսը, երբ Փոտի արտահայտած այս մտքի կապակցությամբ ծանոթագրում է՝ տարոնացիները մյուս հայերից չէին տարբերվում, ինչպես հռչակում է Փոտը[74]։ Անկախ սրանից, Փոտի հայտարարությունը, եթե նույնիսկ դիտենք խիստ չափազանցություն, դարձյալ չի կարելի ուրանալ, որ քաղկեդոնականությունը Տարոնում և նրա մերձակա Չորրորդ Հայքում աշխուժանում էր[75]։

---

71 Առաջին նամակի հասցեատերն անհայտ է։ Հրատարակչի կարծիքով այն ուղղված է իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն (տե՛ս J. Darrouzès, Deux lettres, էջ 138), իսկ ըստ Կ. Յուզբաշյանի՝ ոչ թե նրան, այլ բյուզանդամետ մեկ ուրիշ, անունն անհայտ իշխանի (տե՛ս «Византийский временник», т. 38, М., 1977, էջ 247—248։

72 J. Darrouzès, Deux lettres, էջ 140։

73 Նույն տեղում, էջ 146։

74 Նույն տեղում, էջ 147, ծան. 14։

75 Չորրորդ Հայքից որոշ գավառներ՝ Խորձյանը և Հաշտյանքը մտնում էին Տարոնի իշխանության մեջ (տե՛ս Ս. Երեմյանի կազմած և Հայ ժողովրդի պատմության երրորդ հատորին (Երևան, 1976) կցված՝ Հայաստանը և հարևան երկրները 855—953 թթ. քարտեզը)։

Դա կարող էր օգտագործվել կայսրության կողմից՝ իր նվաճողական պլաններում։ Բյուզանդիան, որի համար խիստ կարևոր նշանակություն ուներ իր զավթումների օրինականացումը, ցանկացած պահին կարող էր ոտնձգություններ կատարել Տարոնի իշխանության նկատմամբ՝ այնտեղ և նրա մերձակայքում ապրող դավանակիցների հետ կապված բազմաթիվ հարցերի քողի տակ։

## Բ. ՏԱՐՈՆԸ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

IX դարում, մինչև Բագրատունիների հայկական թագավորության հռչակումը, Հայաստանում կային մի քանի իշխանություններ (Բագրատունիների հյուսիս-արևելյան կամ Շիրակ-Արշարունիքի, Վասպուրականի, Սյունիքի, Տարոնի և այլն), որոնց կազմում, իրենց հերթին մտնում էին ավելի փոքր իշխանական տոհմեր կամ տներ։ Այդ իշխանությունները քաղաքական ինքնուրույն միավորներ էին և կառավարվում էին տեղական խոշոր ֆեոդալների կողմից։

Հայկական իշխանությունների քաղաքական դիրքը գնալով ամրապնդվում էր արաբական խալիֆայության թուլանալուն զուգընթաց։ Հայաստանում առանձնապես նշանակալից էր Բագրատունիների հյուսիս-արևելյան ճյուղի դերը։ Աշոտ Ա Բագրատունին մինչև Արաբական խալիֆայության ու Բյուզանդական կայսրության կողմից պաշտոնապես ճանաչվելը (884)[1], ենթադրվում է, որ դեռևս 869 թվին հռչակվել էր հայոց թագավոր[2]։ Նա թագավոր էր դարձել հայ իշխանների կամքով[3]։ Իշխանների կողմից Աշոտ Ա-ին թագավոր ընտրելը ձևական արարողություն չէր, այլ երկրի քաղաքական կյանքում նրանց ազդեցիկ դերի ապացույց։

Հայաստանում թագավորական իշխանության վերականգնումից հետո էլ ֆեոդալական իշխանությունները պահ-

1 Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 162։

2 Б. Аракелян, Гарни, I, Ереван, 1951, էջ 84, 87։

3 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 77—78։



պանեցին իրենց ինքնուրույնությունը։ Թագավորական իշխանությունը ֆեոդալական պետության կենտրոնական մարմինն էր։ Այն կոչված էր հայկական իշխանությունները համախմբել քաղաքական մեկ միավորի մեջ և իրականացնել ֆեոդալների դասակարգային տիրապետությունը։

Մեր խնդիրն է անդրադառնալ թագավորական իշխանության և Տարոնի Բագրատունիների փոխհարաբերություններին։ Աղբյուրների սուղ տվյալները հարկադրում են այդ հարաբերությունները դիտել հայկական թագավորության և նրա գերիշխանությունը ճանաչած Անդրկովկասի (Վրաստան, Եգերք, Աղվանք) ու Հայաստանի առանձին իշխանությունների ավերսների ընդհանուր պատկերի վրա։ Հայոց թագավորության ու նրա գերիշխանությունը ճանաչած իշխանությունների փոխհարաբերությունները պայմանավորված էին վասալասյուզերենային կապերով[4], որոնք հայկական աղբյուրներում արտահայտվել են «սերտ սէր», «դաշինք», «պայման խաղաղութեան», «սէր միաբանութեան», «խաղաղութեան սիրոյ պայման», «ուխտ սիրոյ», «ուխտ խաղաղութեան և սիրոյ միաբանութեան», «յետկար երդման», «յետկար քարտին», «յետկար գրոյ» տերմիններով։

Աշոտ Ա-ը դեռևս մինչև թագավորելը ամենքի հետ կապել էր «սերտ սէր», բոլորը նրա հետ դաշինք էին կնքել իբրև թագավորի։ Սյունյաց գահերեց Վասակ Գաբուռը՝ նրա փեսան, ընդունում էր Աշոտի գերիշխանությունը[5]։ Նրան հաջորդած Վասակ Իշխանիկը «...յաւէտ իմաստութեամբ և հեզահամբոյր հանդարտութեամբ և հաւանութեամբ մեծաւ հնազանդէր Աշոտոյ իշխանին իշխանաց, և խրատու նորա զհնկն մատուցանէր խնամով՝ իբրև զօրէնս միշտ ի սրտի իւրում պահելով»[6] կամ «Եւ այսպէս ճոխացեալ երևելի փառօք՝ բա-

4 Այս մասին տե՛ս նաև Ռ. Ի. Մաթևոսյան, Վասալասյուզերենային հարաբերությունները, էջ 46—54։

5 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 75։

6 Նույն տեղում, էջ 76։

զումս ցուցանէր գործս արութեան յայսմ ժամանակի ի ձեռնըտուութենէ նոյն Աշոտոյ իշխանի, որ և թագաւորեացն»[7]։

Վասպուրականի գահերեց Գրիգոր-Դերենիկը նույնպես Աշոտ Ա-ի փեսան էր։ Թագավորը նրան բարի խրատներ էր տալիս, իսկ Գրիգորը հնազանդվում էր[8]։

Հայոց թագավորության վասալ իշխանները շարունակեցին ճանաչել Սմբատ Ա-ի գահերեցությունը։ Սմբատ Ա-ը ևս «ամենեւեան յարդարել զխաղաղութեան սիրոյն պայման»[9]։ Վասպուրականի Աշոտ Արծրունին՝ նրա քեռորդին, նրա հետ կնքել էր դաշինք[10], իսկ հաջորդը՝ Գագիկ Արծրունին, «միամըտութեամբ սրտի հնազանդեալ նուաճէր ընդ լծով ծառայութեան արքայի»[11]։ Թագավորի հետ «որդիական սիրով» միաբան էր Սյունյաց մեծ իշխանը, որը արժանացել էր «խնամոցն հայրաբուն սիրոյն»[12]։ Սիսականի Սմբատ իշխանը ևս «մտերմական ծառայութեամբ կատարէր զբոլոր սպասահարկութիւն նորա»[13]։

Նույն իրավիճակը տիրում էր Աշոտ Բ-ի օրոք։ Նրան հպատակված Սյունյաց մեծ իշխան Սմբատը թագավորի կողմից ընդունվեց «բազում պատուասէր և սերտ հարազատութեամբ»[14]։ Թագավորը նրան մեծ պատիվներ շնորհեց։ Նույն պատվին արժանացավ Գեղաքունիքի իշխան Վասակը[15]։ Վերջինս չնայած թագավորից ստացավ «յետկար երդման», բայց չբավարարվեց դրանով. «Ապա չուէ գնայ առ թագաւորն. և յառաջնում նուագին իբրև զհակամիտ գործակից և զեղբայր սիրելի հաւատարմացուցեալ իւր ընդունէր զնա պատուով մեծաւ»[16]։

7 Ստեփանոս Օրբելյան, էջ 125։

8 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 76։

9 Նույն տեղում, էջ 88։

10 Նույն տեղում, էջ 95։

11 Նույն տեղում, էջ 96։

12 Նույն տեղում, էջ 95։

13 Նույն տեղում, էջ 115։

14 Նույն տեղում, էջ 159։

15 Ստեփանոս Օրբելյանն ավելացնում է, որ Աշոտ Բ-ը նրան ընդունեց «խնդութեամբ և վիճակեցոյց իւրոյ տէրութեանն» (տես Ստեփանոս Օրբելյան, էջ 141)։



Հայոց թագավորը մեկնեց Գուգարք և իր դեմ ապստամբած Վասակ և Աշոտ Գնթունիներից պահանջեց պահպանել «հնազանդության կարգը»[17]։

Աշոտ Բ-ը երկարատև պայքար մղեց թագավորական իշխանության ձգտող իր հորեղբորորդու՝ Աշոտ սպարապետի դեմ։ Այդ պայքարը տևական էր և նրանց միջև հաճախ համաձայնություններ էին կնքվում, որոնք նույն անվանումներն ունեին։

Սահակ Սևադային հնազանդության կոչելիս թագավորը շեշտում էր դրա պայմանները և ավելացնում, որ միայն դրանից հետո նրանց մեջ խաղաղություն կհաստատվի՝ «հօր հարազատի և որդւոյ սիրելւոյ» աստիճանի[18]։

Կախեթի իշխան Գուրգենը որոշ ժամանակամիջոցում եղել է Աշոտ Բ-ի «հավերժ սիրեցյալը»։ Ուտիքի իշխան Ամրամը մինչև թագավորի դեմ ապստամբելը նույնպես նրա «սիրելին էր»։

Գագիկ Ա-ի և Դավիթ Անհողինի վեճն ավարտվեց այն բանով, որ նրանց մեջ «խաղաղության ուխտ հաստատվեց» և Դավիթը հնազանդվեց թագավորին իբրև «որդի առ հայր», վերջինս «հայրենի խնամով» սիրում էր նրան[19]։

Համանման կերպով հայոց թագավորները կապված են եղել Վրաստանի, Եգերքի և Աղվանքի տիրողների հետ։ Աշոտ Ա-ին հնազանդվել էր վրաց մեծ իշխան Ատրներսեհ կուրապաղատը, որը նրա մահվանից հետո ցավակցելու համար այցելեց որդուն՝ Սմբատ Ա-ին. սրա օրոք ևս շարունակում էր պահպանել «խաղաղութեան և միաբանութեան սիրոյ» ուխտը[20]։ Թագավոր հռչակվելուց հետո ևս Ատրներսեհը շարու-

16 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 165։

17 Նույն տեղում, էջ 160։

18 Նույն տեղում, էջ 169։

19 Ասողիկ, էջ 280։

20 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 80, 101։

նակում էր մնալ «պատուասէր պայմանի»[21]։ Սմբատը կապված էր նաև եգերների թագավորի հետ։

Վերջինս «ի բազում հնազանդութիւն և մտերմական ծառայութիւն համախոհութեան զինքն արքային Սմբատայ բերէր»[22]։

Այսպիսով, վրաց և եգերաց իշխողները հայոց թագավորների հետ պահպանում էին «խաղաղութեան և սիրոյ միաբանութեան» ուխտը, կոչելով իրենց հայոց թագավորների որդին, մտերիմը, հնազանդն ու ծառան[23]։

Ի մի բերելով սկզբնաղբյուրների վկայությունները, տեսնում ենք, որ հայոց թագավորությունը և նշված իշխանությունները կազմել են մեկ «գերդաստան»։ Այս հասկացությունը լայն տարածում ուներ միջնադարում։ «Գերդաստանը» գլխավորել է հայոց թագավորը՝ «գերդաստանի հայրը» կամ «հոգևոր հայրը»։ Նրա վասալները կոչվել են «որդիներ», «սիրելի որդիներ», «հոգևոր զավակներ», «եղբայրներ», «մտերիմներ», «հավատարիմներ», «հպատակներ», «հնազանդներ» և «ծառաներ»։ Նրանք պարտավորվել են հավատարիմ լինել իրենց տերերին, կատարել ստանձնած պարտավորությունները, հարկեր վճարել և անհրաժեշտության դեպքում ռազմական օգնություն ցույց տալ։ Սյուզերենները, իրենց հերթին, պարտավորվել են պաշտպանել նրանց իրավունքները։ Փոխհարաբերությունների այս ձևը, բնականաբար, անկայուն էր։ Վասալները հաճախ ընդվզել են իրենց տերերի դեմ, իսկ վերջիններս փորձել են նրանց հնազանդեցնել։ Հայտնի են Սմբատ Ա-ի արշավանքները Եգերք և Վրաստան, Աշոտ Բ-ի կողմից Վասակ Սյունեցու բանտարկությունն ու նրա տիրույթների գրավումը, ինչպես նաև Աշոտ և Վասակ Գնթունիների, Մովսես իշխանի, Սահակ Սևադայի, Ցլիկ Ամրամի և այլոց դեմ նրա ձեռնարկած քայլերը[24]։

---

21 Նույն տեղում, էջ 108։

22 Նույն տեղում, էջ 111։

23 Նույն տեղում, էջ 101—102, 111։

24 Նույն տեղում, էջ 89, 110—111, 160—165։



Հայոց թագավորից կախում են ունեցել նաև Հայաստանում հաստատված արաբական իշխանությունները՝ մահմեդական ամիրայությունները։ Նրանք նույնպես հարկ են վճարել ու ռազմական օգնություն ցույց տվել։ Աշոտ Ա-ին հպատակվել են Մանազկերտի Կայսիկները, Բերկրիի Ութմանիկները, Կարնո քաղաքի, Հերի ու Սալմաստի իշխանները։ Սմբատ Ա-ի գերիշխանությունն ընդունել են Կայսիկները։ Դվինի արաբները։ Աղբյուրներում հայոց թագավորները վասալ արաբների «հայրերը» չեն եղել և ոչ էլ վերջիններս նրանց «որդիները»։ Չնայած կողմերի ընդհանուր համաձայնություններին, հայոց թագավորների և նրանց գերիշխանությունն ընդունած արաբ իշխանների փոխհարաբերություններն աղբյուրներում տրված են միմիայն որպես «տիրոջ» և «ծառայի» հարաբերություններ։

Այսպիսով, վերը բերված օրինակները ցույց են տալիս, որ Բագրատունիների հայոց թագավորությունից վասալական կախում ունեցող թագավորությունների և իշխանությունների փոխհարաբերությունները պայմանականորեն կարելի է ստորաբաժանել երեք կարգի։ Առաջին կարգի մեջ պետք է ընդգրկել հայկական առանձին իշխանությունների և թագավորությունների հետ հաստատած կապերը։ Փոխհարաբերությունների երկրորդ կարգը վերաբերում է Հայաստանի սահմաններից դուրս գտնված քաղաքական միավորների հետ ունեցած առնչությանը։ Վերջապես Հայաստանի արաբական իշխանությունների և հայոց թագավորության փոխհարաբերությունները պետք է դիտել իբրև վասալասյուզերենային կապերի մեկ այլ, առանձին կարգ։

Դժբախտաբար սկզբնաղբյուրները հնարավորություն չեն տալիս բացահայտելու հարաբերությունների այս երեք կարգերի ընդհանուր և առանձնահատուկ կողմերը, թափանցել նրանց մեջ կամ պարզել նրանց ծավալն ու բնույթը և տարբերությունները։ Պարզ է, որ հայոց թագավորների ու Տարոնի Բագրատունիների միջև հաստատված հարաբերությունները վերաբերել են առաջին կարգին։ Տարոնի իշխանները նույնպես մտել են հայ թագավորների գլխավորած «գերդաստանի»

մեջ։ Թագավորական տոհմի անդամներին ամուսնացնելով իշխանական տարբեր տների ներկայացուցիչների հետ, Բագրատունիները ձգտել են նրանց ներառնել իրենց քաղաքական ազդեցության ոլորտը։ Տարոնի իշխան Դավիթ-Արքայիկի որդի Աշոտն ամուսնացել էր Սմբատ Ա-ի եղբայր Շապուհի դստեր հետ[25]։ Բացի այդ, Տարոնի իշխանների համար Բագրատունի հայ թագավորներն իբրև հարստության գլխավորողներ, ունեցել են ավագության իրավունք, որը հայտնի է «ազգապետություն» անունով[26]։

## Գ. ՊԱՅՔԱՐ ՏԱՐՈՆԻ ՀԱՄԱՐ

Տեսանք, որ Վասպուրականի գահերեց Գրիգոր-Դերենիկը Աշոտ կուրապաղատին Տարոնի իշխանությունից զրկեց և նրա փոխարեն հաստատեց իր փեսային՝ Դավթին։ Վերջինս Աշոտի եղբայրն էր։ Թովմա Արծրունին տեղեկացնում է, որ Դավիթը կոչվում էր Արքա[27]։ Ուրեմն, Արծրունյաց պատմիչը միևնույն իշխանին հիշատակում է Դավիթ և Արքա կրկնանուններով։ Կոստանդին Ծիրանածինն ակնարկում է Տարոնի Գրիգոր իշխանի կողմից Արքայիկի որդիներին ձերբակալելու մասին[28]։ Ն. Ադոնցը և Յ. Մարկվարտն իրավացիորեն Թովմա Արծրունու և Կոստանդին Ծիրանածնի հիշատակած Դավիթ-Արքա-Արքայիկին նույնացրել են Տարոնի այս իշխանի հետ[29]։ Ըստ Ս. Ռենսիմենի, Դավթից բացի Արքա է կոչվել նրա եղբայր Աշոտը[30]։ Այս պնդումը չի հաստատվում Թովմայի վկայությամբ։ Ծիրանածնի տեղեկությամբ Դավիթն ուներ երկու որդի, իսկ ըստ Թովմայի՝ մեկ, Աշոտ անունով։ Ս. Ռենսիմենը

25 Նույն տեղում, էջ 96։

26 Տե՛ս *С. Т. Еремян*. Общность судеб и культурно-политическое содружество народов Закавказья в IX—XIII вв., «Кавказ и Византия», выпуск I, Ереван, 1979, էջ 6։

27 Թովմա Արծրունի, էջ 247—248։

28 Կոստանդին Ծիրանածին, էջ 5։ Հմմտ. DAI, I, էջ 189, 191։

29 *N. Adontz*, Les Taronites, էջ 204; *J. Markwart*, Südarmenien, էջ 318։

30 DAI, II, էջ 162։



ենթադրում է, թե Արքայիկն այս Աշոտն էր և որ սրա որդիները ձերբակալվեցին Գրիգորի կողմից, երբ նրանց հայրը կռվում էր նրա դեմ[31]։

Արծրունյաց պատմիչի հակասական տեղեկությունները դժվարացնում են Դավիթ Արքայիկի իշխանության ստույգ տարիները որոշել։ Ըստ նրա, Տարոնի հիշյալ իշխանը մեռավ 895 թվականին՝ Դվինի երկրաշարժից երկու տարի անց։ Նույն հեղինակի համաձայն Դավիթը իշխել է «ամս է», յոթ տարի[32]։

Յ. Մարկվարտը 887 թվականն էլ համարում է նրա իշխանության սկիզբը[33]։ Ն. Ադոնցն ընդունում է 878 թ., գտնելով, որ գրչագրական սխալի հետևանքով ԺԷ-ն դարձել է Է[34]։ Ն. Ադոնցի հիպոթեզն առավել հավանական է, քանի որ, ինչպես տեսանք, Դավիթ-Արքայիկի իշխանությունը հաստատեց Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդը, որի Հայաստանում գտնվելու տարիները հայտնի են՝ 877—878 թթ[35]։ Դավիթ-Արքայիկի տասնյոթ տարի իշխելու հավանական թվացող տեսակետն ընդունվել է ուսումնասիրողների կողմից[36]։ Դավիթը կոչվել է նաև հայոց իշխան[37]։ Նրա օրոք Տարոնին սպառնում էին արաբական իշխանությունները, հատկապես Վերին Միջագետքում հաստատված Շայբանիները՝ Իսա իբն ալ-Շայխի գլխավորությամբ[38]։ Թովմա Արծրունին

31 Նույն տեղում։

32 Թովմա Արծրունի, էջ 248։

33 *J. Markwart*, Südarmenien, էջ 314, 323։

34 *N. Adontz*, Les Taronites, էջ 205—206։

35 Տե՛ս Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները, էջ 123։

36 Տե՛ս *V. Laurent*, Alliances et filiation des premiers Taronites princes arméniens médiatisés, Échos d'Orient, t. 37(1938), էջ 128։

37 Թովմա Արծրունի, էջ 248; հմմտ. Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վէպը, Թիֆլիս, 1908, էջ 71։ Մ. Աբեղյանի կարծիքով Դավիթ-Արքայիկի կերպարը մարմնավորվել է հայկական հերոսական էպոսի՝ Սասունցի Դավթի կերպարի մեջ (տե՛ս նույն տեղում, էջ 83)։

38 *M. Canard*, Isa ibn al-Shaykh, EI t. IV, Leiden—Paris 1978, էջ 93—94։

նույնիսկ վկայում է նրա կողմից Տարոնը գրավելու մասին, մի բան, որ Յ. Մարկվարտը վերագրում է նրան հաջորդած Ահմադ իբն Իսա ալ-Շայխին[39]։ Վերջինս մոտավորապես 890 թ. նվաճեց Աղձնիքը[40]։ Այն պատկանում էր Աբու-լ-Մաղրային, որը փեսայացել էր Արծրունիներին և ծածուկ դարձել քրիստոնյա[41]։

Ահմադը Աղձնիքից բացի գրավեց Տարոնի իշխանության մի մասը[42]։

895 թ. մեռավ Դավիթ-Արքայիկը։ Նրան հաջորդեց իր եղբորորդի Գուրգենը[43]։ Վերջինս կարճ իշխեց և զոհվեց Ահմադի դեմ մղած կռվում։ Դրանից հետո Տարոնն ամբողջովին անցավ Ահմադին։ Տարոնի կորուստը լուրջ սպառնալիք էր հայոց թագավորությանը։ Ահա թե ինչու Սմբատ Ա-ը բազմիցս դիմեց Ահմադին և պահանջեց այն հանձնել Աշոտ Բագրատունուն՝ Դավիթ-Արքայիկի որդուն, որն ամուսնացել էր իր եղբոր՝ Շապուհի դստեր հետ[44]։ Դժվար չէ նկատել, որ այս պարագայում թագավորը ոչ միայն ձգտում էր Տարոնն ազատագրել թշնամուց, այլ նաև այնտեղ իշխանությունը հանձնել Բագրատունիների տեղական ճյուղին՝ թագավորությանը հավատարիմ ներկայացուցչին։ Ընդսմին, Սմբատ Ա-ը խոստանում էր նպաստել Արմինիայի կառավարչի պաշտոնը Ահմա-

[39] *J. Markwart*, Südarmenien, էջ 318։

[40] *M. Canard*, Isa ibn al-Shaykh, էջ 94։

[41] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 96։ Մ. Կանարը վկայակոչելով Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու երկերը, գտնում է, թե Աբու-լ-Մաղրան տիրում էր նաև Խութին (տե՛ս *M. Canard*, Les Principautés arabes d'Arménie, էջ 198—199), որը կազմում էր Տարոնի իշխանության մասը։ Նշված երկերում, սակայն, հիշյալ թեզն ապացուցող փաստ չկա։

[42] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 96։ Անկասկած, Ահմադի կողմից Տարոնի գրավումը 870 թ. վերագրելը (տե՛ս DAI, II, էջ 159) վրիպում է, որովհետև նույն գործի 160-րդ էջից պարզ է դառնում, որ Տարոնը Ահմադը գրավել է 895 թ. հետո։

[43] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 96; Թովմա Արծրունի, էջ 260։

[44] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 96; Թովմա Արծրունի, էջ 266։



դին տալուն[45], քանի որ խալիֆայությունը վերջինիս իրավունքները պաշտոնապես չէր ճանաչել։ Բայց նա տեղի չտըվեց և Սմբատ Ա-ի բախումը Ահմադի հետ անխուսափելի դարձավ։ 898 թ. Թուլխ գետի մոտ, համանուն վայրում, հայկական ու արաբական ուժերի ճակատամարտն ավարտվեց հայերի պարտությամբ[46]։ Թուլխի ճակատամարտում կրած պարտությունն ավելի ծանրացրեց Սմբատ Ա-ի վիճակը։ Ավելին, նրա դեմ նոր արշավանք սկսեց Ատրպատականի կառավարիչ Աֆշին իբն Աբու-լ-Սաջը, և Սմբատին միայն ծանր պայմանների գնով հաջողվեց համաձայնության գալ նրա հետ[47]։ Սակայն նույն 898 թ. Ահմադը մեռավ[48] և Տարոնը ձերբազատվեց Շայբանիների տիրապետությունից։ Հակառակ Սմբատ Ա-ի կամքի, որն ուզում էր Տարոնի իշխանապետ տեսնել իր եղբոր փեսային՝ Դավիթ-Արքայիկի որդուն, այնտեղ իշխեց Գրիգորը[49]։ Իշխանության համար պայքարի մեջ մտնելով Դավիթ-Արքայիկի որդիների հետ, Գրիգորը հաղթեց և ձերբակալեց նրանց։ Վերջիններիս ազատման համար Գրիգորի նկատմամբ Սմբատ Ա-ի գործադրած ճնշումն ապարդյուն եղավ։ Այս փաստը պերճախոս վկայում է, որ Սմբատ Ա-ի ազդեցությունը թուլացել էր Տարոնի իշխանության վրա։

Տարոնի այս իշխանի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Կոստանդին Ծիրանածինը։ Վերջինս նրան հիշատակում է տարբեր ձևերով՝ Κρικορίκιος, Γρηγόριος և Κρικορίκης[50]։

[45] Թովմա Արծրունի, էջ 266։

[46] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 96—97։ Թովմա Արծրունի, էջ 266—267։ Ըստ առաջինի, հայոց թագավորի ուժերը կազմում էին 60, իսկ ըստ երկրորդի՝ 100 հազար հոգի։ Ավելի հավանական է Հովհաննես Դրասխանակերտցու տվյալը։ Թուլխի ճակատամարտի թվական է համարվել նաև 896-ը (տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 521)։ Մովսես Կաղանկատվացու և Թովմա Արծրունու տվյալների համադրումով պարզվում է ճակատամարտի ստույգ թվականը՝ 898 (տե՛ս *N. Adontz*, Les Taronites, էջ 213)։

[47] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 99—100։

[48] *M. Canard*, Isa ibn al-Shaykh, էջ 94։

[49] Կոստանդին Ծիրանածին, էջ 5, Հմմտ. DAI, I, էջ 189, 191։

[50] DAI, I, էջ 188, 190։

Ենթադրվել է, թե Գրիգորի անվան փաղաքշական իկ վերջածանցի հավելումը, նրան նույնանուն մեկ ուրիշից տարբերելու համար է կատարվել[51], որը, սակայն անհավանական է[52]։ Գրեթե բոլոր ուսումնասիրողները, Ն. Ակինյանից բացի, Գրիգորին համարել են Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչ։ Հիշյալ տեսակետը հավանական է, քանի որ հաստատվում է Կոստանդին Ծիրանածնի կողմից։ Ըստ նրա, «Տարոնի այս իշխանը մի պատերազմի ժամանակ գերեց Արքայիկի որդիներին, այսինքն պատրիկ Կրիկորիկի՝ պրոտոսպաթար Աշոտի հոր եղբորորդիներին, և իր մոտ արգելափակեց։ Այն ժամանակվա իշխանաց իշխան Սմբատը (հայոց թագավոր Սմբատ Ա-ը—Գ. Գ.) նամակ գրեց և խնդրեց նույն ամենաերանելի կայսեր (Լևոն VI-ին—Գ. Գ.), որ նա մարդ ուղարկի Տարոնացու մոտ՝ ազատելու համար իր՝ Սմբատի հարազատ եղբորորդիներին, վերոհիշյալ Արքայիկի որդիներին, որպեսզի նրանք չհանձնվեն ամերմումնիի (արաբական խալիֆայի—Գ. Գ.) ձեռքը, քանզի պատրիկ Գրիգորը իշխանաց իշխան Սմբատի ազգականն է»[53]։

Այսպիսով, պարզվում է, որ Գրիգորը գերել է Դավիթ-Արքայիկի որդիներին, որոնք եղել են Գրիգորի որդու՝ պրոտոսպաթար Աշոտի հորեղբոր որդիները[54]։ Բայց Ծիրանածնի բնագրի ἐξάδελφος բառը հին հունարենում ունեցել է տարբեր իմաստներ՝ ծնողներից մեկի՝ հոր կամ մոր եղբոր որդի, ինչպես նաև՝ եղբոր կամ քրոջ որդի[55]։

Ուրեմն, բազմիս համապատասխան իմաստներից ելնելով՝ պետք է ընդունել, որ Դավիթ-Արքայիկի որդիները եղել են Աշոտի ազգականները կա՛մ նրա հոր, կա՛մ էլ մոր կողմից։

51 DAI, II, էջ 160։

52 Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 210—211, ծան. 3։

53 Նույն տեղում, էջ 5; DAI, I, էջ 189։

54 Անգլերեն թարգմանված է՝ պատրիկ Կրիկորիկիոսի՝ պրոտոսպաթար Աշոտի հոր զարմիկներին, the cousins of the patrician Krikorikios, father of the protospatharius Asotios (տե՛ս DAI, I, էջ 189, 191)։

55 Μέγα Λεξικὸν τῆς Ἑλληνικῆς γλώσσης, τόμος Γ', Ἀθῆναι, 1950, էջ 2605։



Առաջին տեսակետը նախընտրելի է, քանի որ հաստատվում է Կոստանդին Ծիրանածնի հավելյալ տեղեկությամբ։ Վերջինս հուշում է՝ հայոց թագավոր Սմբատ Ա-ը և Գրիգորը ազգականներ են։ Սա խոսում է նրանց երկուսի՝ միևնույն տոհմին պատկանելու մասին։ Իրոք, հայտնի է, որ Սմբատ Ա-ը Աշոտ Մսակերի որդու՝ Սմբատ սպարապետի ժառանգներից էր, հետևաբար նրա ազգական Գրիգորն էլ սերում էր Մսակերի մյուս որդու՝ Բագարատի ժառանգներից[56]։

Սմբատ Ա-ը, Դավիթ-Արքայիկի զավակների ազատության համար Լևոն VI-ի օգնությանը դիմելով, նրանց համարում էր իր հարազատ եղբոր որդիներ։ Թեպետև սա չի համապատասխանում իրականությանը, բայց նա կարող էր այդպես ներկայացնել, որովհետև Սմբատի եղբոր՝ Շապուհի դուստրը ամուսնացել էր Դավիթ-Արքայիկի որդի Աշոտի հետ։ Ուրեմն, նա իր եղբոր փեսային և սրա եղբորը կարող էր դիտել իբրև իր հարազատ որդիներ։

Եթե ուսումնասիրողները, Ն. Ակինյանից բացի, Գրիգորին համարում են Բագրատունի, ապա նրա հոր ինքնությունը որոշելիս, նրանց տեսակետները հեռանում են։

Մ. Չամչյանի կարծիքով Գրիգորը Տարոնի իշխան Վահան Բագրատունու որդին էր[57]։ Սակայն ոչ մի աղբյուրից հայտնի չէ Տարոնում Վահանի գոյությունը։ Ըստ Ն. Ադոնցի, նա Բագարատ Բագրատունու թոռն էր, նրա՝ Ասողիկի հիշած, բայց անունն անհայտ որդու, գիտնականի ենթադրությամբ՝ Թոռնիկի որդին[58]։ Յ. Մարկվարտը ևս այս տեսակետն է պաշտպանել, միայն այն տարբերությամբ, որ նա Գրիգորի հորը հորջորջել է Սողոմոն[59]։ Վերջինս Թովմա Արծրունու

56 Հմմտ. *N. Adontz*, Les Taronites էջ 214։ Գրիգորի տոհմային պատկանելության հարցը պարզաբանվում է միայն Կոստանդին Ծիրանածնի այս երկու վկայություններով։ Ն. Ակինյանն անտեսելով դրանք, համոզիչ չէ, երբ նրան համարում է Մամիկոնյան (տե՛ս Ն. Ակինյան, Թոռնիկեանց ճիւղագրութիւնը, էջ 80)։

57 Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, էջ 725—726։

58 *N. Adontz*, Les Taronites, էջ 214, 242։

59 *J. Markwart*, Südarmenien, էջ 495։

պատմելով, Բագրատունի էր և փորձեց արաբների կողմից ձերբակալված Գուրգեն Ապուպելճին համոզել, որ նա մահմեդականություն ընդունի[60]։ Բայց պատմիչն ընդամենը մեկ անգամ և միայն այս առիթով է հիշատակում նրան։ Ս. Ռենսիմենը նրան համարում է Բագարատ Բագրատունու Աշոտ կուրապաղատ որդուց սերված[61]։ Կարելի է կարծիքների այս շարքը երկարել, բայց ցանկալի արդյունքի հասնելն անհնար է, քանի որ քննարկվող հարցի կապակցությամբ ոչ մի սկզբնաղբյուրում որևէ հիշատակություն չենք գտնի։ Իբրև բացառություն, Կոստանդին Ծիրանածնի՝ վերը հիշատակված հաղորդումն է, որից, սակայն նշմարելի է լոկ նրա Բագրատունի ծագումը։ Հենց աղբյուրների լռությունը դուռ է բացել վերոհիշյալ կարծիքների համար։ Ուստի, Գրիգորի հոր անունը որոշելու անհնարին փորձից ձեռնպահ մնալով, նշենք, որ առավել հավանական են Գրիգորին Բագարատ Բագրատունու շառավիղներից համարող կարծիքները։

Բայց ահա, Գրիգորի ազգակցության հարցում կա մի շփոթմունք, որը չի կարելի անտեսել։ Նա դիտվել է իբրև Սմբատ Ա-ի քեռորդի[62]։ Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Սմբատ Ա-ը Գրիգոր անունով քրոջ որդի ուներ, որը զարմով Հայկազուն էր։ Նրան սպանել էր Ատրպատականի Յուսուֆ ոստիկանը[63]։ Հայտնի են Գրիգորի եղբայրները՝ Սահակն ու Վասակը, որոնք Յուսուֆից զգուշանալով պատսպարվել էին Սևանա կղզում[64]։ Երբ նրանց մայրը՝ Մարիամը մեռավ «տարեալ հանգուցանէին զմարմին նորա ի քնարանի իւրում մերձ ի ձեռակերտ եկեղեցի իւր ի Շողագայի»[65]։ Ակներև է, որ խոսքը Սմբատ Ա-ի քեռորդի Գրիգորի և նրա ազգակիցների

60 Թովմա Արծրունի, էջ 230։

61 DAI, II, էջ 160։ Այս տեսակետին է նաև Հ. Բարթիկյանը (տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 210, ծան. 3)։

62 M. Canard, Histoire, էջ 466—467, հմմտ. նաև Կոստանդին Ծիրանածին, էջ 210, ծան. 3։

63 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 123։

64 Նույն տեղում, էջ 125։

65 Նույն տեղում, էջ 126։



մասին է, որոնք իշխում էին Գեղաքունիքում և ոչ թե Տարոնում։ Այլուստ ևս հայտնի է Աշոտ Ա-ի դստրերից՝ Սմբատ Ա-ի քույրերից մեկի ամուսնությունը Սյունիքի, իսկ մյուսինը՝ Վասպուրականի իշխանների հետ[66]։

Տարոնի իշխան Գրիգորի մասին ուշագրավ է Կոստանդին Ծիրանածնի հաղորդումը. «...Հենց սկզբից նա երկու լարի վրա էր խաղում, խոսքով ձևացնում էր, թե գնահատում է կայսեր բարեկամությունը, բայց իրականում աշխատում էր հաճոյանալ սարակինոսների (արաբների—Գ. Գ.) առաջնորդին։ Տարբեր ժամանակներում նա Ասորիքից դուրս եկող և հռոմայեցիների կայսեր ենթակա բանակաթեմերի վրա արշավող (սարակինոսների) զորքերին ճանապարհ էր ցույց տալիս, ինչպես նաև Ասորիքին էր հայտնում հակառակորդ սարակինոսների դեմ հռոմայեցիների գաղտնի ծրագրերը։ Նա շարունակ թաքուն նամակներ էր ուղարկում ամերմումնիին և նրան տեղյակ պահում այն ամենի մասին, ինչ կատարվում էր մեզ մոտ։ Նա ձևացնում էր, թե հռոմայեցիների կողմից է, բայց իրականում նախապատվություն էր տալիս սարակինոսներին և գործում նրանց օգտին»[67]։ Հովհաննես Դրասխանակերտցին ոմն Գրիգորի որակում է «հայոց մեծ, խոհեմ և հանճարեղ իշխան» և նշում, որ Սմբատ Ա-ը մոտավորապես 910 թ. նրան ուղարկեց Բաղդադ՝ Ատրպատականի Յուսուֆ ոստիկանի դեմ խալիֆայից օգնություն խնդրելու[68]։ Պատմիչը չի հիշատակում, թե այս Գրիգորը ո՞ր իշխանական տոհմից էր, կամ որտե՞ղ էր իշխում։ Ն. Ադոնցն իրավացիորեն Սմբատ Ա-ի պատվիրակին նույնացրել է Տարոնի իշխան Գրիգորի հետ[69]։ Սա ճիշտ է, քանի որ հայոց թագավորը, հարկավ, ընտ-

66 Նույն տեղում, էջ 75, 76։

67 Կոստանդին Ծիրանածին, էջ 4—5։ Հմմտ. DAI, I, էջ 189։

68 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 127։

69 Տե՛ս N. Adontz, Les Taronites, էջ 214; հմմտ. նաև՝ DAI, II, էջ 160։ Ն. Ադոնցի հիշյալ տեսակետն անուշադրության է մատնվել և Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած Գրիգորը նույնացվել է Մոկքի իշխան Գրիգորի հետ, որը պակաս հավանական է (տե՛ս Լեո, Հայոց պատմություն, էջ 546։ Հմմտ. նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 38)։

բելու էր այնպիսի մարդու, որը ճանաչում պիտի ունենար խալիֆայությունում։ Հիրավի, Կոստանդին Ծիրանածնի վկայությունից երևում է, որ նա միայն Տարոնի Գրիգորը կարող էր լինել։

Գրիգորի օրոք մեծանում էր Բյուզանդիայի հետաքրքրությունը Տարոնի նկատմամբ։ Բյուզանդիայի հիմնական խնդիրը սահմանակից շրջաններում գտնվող պետություններին և իշխաններին կախյալ դարձնելն էր. դրանց մեջ քաղկեդոնականություն տարածելը և կայսեր գերիշխանությունը ճանաչել տալը։ Կայսրության համար կարևոր էր օտար իշխաններին հարկատու դարձնելը, բյուզանդական տիտղոսներով ու նվերներով սիրաշահելը, նրանց հետ խնամիանալը և դրանց շնորհիվ ի վերջո նրանց իր ազդեցության ոլորտում ներգրավելը[70]։ Նշված սկզբունքներով էր գործում նաև կայսերական դիվանագիտությունը Տարոնի իշխանների նկատմամբ։ Բյուզանդիայի համար Տարոնի կարևորությունը չի թաքցնում Կոստանդին Ծիրանածինը։ Տեսանք, որ նրա ասելով, Գրիգորը քաջատեղյակ էր կայսրության և խալիֆայության ռազմական ուժերին, նրանց ստրատեգիական պլաններին։ Նա նույնիսկ ինչ-որ չափով առնչվում էր այդ պետությունների՝ արևելքում ծավալած ռազմական գործողություններին։

Կայսրության նվաճողական ծրագրերը լրջորեն վտանգում էին Տարոնի ինքնուրույնությունը, ծանր կացության մեջ դնում նրա իշխան Գրիգորին[71]։ Վերջինս, ինչպես տեսանք, ստիպված էր խուսանավել խալիֆայության և Բյուզանդիայի միջև։ Լևոն VI կայսեր փորձերը՝ մայրաքաղաք հրավիրել Գրիգորին և իր կամքը նրան թելադրել, ապարդյուն էին անցնում։ Բայց կայսրությունը համառում էր։ Ի վերջո որոշվեց Տարոն ուղարկել ներքինի Սինուտին[72]։ Նա պետք է մի շարք հարցեր լուծեր Հայաստանում, ապա նաև՝ Իբերիայում, ուր հանդիպելու էր կուրապաղատ Ատրներսեհին։ Կայսեր ներկայացուցիչն իր հետ բերում էր երկու իշխաններին պատշաճող ընծաներ։

[70] D. Obolensky, The Principles, էջ 46—60։

[71] Մոտավորապես 900 թ. կայսրությունը տիրեց Դեգիքին, որը մտավ «Միջագետք» բանակաթեմի մեջ և կայսրության սահմանները մոտեցան Տարոնի իշխանությանը (տե՛ս DAI, II, էջ 160)։ Կայսրության կողմից Դեգիքի նվաճումն ուշագրավ է և որոշ ընդհանրություն ունի Տարոնի առման հետ (տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 5)։



Որպես կանոն կայսրությունը տարբեր երկրներ գործուղվող իր պատվիրակներին տալիս էր հատուկ հավատարմագրեր, որոնց մեջ պատվիրակների անուններից և տիտղոսներից բացի, նշվում էին նրանց առաքելությունների նպատակներն ու լիազորությունները։ Տրվում էին նաև հանգամանալից հրահանգներ։ Ենթադրվում է, որ կայսեր պատվիրակները մեծ լիազորություններ չունեին, այլ կոչված էին սոսկ «ավելի լավ բացատրել գրվածը»[73]։

Կոստանդին Ծիրանածնի համաձայն, Սինուտին վիճակված չէր նշված հանձնարարությունները կատարել, քանի որ նրան հայ թարգման Թեոդորն ամբաստանել էր կայսեր մոտ։ Չնայած դրան, Սինուտը ուղարկվեց Իբերիա։ Սրանից պետք է ենթադրել, որ նրա վերաբերյալ եղած կասկածը հարուցվել էր Տարոն գնալու կապակցությամբ։ Կայսրը Սինուտի փոխարեն Տարոն ուղարկեց Լիվոսի որդի պրոտոսպաթար Կոստանդինին[74]։ Հետաքրքիր է Կոստանդինի՝ Տարոնում ծավալած գործունեությանը հետևելը։

Կայսեր՝ Տարոնի իշխանին հասցեագրած նամակը և ուղարկած նվերներն այնքան էլ ազդեցություն չունեցան։ Կոստանդինը չկարողացավ մայրաքաղաք տանել Տարոնի իշխանին։ Բայց այնտեղ նա հանձին Գրիգորի խորթ որդի Աշոտի, հենման կետ գտավ, որի վրա կայսրությունը ձգտում էր կառուցել առաջ գնացող իր ծրագրերը։ Կոստանդինի ջանքերով և ուղեկցությամբ Կոստանդնուպոլիս մեկնեց Աշոտը։

[72] Սինուտ (Σινούτης) Ն. Ադոնցի կարծիքով նշանակում է Սյունեցի (տե՛ս N. Adontz, Les Taronites, էջ 221)։

[73] И. П. Медведев, К вопросу о принципах византийской дипломатии накануне падения империи. (տե՛ս «Византийский временник», т. 33, М., 1972, էջ 132).

[74] Կոստանդին Ծիրանածին, էջ 5։

Վերջինս մեծ հյուրասիրության արժանանալով և կայսրության պրոտոսպաթարի տիտղոս ստանալով վերադարձավ հայրենիք[75]։ Բյուզանդական դիվանագիտությունը չէր բավարարվում այդքանով և միայն նրանով։ Պրոտոսպաթար Կոստանդինն իր դիվանագիտական առաքելության ոլորտում հետզհետե ներգրավում էր Տարոնի բոլոր իշխաններին և փորձում նրանց միմյանց դեմ լարել։ Ահա թե ինչու երկրորդ անգամ Տարոն գնալով նրա գործունեությունն առավել արդյունավետ եղավ։ Այս անգամ Կոստանդնուպոլիս վերադառնալիս նա իր հետ տանում էր Գրիգորի եղբորը՝ Ապոգանեմին[76] և Դավիթ-Արքայիկի երկու որդիներին։ Ապոգանեմը Աշոտի նման նույնպես պրոտոսպաթարի տիտղոս ստացավ, մինչդեռ Դավիթ-Արքայիկի որդիների ճակատագրի մասին մենք արդեն անտեղյակ ենք՝ վկայություններ չլինելու պատճառով[77]։

Ինչպես երևում է Կոստանդինի հետագա գործունեությունից, Բյուզանդիան ավելի շատ ուզեցել է Գրիգորին Կոստանդնուպոլսում տեսնել։ Դրա համար կայսրը դիմել է վճռական միջոցի։ Նա կարգադրել է Խաղտիքում եղած Կոստանդինին Տարոն գնալ և իր հետ վերցնել Գրիգորին և գալ մայրաքաղաք[78]։ Տարոնի իշխանը, ըստ երևույթին, այլևս անկարող էր որևէ դիմադրություն ցույց տալ կամ արհամարհել բյուզան-

75 Նույն տեղում, էջ 5—6։ Պրոտոսպաթարը (πρωτοσπαθάριος) Բյուզանդիայի պետական պաշտոնյաներից՝ սկզբում կայսեր թիկնապահներից մեկի տիտղոսն է։ Աստիճանաբար այն դարձավ սովորական մի պատվատիտղոս, որն անգամ շնորհվում էր օտարներին։ 900 թ. Ֆիլոթեոսի հեղինակած պետական պաշտոնների ցուցակում այն հիշատակվում է 11-րդը (տե՛ս *Bury*, IAS, էջ 27։ Ավելի հանգամանալից՝ *R. Guilland*, Études sur l'histoire administrative de l'Empire Byzantine, Le protospathaire, Byzantion, t. 25-27, 1955—1957, fasc. 2, էջ 649—695; հմմտ. նաև Կոստանդին Ծիրանածին, էջ 213 ծան. 10)։

76 Ն. Ակինյանը Գրիգորի եղբայր Ապոգանեմին ևս համարում է Մամիկոնյան (տե՛ս Ն. Ակինյան, Թոնրակեանց ճիւղագրութիւնը, էջ 80)։ Հմմտ. նաև Է. Դանիելյան, Տարոնը հայ բյուզանդական հարաբերություններում, էջ 128։

77 Կոստանդին Ծիրանածին, էջ 6։

78 Նույն տեղում։



դական կայսեր համառ ու անզիջում պահանջները և Կոստանդինի ուղեկցությամբ գնաց մայրաքաղաք, ուր արժանացավ մագիստրոսի և Տարոնի զորավարի՝ ստրատեգի (στρατεγός) աստիճանին։ Կայսրը նրան որպես տարեկան ռոճիկ նշանակեց 10 լիտր ոսկի, նույնքան էլ արծաթ։ Գրիգորին մայրաքաղաքում հատկացվեց «Բարբարոսի տունը», ուր նա մնաց շուրջ մեկ տարի, իր իշխանությունից հեռու։ Դրանից հետո նույն Կոստանդինի ուղեկցությամբ նա վերադարձավ հայրենիք[79]։

Ստրատեգի վերաբերյալ բյուզանդական աղբյուրներում պահպանված տեղեկություններից նշմարվում է հետևյալը. մի դեպքում ստրատեգ են կոչվել բանակի գլխավոր հրամանատարները, այսինքն՝ կայսրերը, իսկ մյուս դեպքում վարչական առանձին միավորների՝ բանակաթեմերի, կամ որոշ քաղաքների ու ամրոցների ռազմական կառավարիչները։ Վերջինները կոչված են եղել իրենց վստահված շրջանները պահպանել թշնամու ներխուժումներից, ինչպես նաև խռովություններից և ներքին այլ ելույթներից։ Ստրատեգները նշանակվել են 3—4 տարի ժամկետով, նրանք ունեցել են քաղաքացիական (պրայետորներ, խարտուլարներ, պրոտոմանդատորներ և այլն) ու ռազմական (տուրմարխներ, դրունգարներ, կոմեսներ և այլն) գործերի գծով պաշտոնյաներ[80]։

Գրիգորին կայսրը շնորհել էր նաև մագիստրոսի տիտղոս, որը կայսերական բարձրագույն տիտղոսներից մեկն էր։ Ֆիլոթեոսի ցուցակում մագիստրոսներից բարձր են եղել միայն կուրապաղատները, նոբիլիսիմուսները և կեսարները։ Օտարերկրացիներին ընդհանրապես մագիստրոսից բարձր

79 Նույն տեղում։ DAI, I, էջ 191, 193։ Պարակիմոմենոս Վասիլի Բարբարոս մականունից այս տունը կոչվել է «Բարբարոսի տուն»։ Այն պատկանել է Ասպար անունով մեկին, ապա՝ Վասիլ Մակեդոնացուն, իսկ այնուհետև՝ Ապոգանեմին (տե՛ս *R. Janin*, Constantinople Byzantine, Paris, 1950, էջ 298)։

80 *H. Glykatzi-Ahrweiler*, Recherches sur l'Administration de l'Empire Byzantin aux IX$^{e}$—XI$^{e}$ siècles, Paris, 1960, էջ 36—40, 46։

տիտղոս չէր շնորհվում[81]։ Այս սովորույթը՝ օտարներին բյուզանդական բարձր աստիճանների շնորհումը, արժանացել է XI դարի հեղինակ Կեկավմենոսի պարսավանքին[82]։

Կայսեր կողմից Գրիգորին տրված Տարոնի ստրատեգ կոչումը հիմք է ծառայել պնդելու, թե Տարոնը նրա օրոք արդեն կազմել է կայսրության անբաժանելի մասը, չնայած այն ձևականորեն միացվել է 966/67 թ.[83]։ Այս տեսակետին իրավացիորեն առարկել է Կ. Ն. Յուզբաշյանը[84]։ Վերջինիս կարծիքով Տարոնը հիշյալ ժամանակաշրջանում այն աստիճանի էր ընդգրկվել կայսրության ազդեցության ոլորտում, որ նրա անկախության մասին խոսք լինել չի կարող, բայց դրա հետ մեկտեղ միջազգային իրավունքի տեսանկյունից այն դեռևս պահպանում էր իր ինքնուրույնությունը։ Այսպես, Տարոնի իշխանը նախքան Կոստանդնուպոլիս մեկնելը և դրանից հետո կայսեր հետ փոխանակում էր նվերներ, նամակներ, որոնք առանձնահատուկ էին ինքնուրույն իշխաններին։ Այնուհետև, Գրիգորից բացի ստրատեգ է դարձել նաև նրա որդին։ Այլ կերպ ասած՝ այն փաստորեն Տարոնի իշխանից ժառանգաբար անցել է որդուն, մի բան, որն անսովոր էր կայսրության բանակաթեմերի կառավարիչների համար, որոնք ինչպես տեսանք, ստրատեգ էին դառնում կարճ ժամանակով։ Այստեղից առավել հավանական է համարվում, որ Տարոնի իշխանին շնորհված ստրատեգությունը տիտղոսային բնույթ է կրել և պաշտոն չի արտահայտել։ Հետևաբար Գրիգորի օրոք Տարոնի բյուզանդական բանակաթեմ վերածվելու մասին եղած ենթադրությունը նույնպես անհավանական է[85]։

81 *Bury*, IAS, էջ 31—32, հմմտ. նաև Կոստանդին Ծիրանածին, էջ 217, ծան. 26։

82 Советы и рассказы Кекавмена, Сочинение византийского полководца XI века, подготовка текста, введение, перевод и комментарий Г. Г. Литаврина, М., 1972, էջ 279, 281, 283։

83 DAI, *II*, էջ 164; հմմտ. նաև Կոստանդին Ծիրանածին, էջ 218—219, ծան. 27։

84 *K. N. Yuzbashian*, L'Administration, էջ 142—143։

85 Նույն տեղում։



Տարոնի իշխանին Լևոն VI-ը նշանակել էր տասը լիտր ոսկի, նույնքան էլ արծաթ ռոճիկ (ῥόγα)[86]։ Տասը լիտր ոսկին հավասար էր 720, իսկ արծաթը՝ 60 ոսկեդրամի կամ դահեկանի։ Այսպիսով, Գրիգորի ստացածը կազմում էր 780 դահեկան, որը բավական մեծ գումար էր։ Բայց օտար իշխաններին տիտղոսներ շնորհելու հետ մեկտեղ ռոճիկ տալը պարտադիր չէր[87], հետևաբար կայսրության կողմից Տարոնի իշխանին տրված ռոճիկը նրա ստացած մագիստրոսության հետ կապ չուներ։ Որ Գրիգորի ռոճիկը, իրոք, կապ չուներ իր ստացած կոչման հետ, և որ նա փաստորեն հատուցում էր այն, երևում է Լևոն VI-ի հաջորդ Ռոմանոս Լակապենոս կայսեր (920—944) ու Տարոնի իշխանի միջև ծագած վեճից, երբ վերջինս «հրաժարվեց ոսկի և արծաթ տալուց, բայց խոստացավ ընդունված սովորության համաձայն ուղարկվող նվերներից բացի տալ մինչև տասը լիտր արժողությամբ հանդերձներ և պղնձե սպասներ»[88]։ Կայսրությանը Գրիգորի վճարածը հայտնի է պախտ (πάκτον հարկ) տերմինով[89]։ Ահա թե ինչու Գրիգորի ստացած ռոճիկը դիտվում է իբրև մասնակի մի դեպք[90]։

Գրիգորի օրոք, որոշ ժամանակ, Տարոնում հաստատվեց հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Ատրպատականի ոստիկան Յուսուֆը Սմբատ Ա-ին մահվան էր դատապարտել (913), իսկ երկիրը՝ ասպատակել։ Բյուզանդիան փորձեց օգտվել Հայաստանի համար ստեղծված քաղաքական այս ծանր կացությունից։ Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսը

86 Կոստանդին Ծիրանածին, էջ 6; DAI, *I*, էջ 191, 193։

87 *P. Lemerle*, „Roga“ et rente d'etat aux Xᵉ—XIᵉ siècles, Le monde de Byzance, Histoire et Institutions, London, 1978, էջ 84։

88 Կոստանդին Ծիրանածին, էջ 8։

89 Նույն տեղում։ Բյուզանդիայում թե՛ տիտղոսները և թե՛ պաշտոնները կայուն գին ունեին և գնվում էին։ Գումարը վճարվում էր պետական դրամարկղ (տե՛ս *P. Lemerle*, „Roga“, էջ 81)։

90 Նույն տեղում, էջ 84։

դիմելով Հովհաննես Դրասխանակերտցուն՝ առաջարկում էր մինչև բյուզանդական օգնությունը, կազմակերպել հայերի և վրացիների համատեղ պայքարն ընդդեմ արաբների[91]։ Հովհաննես Դրասխանակերտցին պատրիարքի նամակն ստացավ Վրաստանում, որտեղ հաստատվել էր արաբների հալածանքներից հարկադրված։ Հենց այստեղից էլ նա մեկնեց Տարոն։ «Եւ յիշեալ զօր տառապանաց անչափման իմոյ, որ իբրև զցանց ձգեալ էր իմոց սրտիցս, և զտկարացեալ զօրութիւն իմ սակաւ ինչ կազդուրեալ և զօտեւորեալ՝ չուեցի գնացի յաշխարհն Տարօնոյ. և անդ ի մերձաւորաց իմոց և իշխանաց և ժողովրդոց գտեալ մխիթարութիւն տառապանաց վշտաց իմոց՝ արծարծեցաւ յիս հոգի իմ»[92]։ Թվում է, թե Հովհաննես Դրասխանակերտցու՝ Տարոն մեկնելը, ասվածից բացի, ունեցել է նաև այլ դրդապատճառ։ Հայոց կաթողիկոսը տեսնելով Հայաստանի ծանր վիճակը, երկրի փրկությունը կապում էր Բյուզանդիայից սպասվող օգնության հետ։ Ըստ երևույթին, Տարոնը նա դիտում էր մի կամուրջ, դիվանագիտական առաքելության նշանակետ՝ կայսրության հետ ավելի սերտ հաղորդակցվելու գործում, քանի որ այս ժամանակաշրջանում Հայաստանի ոչ մի շրջան այնպես չէր կապված Բյուզանդիային, ինչպես Տարոնը։ Եվ հենց Տարոնից Հովհաննես Դրասխանակերտցին նամակով դիմեց Կոստանդին Ծիրանածնին՝ խնդրելով նրա օգնությունը[93]։ Կայսրը Տարոն ուղարկեց իր պատվիրակ Թեոդորոսին՝ բանակցությունների համար մայրաքաղաք տանելու Աշոտ Բ-ին և կաթողիկոսին։ Կոստանդնուպոլիս մեկնեց միայն Աշոտ Բ-ը, իսկ կաթողիկոսը խու-

91 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 144—146։ Միստիկոսի՝ հայերին հասցեագրած երկու այլ նամակների մասին տե՛ս Հ. Բարթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը, էջ 251—256։

92 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 146—147։

93 Նույն տեղում, էջ 147—154։ Եթե պնդենք, թե կաթողիկոսը կայսրին նամակ գրեց Տարոնի Գրիգոր իշխանի ցուցումով, ինչպես որ կարծվում է (տե՛ս N. Adontz, Les Taronites, էջ 273), ապա կաթողիկոսի Բյուզանդիա մեկնելուց հրաժարվելը ևս կարելի է Տարոնի իշխանին վերագրել։



սափեց բյուզանդացիների հետ հանդիպելուց՝ երկյուղելով, որ իրեն կմեղադրեն քաղկեդոնականությանը հարելու մեջ[94]։

Բյուզանդիայից Գրիգորի վերադարձից հետո, Տարոնի և կայսրության կապերն ավելի խորացան։ Բյուզանդիայի մայրաքաղաքում մենք արդեն երկրորդ անգամ տեսնում ենք Ապոգանեմին՝ պատրիկի աստիճան ստացած[95]։ Ավելին, նա իրավունք ստացավ ամուսնանալու կայսեր պատվիրակ Կոստանդինի դստեր հետ։ Բյուզանդացու դստեր հետ Ապոգանեմի ամուսնության իրավունքը հնարավորություն էր տվել նրան մայրաքաղաքում տուն ունենալու։ Դրա համար վերջինս դիմել էր կայսրին և ստացել վերոհիշյալ «Բարբարոսի տունը», սակայն առանց կայսեր պաշտոնական ճանաչման։

Ուշագրավ է, որ Ապոգանեմն իր երկիրը գնաց Բյուզանդիա վերադառնալու մտադրությամբ, սակայն այնտեղ կընքեց իր մահկանացուն։ Նրանից հետո նորից ասպարեզ եկավ մեզ քաջածանոթ Գրիգորը։ Ծիրանածնի պատմածով, նա ոչ միայն ցանկություն էր հայտնել Թագավորանիստ քաղաք գնալ և կայսեր ձեռքից ռոճիկ ստանալ, այլև խնդրել էր իրեն տալ «Բարբարոսի տունը», որը պատկանում էր իր եղբորը։ Պատմիչի ասելով, այդ տունը Գրիգորին տալն ինքնանպատակ չէր։ Դա նպաստելու էր արևելքի մյուս իշխանավորների՝ կայսրությանը հպատակվելուն[96]։ «Բարբարոսի տունը», առանց կայսերական կնիքով հաստատելու, տրվեց նրան։ Ծիրանածինն այնուհետև տեղեկացնում է, որ Ռոմանոս Լակապենոսի օրոք Գրիգորը հրաժարվելով այդ տնից, խնդրում էր իրեն տալ Եկեղյաց գավառում որևէ մի կալվածք (προάστειον), որպեսզի իր երկրի վրա արաբների կատարելիք հարձակումների դեպքում ի վիճակի լինի ընտանիքը և ունեցվածքը փըր-

94 Նույն տեղում, էջ 154—155։ Կոստանդին Ծիրանածինը անչափահաս էր և իշխանությունը փաստորեն նրա խնամակալների ձեռքում էր։

95 Պատրիկը նույնպես կայսրության բարձրագույն աստիճաններից էր։ Ֆիլոթեոսը այն հիշատակում է 12-րդ շարքում, (տե՛ս Bury, IAS, էջ 27—28)։

96 Կոստանդին Ծիրանածին, էջ 7։

կել։ Գրիգորին կայսրն ընդառաջել և հիշյալ գավառում տվել
էր Գրիգորասի կալվածքը, բայց կայսերական ոսկե կնիքով
դարձյալ չէր վավերացրել[97]։ Տեղեկանալով այս ամենին Գրի-
գորի եղբորորդի Թոռնիկը դիմեց կայսրին և բողոքեց իր հոր-
եղբոր դեմ։

Թոռնիկի ասելով «Բարբարոսի տունը» իր հորն էր
պատկանել։ Նրա մահից և Թոռնիկի անչափահաս լինե-
լուց օգտվելով, Գրիգորը տիրել էր այդ տանը և շարունակ
խոստացել վերադարձնել նրան՝ նրա չափահաս դառնալուց
հետո[98]։ Այս խարդավանանքներից հետո Բյուզանդիան Տա-
րոնի իշխանի նկատմամբ նոր քայլեր ձեռնարկեց։ Նա դադա-
րեցրեց Գրիգորին ռոճիկի վճարումը՝ պատճառաբանելով
Վասպուրականի թագավոր Գագիկի, Իբերիայի կուրապաղատ
Ատրներսեհի և հայոց թագավոր Աշոտ Բ-ի բողոքները[99]։

Կոստանդին Ծիրանածնի «Բյուզանդական արքունիքի
արարողությունների մասին» երկում նկարագրվում է բյու-
զանդական եկեղեցու տոներից մեկի առթիվ Մագնավրա պա-
լատում կայացած ընդունելությունը։ Այդ մասին կարդում
ենք. «...Արարողապետը ընդունված հերթականությամբ. ըստ
բարձերի[100] մագիստրոսներին, պատրիկներին և մնացած սե-
նատորներին նախապատրաստում է դրսում։ Երբ ամեն ինչ
տեղին է լինում, այդ մասին հայտնվում է կայսր(երին)[101].
Նրանք հագնում են իրենց քղամիդները, կապում թագերը և
բարձրանում ու բազմում են իրենց գահերին... Երբ բոլորը

---

97 Նույն տեղում; DAI, 1, էջ 193։ Կոստանդին Ծիրանածնի օրոք կազմված «Հարկային կանոնադրության» համաձայն պրոաստիոնները այլ կալվածքներից տարբերվում էին նրանով, որ դրանց տերերն այնտեղ չէին ապրում, այլ միայն նրանց ենթակա մարդիկ՝ ստրուկներ, վարձակալներ և այլք։ Բայց հաճախ այս սկզբունքը հակասում էր իրականությանը (տե՛ս Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը, էջ 421, ծան. 19)։

98 Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 7, DAI, I, էջ, 193, 195։

99 Կոստանդին Ծիրանածին, էջ 7—8; DAI, I, էջ 195։

100 Այսինքն՝ ըստ հիերարխիկ աստիճանների, գահերի։

101 Անչափահաս կայսրն ու նրա խնամակալը։



կանգնում են [իրենց տեղերում] պրեպոզիտոսը[102] ազդա-
նշան է տալիս ոսկե գավազանը կրող օստիարիոսին[103], որը
ներս է հրավիրում առաջին բարձը՝ մագիստրոսին՝ Տարոնի
իշխանին։ Նա ներս է մտնում կայսերական կատեպանի և դրո-
մոսի լոգոթետի[104] ուղեկցությամբ, երկրպագում տերերին,
որից հետո նրան տեղ են տալիս կայսերական գահից ոչ հեռու։
Լոգոթետը նրան սովորական հարցերը տալու ընթացքում,
դրոմոսի պրոտոնոտարը[105] ներս է բերում նրա նվերները. այդ
արարողության ավարտից հետո, մագիստրոսը նորից է եր-
կրպագում և դուրս գալիս։ Վերստին պրեպոզիտոսի ազդա-
նշանով ոսկե գավազանը կրող օստիարիոսը դուրս է գալիս և
ներս հրավիրում երկրորդ բարձը՝ բարեկամ բուլղարներին,
ովքեր հատուկ գալիս են քրիստոսասեր տերերի հետ միասին
տոնակատարությանը մասնակից դառնալու։ Նրանք ևս ամեն
ինչ կատարում են վերոհիշյալ կարգի համաձայն և դուրս գա-
լիս։ Նորից պրեպոզիտոսի ազդանշանով ոսկե գավազանը
կրող մյուս օստիարիոսը դուրս է գալիս և հրավիրում երրորդ
բարձը՝ մագիստրոսի՝ Տարոնի իշխանի առաջին մարդկանց.
Նրանք ևս ամեն ինչ անում են վերոհիշյալ կարգով և դուրս
գալիս։ Այդ բոլորի ավարտից հետո պրեպոզիտոսն ասում է.
«Ձեր հրամանքը»։ Ամենքն արտասանում են «Շատ և երջա-
նիկ տարիներ» մաղթանքը և դուրս գալիս՝ մագիստրոսները,
պատրիկները, սենատորներն ու բոլոր մյուսները... Մագիս-
տրոս Տարոնացին և բարեկամ բուլղարները գնում են իրենց
օթևանները։ Այդ օրը նրանք կայսրերի հետ չեն ճաշում»[106]։

Հիշատակված Տարոնի մագիստրոսը Գրիգորն է, որն ինչ-
պես տեսանք, Լևոն VI-ից ստացավ այդ տիտղոսը և ստրատեգ
կոչումը։ Սակայն հայտնի չէ ընդունելության ժամանակաշըր-
ջանը, պատմիչի ասելով այն տեղի է ունեցել երրորդ ինդիկ-

---

102 Կայսեր ներքինապետը։

103 Դռնապան։

104 Արքունիքի պաշտոնյաներից։

105 Դպիր, գրագիր։

106 Կոստանդին Ծիրանածին, էջ 123—124։

տիոնի հունվարի մեկին[107]։ Ինդիկտիոնը տասնհինգամյա մի ժամանակամիջոց է և տվյալ դեպքում կարող է համապատասխանել 900, 915, 930, 945 թթ.։ Սույն երկի ծանոթագրությունների հեղինակ Ա. Ֆոգտի կարծիքով այս գլուխը գրվել է 927—930 թթ. և այդ ժամանակ էլ տեղի է ունեցել հիշյալ ընդունելությունը[108]։ Նա իր տեսակետը հիմնավորում է տեքստի՝ «բարեկամ բուլղարներ» արտահայտությամբ և նշում, որ այդ ընդունելությունը պիտի եղած լինի միայն Սիմեոն ցարին (893—927) հաջորդած Պետրոսի (927—969) օրոք, երբ բուլղարա-բյուզանդական հարաբերությունները բարելավվել էին[109]։ Հիշյալ տեսակետն առարկության է հանդիպել և «բարեկամ բուլղարները» դիտվել են իբրև բյուզանդական կողմնորոշում ունեցող ավագանու ներկայացուցիչներ, որոնք Սիմեոնից փախել և քաղաքական ապաստան էին գտել Բյուզանդիայում[110]։ Վերջին տեսակետից հետևում է, որ ընդունելությունը կարող էր տեղի ունենալ երրորդ ինդիկտիոնին համապատասխանող մյուս 900 կամ 915 թթ.։

Ն. Ադոնցը Կոստանդնուպոլսում Գրիգորին ցույց տրված ընդունելությունը նախապես համարում էր 900 թ. տեղի ունեցած, բայց հետագայում վերանայեց իր այդ կարծիքը։ Ըստ նրա, 898 թ. իշխանության գլուխ անցած Գրիգորը, որը խուսանավում էր խալիֆայության և Բյուզանդիայի միջև, չէր կարող այդքան կարճ ժամանակամիջոցում փոխել իր քաղաքականությունը և անցնել կայսրության կողմը[111]։ Ն. Ադոնցը մերժեց նաև հավանական թվացող մյուս՝ 915 թ., որովհետև այդ ժամանակ Բյուզանդիայում իշխում էր Զոե կայսրուհին,

107 *Constantini Porphyrogeniti* Imperatoris De Cerimoniis aulae byzantinae, vol. I, Bonnae, 1829, էջ 136—137։

108 *Constantin VII Porphyrogénète*, Le Livre des Cérémonies, t. I, Livre I, Chapitres 1–46 (37), texte etabli et traduite par A. Vogt, Paris, 1935, Commentaire, էջ 152—154։

109 *A. Vogt*, Commentaire, էջ 153։

110 Կոստանդին Ծիրանածին, էջ 296։

111 *N. Adontz*, Notes sur le livre des Cérémonies, EAB. էջ 335։



մինչդեռ տեքստում խոսվում է կայսեր մասին[112]։ Հիշյալ երկու կարծիքներն ընդունելի են։ Ի վերջո Ն. Ադոնցը կանգ առավ 910 թ. վրա։ Նրա ասելով, գրչագրական սխալի հետևանքով բնագրում տասներեքերորդի փոխարեն գրվել է երրորդ ինդիկտիոն[113]։ Այս սրբագրումն անհավանական է թվում և անգամ նրա հեղինակը դա չի պնդում[114]։ Ն. Ադոնցն Ա. Ֆոգտի կարծիքի հավանական լինելն ընդունում է միայն այն դեպքում, երբ Տարոնի իշխանի ընդունելության պատմությունը բաժանվի Լևոն VI-ի և Գրիգորի հարաբերությունների պատմությունից, այսինքն դիտվի, որ Գրիգորը Լևոն VI-ից ստացած պիտի լիներ իր կոչումները, իսկ Ռոմանոս Լակապենոսի օրոք, այսինքն 930 թ., արժանացած կլիներ նրա ընդունելությանը[115]։ Այսպես էլ պետք է ընդունել, որը սակայն Ն. Ադոնցը բացառում է։

Հայտնի է, որ Լևոն VI-ի օրոք Տարոնի և Բյուզանդիայի փոխհարաբերությունները սերտ էին ու Գրիգորը երկու անգամ եղել էր մայրաքաղաքում, արժանացել ընդունելությունների։ Ռոմանոսի օրոք, չնայած նրանց որոշ վեճերին, այդ նույն հարաբերությունները պահպանվում էին։ Հետևաբար, պետք է կարծել, որ Գրիգորը կարող էր Ռոմանոսին այցելել 930 թ.։

Տարոնի իշխանի և կայսեր փոխհարաբերությունների այս պայմաններում բյուզանդացիների Հայաստան կատարած արշավանքներն աստիճանաբար հաճախակի էին դառնում։ Ռոմանոս կայսեր օրոք՝ 922 և 927 թթ., բյուզանդացիները Հովհան Կուրկուասի գլխավորությամբ երկու անգամ մտան Հայաստան և հասան մինչև Դվին։ Բայց նրանք ավարառություններից բացի շոշափելի հաջողությունների չհասան և ետ դարձան[116]։ Կայսրությունը միաժամանակ շարունակում էր

112 Նույն տեղում, էջ 336—337։

113 Նույն տեղում, էջ 335—336։

114 Նույն տեղում։

115 Նույն տեղում, էջ 337։

116 Ասողիկ, էջ 170; Կոստանդին Ծիրանածին, էջ 15; Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները, էջ 136։ Ավելի ուշ՝ 949 թ. նույն գա-

Տարոնի իշխանների միջև նոր ուժով բորբոքել թշնամանքը։ Նա հասավ այն բանին, որ Թոռնիկն իր բաժին տիրույթը կտակեց Բյուզանդիային։ Կայսրության նոր ներկայացուցիչ Կրինիտեսը[117] Տարոն եկավ իրականացնելու նրա կտակը։ Գրիգորի որդիները հակադրվեցին և առաջարկեցին իրենց ձեռքում պահել Թոռնիկի տիրույթը, իսկ նրա փոխարեն Բյուզանդիային զիջեցին Եղնուտը՝ Տարոնի հյուսիս-արևմուտքում։ Այսպիսով կայսրությանը հաջողվեց երկու մասի բաժանել Տարոնը[118]։ Այս ամենը ցույց են տալիս, թե ինչպես Բյուզանդիայի արտաքին քաղաքականությունը դեպքերի պատահական զարգացմամբ չէր ընթանում։ Կայսրությունը նախօրոք ձեռնամուխ էր լինում իր արտաքին քաղաքականության հանգամանալից և մանրակրկիտ մշակմանը, իսկ այնուհետև՝ պայքարում դրա իրականացման համար։

Այս պայմաններում Տարոնի իշխանության նկատմամբ նոր ոտնձգություններ դրսևորեցին արաբները։

X դ. առաջին կեսին Վերին Միջագետքում և Հյուսիսային Ասորիքում հաստատվել էին արաբական Տաղլիբ ցեղին պատկանող Համդանյանները։ Նրանց նվաճած շրջանները մի կողմից հասնում էին մինչև Անձևացյաց գավառը, իսկ մյուս կողմից մերձենում Բագրատունիների Տարոնի տիրույթներին[119]։

---

րավարի գլխավորությամբ բյուզանդացիները տիրեցին Կարնո քաղաքին (տե՛ս Ասողիկ, էջ 179; Կոստանդին Ծիրանածին, էջ 17—18)։ Կարնո քաղաքի գրավումով բյուզանդացիների նվաճումների հեռանկարը մեծանում էր։

117 Կոստանդին Ծիրանածին, էջ 8։ Ն. Ադոնցի կարծիքով նրա անունը ծագել է Չորրորդ Հայքի Դեգիք գավառի Կռնի բնակավայրից (տե՛ս N. Adontz, Les Taronites, էջ 229)։ Ըստ Հ. Բարթիկյանի, այն կարող է համապատասխանել հունարեն χρήνη որն արտասանվում է կրինի, իմաստն «աղբյուրն» է կամ «ակնը»։ Ուստի նրա կարծիքով դա կարող է «ակնցի» բառի հունարեն թարգմանությունը լինել։ Ակնը ժամանակակից Էգինն է (տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 222, ծան. 44)։

118 Կոստանդին Ծիրանածին, էջ 9; Համտ. DAI, I, էջ 166։

119 *M. Canard*, Les Hamdanides et l'Arménie, էջ 83։ Համտ. նաև Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները*, էջ 149—150։



Արաբ պատմիչ Միսքավայի ասելով, 935 թ. Համդանյաններից մեկը, որը հետագայում ստացավ Նասիր ալ-Դաուլա անունը, Մոսուլից հալածվեց և հաստատվեց Հայաստանում, ավելի ստույգ՝ Անձևացիքում։ Այստեղից նա նորից ձգտում էր տիրել Մոսուլին[120]։ Նասիր ալ-Դաուլայի Հայաստանում գտնված ժամանակ նրան հնազանդվել են «Հայաստանի բոլոր թագավորները»՝ այսինքն իշխանները։ 936 թ. խալիֆան նրան պաշտոնապես ճանաչեց Ջազիրայի կառավարիչ, որի դեմ ապստամբեց Արզնում հաստատված Ալի իբն Ջաֆար Դայլամցին։ Նասիր ալ-Դաուլան իր կրտսեր եղբորը՝ Ալիին, տալով Դիար-Բաքրի կառավարչությունը, ուղարկեց ապստամբին հնազանդեցնելու։ Վերջինս պաշարեց Արզնը։ Ալի իբն Դայլամցին՝ Արզնի տերը, դիմեց «Հայաստանի թագավոր» Իբն Թոռնիկին և այդ երկրի իշխաններին՝ օգնության խնդրանքով։ Ընդսմին նա նրանց տեղեկացնում էր, որ Համդանյանները հաջողության հասնելու դեպքում կվտանգեն նաև Տարոնի ապահովությունը[121]։ Այդպես էլ եղավ. Ալին (Սայֆ ալ-Դաուլան) ձերբակալեց Ալի իբն Ջաֆարին, ճնշեց նրա ելույթը և մտավ Տարոն։ Բայց Սայֆ ալ-Դաուլան այս պարագայում նշանակալից ազդեցություն չունեցավ Հայաստանի իշխանների վրա[122]։

939 թ. Կարնո քաղաք կատարած իր արշավանքից վերադառնալով, Սայֆ ալ-Դաուլան ձմեռեց Արզնում։ Արզնում նրա ձմեռելու փաստը հիմք է տվել կարծելու, թե վերջինս որոշակի կասկածներ է ունեցել հայ իշխանների նկատմամբ[123]։ Գարնանը բյուզանդացիների դեմ արշավելուց առաջ նա եկել էր Դատվան, ուր նրան ներկայացել էին Հայաստանի բոլոր իշխանները։ Այս մասին մեզ հաղորդում է արաբ ժամանակագիր Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկին։ Նա նշում է Սայֆ

---

120 *M. Canard*, Les Hamdanides et l'Arménie, էջ 84։

121 Նույն տեղում։

122 Նույն տեղում, էջ 85։ Համտ. նաև Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները*, էջ 151։

123 *M. Canard*, Les Hamdanides et l'Arménie, էջ 85։

ալ-Դաուլային ներկայացած իշխաններին՝ Իբն Ջաշիկ իբն ալ-Դայրանիին (Գագիկ, որդի Դերենիկի), Ահմադ իբն Աբդ ալ-Ռահման Աբու-լ-Մուիզզին՝ Խիլաթի (Խլաթ), Դատ ալ-Ջաուզի (Արծկե), Արջիշի (Արճեշ) և Բարքարիի (Բերկրի) տիրոջը... ինչպես նաև Աշութ իբն Ջարջուրին (Աշոտ որդի Գրիգորի) պատրիկների պատրիկին[124]։

Ալ-Դայրանից նա վերցրեց Շահրան և ալ-Համիդ ամրոցներն իրենց ավաններով և շրջակայքով, Ահմադ իբն Աբդ ալ-Ռահմանից պահանջեց Բադլիսը (Բաղեշ) շրջակայքով, Աշութից ալ-Սանասունա երկիրը նվաճեց և տիրեց Կուլբ ամրոցին և Սուլայման բերդին (Հիսն Սուլայման) իրենց շրջակայքով[125]։ Ուշագրավ է, որ այս նույն դեպքերի մասին հաղորդում է մեկ ուրիշ արաբ պատմիչ՝ Իբն Ջաֆիրը։ Ըստ նրա, Համդանյանը Խլաթում ընդունեց «Հայաստանի և Վրաստանի թագավորին», որը հպատակվեց նրան և որը երբեք ոչ մեկին չէր հպատակվել։ Վերջինս նեղվելով մուսուլմաններից, հարկադրված էր Սայֆ ալ-Դաուլային տալու իր ամրոցները։ Նա միաժամանակ խոստացավ պահպանել ճանապարհների ապահովությունը։ Դրանից հետո Սայֆ ալ-Դաուլան վերադարձավ Իբն Թոռնիկի երկիրը, պաշարեց Մուշը, ուր ավերեց մի նշանավոր եկեղեցի[126]։

Ինչպես տեսանք, արաբ երկու պատմիչները 940 թ. միևնույն դեպքերի մասին խոսելիս Տարոնի կապակցությամբ հիշատակում են տարբեր անձանց՝ Իբն Թոռնիկին և Աշութ իբն Ջարջուրին (Աշոտ որդի Գրիգորի), ընդ որում 936 թ. ևս Տարոնում հիշատակվում է Իբն Թոռնիկը։

Արաբների մեջ մարդկանց հայրանուններով անվանակոչելը տարածված էր։ Այս սովորույթով արաբ հեղինակները հայ ավագանու ներկայացուցիչներին հաճախ կոչում

124 Նույն տեղում, էջ 86; հմմտ. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները, էջ 152—153։

125 *M. Canard*, Les Hamdanides et l'Arménie, էջ 86։

126 Նույն տեղում, էջ 86։



էին նրանց հոր, պապի և մյուս նախնիների անուններով։ Իրավացի է Ն. Ադոնցը, երբ Իբն Թոռնիկին չի նույնացնում Ապոգանեմի որդի Թոռնիկի որդու հետ, քանի որ Կոստանդին Ծիրանածնից սրա գոյության մասին որևէ բան չգիտենք[127]։ Ն. Ադոնցի ասելով, Իբն Թոռնիկը կարող է նույնանալ Տարոնի իշխան Գրիգորի ավագ որդու՝ Բագրատի (ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ Պանգրատ) հետ, որն իշխել է 936—940 թթ.[128]։ Ն. Ադոնցին հետևում է նաև Մ. Կանարը[129]։ Այս տեսակետը տրամաբանական է, քանի որ Կոստանդին Ծիրանածնի հաղորդումը՝ Տարոնի իշխան Գրիգորի մահվանից հետո նրա անդրանիկ որդու՝ Բագրատի Կոստանդնուպոլիս գնալը, պատրիկի աստիճան ստանալը և Տարոնի զորավար դառնալն այդ են հուշում[130]։ Բայց մյուս կողմից Ն. Ադոնցն աչքաթող է անում այն, որ 936 թ. առաջին անգամ հիշատակված Իբն Թոռնիկը, որի մասին խոսվում է նաև 940 թ., մեկ ուրիշ աղբյուրից (Իբն ալ-Ազրակ) հայտնի է իր իսկական անվամբ Աշոտ որդի Գրիգորի։ Ուստի առավել հավանական է թվում Յ. Մարկվարտի տեսակետը, որի համար ելակետայինը հիշյալ տեղեկությունն է, և որով Իբն Թոռնիկը նույնանում է Գրիգորի որդի Աշոտի հետ[131]։ Ճիշտ է այս դեպքում Աշոտի

127 *N. Adontz*, Les Taronites, էջ 230—231։

128 Նույն տեղում, էջ 231։

129 *M. Canard*, Les Hamdanides et l'Arménie, էջ 85։

130 Կոստանդին Ծիրանածին, էջ 8—9։ DAI, I, էջ 197։

131 *J. Markwart*, Südarmenien, էջ 463։ Է. Դանիելյանի կարծիքով Աշոտը սերում էր Բագրատունիների ճյուղից, իսկ Իբն Թոռնիկը՝ Մամիկոնյան-Թոռնիկյանների (տե՛ս Է. Դանիելյան, Տարոնը հայ-բյուզանդական հարաբերություններում, էջ 130—131, հմմտ. նույնի Թոռնիկյանների քաղաքական դերը X դարի հայ-բյուզանդական հարաբերություններում, «Լրաբեր», 1977, № 10, էջ 68)։

Մենք տեսանք, որ Տարոնի իշխան Բագարատ Բագրատունին հայոց իշխանի պաշտոնն ուներ և կրում էր իշխանաց իշխան տիտղոսը։ Նրա հաջորդները՝ Աշոտ կուրապաղատը, Դավիթ-Արքայիկը, Գրիգորը թեպետև Հայաստանի մյուս իշխանների նկատմամբ չունեին գահերեցության իրավունք ինչպես Բագարատն ուներ, բայց շարունակում էին կոչվել հայոց իշխաններ։ Տեսանք նաև, որ 936 թ. Իբն Ջաֆիրը Տարոնի Իբն Թոռնիկին հիշատակում

իշխանության տևողությունը մեծանում է (936-ից մինչև 967), բայց դա անհավանական չէ։ Չի բացառվում նաև որոշ ժամանակամիջոցում երկու եղբայրների համատեղ իշխանությունը։

Կոստանդին Ծիրանածնի մահից հետո (959) Բյուզանդիան է՛լ ավելի ուժեղացրեց ճնշումը Գրիգորի որդի Աշոտի վրա։ Իսկ վերջինիս մահից հետո (967) կայսրությունը ձեռնամուխ եղավ Տարոնի վերջնական նվաճմանը։ Միանգամայն հավանական է թվում այն ենթադրությունը, թե Տարոնը շուտափույթ գրավելու միտումով Բյուզանդիան Աշոտին քաղաքական տեռորի է ենթարկել[132]։ Ըստ Ասողիկի, Բյուզանդիան բռնությամբ է Տարոնին տիրել[133], իսկ Հովհաննես Սկիլիցեսը Տարոնի կցումը համարում է նրա տերերի «կամավոր» զիջման արդյունք[134]։

Ուսումնասիրողները Տարոնի գրավման թվականի հարցում համերաշխ չեն[135]։ Ասողիկի ասելով «...ի ՆԺԵ թուականին (966 թ. մարտ—967 թ. մարտ) խաւարեցաւ արեգակն. և վախճանեցաւ Տարօնոյ իշխանն Աշոտ։ Եւ Տարօնոյ հոռոմք տիրեցին»[136]։ Հովհաննես Սկիլիցեսի ասելով ինդիկտիոնի 12-րդ տարում (968) «Կայսեր կողմն անցան Գրիգոր ու Բագարատ եղբայրները (Աշոտի որդիները—Գ. Գ.), նրան ընձեռելով իրենց Տարոն երկիրը...։ Արեգակի խավարում էլ եղավ դեկտեմբեր ամսի 22-ին...»[137]։ Արեգակի խավարումներ եղել են 966, 967 և 968[138]։ Արդ, հարց է ծագում, ո՞ւմ տալ նախապատվությունը, Ասողիկի՞ն, թե՞ Հովհաննես Սկիլիցեսին։ Ասողիկի երկի առաջին և երկրորդ հրատարակություններում Տարոնի գրավման թվականը նշվել է 415[139] (966 թ. մարտ—967 թ. մարտ)։ Պատմիչի երկի նոր հրատարակությունից (1885 թ.) հայտնի է դառնում, որ 1668 թ. Տիգրանակերտում՝ Աբրահամ գրչի գրած ձեռագրում (Մաշտոցի անվան մատենադարան № 4584 ձեռագիր) Տարոնի գրավման թվական է նշված ՆԺԶ (967 թ. մարտ—968 թ. մարտ)։ Հրատարակիչ Ս. Մալխասյանը հակառակ, որ Ասողիկի ձեռագրի մեջ նախապատվությունը տվել է սրան, համարելով լավագույնը, Տարոնի գրավման թվականը իր հրատարակած տեքստում դրել է ըստ նախորդ հրատարակությունների (ՆԺԵ)[140]։

4584 ձեռագրից բացի, մատենադարանում պահվում են Ասողիկի երկը բովանդակող № № 1482, 1894, 2765, 2865, 2989, 3160, 3502, 3730, 6598, 8860 գրչագրերը ևս։ Սրանցից տվյալ հարցի լուծման համար պիտանի չեն երկուսը՝ № 2765-ը և 8860-ը, քանի որ Տարոնի գրավման թվականը նրանցում չի նշված։ Մնացած բոլոր ձեռագրերում, այդ թվում և հնագույն՝ XIII դ. № 2865 գրչագրում, Տարոնի գրավման թվական է նշված ՆԺԶ։

---

է իբրև հայոց Բագավոր, այսինքն հայոց իշխան։ 940 թ. Տարոնի իշխան Աշոտին, որը նույնանում է Իբն Թոռնիկի հետ իբն ալ Ազրակը անվանում է պատրիկների պատրիկ, այսինքն իշխանաց իշխան, իսկ տվյալ դեպքում՝ հայոց իշխան։ Եթե Իբն Թոռնիկն ու Աշոտը տարբեր անձինք եղած լինեին և միաժամանակ իշխեին, ապա նրանցից միայն մեկը կարող էր հայոց իշխանի կամ իշխանաց իշխանի տիտղոս կրել։ Ուստի այստեղից նույնպես հետևում է, որ Իբն Թոռնիկը նույն ինքը Գրիգորի որդի Աշոտն է, և ոչ թե մեկ ուրիշը։

132 Հովհաննես Սկիլիցես, էջ XXVII։

133 Ասողիկ, էջ 183։

134 Հովհաննես Սկիլիցես, էջ 28։

135 Ընդունվել են տարբեր թվականներ՝ 964—965 (տե՛ս Ս. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 50); 966 (Կոստանդին Ծիրանածին, էջ XL, Հովհաննես Սկիլիցես, էջ XXVI, *K. Yuzbashian*, L'Administration, էջ 144) 966/967 (DAI, II, էջ 166); 968 թ. ոչ ավելի ուշ (*N. Adontz*, Observations sur la généalogie des Taronites, EAB, էջ 345)։



---

136 Ասողիկ, էջ 183։

137 Հովհաննես Սկիլիցես, էջ 28։

138 *V. Grumel*, Traité d'Études Byzantines, I, La Chronologie, Paris, 1958, էջ 464։

139 Ստեփաննոսի Ասողկայ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեալ ի ձեռն Կարապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 169—170; Всеобщая история Степаноса Таронского Асохика, перевод Н. Эмина, М., 1864, էջ 127։

140 Ասողիկ, էջ 183։

Այսպիսով, Ասողիկի երկի ձեռագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ նա Տարոնի իշխան Աշոտի մահվան և Բյուզանդիայի կողմից Տարոնի գրավման տարեթիվը համարում է ՆԺԶ (967 թ. մարտ—968 թ. մարտ)։ Սրանով, փաստորեն, Ասողիկի և Հովհաննես Սկիլիցեսի տվյալները Տարոնի գրավման տարեթվի հարցում ավելի են մոտենում։ Դրանց տարբերությունը մեկ տարուց էլ պակաս է։ Չի կարելի անուշադրության մատնել Հովհաննես Սկիլիցեսի վկայությունը ևս, քանի որ վերջինս այս հարցում-շատ է ստույգ[141]։ Մնում է կարծել, որ Տարոնի իշխան Աշոտը մահացել է ՆԺԶ (967 թ. մարտ—968 թ. մարտ) և Ասողիկի հիշատակած արեգակի խավարումը վերաբերում է 967 թ. հունիսի 10-ի խավարմանը, իսկ նրա որդիներ Գրիգորը և Բագարատը կայսրության կողմից հարկադրված՝ Տարոնը թողել և Բյուզանդիա են անցել 968 թ., ինչպես վկայում է Հովհաննես Սկիլիցեսը։

Այսպիսով, մեկուսանալով հայոց թագավորությունից և գտնվելով Արաբական խալիֆայության ու Բյուզանդական կայսրության հակասությունների ոլորտում, Տարոնի Բագրատունիների իշխանությունն ի վիճակի չէր ապահովել իր ինքնուրույնությունը։ Ի վերջո, Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության հետևանքով այն կցվեց կայսրությանը։

## Դ. ՏԱՐՈՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԿԱԶՄՈՒՄ

### (X դարի 60—70-ական թվականներ)

Տարոնի գրավումը մեծ հեռանկար էր բացում կայսրության առջև Հայաստանում ծավալվելու համար։ Նրա ռազմաստրատեգիական դիրքը խթանում էր Արաբական խալիֆայության դեմ Բյուզանդիայի պայքարն առավել հաջողությամբ անցկացնելուն։ 968 թ. Խալդիայի և Կոլոնիայի դուքս Վարդաս Փոկասի գլխավորությամբ բյուզանդացիները գրավեցին Մանազկերտը[142]։ Անտարակույս, վերջինիս նվաճմանը նպաստել էր բյուզանդացիների ձեռքում նրա հարևան Տարոնի գտնվելը։ Իր հակառակորդների դեմ պայքարելիս, կայսրությունը մեծ չափով օգտվում էր Տարոնի հայկական ուժերի օժանդակությունից[143]։

Կայսրության կազմում Տարոնի ընդգրկումից հետո այնտեղ հաստատվեց բյուզանդական վարչակարգ։ Տարոնը դարձավ առանձին վարչական միավոր՝ բանակաթեմ, որի կառավարումը հանձնվեց ստրատեգին։ Ստրատեգին ենթակա էին Տարոնի բանակաթեմի կազմում եղած ռազմական կարևոր հենակետերի ու վարչական փոքր միավորների կառավարիչները։

Բյուզանդական ժամանակաշրջանի Տարոնի վարչակարգի մասին մենք պատկերացում ենք կազմում Հովհան Չմշկիկ կայսեր՝ հայոց թագավոր Աշոտ Գ-ին հղած նամակից (974), որը պահպանվել է Մատթեոս Ուռհայեցու երկում։ Այնտեղ կարդում ենք. «Յանափոուտէն պռտաւսպաթրին Դերջնայ, Լեւոնի և Տարօնոյ զօրավարին ողջոյն և ի տէր խնդալ։

Արդ գիտացաք. որ զԱյծեաց բերդն որպէս յանձին կալար՝ չես տուեալ. և այժմ գրեցաք առ զօրավարդ մեր, որ ոչ զբերդըն առնու և ոչ զջորեանն՝ զոր պայմանեցեր, զի այժմ չեղեւ առ մեզ պետք. բայց զքառասուն հազար ովուլաւն զոր յուղարկեցաք, տուր տանել առ զօրավարն մեր, որ առաքէ առ թագաւորութիւնս մեր...»[144]։

Հովհան Չմշկիկն իր նամակում արաբների նկատմամբ բյուզանդացիների տարած հաղթանակների մասին տեղեկություններ հաղորդելուց բացի, ինչպես ցույց է տալիս մեջբերված հատվածը, անդրադառնում էր հայոց թագավորի հետ նախապես իր ձեռք բերած համաձայնության մի քանի հար-

---

141 Այսպես, նրա կողմից նշված 968 թ. դեկտեմբերի 22-ի արևի խավարումը հաշվումներով միանգամայն հաստատվում է (V. Grumel, La Chronologie, էջ 464)։



142 Ասողիկ, էջ 183։

143 Նույն տեղում, էջ 276։

144 Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ, Յերուսաղեմ, 1869, էջ 32—33։ Օգտվում ենք սույն հրատարակությունից, որից մեջբերված հատվածը համեմատաբար քիչ է աղավաղված։

ցերին։ Ընդամին բնագրի որոշ բառեր մնում են անհասկանալի։ Դրանցից է յանափոռտէն-ը։ Էդ. Դյուլորյեն հիշյալ բառը մեկնում է իբրև հատուկ անուն և գտնում, որ այն կրել է Դերջանի պրոտոսպաթարը։ Նույն հեղինակի կարծիքով Լևոնը եղել է Տարոնի ստրատեգը (զորավար)[145]։ Ադոնցը յանափոռտէնը դիտում է իբրև յանափոռաէնի աղավաղված ձև, իսկ վերջինս բխեցնում է հունարեն ἀναφορά (զեկուցագիր, տեղեկություն) բառից[146]։ Նրա ասելով «ողջոյն եւ ի տէր խընդալ», արտահայտությունն իր տեղում չէ։ Այն պետք է եղած լիներ յանափոռաէնից առաջ[147]։

Ն. Ադոնցի կարծիքով բնագրում գրիչների մեղքով թույլ է տրվել մեկ այլ սխալ՝ խրիսովուլլ (χρυσόβουλλον, թագավորական կարգադրություն, հրովարտակ, նաև պաշտոնական գրության ծայրից կախված ոսկե կնիք կամ դրոշմ) բառը, որը գրվել է զխռովուլան, հասկացվել է 40 հազար օբոլոս (օվոլոս), (Խ=40, Ռ=1000, օբոլոս-դրամի միավոր)[148]։ Այնուհետև Ն. Ադոնցն օգտվելով XIII դ. հեղինակ Սմբատ Սպարապետի երկից, լրացնում է Մատթեոս Ուռհայեցու աղավաղված տեքստի մնացած հատվածը։ Ընդ որում, նրա կարծիքով Սմբատ Սպարապետը օգտվել է Ուռհայեցու այնպիսի մի ձեռագրից, որը վերջինիս՝ մեզ հասած տեքստի համեմատությամբ առավելություն ունի, քանի որ այն չի աղավաղվել[149]։ Սմբատ Սպարապետի հիշյալ տեքստը հետևյալն է. «Գրեաց (կայսրը—Գ. Գ.) և ի պռտօսպաթարն, և ի Տարօնոյ զօրավարըն զի առաքեսցեն առ թագաւորն Աշոտ զխրսոյվուլն և դահեկան ԼՌ (30.000) և ծառայս ԲՌ (2000), ձի ԺՌ (10000) և ջորի Ռ (1000)[150]...»։

---

145 N. Adontz, Notes Arméno-Byzantines, II, La lettre de Tzimiscès au roi Ashot (Ašot), EAB, էջ 143։

146 Նույն տեղում, էջ 144։

147 Նույն տեղում։

148 Նույն տեղում, էջ 145։

149 Նույն տեղում, էջ 146։

150 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 12։



Ն. Ադոնցի հիշյալ դիտողությունները համոզիչ են։ Ընդսմին, նրա ասելով Մատթեոս Ուռհայեցու բնագրի մեզ հետաքրքրող հատվածից հետևում է, որ Դերջանը և Տարոնը 975 թ. կազմել են վարչական առանձին միավոր, որի կառավարիչը եղել է վերոհիշյալ Լևոնը, որը կոչվել է Տարոնի զորավար և Դերջանի պրոտոսպաթար[151]։ Ն. Ադոնցի հիշյալ կարծիքը հենվում է Ասողիկի մի վկայության վրա, ըստ որի Վարդաս Փոկասի՝ 990 թ. ապստամբությունից հետո, Զորդվանել Մագիստրոսը իշխել է Տարոնում և Դերջանում[152]։ Նկատենք, որ ուշ ժամանակաշրջանին վերաբերող Ասողիկի այս տեղեկության վրա հենվելով, Ն. Ադոնցը փաստորեն աչքաթող է անում իր իսկ արժեքավորած սկզբնաղբյուրի՝ Սմբատ Սպարապետի վկայությունը։ Մինչդեռ վերջինից պարզորոշ երևում է, որ 974 թ. Հովհան Չմշկիկը դիմելով հայոց թագավորին՝ առանձին առանձին շեշտում է Տարոնի զորավարին և պրոտոսպաթարին[153]։ Այլ կերպ ասած, Տարոնը և Դերջանը նա դիտում է իբրև տարբեր վարչական միավորներ։ Կ. Ն. Յուզբաշյանը ևս Ն. Ադոնցի կարծիքին հակառակ, գտնում է, որ Հովհան Չմշկիկի նամակում խոսքը Դերջանի պրոտոսպաթար Լևոնի և Տարոնի՝ անունը մեզ անհայտ զորավարի մասին է, և որ այդ երկու շրջանները միավորված չեն եղել[154]։ Իր տեսակետը հիմնավորելիս նա հիշատակում է բյուզանդագետ

---

151 N. Adontz, Notes Arméno-Byzantines, էջ 145—146։ Նույն կարծիքին է նաև Հ. Բարթիկյանը (տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ XLV)։

152 Ասողիկ, էջ 252։ Համտ. N. Adontz, Notes Arméno-Byzantines, էջ 145—146։

153 Բնագրում՝ «գրեաց (Հովհան Չմշկիկը—Գ. Գ.) և ի պռտօսպաթարն, և ի Տարօնոյ զօրավարն զի առաքեսցեն առ թագաւորն Աշոտ...» (տե՛ս Սմբատ Սպարապետ, էջ 12։ Հ. Բարթիկյանի կարծիքով Սմբատ Սպարապետը սխալ է հասկացել Մատթեոս Ուռհայեցուն (տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ XLV, ծան. 120)։

154 К. Н. Юзбашян, «Эскуриальский тактикон»-новый византийский источник по истории Армении, «Լրաբեր», 1975. № 5, էջ 95։ Նույնի L'Administration, էջ 145—146։

Ն. Իկոնոմիդիսի վերջերս հրատարակած մի սկզբնաղբյուրը, որը հայտնի է «Էսկուրիալի տակտիկոն» անունով[155]։

Տակտիկոնները պաշտոնական փաստաթղթեր են, որոնք հանգամանալից տեղեկություններ են հաղորդում բյուզանդական արքունիքի արարողությունների վերաբերյալ։ Նրանցում պահպանվել են այդ արարողություններին մասնակցած ազնըվականների ցուցակները։ Տակտիկոնները նաև կարևոր սկզբնաղբյուրներ են կայսերական վարչակարգի հարցերի ուսումնասիրության առումով։ Այս տեսակետից IX—X դդ. բյուզանդական վարչակարգի հետազոտության համար Ն. Իկոնոմիդիսի հրատարակած տակտիկոնը բացառիկ է։ Նրա կարծիքով տակտիկոնը ստեղծվել է 971—975 թթ.[156], այսինքն այն ժամանակամիջոցում, երբ Հովհան Չմշկիկը դիմել էր Աշոտ Գ-ին։ «Էսկուրիալի տակտիկոնում» Տարոնը և Դերջանը հիշատակված են իբրև առանձին միավորներ իրենց ստրատեգ կառավարիչներով[157]։

Ուշագրավ է, որ Տարոնի իշխանության կազմի մեջ եղած Խութ գավառը, Կ. Ն. Յուզբաշյանի կարծիքով Բյուզանդիային անցնելուց հետո ևս վերածվել է վարչական առանձին միավորի՝ բանակաթեմի[158]։ Այս տեսակետը ըստ նրա, հաստատվում է «Էսկուրիալի տակտիկոնի» մի տեղեկությամբ, ուր հիշատակվում է Խութի ստրատեգը[159]։ Թվում է, թե Խութի ստրատեգի մասին եղած վկայությունը դեռևս բավարար կռվան չէ նման եզրակացության հանգելու համար։ Ստրատեգները միայն բանակաթեմերի կառավարիչները չէին։ Ստրատեգ կոչվում էին նաև ավելի մանր միավորների, նաև քաղաքների,

155 Les lists de préséance byzantines des IX^e^ et X^e^ siècles. Introduction, texte, traduction et commentaire par N. Oikonomidès, Paris, 1972.

156 *N. Oikonomidès*, Les lists, էջ 261։

157 Նույն տեղում, էջ 265, 267։

158 *К. Н. Юзбашян*, «Эскуриальский тактикон», էջ 95—96։

159 *N. Oikonomidès*, Les lists, էջ 269։ Բնագրի դժվարընթեռնելիությունը հարկադրում է Ն. Իկոնոմիդիսին հիշյալ վերծանումը վերապահությամբ ընդունել։



ամրոցների կառավարիչները։ Պետք է կարծել, որ Խութը իբրև վարչական ավելի փոքր միավոր մտել է Տարոնի բանակաթեմի մեջ, որի ստրատեգը ենթարկվել է այդ բանակաթեմի կառավարչին։

«Էսկուրիալի տակտիկոնում» հիշատակվում է նաև Μελτῆ-ի ստրատեգը[160]։ Հրատարակիչը հիշյալ տեղանունը նույնացնում է Տուրուբերան նահանգի Մարդաղի գավառի հետ[161]։ Կ. Ն. Յուզբաշյանի կարծիքով խնդրո առարկա տեղանունը ավելի հավանական է նույնացնել Տարոնի Մեղդի բնակավայրի հետ[162]։

Այս ամենից հետևում է, որ Տարոնի նվաճումից հետո կայսրությունն այնտեղ հաստատեց իր սեփական վարչակարգը։ Տարոնը դարձավ առանձին բանակաթեմ։ Նրա կառավարիչ-ստրատեգին ենթակա էին տվյալ շրջանում գտնվող ռազմավարչական նշանակություն ունեցող տարբեր կենտրոնների կառավարիչները։

Տեսանք, որ 974 թ. Հովհան Չմշկիկ կայսեր ղեկավարությամբ բյուզանդական զորքերը արշավեցին արաբների դեմ[163]։ Մատթեոս Ուռհայեցուց տեղեկանում ենք, որ բյուզանդացիները նախքան արաբների հետ ընդհարվելը, մուտք են գործել Հայաստանի սահմանները[164]։ Սմբատ Սպարապետի ասելով, նրանք մտադրվել էին նվաճել Հայաստանը[165]։ Բյու-

160 Նույն տեղում։

161 Նույն տեղում, էջ 269, 362։

162 *К. Н. Юзбашян*, Новые данные для изучения византийской администрации в Армении и Грузии в XI в., «Кавказ и Византия», вып. 2, Ереван, 1980, էջ 71—72։

163 Ասողիկ, էջ 186։ Հովհաննես Սկիլիցես, էջ 53—54։ Վերջինս, ինչպես հավանական է դիտվում, 974 և 975 թթ. արշավանքները միասին է հիշատակում (տե՛ս նույն տեղում, էջ 304)։

164 Մատթեոս Ուռհայեցի, էջ 17։

165 Սմբատ Սպարապետ, էջ 9։ Վ. Կ. Իսկանյանի կարծիքով բյուզանդական բանակի արշավանքի ուղղությունը փոխելու պատճառներից էր Տարոնի հարցը։ Կայսրությունը ձգտել է դրանով լուծել վիճելի հարցերը և ամրապնդվել այնտեղ։ (Տե՛ս Վ. Կ. Իսկանյան, Հայ-բյուզանդական քաղա-

զանդացիների մտադրությունն իմանալով, հայոց զորքը Աշոտ Գ թագավորի գլխավորությամբ պատրաստ էր նրանց դիմադրելու։ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Յայնժամ ամենայն թագաւորազունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն և Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձեւացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասանու. և բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրեւ ութսուն հազար։ Եւ եկեալ հրեշտակ թագաւորին Հոռոմոց առ նոսա և տեսին պատրաստական զամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր և երթեալ պատմեցին թագաւորին Ջմշկանն. գնացին և յիշխանացն Հայոց զկնի հրեշտակացն Հոռոմոց՝ իմաստասէրն Լեւոն և Ստատ իշխանն Թոռնեցին և այլ եպիսկոպոսք և վարդապետք և արարին սէր և խաղաղութիւն ընդ թագաւորին Հոռոմոց և ընդ Աշոտայ արքային Հայոց։ Եւ գայր խաղայր թագաւորն Ջմշկիկ ահագին բազմութեամբ և հասանէր ի Տարօն գաւառ Հայոց և իջեալ ի Մուշ առաջի Այծեաց բերդին. և յառաջին գիշերն բազում նեղութիւն կրեաց զօրքն Հոռոմոց ի հետեւակ զօրացն Սասանու և եկին իշխանքն և վարդապետքն Հայոց առ թագաւորն Հոռոմոց...»[166]։

Ուռհայեցու ասելով «հայոց աշխարհի մուտքի»՝ Տարոնի մոտ բյուզանդական զորքի դեմ 80 հազարանոց բանակով հանդես գալը պերճախոս վկայություն է այն բանի, որ հայերը որոշել էին զենքի ուժով պահպանել իրենց անկախությունը, թույլ չտալ բյուզանդացիներին նվաճելու երկիրը։ Այս փաստին ականատես՝ բյուզանդացիները ետ կանգնեցին իրենց ծրագրից։ Աշոտ Գ-ի գլխավորությամբ հայկական միացյալ ուժերի համախմբվածությունը նշանակալից երևույթ է։ Այդ

քական հարաբերությունների պատմությունից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», № 6, Երևան, 1957, էջ 107)։

166 Մատթեոս Ուռհայեցի, էջ 17—18։



մասին ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանն իրավամբ գրում է. «Թվում է, թե ոչ դրանից երբևէ առաջ և ոչ էլ դրանից երբևէ հետո՝ հայ ֆեոդալների միացյալ ուժը հանդես չէր եկել որպես ավելի զորեղ ռազմական և քաղաքական մի գործոն, որի հետ հարկադրված լիներ հաշվի նստել կայսերական Բյուզանդիան»[167]։

Տվյալ պահին կայսրության համար էականն արաբների դեմ կռվելն էր։ Հաջողության ապահովման տեսակետից անհեռատեսություն էր հայերին իր դեմ լարելը։ Ահա թե ինչու Բյուզանդիայի և Հայաստանի միջև կայացած համաձայնությամբ Աշոտ Գ-ը հանձն էր առնում 10 հազարանոց օգնական զորք տրամադրել կայսրությանը, նրա բանակին մատակարարել սննդամթերք և տալ ռոճիկ[168]։ Դրանից բացի հայ-բյուզանդական համաձայնությունը շոշափում էր մի շարք հարցեր, որոնք կապված էին Տարոնի գրավման հետ։ Բյուզանդիայի կողմից վերջինիս նվաճումից հետո Մուշ քաղաքի մերձակա Այծյաց բերդը հայերը դեռևս պահում էին իրենց ձեռքում։ Ի վերջո այս համաձայնությամբ Աշոտ Գ-ը խոստանում էր այն զիջել Բյուզանդիային։ Հակառակ այդ խոստմանը, ինչպես տեղեկանում ենք Աշոտ Գ-ին՝ Հովհան Ջմշկիկի գրած վերոհիշյալ նամակից, հայոց թագավորը, այնուամենայնիվ, այդ բերդը Բյուզանդիային չէր տվել։ Կայսրությունն Աշոտից սպասվող ցորենը նույնպես չէր ստացել։ Այսպիսով, չնայած 968 թ. Տարոնը նվաճվել էր Բյուզանդիայի կողմից, սակայն X դարի 70-ական թվականների կեսերին նրա որոշ շրջանները գտնվում էին հայերի ձեռքում։ Դրանցից էր Այծյաց բերդը։

Բյուզանդիայի կողմից Հայաստանի տարբեր շրջանների նվաճման փաստերը ցույց են տալիս, թե կայսրությունը որքան մեծ կարևորություն է տվել դրանց «օրինականությանը»։ Նա ամեն կերպ հոգ է տարել իրավական տեսակետից հիմնավորելու իր առաջխաղացումը։ Այս առումով հիշյալ շրջան-

167 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, էջ 41։

168 Մատթեոս Ուռհայեցի, էջ 18։

ների իշխանների կողմից իրենց երկրները «կամավոր» ձևով կայսրությանը զիջելու պրակտիկան բավական տարածում ուներ։ Եվ անկախ այն բանից, թե այդ զիջումները ինչպես էին ձևակերպվում, պարզ է, որ դրանք մտահղացվում էին կայսերական արքունիքում և իրականանում բյուզանդացիների ճնշումների հետևանքով։ Այդպես էր նաև Տարոնի խնդրում։

Հովհաննես Սկիլիցեսի ասելով, Տարոնի Գրիգորը և Բագարատն իրենց տիրույթներն ինքնակամ զիջեցին Բյուզանդիային, նրանից ստացան պատրիկի աստիճան և շատ եկամտաբեր կալվածքներ։ Ն. Ադոնցը բյուզանդական պատմիչի այս վկայությունը համարում է իրականությանը չհամապատասխանող, քանզի որևէ մեկն իր հայրենիքը ինքնակամ երբեք չէր զիջի օտարին[169]։ Ն. Ադոնցն իրավացի է։ Հովհաննես Սկիլիցեսի ասածին հակառակ, մենք Տարոնի իշխաններին տեսնում ենք կայսրության դեմ ընդդիմացածների թվում։ 976 թ. փոքրասիական զինվորական ավագանին Վարդաս Սկլերոսի գլխավորությամբ ապստամբություն բարձրացրեց Վասիլ II (976—1025) կայսեր դեմ։ Նա իրեն կայսր հռչակեց և հայկական գնդերի օգնությամբ գրավեց Բյուզանդիայի ասիական շրջաններն ու պաշարեց մայրաքաղաքը[170]։ Ասողիկի վկայությամբ, ապստամբներին միացել էին Տարոնի Գրիգոր և Բագարատ իշխանները, Մոկքի իշխան Զափրանիկը։ Նրանց էր հարում նաև Ռոմանոս Տարոնցին[171]։ Տարոնի իշխանների ապստամբվելու փաստն իրավացիորեն բացատրվել է այն բանով, որ նրանք դժգոհելով իրենց ճակատագրից, փորձել են Սկլերոսին միանալով ձեռք բերել նախկին տիրույթներն ու իշխանությունը[172]։ Սակայն Բագրատունի եղբայրների հույսերը չարդարացան։ 979 թ. մարտին ապստամբները վերջնականապես պարտության մատնվեցին[173]։ Սկլերոսի կողմնակիցները, նրանց թվում և տարոնցիները, ենթարկվեցին կայսրին։ Գրիգորն արժանացավ մագիստրոսության։ 987—989 թթ. Վարդաս Փոկասի խռովության տարիներին Վասիլ II-ի կողմից մագիստրոս Տարոնցին ուղարկվեց Տրապիզոն՝ խռովարարների դեմ։ Ուղարկվածը, անկասկած, Գրիգոր Տարոնցին էր[174]։ Հայկական մյուս շրջանների նվաճման օրինակները թույլ են տալիս պնդել, որ Բյուզանդիան տիրելով Տարոնին, այնտեղի բնակչությանը հարկադրել է գաղթելու կայսրության տարբեր շրջանները։ Տարոնի իշխաններն անցնելով Բյուզանդիա, անտարակույս, իրենց հետ տարել են մեծաթիվ վասալ ֆեոդալների, գյուղացիների և արհեստավորների։ Որ Բյուզանդիայի կողմից Տարոնի բնակչության էթնիկական կազմի նկատմամբ դիմահեղման փորձ իրոք կատարվել է, հաստատում է նաև թոնդրակեցիների դեմ կայսրության մղած պայքարը, որը լայն տարածում էր գտել Տարոնի իշխանության մեջ։

Թոնդրակեցիների դեմ Բյուզանդիայի պայքարի ձևերից մեկը նրանց՝ կայսրության տարբեր շրջանները բռնությամբ հաստատելն էր[175]։ Դրա հետևանքով Տարոնի բնակչությունը նույնպես պոկվում էր իր հայրենիքից և ցրվում Բյուզանդական կայսրության սահմաններում։

Բյուզանդիայի կողմից Տարոնի նվաճումը հայկական իշխանությունների բռնագրավման քաղաքականության սկիզբն էր միայն ազդարարում։ Տարոնից հետո կայսրությանը միաց-

---

169 *N. Adontz.* Les Taronites, էջ 232։

170 Հովհաննես Սկիլիցես, էջ 56—58։

171 Ասողիկ էջ 191։ Հմմտ. նաև *N. Adontz*, Les Taronites, էջ 232։

172 *N. Adontz*, Les Taronites, էջ 232։



173 Հովհաննես Սկիլիցես, էջ 65—66։ Հ. Բարթիկյանն իրավացի է, երբ Սկլերոսին՝ հայերի ցույց տված օգնությունը բացատրում է Բյուզանդիայի ձեռքն անցած հայկական շրջանների ազատագրման, կայսրության կողմից մնացած հայկական շրջանների գրավումը կանխելու փորձերով (տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ LXXIV)։

174 Император Василий Болгаробойца. Извлечения из Летописи Яхъи Антиохийского. Приложение к XLIV-му тому «Записок» Императорской Академии наук, № I СПб, 1883, էջ 24։

175 *Р. Бартикян*, Движение тондракитов в Византии, «Լրաբեր», 1980, № 9, էջ 60։

վեցին Տայքը և Վասպուրականի ու Բագրատունիների թագավորությունների տերիտորիաները։ Այս քաղաքականությունը որքան աղետալի եղավ Հայաստանի համար, նույնքան էլ թանկ արժեցավ կայսրությանը։ Ուսումնասիրողներն իրավացի կերպով նկատում են, որ կայսրության կողմից Հայաստանի թուլացումը նրան զրկեց այն պատվարից, որ կարող էր խաղալ սելջուկների դեմ մղվող պայքարում[176]։ Մասամբ այս քաղաքականությամբ էր պայմանավորված՝ բյուզանդացիների պարտությունը 1071 թ. Մանազկերտի նշանավոր ճակատամարտում։

---

[176] *C. Toumanoff*, The Background to Mantzikert, էջ 426։



ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՈՆՈՒՄ IX—X ԴԴ.

Տարոնի իշխանության սոցիալ-տընտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը որոշակի դժվարություն է ներկայացնում։ Այդ դըժվարությունը պայմանավորված է նրանով, որ իշխանության տնտեսական կյանքը, հողատիրության ձևերը, ժողովրդական զանգվածների դրության վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունների անբավարարությունը թերևս կարելի է լրացնել նույն դարաշրջանի Հայաստանի այլ երկրամասերի վերաբերյալ եղած տվյալներով, քանի որ այն, ինչ առանձնահատուկ ու բնորոշ էր նրանց, նույնը այս կամ այն չափով հատկանշական էր Տարոնին։ Ուստի, վերջինս չէր կարող գոյություն ունենալ երկրի մյուս մասերի ֆեոդալական հարաբերություններից մեկուսի։

Արաբական տիրապետությունը, ինչպես գիտենք, Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ։ Արգելակվեց երկրի բնապատմական զարգացումը։ Խալիֆայությունը հայ ժողովրդին հնազանդ պահելու, բյուզանդացիների և խազարների դեմ կռվելու նկատառումներով Հայաստան բերեց արաբական տարբեր ցեղերի։ Այսպես, Ապահունիք գավառում բնակություն էին հաստատել Ջահհաֆյանները։ Նրանք որոշ ժամանակ տիրում էին նաև Արշարունիքին և Դվինին։ Աղձնիքը Շայբանիների ձեռքում էր, Ապահունիքն անցավ Կայսիկ-

ներին, Բերկրին՝ Ութմանիկներին[1]։ Արաբական տարրը տիրում էր նաև Հայաստանի տնտեսական ու ռազմաստրատեգիական մի շարք կենտրոններ։ Դրանցից էին՝ Դվինը, Նախիջևանը, Կարնո քաղաքը, Խլաթը, Մանազկերտը, Բաղեշը, Աշմուշատը[2] և այլն։ Արաբները տիրում էին հիշյալ քաղաքները միմյանց հետ կապող հաղորդակցության ուղիներին։ Նրանք երկրի բնակչությանը ենթարկում էին հարկային կեղեքման, ջլատում էին նրա ռազմական ուժերը։ Հայ ավագանու ներկայացուցիչները զերծ չէին մնում խալիֆայության գործադրած հալածանքներից ու ճնշումներից։ Արաբները բռնագրավում էին հայ ֆեոդալների տիրույթները, հարմարվում տեղական ավատական կարգերին, և հողի նկատմամբ ձեռք բերում ժառանգական սեփականատիրության իրավունք։ Արաբ զավթիչները չէին խորշում հայ ազնվականությանը ֆիզիկապես ոչնչացնելուց։ 705 թ. նրանք հայ իշխանների մի մեծ խմբի Նախիջևանում և Խրամում հրկիզեցին[3]։ Խալիֆայության դեմ կազմակերպված յուրաքանչյուր ապստամբություն գրեթե միշտ ավարտվում էր նրա ղեկավարների հաշվեհարդարով։

Այս ամենի հետևանքով հայ ֆեոդալների մի մասը զրկվեց իր տիրույթներից, մյուս մասը հարկադրված երկրից արտագաղթեց։ Իշխանական որոշ տներ քաղաքական ասպարեզից դուրս մղվեցին։ Տնտեսական և քաղաքական առումով հատկապես նկատելի էր երբեմնի զորեղ Մամիկոնյան տոհմի թուլանալը։ VIII դարի վերջերից նա զրկվեց Տարոնից։ Նույն բախտին արժանացավ նրա հետ սերտորեն կապված Կամսարական տունը։ Չնայած այս ամենին, արաբական տիրապետությունն անկարող էր բեկանել Հայաստանի ներքին կյան-

---

[1] *J. Laurent*, L'Arménie entre Byzance et l'Islam. Nouvelle édition revue et mise à jour par M. Canard, Lisbonne. 1980, էջ 382—394 (այսուհետև՝ Laurent—Canard); Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները*, էջ 66—86, 96—120։

[2] *Laurent—Canard*, էջ 382—394։

[3] Ղևոնդ, էջ 34—35։



քի զարգացման ընդհանուր ուղղությունը։ Խալիֆայությունը չէր կարող ողջ հայ ֆեոդալներին բնաջնջել կամ նրանց բոլորի հողային տիրույթները բռնագրավել։ Ավելին, իրենց նվաճումների հենց սկզբից, նրանք հարկադրված էին ճանաչելու տեղական ավատատերերի հողային ժառանգական սեփականատիրական իրավունքը։ Վերջինս հաստատվում էր արաբական նվաճումների հենց սկզբից հայ ֆեոդալներին տրված պայմանագրերով կամ ապահովության գրերով և կոչված էր ամրապնդելու խալիֆայության տիրապետությունը։ Պահպանված վկայությունները, օրինակ, հաստատում են, որ արաբները մի շարք պայմանագրեր են տվել Խլաթի, Մոկքի, Արճեշի, Ապահունիքի, Բագրևանդի, Վասպուրականի և այլ վայրերի իշխաններին[4]։ Այս սկզբունքով ֆեոդալական տները պահպանեցին իրենց տիրույթները, իսկ VIII դ. վերջերին և հատկապես IX դ. սկզբներին, օգտվելով խալիֆայության տիրապետության աստիճանական թուլացումից, նրանցից մի քանիսը՝ Բագրատունիները, Արծրունիները և Սյունեցիները վերաբաժանեցին երկրի հողային տարածությունները։ Նրանք տիրեցին ոչ միայն քայքայված ֆեոդալական իշխանությունների հողատարածություններին, այլև Հայաստանում հաստատված արաբական ցեղերի կողմից նվաճված որոշ շրջանների։ Բագրատունիներն, օրինակ, նվաճեցին Տարոնը, Մոկքը, Արշարունիքը, Աշոցքը, Արագածոտնը, Տաշիրը, Դվինը և այլն։ Համանման ձևով Արծրունիները նվաճեցին Ռշտունիների, Ամատունիների, Անձևացյաց և իշխանական այլ տոհմերի տիրույթները։ Իրենց հողատարածություններն ընդարձակեցին նաև Սյունեցիները։ Այսպիսով, ֆեոդալական հողատարածությունների բաժանումն ու վերաբաժանումը Հայաստանում նպաստեց ժառանգական խոշոր հողատիրության զարգացմանը։

Բագրատունիների կողմից Մամիկոնյանների հինավուրց տիրույթ Տարոնի ձեռք բերումը, ինչպես տեսանք, պայմանավորված էր Հայաստանի քաղաքական և տնտեսական կյան-

---

[4] *Baladhuri*, էջ 310, 313—314։

քում տեղի ունեցած տեղաշարժերով։ Դրա շնորհիվ Բագրատունիների ձեռքն անցան ընդարձակ հողատարածություններ։ Չնայած դրան, նրանց տիրույթները քաղաքական առումով տրոհվեցին, ուր ստեղծվեցին տարբեր իշխանություններ։ Այս իշխանություններից կարևորը Տարոնի և Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների քաղաքական միավորներն էին։ IX դ. 80-ական թվականներին Բագրատունիների հյուսիս-արևելյան ճյուղը կարողացավ նվաճել երկրի քաղաքական անկախությունը, վերականգնվեց հայկական պետականությունը և Տարոնը Հայաստանի մյուս երկրամասերի նման մտավ հայոց թագավորության կազմի մեջ։ Սակայն, ֆեոդալական-սեփականատիրական իրավունքի տեսակետից այն Բագրատունի հայ թագավորներին չէր պատկանում, այլ՝ Բագրատունիների տեղական ճյուղի ներկայացուցիչներին։ Ասվածից, սակայն, չի հետևում, թե հայոց թագավորները Տարոնը չէին կարող դիտել իբրև իրենց տոհմային սեփականությունը, մանավանդ, որ նրանք Բագրատունյաց տոհմի մյուս ճյուղերի նկատմամբ ունեին ավագության իրավունք։ Բոլոր դեպքերում, այն իբրև ֆեոդալական տիրույթ պատկանում էր տեղական ճյուղի ներկայացուցիչներին։ Սակայն պատմական գրականության մեջ Տարոնը համարվել է Բագրատունի թագավորների արքունի տան անդամների «սեպհական» ժառանգական կալվածք[5]։ Այս տեսակետի հեղինակ Ս. Հակոբյանը կռվան է դարձրել Հովհաննես Դրասխանակերտցու մի տեղեկությունը։ Պատմիչի վկայությամբ, Աղձնիքում հաստատված արաբական ցեղերի ներկայացուցիչներից մեկը՝ Ահմադ իբն Իսա ալ-Շայբանին, ներխուժել էլ Տարոն և գրավել այն։ Հայոց թագավոր Սմբատ Ա-ը փորձել էր նրան համոզել, որ հրաժարվի իր գրավումներից և Տարոնը հանձնի նրա օրինական տերերին՝ Բագրատունիներին։ Սակայն թագավորի ջանքերն ապարդյուն էին անցել. Ահմադն անդրդվելի էր մնացել։ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությամբ, դրանից հետո

5 Ս. Ե. Հակոբյան, *Հայ գյուղացիության պատմություն*, էջ 30։



Սմբատ Ա-ը որոշեց «երթալ հարթել հաստատել և նուաճել զաշխարհն ևս Տարօնոյ և զկողմանս նահանգին ևս Աղձնեաց. զի մի տարամերժեսցի սեփհականութիւն ազգացն այնոցիկ ի բնիկ տէրութենէ»[6]։ Մեջբերված հատվածից ամենևին էլ չի հետևում, թե Հովհաննես Դրասխանակերտցին «Տարոնը կոչում է «սեփհականութիւն ազգացն այնոցիկ (Բագրատունիների, ընդգծումը Ս. Հակոբյանինն է— Գ. Գ.) ի բնիկ տէրութիւն»,—ինչպես որ կարծում է Ս. Հակոբյանը[7]։ Պատմիչը պարզապես նշում է, որ Սմբատը փորձել է նվաճել, ավելի ճիշտ՝ ազատագրել Տարոնն ու Աղձնիքը, որպեսզի նրանց տերերի սեփականությունը բնիկ տերությունից, այսինքն՝ հայոց թագավորությունից չբաժանվի, չանջատվի։ Ուրեմն, տվյալ դեպքում պատմիչի խոսքը միայն դրան է վերաբերում, այլ ոչ թե Տարոնի՝ թագավորական տան անդամների տիրույթ լինելուն։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ձևավորվող և ընդլայնվող ժառանգական խոշոր հողատիրությունն էական փոփոխությունների ենթարկվեց։ Հայտնի է, որ նախորդ՝ վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում նախարարական հողային սեփականատիրության իրավունքը պատկանում էր յուրաքանչյուր նախարարական տոհմի նահապետին կամ տանուտերին։ Վերջինիս հողային տիրույթները չէին կարող բաժանվել նույն տոհմի մյուս անդամների միջև։ Հիշյալ հողատարածությունների ժառանգման իրավունքը հորից ուղիղ գծով անցնում էր ավագ որդուն։ Զարգացած ֆեոդալիզմի պայմաններում, նախարարական սիստեմի քայքայման հետևանքով տվյալ տոհմի հողային տարածությունները բաժանվում էին նրա տարբեր անդամների միջև և նրանցից յուրաքանչյուրը հանդես էր գալիս որպես առանձին տիրույթի լիակատար սեփականատեր[8]։ Այս երևույթը նկատելի էր նաև Տարոնում։ Այսպես, Տարոնի իշխաններից յուրաքանչյուրը սեփական հայեցողությամբ տնօրինում էր իր հողատարածություններին։

6 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 96։
7 Ս. Ե. Հակոբյան, *Հայ գյուղացիության պատմություն*, էջ 30։
8 *Հայ ժողովրդի պատմություն*, հ. III էջ 166։

Թոռնիկն, օրինակ, այն կտակեց Բյուզանդիային[9]։ Գրիգորի որդիներին՝ Բագրատին և Աշոտին պատկանում էր Եղնուտը, որը նրանք ինքնակամ փոխանակեցին կայսրության հետ ու նրանից ստացան Թոռնիկի տիրույթները[10]։ Բերված օրինակները, մյուս կողմից, սերտորեն առնչվում են հողի ֆեոդալական սեփականատիրական իրավունքի հարցին, որը հայ պատմագրության մեջ իրարամերժ կարծիքների տեղիք է տվել։ Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի կարծիքով հայ ֆեոդալները հողի նկատմամբ ունեցել են սեփականատիրական իրավունք[11]։ Ըստ Խ. Սամուելյանի, ֆեոդալիզմի ընթացքում հողային սեփականատիրական իրավունքը Հայաստանում պատկանել է թագավորին[12]։ Այս տեսակետը քննադատվել է մի շարք պատմաբանների կողմից և ցույց է տրվել, որ Հայաստանում հողի սեփականության պետական իրավունք չի եղել և թագավորը նրա գերագույն տերը չի համարվել։ Հողային գերագույն սեփականատիրության իրավունքը պատկանել է կալվածատեր իշխաններին[13]։ Տարոնի իշխանների կողմից իրենց հայեցողությամբ սեփական կալվածքներն օտարելու և տնօրինելու վերաբերյալ վերոբերյալ օրինակները հաստատում են, որ հողային սեփականատիրության իրավունքը միայն նրանց է պատկանել։ Իսկ Բագրատունի հայ թագավորներն իբրև գերագույն իշխանության մարմնավորողներ և Հայաստանի բոլոր ֆեոդալների սյուզերեններ, միայն իրավական տեսակետից կարող էին հանդես գալ որպես երկրի ողջ

9 Կոստանդին Ծիրանածին, էջ 9։

10 Նույն տեղում։

11 Н. Адонц, Армения, էջ 457; Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 428—429։

12 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. I, Երևան, 1939, էջ 173։

13 Տե՛ս Հ. Մ. Ուրմազյան, Սյունիքը IX—X դդ., էջ 147; Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, էջ 63—76; Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը, էջ 77—97; Լ. Բաբայան, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970, էջ 237—249։



հողային տարածությունների սեփականատերեր։ Երբ Ահմադ իբն Իսա ալ-Շայբանին գրավեց Տարոնն ու Աղձնիքը, Սմբատ Ա-ը կռվեց նրա դեմ։ Իսկ երբ Հովհան Չմշկիկի գլխավորությամբ բյուզանդական բանակը շարժվեց Տարոն, Աշոտ Գ-ը փորձեց նրա առաջխաղացումը կասեցնել։ Հայոց թագավորն իր ձեռքում պահում էր Տարոնի Այծյաց բերդը, որի նկատմամբ հավակնություններ ուներ կայսրը։ Տարոնի կապակցությամբ հայոց թագավորների բռնած դիրքը պայմանավորված էր հենց վերոհիշյալ իրավունքով։

Տարոնի իշխանության մեջ, ինչպես բովանդակ Հայաստանում, հողատիրության հիմնական ձևը «հայրենիքն» էր։ Այն առաջացել էր հնագույն ժամանակաշրջանում համայնական հողատիրության քայքայումից։ «Հայրենիքը» լիակատար, անպայման, ժառանգական սեփականություն էր և համապատասխանում էր արևմտաեվրոպական allod-ին կամ ռուսական ВОТЧИНА-յին[14]։ Սակայն ի տարբերություն allod-ի, «հայրենիքը» Արշակունյաց և նախարարական դարաշրջաններում նախարարական ողջ տոհմի սեփականությունն էր։ Նրա տնօրենը՝ ավագ ֆեոդալը, որը կոչվում էր նահապետ կամ տանուտեր, իրավունք չուներ այն բաժանել իր տոհմի մնացած անդամների՝ սեպուհների միջև։ Այլ կերպ ասած, «հայրենիքը» անօտարելի էր[15]։ Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում նախարարական կարգերի քայքայման հետևանքով նահապետի իրավունքը «հայրենիքի» նկատմամբ վերացավ։ Հողային այս տիրույթները բաժանելի դարձան միևնույն տոհմի տարբեր անդամների միջև։ Նրանցից յուրաքանչյուրն իր հողատարածությանն արդեն տիրում էր լիակատար սեփականության իրավունքով (dominum directum)[16]։ Հայաստանում ընդհանուր օրինաչափություն դարձած այս իրողությունը նկատելի էր նաև Տարոնում։ Տարոնի գահերեց Բագարատ Բագրատունին և նրա եղբայր Դավիթը հիշյալ սկզբունքով

14 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 434։

15 Հ. Մ. Ուրմազյան, Սյունիքը IX—X դդ., էջ 172—174։

16 Նույն տեղում, էջ 174։

տիրում էին երկրամասի տարբեր շրջաններին։ Սրանց հաջորդներ Գրիգորի, Աշոտի, Բագրատի, Թոռնիկի և մյուս իշխանների տիրույթները նույնպես կազմում էին նրանց ժառանգական սեփականությունը, այսինքն՝ «հայրենիքը»։

Նշված դարաշրջանում ընդլայնվեց նաև «հայրենիք» հասկացության իմաստը։ «Հայրենիք» սկսեցին կոչվել գնված, նվաճված, պարգևած, փոխանակված և այլ ճանապարհներով ձեռք բերված հողերը[17]։ Սկզբնաղբյուրներում եկեղեցու սեփականությունը հանդիսացող հողատարածությունները ևս հայտնի են «հայրենիք» հորջորջումով։

«Հայրենիք» հողատիրության վերաբերյալ եղած վերոհիշյալ կարծիքը սովետահայ պատմաբանների մեծամասնության կողմից ընդունվելով հանդերձ, առանձին դեպքերում, վիճարկվել է։ Խ. Սամուելյանն, օրինակ, ելնելով հողի պետական սեփականության իրավունքի սկզբունքից, գտել է, թե հայ ֆեոդալները հողը օգտագործում էին պայմանական իրավունքով՝ (dominum utile) պետության համար իրենց կատարած ծառայությունների դիմաց։ Նրա ասելով, նախարարական այս տիրույթները համապատասխանում էին ոչ թե արևմտաեվրոպական allod-ին, այլ՝ feod-ին։ Ու թեպետև Խ. Սամուելյանը Հայաստանում ընդունում է allod-ական հողատիրության առկայությունը, բայց դա համարում է ցաքուցրիվ և պնդում, թե այդպիսի իրավունքից օգտվում էին ընդամենը մի քանի նախարարություններ[18]։ Խ. Սամուելյանի այս տեսակետն իրավացիորեն քննադատվել է հետազոտողների կողմից[19]։

Նշված ժամանակաշրջանում Հայաստանում տարածված էր հողատիրության մեկ այլ ձև ևս։ Դա պայմանական, ոչ սեփականատիրական ժառանգական հողատիրությունն էր։ Խոշոր ֆեոդալներն որոշակի պայմաններով սեփական հողային տարածությունները տրամադրում էին իրենցից վասալական կախվածության մեջ գտնվող մանր ազնվականության ներկայացուցիչներին։ Վերջիններս ստացած հողերի նկատմամբ սեփականատիրության իրավունք չունեին, նրանք միայն օգտվում էին տիրության իրավունքներից (dominum utile)։ Հողատիրության այս ձևն անձնական օգտագործումից կարող էր վերածվել ժառանգականի։ Հ. Մանանդյանը ցույց է տվել, որ հիշյալ պայմանական հողատիրությունը հայկական «խոստակդարությունն» է, որն համապատասխանում է արևմտաեվրոպական feod-ին կամ Lehn-ին[20]։ Հետազոտողները հիմնականում ընդունել են Հ. Մանանդյանի տեսակետը։ Չնայած Տարոնում հիշյալ հողատիրության գոյության վերաբերյալ մեզ որոշակի ոչինչ հայտնի չէ, սակայն անտարակուսելի է, որ հողօգտագործման այդ եղանակը այնտեղ ևս գոյություն է ունեցել։

Տարոնում լայն տարածում է գտել եկեղեցական-վանական հողատիրությունը։ Դա պայմանավորված էր Հայաստանում Տարոնի, կրոնական կարևորագույն կենտրոն լինելու հանգամանքով։ Այնտեղ գտնվող եկեղեցիներն ու վանքերն իրենց ընդարձակ հողատարածություններով, գյուղերով, այգիներով, արոտավայրերով, անասուններով և տնտեսական ու արտադրական մի շարք ձեռնարկություններով, տնտեսական կարևոր միավորներ էին։ Արաբական տիրապետությունը զգալի վնաս հասցրեց հայոց եկեղեցուն։ Թշնամու կողմից ավերվեցին ու կողոպտվեցին եկեղեցիների ու վանքերի մի մասը։ Բռնագրավվեցին նրանց շարժական ու անշարժ գույքը։ Այս ամենով հանդերձ, հիշյալ հաստատությունները պահպանեցին իրենց սեփականատիրական իրավունքը։ IX դարի սկզբին Տարոնում հիմնադրված իշխանությունը, հետագայում նաև Հայաստանի քաղաքական անկախության նվաճումը, նպաստավոր պայմաններ ստեղծեցին եկեղեցական-վանական հողատիրության ընդարձակման ու զարգացման համար։ IX—X և հետագա դարերում երկրամասում կառուցվե-

17 *В. Бархударян,* Феодальное землевладение, էջ 6։

18 Խ. Սամուելյան, *Հին հայ իրավունքի պատմություն,* էջ 184—188։

19 Լ. Բաբայան, *Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը,* էջ 255—257։

20 Հ. Մանանդյան, *Ֆեոդալիզմը հին Հայաստանում,* էջ 273—277։

ցին մի շարք նոր եկեղեցիներ ու վանքեր։ Որպես կանոն, դրանք կառուցվում էին տեղական ֆեոդալների հովանավորությամբ և աջակցությամբ։ Թովմա Արծրունու տեղեկությամբ, Մուշի Սուրբ Փրկիչ եկեղեցին կառուցվել էր Տարոնի գահերեց Բագարատ Բագրատունու կողմից[21]։ Աբու-լ Ֆարաջ բար Հեբրեուսի հաղորդման համաձայն, Ամիդի հրդեհված եկեղեցու վերանորոգման համար, Բագարատ Բագրատունին ընդառաջել էր բնակչությանը և տրամադրել զգալի գումար ու շինանյութ[22]։ Տարոնի իշխանի կողմից իրականացված հիշյալ ձեռնարկումները բնավ էլ եզակի դեպքեր չէին։ Այս կապակցությամբ Հայաստանի մյուս շրջանների վերաբերյալ եղած հարուստ նյութերը հաստատում են հայ ֆեոդալների շահագրգռվածությունը։ Ավելին, նրանք նաև դրամ, թանկարժեք իրեր, ընդարձակ հողատարածություններ, գյուղեր, այգիներ, ջրանցքներ, անասուններ, ջրաղացներ, գործատներ, կուղպակ-խանութներ, հյուրանոցներ, ձիթհաններ և այլ հասութաբեր ձեռնարկություններ էին նվիրում եկեղեցիներին ու վանքերին։ Հիշյալ նվիրատվությունները հատկապես մեծ ծավալ էին ընդունում վանքերի ու եկեղեցիների բացման ու օծման հանդիսությունների՝ նավակաթիկների ժամանակ։ Վանքերին ու եկեղեցիներին ցույց տրված տնտեսական այս օգնությամբ աշխարհիկ ֆեոդալները, հանձինս հոգևորականների, տեսնում էին իրենց դասակարգային հենարանին։ Ընդսմին յուրաքանչյուր ֆեոդալի իշխանության սահմաններում գտնվող վանքի կամ եկեղեցու առաջնորդը շատ ավելի ենթակա էր այդ իշխանին, քան Հայաստանի հոգևոր միապետին։ Վանքերի ու եկեղեցիների օգտին կատարված նվիրատվությունների ու պարգևների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ։ Ահա դրանցից մեկը, որը վերաբերում է Տարոնի իշխանության մեջ մտած Խութ գավառի Աղբերիկի (Վանդիր) վանքին. «Քանզի յորժամ եկաք ի գեղաքաղաքս Մանազկերտ, եկն եւ հայր Վանդրին Եղիշէ, ունելով ընդ ին-

21 Թովմա Արծրունի, էջ 133։

22 Վ. Տոմաշեկ, *Սասուն*, էջ 26։



քեան զսուրբ Խաչն Աղբարիկ եւ էր տուեալ պարգեւ սրբոյ խաչին Սմբատ Մամիկոնց չորս կուղպակ եւ երկու ակնեան առատանոց մի, որ ձիթհանք կոչի, ի ցետուաց դռան մուտն ի յաջակողմն որմակից սրբոյն Սարգսի եւ միւս եկեղեցին, որ մեր աւրի սուրբ Աստուածածին կոչի, մերձ ի դուռն ցետուաց... Եւ մեք Թագաւորքս եւ կաթուղիկոսն խորհեցաք զքաղաքս երկրով Խաչին ողբ տալ... յետոյ, ի միտս եղեալ... ոչ տեսաք պատեհ, այլ բաւանդակ համարեցաք զտուեալ պարգեւքն ի Սմբատայ Մամիկոնեանցն անսղալ եւ մնացական։

Եւ մեք կաթուղիկոս և Թագաւորքս տուաք զքաղաքս երկրովն վիճակ խաչին եւ Վանդրին, եւ սահմանեցաք զԵղիշէ հայրն եպիսկոպոս Վանդրին եւ կարգեցաք ընդ գահագլուխ եպիսկոպոսն... վասն որոյ, որ տեսաք մեծ սքանչելիս եւ վասն որ Վանդիրն Սենեքերիմացն տապանատուն էր և ունէին զՍասունք իւրեանց վիճակ և զԿայթ գաւառ, վասն այսորիկ ինքնագլուխ արարաք զՎանդրին եպիսկոպոսն, բայց մէռոն ի յԱթոռոյս առնու։ Եւ տուաք զՄանազկերտ կարգեալ եպիսկոպոսքն Վանդրին, զի Մանազկերտայ եպիսկոպոսն տէր է ի Լծայ մինչ ի յԱղաղուռն Աւրնայ երկրովն, Բակոց մինչեւ յԱրծկաշու խուռն, ուր ջուր Թափի. մին այլ Կապարն Տարապաճուկն Այծաբերդին երկրովն, Պալխուխովն, բայց Սագրանոյ եպիսկոպոս կայ, զնա այլ ի հնազանդութիւն տուաք Վանդրին եւ զՍղերտ եւ զԲաղէշ իւր երկրովն մինչեւ ի Բէլաւ եւ զմիւս այլ զԼծկան եւ զԱնթկան եւ զմիւս այլ զԿոթ ձորոյն եւ զՈղորմականն եւ զԽոյթ, որ իւրեանց կարգած էր ցառաջն՝ տուաք խաչին եւ եկեղեցւոյն ձիթագին՝ որ եկեղեցպանն ժողովէ։ Եւ զՍասունն, որ իւրեանցն էր, տուաք Ղազարուվանացն, զատ ի Թաղասայ գաւառէն, զի Վանդիրն ի Սասնոյ հաշւին է եւ գաւառն մինչեւ ի Կեցիր Արաք եւ յԸռդիրն եւ զՀօրսանք գաւառն մինչեւ յԵզնքարն եւ զԱրծուեաց գաւառն իւր սինօրովն, զի հայրն, որ եպիսկոպոս օրհնեցաք Արհաւից էր...

Գրեալ եղեւ գիրս ի Թվիս Հայոց չորս հարիւր ԽԴ»...[23]։

23 Գ. Հովսեփյան, *Յիշատակարանք ձեռագրաց*, Անթիլիաս, 1952, հ. Ա, էջ 183—186։

